ՇՆՈՐՀՔԻ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ

ՆԱԶՈՎՐԵՅՈՒ ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅՈՒՆ

Ճանապարհ, Ճշմարտություն, Կյանք

Հիսուսին հետևելու կյանքը երբեք չպետք է լինի ձանձրալի կամ լճացած և ոչ էլ միայնակ: Քանի որ մենք ձգտում են աավելի նմանվել Հիսուսին, մենք բացահայտում ենք, որ քրիստոնեական աշակերտությունը շնորհի շարունակական ճանապարհորդություն է: «Ճանապարհ, ճշմարտություն, կյանք» գրքում, Դեյվիդ Բյուզիքը հրավիրում է մեզ դիտարկել այն տարբեր ուղիները, որոնց միջոցով ավելի կմոտենանք Աստծո նախնական, փրկագնող, սրբագործող, պահպանող և բավարար շնորհին, որոնք հատվելով մի կետում ցույց կտան մեզ թե կյանքի որ փուլում ենք մենք գտնվում: Երբ մենք հավատարմորեն արձագանքում ենք Նրան՝ ով սիրով կանչում և զինում է մեզ շնորհի ճանապարհորդության համար, դրա արդյունքում մենք վայելում ենք ավելի խորը հարաբերություններ Հիսուս Քրիստոսի հետ, Ով էլ մեզ համար հանդիսանում է Ճանապարհը, Ճշմարտությունն ու Կյանքը:

Դեյվիդ Ա. Բյուզիքը (Աստվածաբանության Դոկտոր) ծառայում է որպես Գլխավոր Սուպերինտենդանտ՝ Նազովրեցու Եկեղեցում: Նա նախկինում ծառայել է որպես Կանզաս քաղաքի Նազովրեցու Աստվածաբանական ճեմարանի նախագահ, ինչպես նաև հովվական ծառայություն է առաջնորդել Կալիֆորնիայում, Կանզասում և Օկլահոմայում: Բյուզիքը նաև գրել է «Քաղաք: Քաղաքային եկեղեցիները, որպես Վեսլիական Սրբության Վարդապետության հետևորդներ» և երկու հատորներից բաղկացած՝ «Կատարյալ անկատար» գրքերը, որոնք ուսումնասիրում են Հին և Նոր Կտակարանների հերոսներին: Բոլորը հասանելի են Ֆաունդրի Փաբլիշինքում (Foundry Publishing):

Ինչպես նաև, Դեյվիդ Ա. Բյուզիքի կողմից գրվել են՝

- *Կատարյալ Անկատար: Հին Կտակարանային Հերոսների Ուրվագծեր (2013թ)*
- *Կատարյալ Անկատար: Նոր Կտակարանային Հերոսների Ուրվագծեր (2014թ)*
- *Քաղաք: Քաղաքային Եկեղեցիները որպես Վեսլիական Սրբության Վարդապետության հետևորդներ (2020թ)*

Կարծիքներ՝ «Ճանապարհ, Ճշմարտություն, Կյանք» գրքի վերաբերյալ

«Ճանապարհ, Ճշմարտություն, Կյանք»-ը աշակերտության վերաբերյալ պարզապես հերթական գրքերից մեկը չէ: Սա համաշխարհային համատեքստին հարմարեցված ճանապարհորդության վերաբերյալ է: Դեյվիդ Բյուիքն ընթերցողին տանում է դեպի շնորհի իմաստի խորություններն ու զգացմունքները հասկանալու ճանապարհորդության, որն էլ այսօր բացակայում է մեր առօրյայում: Բյուզիքի ստեղծագործությունն ազդեցիկ է՝ այն կառուցում է աստվածաշնչյան հիմք՝ պատմական և աստվածաբանական սկզբունքներով և շնորհի ներկայիս փորձառություններով: Այն մեծ հույսի գաղափարը, որը շեշտվում է այս գրքում, թարմություն կբերի մեր հոգևոր քաղց ապրող աշխարհին:

Ջո Աննա Լեոն
Գլխավոր Սուպերինտենդանտ և Դեսպան
Վեսլիական Եկեղեցու պատվավոր թոշակառու հովիվ

Երբ հարամվանական առաջնորդությունը որոշեց հաստատել մի գիրք, որը կներկայացնի մեր աստվածաբանությունն ու փիլիսոփայությունը աշակերտության մասին, մենք անմիջապես այս աշխատանքի իրականացման համար ընտրեցինք Դեյվիդ Բյուզիքին: Մեզ պետք էր մեկը՝ ով ունակ կլիներ ապահովել հիմնավոր աստվածաբանական հիմք և գործնական կիրառություն՝ դավանանքային որոշակի շրջանակի համար, որը նախատեսվել էր Գլխավոր Սուպերինտենդանտների Խորհրդի կողմից: Այս գիրքը ներկայացնում է մեր հիմնական վարդապետությունների ժամանակակից ամփոփումը, քանի որ դրանք կիրառվում են աշակերտության պրակտիկայում, ինչպես՝ գլոբալ, այնպես էլ տեղական եկեղեցական մակարդակներում: Մենք հավատում ենք, որ այս գիրքը կծառայի գալիք սերունդներին, քանի որ մեր գլխավոր նպատակը մեր առաքելության կատարումն է, որն է՝ «պատրաստել Քրիստոսակերպ աշակերտներ աշխարհի տարբեր ազգերում»:

Գուստավո Կրոկեր
Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Սուպերինտենդանտ

Շնորհն Աստծո անսահման և անվերջանալի այն բարեհաճությունն է, որն Աստված տվել է բոլոր մարդկանց և այն ոչ միայն հրաշալի է, այլ նաև խորը և բավականին բարդ հասկացողություն: Իր եզակի շնորհալի եղանակով Բյուզիքը պարզաբանում, պարզեցնում և տոնում է Աստծո կողմից մեզ տրված ադամանդը, այսինքն՝ Աստծո շնորհը: Ինչևէ, շնորհի ուղղվածություն համարվելով և շնորհի բացահայտումը դառնալով, այս աստվածաբանական ուսումնասիրությունը կծառայի որպես հրավեր՝ Աստծո շնորհի մեջ ապրելու և կիսելու այն ճանապարհորդությունը, որը ոչ միայն մեզ «ապահով բերել է այնտեղ՝ որտեղ մենք գտնվում ենք հիմա», այլև այն ճանապարհորդությունը, որ մեզ ի վերջո կառաջնորդի «դեպի տուն», քանի որ մենք կհամարվենք Աստծո շնորհով լցված նոր ստեղծագործություն:

Սքոթ Դենիելս
Գլխավոր Հովիվ
Այդահո Նահանգ, ք. ՆամպաԵկեղեցու Քոլեջ

«Ճանապարհ, Ճշմարտություն, Կյանք» գիրքը հիմնովին Վեսլիական Սրբության վարդապետության ուղեցույց է Քրիստոսի Մեծ Հանձնարարականի մասնակցողների՝ թե՛ աշակերտների և թե՛ աշակերտ կրթողների համար: Սրբագործող շնորհի դերն այս աշխատության առանցքային կետն է, որը խրախուսում է բոլոր ընթերցողներին շարունակաբար զարգանալ ճշմարտության մեջ: Բյուզիքը եկեղեցուն նվեր է տվել աստվածաբանական հագեցած մի աշխատություն, որը կարող է ծառայել որպես հիմնական միջոց՝ քսանմեկերորդ դարում աշակերտելու համար:

Կարլա Սանբերգ
Նազովրեցու Եկեղեցու Գլխավոր Սուպերինտենդանտ

«Ճանապարհ, Ճշմարտություն, Կյանք» գիրքը Հիսուս Քրիստոսի հանդեպ դրսևորված Աստծո անշահախնդիր սիրո, Նրա էության ամբողջական պատկերի խորը, համապարփակ ըմբռնումն է: Բյուզիքն աստվածաշնչային և աստվածաբանորեն նկարագրում է, թե ինչպես է Աստված հանդիպում մեզ կյանքի բոլոր փուլերում՝ ողորմածորեն Իրեն մատուցելով Քրիստոսի միջոցով՝ վերականգնելով մեզ իր հավերժական նպատակի համար՝ Երկնքում հասնել Նրա հետ լիարժեք ընկերակցության: Քրիստոսի միջոցով, Աստծո հետ մեր ճանապարհորդությունը շնորհի անձնական հարաբերություն է: Բյուզիքը՝ որպես Քրիստոսի մարմին, եկեղեցուն վերադարձնում է Վեսլիական արմատներին և նպատակ է դնում իր առջև յուրաքանչյուր հավատացյալի հետ միասին մեկնել շնորհի ճանապարհորդության՝ ցույց տալով Քրիստոսի գործերը և Աստծո ընդարձակ Արքայությունը:

Քրիստիան Սարմիենտո
Հարավային Ամերիկայի Նազովրեցու Եկեղեցու Տարածաշրջանային Տնօրեն

Նախկինում ունեցել եմ մի քանի ճանապարհորդություններ: Երբ մենակ էի մեկնում ճամփորդության, ինձ միայնակ էի զգում, հաճախ մոլորված և հետևաբար երբեմն ուշանում էի: Եթե ես ունենայի ինձ ուղեկցող, կամ քարտեզ, որն ինձ ցույց կտար ճիշտ ճանապարհը, ամեն բան կարող էր այլ լինել: Ձեր հոգևոր ճանապարհորդության ժամանակ ես Ձեզ խորհուրդ եմ տալիս գնալ Բյուզիքի *ճանապարհով, ճշմարտությամբ և կյանքով,* քանի որ այս էջերը քնքշորեն ձեզ կտանեն դեպի աստվածային ընկերակցություն: Երբ ավարտեք ընթերցանությունը, ինքներդ կբացահայտեք գրքի փոխակերպող ճշմարտությունը և այլևս երբեք չեք ցանկանա մենակ ճանապարհորդել:

Ռոբերտ Բրոդբուքս
ԱՄՆ/ Կանադա Նազովրեցու Եկեղեցու Տարածաշրջանային Տնօրեն

Համատեղելով Վեսլիական Սրբության Վարդապետական շնորհի աստվածաբանությունն ու աշակերտության ճամփորդությունը, Բյուզիքը Հիսուսի յուրաքանչյուր հետևորդի հրավիրում է դեպի Քրիստոսակերպ անընդհատ աճող կյանք: Միացե՛ք ճամփորդությանը և ինչ-որ մեկին ուղղորդե՛ք դեպի այս հրաշալի ճանապարհորդություն:

Սքոթ Ռեյնի
Կիրակնօրյա Դպրոցի և Աշակերտության Ծառայության Համաշխարհային Տնօրեն
Նազովրեցու Եկեղեցի

Copyright © 2021 by The Foundry Publishing
The Foundry Publishing
PO Box 419527
Kansas City, MO 64141
thefoundrypublishing.com
978-0-8341-4100-1

Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են: Այս հրատարակման ոչ մի հատված ենթակա չէ վերարտադրման, պահպանման՝ որոնման համակարգում կամ փոխանցման՝ որևէ ձևով կամ որևէ այլ կերպ: Օրինակ՝ էլեկտրոնային, լուսապատճեն կամ ձայնագրություն՝ առանց հրատարկչության գրավոր թույլտվության: Միակ բացառությունը տպագրված ակնարկներում բերված հակիրճ մեջբերումներն են:

Ներքին ձևավորող՝ Շերոն Փեյջ

All Scripture quotations, unless indicated, are taken from the New Revised Standard Version (nrsv) of the Bible, copyright 1989 by the Division of Christian Education of the National Council of the Churches of Christ in the USA. Used by permission. All rights reserved.

Scripture quotations marked (NIV) are taken from The Holy Bible: New International Version® (NIV®). Copyright © 1973, 1978, 1984, 2011 by Biblica, Inc.TM Used by permission of Zondervan. All rights reserved worldwide. www.zondervan.com.

Scripture quotations marked (MSG) are taken from The Message (MSG). Copyright © 1993, 2002, 2018 by Eugene H. Peterson. Used by permission of NavPress. All rights reserved.
Represented by Tyndale House Publishers, Inc.

Scripture quotations marked (NLT) are taken from the Holy Bible, New Living Translation (NLT), copyright © 1996, 2004, 2015. Used by permission of Tyndale House Publishers, Inc., Wheaton, Illinois 60189. All rights reserved.

Համացանցային հասցեները, էլեկտրոնային հասցեներն ու հեռախոսահամարները համապատասխանում են տպագրման տարեթվին: Դրանք տրամադրվում են որպես աղբյուր: «The Foundry Publishing» ընկերակցությունը չի երաշխավորում դրանց մշտական բովանդակության և օգտագործման համար:

Ի հիշատակ իմ հայր՝ Ռոբերտ Ե. Բյուզիքի, ով ինձ սովորեցրեց, որ աշակերտությունը շնորհի ճանապարհորդություն է, իսկ Քրիստոսին նմանվելը՝ մեր ապրելակերպը։

***

Սովորեցրու ինձ Տեր Քո ճանապարհը, որ գնամ Քո ճշմարտության մեջ. Տուր ինձ անբաժան սիրտ՝ Քո անունը մեծարելու համար։
Սաղմոս 86:11

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի խոսք …….....9

Ներածություն ……. 10

1. Հրաշալի Շնորհ …….. 17

ՃԱՆԱՊԱՐՀ

2. Փնտրող Շնորհ ……... 26

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

3. Փրկագնող Շնորհ …….. 38

ԿՅԱՆՔ

4. Սրբագործող Շնորհ ……...52

5. Զորացնող Շնորհ 73

6. Բավարար Շնորհ ……... 95

Հետգրություն: Հիսուս Քրիստոսն է Տերը …… 105

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ

Երախտագիտության խոսքերը կարող են ընդգրկել մի շարք կարևոր մեջբերումներ, որոնք ծառայում են որպես ճանաչողական նպատակի, ինչպես նաև ներառում են երախտագիտության խոսքեր, որոնք անվերջ կարելի է թվել և դա այն է, ինչ հիմա ձեզ կներկայացնեմ:
Երբ ես ընտրվեցի ծառայելու որպես Սուպերինտենդանտ Նազովեցու Եկեղեցում, ես լավ հասկանում էի, որ իմ գործընկերները, ովքեր ևս Խորհրդի կազմում էին գտնվում, մեծ ազդեցություն կունենան իմ կյանքի վրա, սակայն այն ազդեցությունը, որ ունեցել են նրանք անգնահատելի է: Թեև գրեթե միշտ մեր առաջնորդական բազում խոսակցությունների ընթացքում մենք ունենում ենք տարբեր կարծիքներ, սակայն կան հստակ երևույթներ, որոնք չեն փոխվում անկախ ամեն ինչից և դրանք են՝ աղոթքի մեջ հավատարմություն, սրտերի մաքրությունն ու ուժեղ բնավորությունը, որն ամենաթանկ երևույթն ու գինն է, որոնցով նրանք կարող են յուրաքանչյուր եկեղեցու կողքին կանգնած լինել: Շնորհակալություն Ֆիլիմառ Չամբոյին, Գուստավո Կրոկերին, Եվգենիո Դուարտեին, Դեյվիդ Գրեյվսին, Ջերի Փորթերին, Կարլա Սանբերգին և Ջեյ Կ. Ուորոիքին: Ձեր ազդեցությունը ծառայել է որպես ոգեշնչում՝ այս գրքի ստեղծագործման համար, որը կծառայի եկեղեցիներին «Աշխարհի տարբեր ազգերում Քրիստոսակերպ աշակերտների պատրաստման» առաքելության կատարման գործում:

Շնորհակալություն Սքոթ Ռեյնիին, ով Նազովրեցու Եկեղեցու համաշխարհային աշակերտության ծառայության տնօրենն է և ինձ հրավիրեց մի պարզ գիրք գրելու, որը շեշտադրում է կատարում սրբության աշակերտության վրա՝ շնորհի ճանապարհորդության միջոցով: Շնորհակալություն Բոնի Փերիին, ով «The Foundry Publishing» խմբագրության տնօրենն է. Նրա անսասան հավատքի համար, որ լավ աստվածաբանական հիմքով գրված և մեր հետագա սերունդներին փոխանցված գրքերը բավականին կարևոր խնդիր են իրենցից ներկայացնում և այդ ամենի իրականացման գործում նա ներդրել է իր լավագույն տարիները: Շնորհակալություն Աուդրա Սփիվենին՝ իր կատարած խմբագրության համար, որ միշտ ինձ հարցնում էր. «Իսկ ի՞նչ կլինի, եթե այսպես գրես» հարցը: Եվ վերջապես, շնորհակալ եմ ոչ այնքան բազմաքանակ, սակայն սիրառատ Նազովրեցու Եկեղեցու ներկայացուցիչ երիտասարդներից, ովքեր ինձ սովորեցրեցին, որ սրբությունը միայն այն չէ, ինչ Աստված Քրիստոսի միջոցով արել է մեզ համար, այլ այն, որ թե ինչ է անում Աստված Քրիստոսի միջոցով մեզանում եւ մեր միջոցով, երբ մենք հրաժարվում ենք մեր կյանքի կառավարումից եւ թույլ ենք տալիս,որպեսզի Հիսուսը Տեր լինի:

Գրառում՝ Հեղինակի Կողմից

Ինչպես նկատել եք, նախորդ գրքերում ևս ես իմ ընթերցողներին խրախուսում եմ ծանոթանալ տողատակերին՝ հղումներին, աշակերտության և շնորհի ճանապարհորդության վերաբերյալ գրվածքներին՝ ավելի լայն գիտելիքներ ստանալու համար: Բազմաթիվ ծանոթագրություններն արտացոլում են իմ հարգանքը՝ այլ մտածողների հանդեպ և իմ ցանկությունը՝ հավելյալ պատկերացումներ ստեղծելու, որոնք հիմնական գրքի մեջ տեղ գտնելու դեպքում բեռ կդառնային: Ավելի հեշտ հասկանալի լինելու համար, յուրաքանչյուր գլխի սկզբում ներկայացված են ամբողջական մեջբերումները, եթե նույնիսկ հեղինակը կամ ռեսուրսը նախկինում նշված է եղել:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հիսուսը մեզ հրավիրում է ճամփորդության. «Արի՛, հետևի՛ր ինձ»: Սա շատ պարզ հրավեր է՝ մոտ ընկերոջ հետ ճամփորդելու համար: Քրիստոնեական կյանքն ավելին է, քան ուղղակի բանական հավատքը: Այն ավելին է, քան ուղղակի պարզ համաձայնությունը: Այն Հիսուսի հետ ճամփորդության հրավեր է:

Քրիստոսի հետ ճանապարհորդություն կատարելու մեկ այլ շատ մոտ բառ է նաև աշակերտությունը: Աշակերտությունը, Հիսուսի *հետ* քայլել է՝ Հիսուսին *հետևելով,* որն ունի բազմաթիվ շրջադարձեր, անսպասելի որոշումներ, իսկ ճանապարհին՝ որոշակի անհարթություններ: Երբեմն ճանապարհը հեշտ է թվում, իսկ երբեմն՝ անհանգստացնող ոլորաններով: Բայց աշակերտության վերջնական նպատակը (հունարեն՝ telos) միշտ նույնն է՝ նմանվել Քրիստոսին:

Եթե դա անհնարին է թվում, Դուք իրականում շատ լավ վայրում եք գտնվում՝ Ձեր ճանապարհը սկսելու համար: Իրականում, այն անհնար կլիներ, եթե չլիներ մի շատ կարևոր վստահություն. այն, որ մենք ճանապարհորդում ենք *Քրիստոսի հետ*: Հենց դրա համար այս ճանապարհորդությունն անվանվում է շնորհի ճանապարհորդություն:

Երբ Հիսուսն ասաց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը» (Հովհաննես 14:6), Նա չէր խոսում հաջորդական բանական հավասարման կամ գործարքային համաձայնության մասին, որը մենք կնքում ենք Աստծո հետ: Նա նկարագրում էր, թե ինչպես է տեղի ունենալու աշակերտությունը: Իսկապես, ճանապարհը, ճշմարտությունն ու Կյանքը փիլիսոփայական աբստրակցիաներ կամ կյանքի սկզբունքներ չեն: Ճանապարհը, ճշմարտությունն ու Կյանքն իրականում անձնավորություններ են:

Հիսուսը մատնացույց էր անում դեպի ճանապարհորդության ճիշտ նպատակը՝ (telos) իրական *կյանքը*, որն Աստված է նախատեսել և այն միջոցները, որոնցով մենք հասնում ենք դեպի վերջնական նպատակին *ճանապարհն* ու *ճշմարտությունն են*, որոնք կատարվում են միայն Նրա միջոցով և Նրա շնորհիվ[1]: Շնորհի ճանապարհորդությունը կապված է ճանապարհորդության էության հետ:

Ջեյմս Կ. Ա. Սմիթը աշակերտությունը նկարագրում է որպես «ճամփորդության մի տեսակ, որի ժամանակ խավարի թագավորությունից մենք տեղափոխվում ենք Աստծո Սիրելի Որդու թագավորություն» (Կողոսացիս 1:13)[2]: Սա իրենից ներկայացնում է ճամփորդության լեզվի փոփոխություն՝ մի երկրից դեպի մյուսը[3]: Խոսքը գնում է մեղքից դեպի հավատք քաղաքացիություն ստանալու մասին, երբ փոփոխվում է նաև հավատարմությունը, իսկ այդ փոփոխությունն անհնար կլիներ եթե Աստծո շնորհի միջոցով մեզ չտրվեր Քրիստոսը, Ով ճանապարհն է: Սմիթը շարունակում է. «Քրիստոսով մեզ տրվում է երկնային անձնագիր. Նրա մարմնում մենք սովորում ենք ապրել Նրա Թագավորության «քաղաքացիների» պես»: Նման ներգաղթը դեպի նոր

---

[1] Ռիչարդ Ջոն Նոյհաուսը telos-ը սահմանում է որպես «Վերջնական ավարտ, որն իմաստ է տալիս տվյալ առաջնայինին»: Neuhaus, Death on a Friday Afternoon: Meditations on the Last Words of Jesus from the Cross (New York: Basic Books, 2000), 127.

[2]James K. A. Smith, *You Are What You Love: The Spiritual Power of Habit* (Grand Rapids: Brazos Press, 2016), 66.

[3]Ջոն Բունյանի «Ուխտագնացության առաջընթացը» (1678) վեպն այս նույն հայեցակարգի վրա հիմնված գեղարվեստական ավելի վաղ տարբերակն էր՝ մի երկրից/թագավորությունից դեպի մեկ այլ երկիր/թագավորություն տեղափոխվելու մասին:

թագավորություն պարզապես այլ տիրույթ տեղափոխվելու խնդիր չէ. մենք պետք է հարմարվենք նոր կյանքի ձևին, սովորենք նոր լեզու, ձեռք բերենք նոր սովորություններ և մերժենք մրցակից տիրապետության սովորությունները»[4]:

Ես իսկապես հավատում եմ Հիսուսի խոսքերին, երբ Նա ասաց. «Ես ձեզ համար տեղ եմ պատրաստելու» (Հովհաննես 14): Այդ խոստումը ներառում է այն երաշխիքը, որ Նա անձամբ է ամրագրումներ կատարում ճանապարհորդության համար, ներառյալ մեր անձնական բնակության վայրերը՝ երբ հասնենք նպատակակետին: Նա մեր երկնային անձնագիրն է, որը մեզ հնարավորություն է տալիս դառնալու նոր երկրի՝ Իր Թագավորության տեղացիները, բնակիչները: Լավագույնն այն է, որ Նա մեզ խոստանում է ուղեկցել մինչև տուն: Հիսուսը կլինի մեր ճանապարհը ճանապարհորդության համար: Սա շնորհի ճանապարհորդության հույսն է:

Ես Եմ Ճանապարհը, Ճշմարտությունը և Կյանքը

Երբ Հիսուսն ասաց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունն ու կյանքը» Նա չէր առաջարկում կյանքի վերացական սկզբունք, որն իրականում չէր գործի և պատից կախված կլիներ: Սա այն հարցի պատասխանն էր, որ վախեցած և անորոշ աշակերտների կողմից էր Նրան ուղղվել:

Այն գալիս է Հովհաննեսի Ավետարանի մի հատվածից, որը աստվածաբաններն անվանում են «Վերջին ելույթ» (Հովհաննես 14–17): Հովհաննեսի այս չորս գլուխները, ավելին, քան Նոր Կտակարանի մյուս Ավետարանները, մեզ ներքին հայացք են տալիս, թե ինչի մասին էր Հիսուսը մտածում և սովորեցնում Իր աշակերտներին Իր չարչարանքներից և խաչի վրա մահից անմիջապես առաջ: Այսպիսով, դրանք կարելի է նկարագրել որպես Հիսուս Քրիստոսի վերջին կամքն ու կտակը[5]:

Հիշեք, որ աշակերտներն այդ պահին լսեցին նոր, անհավանական վատ լուր: Նրանք նստել էին վարձակալած մի սենյակում: Բոլորը հավաքված էին նեղ անկյուններում: Հիսուսը սկսել էր լվանալ տասներկու աշակերտների ոտքերը, ինչն անհարմար դրության մեջ էր պահում բոլորին: Հետո Նա շարունակում է նրանց ասել, որ շատ շուտով նրանցից մեկը կմատնի Իրեն (Հովհաննես 13:21): Իրավիճակն ավելի է սրվում, երբ Հիսուսն ասում է, որ մի քանի տարի միասին ճանապարհորդելուց հետո Նա պետք է լքի աշակերտներին, և որ նրանք չեն կարող գնալ Իր հետ (Հովհաննես 13:33):

Այս ամենը շատ տխուր է: Հիսուսը զգում է, որ Իր խոսքերը ծանր զգացողություններ են հաղորդում աշակերտներին: Զարմանալի չէ, որ Հիսուսը շարունակում է հետևյալ խոսքերով. «Ձեր սրտերը թող չխռովին...» (14:1): «Խռովել» բառը թարգմանաբար հենց նույն բառն է, ինչ նկարագրվում է կատաղի փոթորկի ժամանակ Գալիլեայի ծովի ջրերը: Երբ քամին փչում էր, ջրերը բարձրանում էին և ալեկոծվում: Աշակերտների մոտ հենց նույն ալեկոծված վիճակն է նկատվում: Նրանց մոտ ներքին անհանգիստ վիճակ է: Նրանց գլխում հազար մտքեր, իսկ նրանց զգացմունքները գերծանրաբեռնված են: Հիսուսը փորձում է մխիթարել նրանց փոթորկած սրտերը՝ «Ձեր սրտերը թող չխռովին... Գնում եմ Ձեզ համար տեղ պատրաստելու...Եվ դարձյալ կգամ և Ձեզ ինձ մոտ

[4] Smith, *You Are What You Love*, 66.

[5] Ֆրեդերիկ Դեյլ Բրուները հիշատակում է Հովհաննես 14–16-ը որպես Հիսուսի աշակերտության քարոզներ, որոնց 17-րդ գլուխը ծառայում է որպես փակման աղոթք և այն ամբողջականացնում է «Հիսուսի համակարգված աստվածաբանությունը Իր միսիոներական եկեղեցու համար» գաղափարի մեջ: Bruner, *The Gospel of John: A Commentary* (Grand Rapids: Eerdmans, 2012), 786.

կառնեմ, որ ուր ես եմ, Դուք էլ լինեք: Եվ որ տեղ որ գնում եմ՝ գիտեք, և ճանապարհը գիտեք» (Հովհաննես 14:1-4):

Հետո Թովմասը սկսում է արտահայտվել: Պատմությունն իրեն անվանում է կասկածամիտ Թովմաս, սակայն ես ուրախ եմ, որ նա այնտեղ էր, որովհետև Թովմասը քաջություն ունեցավ տալու այն հարցը, որն ուզում էին այնտեղ գտնվող յուրաքանչյուր մարդ հարցնել և ստանալ դրա պատասխանը: Այս պահին նա նմանվում է լսարանում գտնվող ուսանողի, ով դասախոսության կեսին կանգնեցնում է պրոֆեսորին և ասում. «Ներեցե՛ք: Դա կարող է հիմարություն թվալ, բայց մենք պատկերացում չունենք, թե ինչի՞ մասին եք Դուք հիմա խոսում»: Իրականում, սա հիմար հարց չէր. Ես գնահատում եմ այն փաստը, որ Թովմասն ուներ անձնական կարծիք՝ բացահայտելու այն, ինչ թվում էր որպես գաղտնիք՝ աշակերտների համար և նա ուզում էր ստանալ այն հրատապ հարցի պատասխանը, որին սպասում էին բոլորը: Նա հարցրեց. «Տեր, մենք չգիտենք, թե որտեղ ես գնում. և ինչպե՞ս կարող ենք ճանապարհը գիտենալ» (Հովհաննես 14:5):

Կյանքը հենց այսպիսին է, այդպես չէ՞: Լինում են պահեր, երբ մենք մտածում ենք, թե ո՞ր կողմ գնանք և ո՞ր ճանապարհն ընտրենք: Կան ժամանակներ, երբ մենք մտածում ենք, որ գիտենք թե ուր ենք գնում, սակայն ստիպված ենք լինում ընդունել մեր սխալը և հասկանում ենք, որ ամբողջովին կորցրել ենք մեր ճանապարհը: Թվում է, թե կյանքում այնքան խաչմերուկներ ու շրջադարձեր կան և այնքան շատ տարբերակներ ու փակուղիներ: Կյանքի այս գլուխկոտրուկում ավելին քան երբևէ մեզ մեկ իր է անհրաժեշտ մեր ճիշտ ճանապարհը գտնելու համար և դա, իհարկե, քարտեզն է: Այնուամենայնիվ, շատ մարդիկ, չգտնելով այդ քարտեզը, որոշում են, որ ավելի լավ է գնալ ինչ-որ տեղ, քան ոչ մի տեղ չգնալ, ուստի նրանք ընտրում են ուղղություն և գնում այն ճանապարհով, որը թվում է, թե ամենաքիչ դիմադրության հանդիպող ուղին է:

Բարեբախտաբար, Հիսուսը պատասխանում է Թովմասի հարցին (և մեր հարցին). «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը: Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհաննես 14:6): Հետաքրքիր է, որ Հիսուսի պնդումների շեշտադրումը ակնհայտորեն «ճանապարհին» է: Ճանապարհը հաջորդաբար առաջինն է: Դա չի նշանակում, որ ճշմարտությունն ու կյանքը կարևոր չեն: Դա պարզապես նշանակում է, որ *ճշմարտությունն* ու *կյանքը* բացատրում են, թե ինչպե՞ս և ինչո՞ւ է Հիսուսը հանդիսանում հենց Ճանապարհը[6]:

Նա ճանապարհն է, քանի որ Նա է ճշմարտությունը՝ Աստծո հայտնությունը: Նա Ճանապարհն է, որովհետև Աստծո կյանքը, որը հասանելի է յուրաքանչյուր մարդու համար, բնակվում է Նրա մեջ և միայն Նրա մեջ: Նա միաժամանակ և՛ մուտքն է, և՛ Աստծո հետ կյանքի մարմնավորումը: Հովհաննես Ավետարանի Բարի Լուրի հիմնական գաղափարն այն է, որ Հիսուսում, Ով Խոսքի մարմնավորումն է, մենք կարող ենք տեսնել և ճանաչել Աստծուն այնպես, ինչպես նախկինում հնարավոր չէր նույնիսկ դա հասկանալ: Նա Աստծո լիազորված ինքնաբացահայտումն է[7]: Այլ

---

[6] Շատերի կողմից համարվելով իր սերնդի ականավոր Հովհաննես Առաքյալի ուսումնասիրող՝ Ռայմոնդ Բրաունը կարծում էր, որ «Ճանապարհը (մատնանշված Հիսուսի կողմից) հիմնական նախադրյալն է, իսկ ճշմարտությունն ու կյանքը պարզապես ճանապարհի բացատրությունն են»: Brown, The Gospel According to John XII-XXI, The Anchor Bible Commentary (New York: Doubleday, 1970), 621. Եթե սա ճիշտ է, ապա ճշմարտությունն ու կյանքը ճանապարհի բացատրությունն են, կամ, այլ կերպ ասած, Հիսուսն է Ճանապարհը, քանի որ հենց Նա է ճշմարտությունն ու Կյանքը: Հիսուսն անձամբ մարմնավորում է երեքին՝ միաժամանակ:

7 Բրուները հիշեցնում է մեզ, որ «Հիսուսի կողմից Հայր Աստծո բացահայտումը մեզ մեծ հույս է տալիս, որ Հայրը նույնպես՝ Քրիստոսի պես կլինի, կա և միշտ եղել է Բարի և էլ ավելի Բարի: »Bruner, The Gospel of John, 811.

կերպ ասած, Հիսուսը ոչ միայն ճանապարհն է, այլ այն ճանապարհը, որը անտեսանելի Աստծո՝ բացառիկ և տեսանելի դրսևորումն է, որին մենք ճանաչում ենք որպես Հայր (Հովհաննես 1:14, 18, Հովհաննես 6:46, Հովհաննես 12:45)[8]:

Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով» (Հովհաննես 14:6): Մեզանից շատերը կարող են առնչվել Թովմասի այս հարցին. «Ինչպե՞ս կարող ենք ճանապարհը գիտենալ» (Հովհաննես 14:5), քանի որ յուրաքանչյուր մարդ, անկախ նրանից, թե ինչպիսի հոգևոր բարձրունք ունի, որոշակի հարցերի պատասխաններ է փնտրում: Մեր հասարակությունն այսօր հոգեպես ավելի բաց է, քան եղել է երկար տարիների ընթացքում: Խնդիրն այն է, որ մարդիկ բաց են հոգևորության շատ տարբեր ուղիների համար:

Ժամանակակից Արևմտյան աշխարհայացքը, որը բխում է սպառողական համապարփակ մտածելակերպից և կապված է վերջին շրջանում ողորմածության քաղաքական մտահոգության հետ, շատերին ստիպում է կրոնական բազմաթիվ ուղղությունների համարել այնքան լիազորված, որքան նախկին, սկզբնական հավատքի հետևողներն են, քանի դեռ սեփական կարիքները բավարարվում են և քանի դեռ մենք ինքներս նվիրված ենք մեր սեփական անձերին: Եվ այսպես, ենթադրվում է, որ անկախ նրանից՝ մարդ կընտրի բուդդայականությունը, հինդուիզմը, իսլամը, սայենթոլոգիան, հուդայականությունը, քրիստոնեությունը կամ որևէ այլ կրոն, քանի դեռ նա անկեղծ է և գոհ է իր ընտրությամբ, ապա այդ այլընտրանքը նույնքան լավն է, որքան ցանկացած այլ կրոնական ճյուղ, քանի որ բոլոր ճանապարհները տանում են դեպի նույն Աստված(այսպես է ասում աշխարհայացքը):

Նման տեսակետի բազմաթիվ խնդիրներից մեկն այն է, որ այս տարբեր համոզմունքները հաճախ հակասում են միմյանց և ներկայացնում են միմյանցից շատ տարբերվող և նույնիսկ միմյանց բացառող պահանջներ: Երբ քրիստոնեությունը դիտարկվում է բազմաթիվ այլ բազմազան կրոնական համակարգերի լույսի ներքո, կարելի է նկատել, որ դա միակ հավատքն է, որը վերջնական պնդում է, որ Հիսուսը դեպի Աստված տանող բացառիկ ճանապարհն է: Մարդը չի կարող հավատալ Հիսուս Քրիստոսի հետևյալ պնդմանը, որ՝ «Ոչ ոք չի գալիս Հոր մոտ, եթե ոչ Ինձանով», և դեռևս պնդել, որ Հոր մոտ մուտք ունենալու այլ ուղիներ ևս կան: Փաստորեն, այդ քայլին գնալը կնշանակի հերքել հենց Քրիստոսին, Ով ասաց այդ խոսքերը: Հիսուսը չասաց. «Ես Հոր մոտ տանող բազմաթիվ ճանապարհներից մեկն եմ»: Նա չասաց. «Դուք կարող եք ընտրել Ինձ հետևել, եթե ցանկանում եք, բայց կան այլ ընտրություններ, որոնք նույնքան արդյունավետ են»: Ոչ էլ Հիսուսն ասաց. «Որ հոգևոր ճանապարհով էլ որ քայլես, Ինձ համար լավ կլինի, քանի դեռ դու անկեղծ ես»: Հիսուսը երբեք նույնիսկ չի ակնարկել այդ մասին: Նա հստակ հայտարարեց, որ Նա է միակ ճանապարհը, որը տանում է մեզ՝ դեպի Հորը[9]:

Երբ մեր ընտանիքը նոր քաղաք տեղափոխվեց, երկար ժամանակ չէր անցել, երբ ես և իմ կինը պետք է հանդիպեինք քաղաքում: Մենք առանձին մեքենաներ վերցրեցինք, քանի որ նրա ուղղության զգացումը միշտ ավելի լավ է եղել, քան իմը, հետևաբար նա առաջնորդեց ճանապարհը: Հանկարծ մենք խիտ երթևեկության մեջ ընկանք, և ես կորցրի նրան: Կարծում էի, որ

---

8 Այս նախադասության համար ոգեշնչվել եմ հետևյալ բանաստեղծական ծանոթագրությունից՝ The Wesley Study Bi- ble: New Revised Standard Version, Joel B. Green and William H. Willimon, eds. (Nash- ville: Abingdon Press, 2009).

9 Սա չի սահմանափակում այն հասկացողությանը, որ Աստծո ինքնիշխանությունը ողորմածորեն չի մոտենում այլ կրոնների և հավատքի ներկայացուցիչների հետևորդներին, ովքեր մահանում են Քրիստոսի Բարի Լուրի մասին չիմացած: Աստված ինքնիշխան է և ընտրում է անել այն, ինչ կամենում է: Ես լիովին սպասում եմ Շնորհքի աշխատանքի զարմանահրաշ գործողություններին:

հետևում եմ նրան, սակայն մինչ ես հասկացա, որ դա այդպես չէ, ես բոլորովին այլ ճանապարհի վրա էի հայտնվել, և նույնիսկ այնքան էի շեղվել ճանապարհից, որ հանդիպման համար արդեն շատ ուշ էր: Ես ուղղակի շրջվեցի ու գնացի դուն: Պատմության բարոյականությունը պարզ է. դու կարող ես անկեղծ լինել քո ընտրած ճանապարհին և միևնույն ժամանակ անկեղծորեն սխալվել: Փաստն այն է, որ ճիշտ ճանապարհը գտնելու համար ավելին է պահանջվում, քան անկեղծությունը[10]: Մեզ անհրաժեշտ է ճշմարտություն: Մարդը կարող է շատ ժամանակ տրամադրել այն ուղղությանը, որով նա գնում է, սակայն եթե դա սխալ ճանապարհ է, կարևոր չէ թե ինչքան շուտ ես ժամանել:

Հիսուսի պնդումն արմատապես ընդգրկուն է, քանի որ բոլորն են հրավիրված հետևելու Իր ճանապարհին, սակայն այն արմատապես բացառիկ է, քանի որ ոչ բոլոր ուղիները, որոնցով մարդիկ գնում են դեպի ճշմարտություն, կարող է տանել դեպի մեկ ճշմարիտ Աստծո մոտ: Երբեմն դրանք մեզ բերում են փակուղու առաջ:

Յուրաքանչյուր մարդ՝ մեզանից յուրաքանչյուրը, պատասխանատու է սխալ ճանապարհ ընտրելու համար: Սխալների արդյունքում մենք Աստծուց հեռու ենք հայտնվում: Եսայիա մարգարեն հիմնավորված գրում է. «Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցինք. յուրաքանչյուրն իր ճանապարհով դառավ» (Եսայիա 53:6): Պողոս առաքյալը Հռովմեացիներին ուղղված թղթում կրկնում է. «Որովհետև ամենքը մեղանչեցին և Աստծո Փառքիցը պակասված են» (Հռովմեացիս 3:23): Ինչո՞ւ: Որովհետև մենք բոլորս կյանքում սխալ ճանապարհ ենք ընտրել: Մենք բոլորս գնում ենք մեր սեփական ճանապարհով, ինչի փոխարեն մենք պետք է ընտրենք Աստծո կամքն ու ճանապարհը մեր կյանքի համար:

Ավետարանը (Բարի Լուրը) այն է, որ Հիսուսը եկել է մեզ նման կորած մարդկանց համար: Ավետարանի մեկ այլ հեղինակ՝ Ղուկաս Ավետարանիչը, մեզ ասում է, որ Հիսուսի առաքելության նպատակն է «որոնել և փրկել կորածներին» (Ղուկաս 19:10): Նրա փոխարեն, որ մենք ուղղակի կանգնենք ճանապարհի եզրին, կամ որ էլ ավելի վատ է, սխալ ճանապարհով գնանք, Հիսուսը եկավ մեզ հստակ ցույց տալու միակ ճանապարհը՝ դեպի Աստված, դեպի նոր թագավորության երկիր և դեպի հավերժական կյանք:

Աստվածաբան մեկնաբանողներից մեկը վերափոխում է Հիսուսի խոսքերը հետևյալ կերպ՝ «Ես, եմ այնտեղ տանող Ճանապարհը, և Ես՝ Ճշմարտությունն եմ, որը կառաջնորդի քեզ այնտեղ գնալու ճանապարհին, և ես՝ ես եմ Կյանքը, որը քեզ ուժ կտա՝ հետևելու Ճշմարտությանը, այնտեղ գնալու ճանապարհին»[11]: Ոչ մի ուղղությունների շարք, ոչ մի քարտեզ և ոչ մի շարք հուշումներ. Ես Եմ Ճանապարհը[12]: Կյանքը կազմակերպված սկզբունքների կամ փիլիսոփայական ենթադրությունների մի շարք չէ, այլ Ես Եմ Ճշմարտությունը: Կյանքն ավելի լավատեսական սկզբունքներով ապրելու այլընտրանքային միջոց չէ, Ես Եմ Իրական Կյանքը, եզակի թիվը նշանակում է իսկապես մարդ էություն:

---

[10] Ոչ ոք այնքան անկեղծ չէ իր ճշմարտության մեջ այնքան, որքան մահապարտները վերջին պահին: Այնուամենայնիվ, անկեղծությունը, անկախ նրանից, թե որքանո՞վ է այն մոտ ճշմարտությանը, բավարար չէ, եթե այն հիմնված չէ վերջնական իրողության վրա:

[11] Bruner, The Gospel of John, 823.

[12] Ես (ego-էգո-ես) դերանունը ընդգծված է և միջոցից կա անցում դեպի անձնավորությանը: Հատկանշական է, որ բազմիցս նաև շեշտվել է, որ Հովհաննես Առաքյալի թղթում նշված Հիսուսի «Ես Եմ» խոսքերը նուրբ համեմատական են տարվում Մովսեսի հետ այրվող թփերում խոսող Աստծո՝ «Ես Եմ» խոսքերի հետ (Ելից 3:14): «Ես Եմ»-ը եբրայերեն սուրբ գրություններում հայտնի դարձավ որպես Յահվե:

Հիսուս Քրիստոսի այս պնդումը ոչ միայն *ճանապարհ է*, և *ճշմարտություն,* և *կյանք*, բայց նաև այն հաստատումն է, որ Քրիստոսը Աստծո ճշմարիտ և եզակի Որդին է, և հենց սա է քրիստոնեության հիմքը: Սա այլ հավատքների համակարգերը չարաշահելը չէ. այլ պարզապես հաստատումն է, որ միայն մեկ ճանապարհ կա՝ դեպի Հայր Աստծուն տանող, և դա Հիսուս Քրիստոսի միջոցով է: Նա միակ միջոցն է, որով մենք կարող ենք փրկվել: Ինչպես նշել է Ֆրեդերիկ Բրունները, «Արևելքը մշտապես փափագել է «Ճանապարհին» (*Tao*), Արևմուտքը՝ «Ճշմարտությանը» (*Veritas*), և ամբողջ աշխարհը (արևելք, արևմուտք, հյուսիս և հարավ)՝ (իրական) «կյանքին»: Հիսուսն այս երեքի անձնավորումն է մեկ մարմնում»[13]:

Պատկերացրեք, որ դուք գտնվում եք անծանոթ քաղաքում և ինչ-որ մեկին խնդրում եք ձեզ ուղղություններ տալ որեւէ վայր գնալու համար: Անձը, ումից օգնություն եք խնդրել, կարող է ասել. «Դուք պետք է թեքվեք դեպի աջ՝ հաջորդ մեծ խաչմերուկում: Այնուհետև անցեք հրապարակը, անցեք եկեղեցու կողքով, մնացեք միջին գծում, որը ձեզ կտանի ուղիղ՝ դեպի աջ կողմի երրորդ փողոցը, մինչև հասնեք չորս երթևեկելի կանգառի»: Նույնիսկ հստակ առաջնորդության դեպքում, երբ ճանապարհը բարդ է, սխալ շրջադարձ կատարելու կամ մոլորվելու հավանականությունը բավականին մեծ է:

Ենթադրենք, որ այդ ամենը բացատրելու փոխարեն անձը, ում հարցրել եք, ձեզ ասում է. «Գիտեք, այնտեղ հասնելու հեշտ ճանապարհ չկա: Այնտեղ հասնելը բավականին բարդ է, եթե նախկինում երբեք չեք եղել: Պարզապես հետևեք ինձ: Ավելի լավ է, եկե՛ք ինձ հետ, և ես ձեզ այնտեղ կտանեմ»: Այդ մարդը ոչ միայն դառնում է ձեր ուղեցույցը, այլ նաև, ըստ էության, դառնում է ճանապարհ, և դուք չեք կարող բաց թողնել նրան, քանի որ նա կտանի քեզ այնտեղ, ուր պետք է գնաս: Դա այն է, ինչ Հիսուսն անում է մեզ համար: Նա պարզապես խորհուրդներ և ուղղություններ չի տալիս մեզ: Նա մեզ հետ քայլում է շնորհի ճանապարհով: Իսկապես, նա մեզ չի բացատրում ճանապարհը, նա դառնում է ճանապարհ:

Բրիտանացի աստվածաբան և հայտնի միսիոլոգ Լեսլի Նյուբիգինը ազդեցիկ կերպով ձևակերպեց այս տեսակետը. «Այնպես չէ, որ Նա *(Հիսուսը)* սովորեցնում է ճանապարհը, կամ առաջնորդում է մեզ այդ ճանապարհով: Եթե դա այդպես լիներ, մենք ուղղակի շնորհակալություն կհայտնեինք Նրան՝ սովորեցնելու համար և ինքնուրույն կհետեւեինք այդ ճանապարհին: Հիսուսն ինքն է ճանապարհը... Այս ճանապարհով գնալը, իրականում, միակ ուղին է դեպի Հայր Աստված»[14]:

Լյուիս Քերոլի «Ալիսան Հրաշքների Աշխարհում» վեպում Ալիսան գալիս է մի խաչմերուկի և Չիշիրյան Կատվին հարցնում.

> -Կասե՞ք ինձ, խնդրում եմ, ո՞ր ճանապարհով պետք է գնամ այստեղից:
> -Դա կախված է նրանից, թե դուք ո՞ւր եք ուզում գնալ,- պատասխանում է Կատուն:
> - Ինձ այնքան էլ չի հետաքրքրում, թե որտեղ եմ գնում,- պատասխանում է Ալիսան:
> -Ուրեմն բացարձակ նշանակություն չունի, թե որ ճանապարհով ես գնում,- ասաց Կատուն:

Դեռ ոչ ոք Հիսուսի եզակի պնդման ավելի հաջողված տարբերակ չի ներկայացրել, քան Թովմաս Կեմպիսը՝ իր «Քրիստոսի նմանակման մասին» դասական ստեղծագործության մեջ:

---

[13] Bruner, The Gospel of John, 812.

[14] Lesslie Newbigin, The Light Has Come: An Exposition of the Fourth Gospel (Grand Rapids: Eerdmans, 1987), 181. Ընդգծումն ավելացված է:

> *Հետևիր ինձ. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»: Առանց ճանապարհի գնալու ընթացք չկա. առանց ճշմարտության, չկա իմացություն. առանց կյանքի ապրել չկա: Ես եմ այն ճանապարհը, որով դու պետք է գնաս. ճշմարտությունը, որին դու պետք է վստահես. կյանքը, որի վրա պետք է հուսաս: Ես ճանապարհն եմ՝ անձեռնմխելի, ճշմարտությունը՝ անսխալական, կյանքը, որ չի կարող վերջանալ: Եթե դու մնաս իմ ճանապարհին, դու կիմանաս ճշմարտությունը, և ճշմարտությունը կազատի քեզ, և դու կապրես հավերժական կյանքում*[15]:

Հիսուսի մեջ մենք գտնում ենք դեպի Հոր տանող ճանապարհը: Նա տան ճանապարհն է:
Հիսուսի մեջ մենք գտնում ենք Ճշմարտությունը: Նա մարմնավորում է Հոր բնավորության և էության անփոփոխ, վստահությունն ու ճշմարտությունը:
Հիսուսի մեջ մենք գտնում ենք Կյանք՝ առատ կյանք, ինչպես հիմա, այնպես էլ Աստծո խոստացված նոր արարչության մեջ:
Սա շնորհի ճամփորդությունն է:

[15] Thomas à Kempis, Of the Imitation of Christ, Book 3, chapter 56 (c. 1418–1427).

1
ՀՐԱՇԱԼԻ ՇՆՈՐՀ
Շնորհն ամենուր է
- Ջորջ Բերնանոս, Երկրի Քահանայի օրագիրը

«Հրաշալի Շնորհ»-ն այսօր աշխարհի ամենահայտնի և սիրված երգերից է: Այն ավելի քան երկու դար է, ինչ շարունակում է երգվել հարյուրավոր լեզուներով և բարբառներով[1]: Այն չի ճանաչում ռասայական և կրոնական դավանանք կամ աշխարհագրական և ազգային սահմաններ: Դուք նույնիսկ կարող եք չլինել քրիստոնյա, սակայն իմանաք երգի բառերը և հուզվեք դրանց իմաստից: Այս երգը գրել է Ջոն Նյուտոն անունով մի անգլիացի հովիվ: Իր հասուն կյանքի վաղ շրջանում, նա եղել է ստրկատիրական նավի նավապետը և պատասխանատու է եղել հարյուրավոր ստրուկների՝ Արևմտյան Աֆրիկայից դեպի Մեծ Բրիտանիա բերելու համար: Այնուամենայնիվ, ծովում կատաղի փոթորկի մահացու ալիքների հետ բախման ժամանակ նա հոգևոր հանդիպման փորձ ունեցավ, որն արմատապես փոխեց նրան: Նա այլևս նույնը լինել չէր կարող:
Նա ոչ միայն սկսեց շնորհի ճանապարհորդություն Աստծո հետ, այլ նաև խորապես ապաշխարեց և զղջաց ստրկավաճառության մեջ իր անձնական մասնակցության համար: Նա հրաժարական տվեց իր առաջնորդությունից, դարձավ Անգլիկան եկեղեցու հովիվ և ավելի ուշ, դարձավ Ուիլյամ Ուիլբերֆորսի դաստիարակը, ով ղեկավարում էր Բրիտանական կայսրությունում ստրկությունը վերացնելու քարոզարշավը: Ութսուն երկու տարեկանում, երբ նա պառկած էր մահամերձ վիճակում, Նյուտոնը հայտարարեց. «Իմ հիշողությունը գրեթե անհետացել է: Բայց ես հիշում եմ երկու բան՝ որ ես մեծ մեղավոր եմ, և որ Քրիստոսը մեծ Փրկիչ է»: Զարմանալի չէ, որ նա կարող էր գրել այդքան գեղեցիկ, բանաստեղծական մի երգ. նա ստացել էր, զգացել և կերպարանափոխվել զարմանալի շնորհով:
Սա շնորհի մասին գիրք է: Խոսքը շնորհի ճանապարհորդության մասին է, որով մենք ավելի ու ավելի ենք նմանվում Հիսուս Քրիստոսի կերպարին, որը Ճանապարհն է, Ճշմարտությունը և Կյանքը: Շնորհը գալիս է բազմաթիվ եղանակներով, ինչպես Սուրբ Գրքում, այնպես էլ մեր կյանքում, բայց շնորհի բնույթը մնում է նույնը: Մենք դա ստանում ենք անձամբ՝ որպես Աստծո նվեր, և համագործակցում ենք Աստծո հետ փոխադարձ և փոխակերպվող հարաբերությունների շրջանակներում:

Ի՞նչ է Շնորհը

Ո՞րն է Աստծո շնորհը: Ինչպե՞ս է այն մտնում մեր կյանք, ազդում մեզ վրա, փոխում և զորացնում մեզ ապրելու Քրիստոսանման կյանքով: Շնորհի բազմաթիվ սահմանումներ կան.

- Աստծո բարեհաճությունը, նույնիսկ եթե անարժան ենք,
- Աստծո սերը, նույնիսկ եթե անարժան ենք,
- Լավություն, որը տրվում է մեկին, ով արժանի է հակառակին,

[1] Երբ ես գրում եմ սա՝ նստած Յոհանեսբուրգի (Հարավային Աֆրիկա) օդանավակայանի սրահում, ես կարող եմ լսել, թե ինչպես է աշխատողներից մեկը կամացուկ խոսում իրենց տեղի աֆրիկանոս լեզվով հետևյալը: Ամերիկացի լրագրող Բիլլ Մոյերսը ներկա է գտնվել Լինկոլն կենտրոնումմի ներկայացման, որտեղ հանդիսատեսը երգել է «Հրաշալի Շնորհ» երգը: Նա այնքան տպավորված էր երգի միավորող ուժով, ինչպես քրիստոնյաների, այնպես էլ ոչ քրիստոնյաների շրջանում, որ ոգեշնչված էր ստեղծել նույն անունով վավերագրական ֆիլմ:

- Աստծո սիրո բացարձակ, ազատ արտահայտումը, որն իր միակ շարժառիթը գտնում է Տվողի առատաձեռնության և բարերարության մեջ[2],
- Աստծո անվերապահ բարությունը:

Շնորհի այս բոլոր սահմանումները փորձում են նկարագրել Աստծո սիրալիր արձագանքի աննկարագրելի և ապշեցուցիչ կողմերը, որը Նա ցուցաբերում է անարժան մարդկությանը: Ահա թե ինչու ենք մենք օգտագործում «հրաշալի» բառը: Այն հակասում է հարաբերությունների և գործարքների մեջ մեր՝ մարդկային արժեքեհամակարգերին:

Ֆինանսական աշխարհում կան գաղափարներ, որոնց ծանոթ են միայն մասնագետները և կա մի գաղափար, որը կոչվում է «արտոնյալ ժամանակաշրջան»: Արտոնյալ ժամկետները ժամանակի փոքր պատուհաններ են, երբ ինչ-որ մեկի պարտքը վարկատու ընկերությունը հետաձգում է առանց տույժի: Երբ վարկը հետաձգվում է առանց տուժեր վճարելու, դա արտոնյալ ժամանակաշրջան է, բայց կան որոշ հավելումներ: Այն տևում է ընդամենը կարճ ժամանակ (դա արտոնյալ շրջան է): Ի վերջո, ամեն ինչ կավարտվի, և եթե ինչ-որ մեկը դեռ չի վճարել իր պարտքը, ապա լրացուցիչ տույժեր կկիրառվեն: Այն անվճար է, բայց անվերապահ չէ:

Աստծո շնորհն այլ է: Աստծո շնորհը տրվում է անվճար (չշփոթել «առանց գնի» արտահայտության հետ, իսկ այս գաղափարի մասին ավելի մանրամասն՝ գլխի վերջում կխոսենք), և դա լավ իրողություն է, որովհետև մենք, այնուամենայնիվ մեր կողմից ոչինչ անել չենք կարող: Մենք երբեք չենք կարող վճարել կամ վերադարձնել այն, ինչ պարտք ենք Աստծուն: Իր շնորհով է, որ Աստված մեզ համար անում է այն, ինչ մենք երբեք չենք կարող անել ինքներս մեզ համար: Դրա համար էլ ասում ենք շնորհն անսահման է և մենք արժանի չէինք դրան: Աստված մեզ ավելի լավ է վերաբերվում, քան մենք արժանի ենք: Դա այն բարեհաճությունն է, որը տրվում է մեզ, երբ մենք արժանի ենք հակառակին, և դա ստիպում է մեզ հետևել Հիսուսին ամբողջությամբ նվիրված աշակերտությամբ:

Շնորհի ամենապարզ սահմանումը «նվեր» բառն է: Պողոս առաքյալը փոխառեց ընդհանուր հունարեն «պարգև» կամ «շնորհ» բառը՝ «charis», և օգնեց վերաիմաստավորել նկարագրելու այն ամենի հսկայական նշանակությունը, ինչ Աստված արել է մեզ համար՝ Հիսուս Քրիստոսում (2 Կորնթացիս 8:9, 9:15, Գաղատացիս 2:21, Եփեսացիս 2:4–10)[3]: Կարևոր է նաև նշել, որ «charis»-ը առաջացել է «char» արմատից և նշանակում է «այն, ինչը ուրախություն է բերում»[4]: Այսպիսով, տրված և ստացված շնորհի գործողությունը և՛ ուրախություն է առաջացնում, և՛ երախտագիտություն: Այդ առումով շնորհ ստացողների համար տեղին է փոխարենը ինչ-որ բան առաջարկել՝ երախտագիտություն և նվիրաբերված կյանք: Սա չի նշանակում, որ աստվածային շնորհը հարաբերական գործարք է: Բարությունը հատուցանելու ցանկությունը (կամ ակնկալիքը) վերացնում է նվերի զորությունը[5]: Գործարքային մտածողությունը միշտ խաթարում և արժեզրկում է նվեր անելու մտադրությունը:

---

[2] Սա շնորհի սահմանման անորոշ վերափոխումն է, որը նկարագրել է Նոր Կտակարանի գիտնական, լեզվաբան և առաքելության ղեկավար Սպիրոս Զոդիատեսը:

[3] Հունարեն «charis» բառը լատիներեն թարգմանվում է որպես «gratia» կամ պարզապես «շնորհ»:

[4] Thomas A. Langford, Reflections on Grace (Eugene, OR: Cascade Books, 2007), 28.

[5] Ջոն Մ. Բարքլին իր՝ Paul and the Gift (Grand Rapids: Eerdmans, 2015) գրքում հաստատում է, որ «նվերի» գաղափարը՝ որպես «անհատույց, իզուր» հանձնված մի բան, ժամանակակից արևմտյան հայեցակարգ է: Պատմության ընթացքում և նույնիսկ այսօր աշխարհի շատ մասերում նվերներ են տրվում վերադարձի մեծ ակնկալիքներով, նույնիսկ այն բանի համար, որ ձեռք բերեն մի բան, որը կամրապնդի սոցիալական համերաշխությունը: Փրկության «պարգևի» Նոր Կտակարանային Ավետարանի ըմբռնումն այն է, որ չնայած

Եթե ես իմ ընկերոջը նվեր եմ ուզում անել, ես կարող եմ ասել. «Ես ուզում եմ այս նվերը քեզ տալ՝ որպես քո հանդեպ իմ սիրո նշան»:
Սովորական պատասխանը կլինի այն, որ ընկերս ստանա նվերը և պարզապես ասի՝ «Շնորհակալություն»:
Իսկ եթե դրա փոխարեն իմ ընկերն ասի «Շատ հաճելի քայլ է քո կողմից: Որքա՞ն եմ ես քեզ պարտք»: Այս դեպքում նա նվերի «լեզուն» տեղափոխում է գործարքային «լեզվի», *այսինքն՝ եթե դու ինձ ինչ-որ լավություն ես անում, ապա ես քեզ պարտք եմ մնում:*
Գոյություն ունի նաև մեկ այլ խնդիր՝ շնորհի պարգևը վերադարձելի գործարքների հետ համադրելու հետ կապված: Շնորհի հիմքում ընկած իմաստն այն է, որ մենք ոչինչ չենք կարող անել, որպեսզի Աստված մեզ ավելի շատ սիրի, և մենք ոչինչ չենք կարող անել, որպեսզի Աստված մեզ ավելի քիչ սիրի, քան Նա արդեն անում է[6]: Մեր մեջ չկա որևէ լավ երևույթ, որ մեզ արժանի դարձնի կամ կարողանանք վաստակել Աստծո սերը, և չկա որևէ վատ բան, որ կարող է մեզ բաժանել Աստծո սիրուց, որը բնակվում է մեր Տեր Հիսուս Քրիստոսում (Հռոմեացիս 8:35-39): Աստված մեզ չի սիրում, որովհետև մենք լավն ենք, և Աստված չի ատում մեզ, որովհետև մենք վատն ենք: Աստծո բնական էությունը Սուրբ սերն է, ինչը նշանակում է, որ Աստծո բնորոշ արարքը աստվածային կերպով ինքնաբավ է և շաղախված է շնորհով[7]:
Ֆիլիպ Յանսեյը գրում է. «Շնորհը նշանակում է, որ Աստված արդեն սիրում է մեզ այնքան, որքան անսահման Աստված կարող է սիրել»[8]: Քանի որ Աստված սկզբում չի սիրել մեզ՝ ելնելով մեր լավ վարքագծից, ինչպե՞ս կարող է ավելի լավ վարքագիծը ստիպել Աստծուն ավելի շատ սիրել մեզ: Նմանապես, ինչպե՞ս կարող է ավելի վատ վարքագիծը ստիպել Աստծուն ավելի քիչ սիրել մեզ: Դուք չեք կարող ավելի շատ աղոթել, ավելին տալ, ավելի շատ ծառայել կամ ավելի շատ զոհաբերել և ստիպել Աստծուն ասել. «Նա սկսել է ամեն բան ավելի լավ անել: Նա վերջապես ինքն իրեն կարող է կառավարել: Ես նրան հիմա ավելի շատ եմ սիրում, քան նախկինում»: Ո՛չ: Ձեզ սիրում են այնպիսին, ինչպիսին կաք: Ամեն ինչ կախված չէ նրանից, թե ինչ եք անում կամ ինչպես եք վարվում, ոչ թե այն պատճառով, որ դուք դրան արժանի եք, այլ որովհետև սա Աստծո սրտի առաջին և վերջին ցանկությունն է:
Արդարության, ողորմության և շնորհի միջև կատարված հետեւյալ համեմատությունը լավ բնութագրիչ է: Արդարություն նշանակում է ստանալ այն, ինչին արժանի ես: Ողորմություն այն չէ, ինչի արժանի ես: Շնորհը ստանալն է այն, ինչին արժանի չես:
Հիսուսը շատ առակներ պատմեց՝ օգնելու մեզ պատկերացնել կյանքը թագավորության տեսանկյունից: Այս առակները պարզապես բարոյական պատմություններ չէին, որոնք պատմվում էին մեզ ապրելու ավելի լավ ճանապարհ ցույց տալու համար: Նրանք օգնում են մեզ ավելի լավ հասկանալ և ուղղել Աստծո էության և սրտի մեր հայեցակարգը: Մտածեք կորած ոչխարի,

---

մենք արժանի չէինք և այն հնարավոր չէր վաստակել, Աստծո շնորհքը ծնում է արդարություն, իսկ արդարությունը ծնում է հնազանդություն:

[6] Philip Yancey, What's So Amazing about Grace? (Grand Rapids: Zondervan, 1997), 70.

[7] «Աստծո ամենակարևոր հատկանիշը սերն է: «Աստված սեր է», - ասում է Ջոնը սա շատ պարզ է, բայց նաև շատ խորը: Մենք կարող ենք փոփոխել Աստծո սերը «Սուրբ» բառով: Այնուամենայնիվ, սա քիչ բան է ավելացնում Աստծո ըմբռնմանը, քանի որ, ըստ էության, Աստծո սերը Սուրբ է: «Սուրբ» ձևափոխիչը հիշեցնում է մեզ, որ Աստված մեզանից վեր է, սակայն միշտ մեր կողքին: Աստված Սուրբ է և բնությամբ մեզանից միշտ տարբեր է»: Diane LeClerc, Discovering Christian Holiness: The Heart of Wesleyan-Holiness Theology (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 2010), 274.

[8] Yancey, What's So Amazing about Grace, 70.

կորցրած մետաղադրամի և կորած որդիների առակների մասին (Ղուկաս 15)[9]: Հիսուսը Աստծուն նկարագրում է որպես հովիվ, ով անչափ ուրախ է ոչ թե այն պատճառով, որ իննսունինը ոչխարները հետևում էին կանոններին, այլ այն պատճառով, որ գտնվել է իր կորածներից մեկը: Նա Աստծուն նկարագրում է որպես մի կին, որը տակն ու վրա է անում իր տունը՝ թանկարժեք մետաղադրամ փնտրելու համար: Երբ նա գտնում է այն, նա այնքան է ուրախանում, որ երեկույթ է կազմակերպում ընկերների հետ տոնելու համար: Այնուհետև նա Աստծուն նկարագրում է որպես սիրառատ մի հոր, ով հորիզոնում կանգնած փնտրում է կամակոր որդու պատկերը: Երբ նա նկատում է թափառող տղային «երբ նա դեռ հեռու էր» (Ղուկաս 15.20), նա լցվում է կարեկցությամբ և վազում է նրան տուն տանելու: Սրանք բոլորը պատկերացումներ են Աստծո էության և սրտի մեծության մասին: Գտնելու երևույթը ուրախացնում է Աստծո սիրտը: Շնորհը հաղթահարում է թափառականությունը, մոլորությունը և անհավատարմությունը:

Հիսուսը մեկ այլ առակ պատմեց խաղողի այգու աշխատողների մասին, որոնց գործատուն բոլոր աշխատողներին տալիս է նույն աշխատավարձը, թեև ոմանք շատ ավելի քիչ ժամեր են աշխատել, քան մյուսները (Մատթեոս 20.1–16): Այս պատմությունը տնտեսական իմաստ չունի: Թվում է, թե անխոհեմ բիզնես կիրառություն է: Բիզնեսի սեփականատերերի նման անխոհեմ պահվածքը վտանգում է կորցնել ամենաաշխատասեր աշխատակիցներին և խրախուսել ծուլությունը այն անձանց ովքեր չեն ցանկանում աշխատել, բայց սա առակ չէ բիզնեսի լավագույն փորձի մասին. դա առակ է Աստծո շռայլ շնորհի մասին: Շնորհը մաթեմատիկական հավասարում չէ, որը պահպանում է աշխատողների ժամերի հաշվարկը, հետևում է ճիշտ հաշվապահական սկզբունքներին կամ պարգևատրում է ամենաջանասեր աշխատողներին: Շնորհը այն չէ, թե ով է արժանի վարձատրության. խոսքը *անարժան* մարդկանց մասին է, որոնց ամեն դեպքում նվերներ են տալիս: Եթե սա ձեր ականջներին անհասկանալի է թվում և ձեր ողջախոհության համար ծիծաղելի, ապա դուք սկսում եք հասկանալ շնորհի սկզբնական գաղափարը:

Շնորհն Անձնական է

Մենք կարող ենք խոսել շնորհի փորձի մասին, քանի որ այն խորապես անձնական է և հարաբերական: Շնորհը անձնական է երկու կարևոր պատճառով. Նախ՝ շնորհը *իր* չէ: Դա ապրանք չէ: Դա Սուրբ նյութ չէ, որը լցված է մեր մեջ, ինչպես քրիստոնեական շարժիչային յուղը, որպեսզի օգնի մեր աշակերտության շարժիչին ավելի արդյունավետ աշխատել: Շնորհն անձնական է, քանի որ այն տրվեց մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով, ով ասաց. «Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը և կյանքը»[10]:

Թոմաս Լանգֆորդը, աստվածաբան Վեսլեյան ավանդույթի համաձայն, պնդում է, որ եկեղեցու պատմության ընթացքում պայքար է եղել շնորհի երկու հասկացությունների միջև.

> Մի կողմից, շնորհը համարվում է ինչ-որ բան, որ Աստված ունի և կարող է տալ, և գուցե ինչ-որ բան, որ մարդիկ կարող են ընդունել և տիրապետել. կամ, ավելի լայն իմաստով, ինչ-որ մթնոլորտ, էներգիա կամ ուժ, որը ներկայացնում է Աստծո գործողությունը և ապահովում է շրջապատող ենթատեքստ մարդկային կյանքի համար: Մյուս կողմից,

[9] Հոգնակի թվով «որդիներ»-ի իմ օգտագործումը դիտավորյալ է: Այս առակում Հիսուսի ուսմունքը պարզ է, նրա երկու որդիներն էլ կորել են տարբեր պատճառներով, բայց միայն մեկն է հեռացել տնից:

[10] Երբ Հովհաննեսի Ավետարանը խոսում է Սուրբ Հոգու մասին որպես «մեկ այլ» Պաշտպան, դա նշանակում է, որ Ճշմարտության Հոգին կշարունակի Հիսուսի Ճշմարտության ծառայությունը (Հովհաննես 14:6, 16–17):

> շնորհը նույնացվել է ինչ-որ մեկի հետ. շնորհը մարդ է, շնորհը Աստված է, Աստված ներկա է մարդկանց մեջ: Շնորհի մասին խոսելը նշանակում է խոսել Աստծո ներկայության և ստեղծագործության հետ հոգատար փոխգործակցության մասին: Այս ըմբռնմամբ, շնորհի նկատառումները հիմնված են Հիսուսի կյանքի, մահվան և հարության մասին մտորումների վրա: Հիսուս Քրիստոսը շնորհ է. Շնորհը Հիսուս Քրիստոսն է[11]:

Ինձ ապշեցրեց Դիարմեյդ ՄակՔուլոխի ծանրակշիռ արտահայտությունը քրիստոնեության իր մոնումենտալ պատմության մեջ. «Մի մարդ, ոչ թե համակարգ, գերի է ընկել [Պողոս] Դամասկոս տանող ճանապարհին առեղծվածային իրադարձությունների ժամանակ»[12]: Այդ պահին տարբեր առումներով, Սողոս Տարսոնցին, որը հետագայում վերանվանվեց Պողոս առաքյալ, պատրաստ չէր այս ապշեցուցիչ հայտնությանը: Նրա հավատարմությունը եղել է կրոնին, սահմանված համակարգին, ավանդույթին, օրենքին: Նա այդ ամենը շատ լավ գիտեր: Նա կրոնի մարզված և կատարյալ պաշտպանն էր, սակայն հայտնվեց մեկն, ով փոխեց նրան: Այդ անձը Հիսուս Նազովրեցին էր, որին Պողոսը հետագայում ճանաչեց որպես Քրիստոս և Տեր:

Պողոսի նախկին հավատքի համակարգը Օրենքին լիակատար հավատարմությունն էր: Դամասկոսի ճանապարհի փորձառությունից հետո (Գործք Առաքելոց 9:1-22), նա ամեն ինչ այլ կերպ էր տեսնում: Նա դեռ հավատում էր, որ Օրենքը լավ է, բայց թերի է: Երբ նա հանդիպեց Քրիստոսին, նա իր ուշադրությունը դարձրեց լավից (իր հրեական ժառանգությունից) դեպի անհամեմատ ավելի լավը՝ *Հիսուս Քրիստոսը*: Քրիստոսի հետ մտերիմ հանդիպման փորձի միջոցով նա հայտնաբերեց մի արդարություն, որը իրենը չէր[13]: Պողոսը հավատում էր, որ հավատացյալի հարաբերությունը Քրիստոսի (Անձի) հետ կարող է այնքան մտերմիկ դառնալ, որ նա խոսում է դրա մասին որպես «միասնություն Քրիստոսում», ինչը ցույց է տալիս ամբողջական միությունը: Միասնությունը Պողոսի համար վերացական հունա-հռոմեական, պլատոնական հասկացություն չէր: Հիսուս Քրիստոսը իսկական մարդ էր (է) վերջին պատմական ժամանակի և տարածության մեջ, ոչ միայն մեզ նման իր մարդկայնությամբ, այլ, ինչպես Պողոսը հանդիպեց Դամասկոսի ճանապարհին, հարություն առած, գերակշռող անձնավորություն, որի կյանքը, մահը, հարությունը և համբարձումը հակադարձեց մեր մեղքի և անկման աղետը (1 Կորնթացիս 15:22):

Իրապես, Սողոսից Պողոս անվան փոփոխությունը ավելին էր, քան դարձի գալ. դա արթնություն էր: «Եվ շուտով նորա աչքերիցը թեփերի պես վայր ընկան» (Գործք Առաքելոց 9.18): Դա վերածնունդ էր: Պողոսին տրվեց մաքուր, անարատ նվեր, որը նա ոչ կարող էր վաստակել, ոչ էլ արժանի լինել: Այժմ նա կարող էր տեսնել, թե Օրենքն ուր էր մատնանշում ամբողջ ժամանակ, իսկ այն մատնանշում էր դեպի մի անձնավորության՝ Հիսուս Քրիստոսին: Ահա թե ինչու է նա հետագայում գրում. «Մենք էլ քարոզում ենք խաչյալ Քրիստոսը, Հրեաներին գայթակղություն և Հույներին հիմարություն: Բայց այն կանչված Հրեաներին ու Հույներին, Քրիստոսը քարոզում ենք Աստծո զորություն և Աստծո իմաստություն» (1 Կորնթացիս 1:23-24): Սա հեղաշրջում էր նրանց համար, ովքեր կապված են հրեական օրենքներով և ավանդույթներով, և խելագարություն նրանց համար, ովքեր կլանված են հունական էլիտար մշակույթով և արևմտյան փիլիսոփայական

---

[11] Langford, Reflections on Grace, 18.

[12] Diarmaid MacCulloch, Christianity: The First Three Thousand Years (New York: Penguin Books, 2009), 99.

[13] « Dikaioun» «արդար դառնալ» (կամ տասնվեցերորդ դարում բողոքական ռեֆորմացիայի կողմից հայտնի դարձած արտահայտության մեջ՝ «արդարացվել»), նշանակում է, որ կա մի շնորհ, որը գալիս է մեզ համար՝ դրսից:

աշխարհայացքներով: Բայց նրանց համար, ովքեր կարող էին հավատալ, որ Հիսուսը Աստծո Քրիստոսն է (հունարենում Քրիստոս նշանակում է «օծյալ»), Աստծո շնորհով Նա դարձավ նրանց փրկությունը[14]:

Առաջին քրիստոնյաները չեն քարոզել որևէ համակարգ և նույնիսկ կրոն: Նրանք հռչակում էին *Անձի*: Իսլամի համար Խոսքը դարձավ *գիրք* (Ղուրան), քրիստոնեության համար Խոսքը մարմին դարձավ (Հովհաննես 1:14)[15]: Մարդ: Հավիտենականը, Մեկ Աստվածը դարձավ Անձ: Մարմնավորում: Առաջին քրիստոնյաները չթողեցին իրենց կյանքը տեսության, սկզբունքի կամ կյանքի ուժի համար: Նրանք դա արեցին Անձի համար և միայն ի շնորհիվ իրական Անձի, Ով իսկապես խաչվել և թաղվել է, Ով իսկապես հարություն է առել մեռելներից որպես նոր արարչագործության առաջին պտուղ, Ով իսկապես համբարձվել է երկինք և Ով իսկապես նորից վերադառնալու է:

Ես չգիտեմ որևէ մեկին, ով դա նկարագրի ավելի հստակ, քան Դիտրիխ Բոնհոֆերը. «Վերացական գաղափարով կարելի է մտնել ֆորմալ գիտելիքների հարաբերության մեջ, խանդավառվել դրանով և, հնարավոր է, նույնիսկ այն կիրառել գործնականում, բայց դրան երբեք չի կարելի հետևել անձնական հնազանդության մեջ: Քրիստոնեությունն առանց կենդանի Քրիստոսի անխուսափելիորեն քրիստոնեություն է առանց աշակերտության, և քրիստոնեությունն առանց աշակերտության միշտ քրիստոնեություն է առանց Քրիստոսի»[16]:

Այսպիսով, շնորհի ճանապարհորդությունը համակարգին, գրքին, ձեռնարկին, դավանանքին կամ ավանդույթին հետևելը չէ: Մենք հետևում, երկրպագում և ծառայում ենք Հիսուս Քրիստոսին: Շնորհն անձնական Հիսուսի կյանքի, ծառայության, մահվան, հարության և համբարձման բոլոր օգուտների արդյունքն է, որն այժմ Քրիստոսն է և Տերը՝ Հոր Փառքի համար:

Շնորհի Քրիստոսակենտրոն (Հիսուսակենտրոն) նկարագրությունը չպետք է անտեսի շնորհի ավելի ամուր Երրորդական աստվածաբանությանը (Աստված որպես Արարիչ և Հայր, Սուրբ Հոգու զորությունը հավատացյալի կյանքում): Շնորհը որպես Անձ ըմբռնելը նշանակում է հիշել, որ եթե մենք անձամբ ճանաչում ենք Աստծուն, դա առավել հստակորեն բացահայտվում է այն Անձի կյանքում, ուսմունքում և փորձառության մեջ, որն Աստված ընտրել է Իրեն հայտնի դարձնելու համար: Ամբողջ քրիստոնեական աշակերտության նպատակն է շնորհի ստացողներին ձևավորել Հիսուս Քրիստոսի պատկերով և նմանությամբ: Շնորհը *ինչ-որ բան* չէ, շնորհը *ինչ-որ մեկն է*:

Այս հաստատումը մեզ տանում է դեպի երկրորդ պատճառը, որ շնորհն անձնական է. շնորհը գալիս է յուրաքանչյուր մարդու՝ ըստ նրա հատուկ կարիքի կամ այն ստանալու կարողության: Յուրաքանչյուր մարդ յուրովի է ստանում և յուրացնում այդ շնորհը:

Ես շատ ընկերներ ունեմ, բայց ես նրանց հետ տարբեր ձևերով եմ վերաբերվում, քանի որ նրանցից յուրաքանչյուրը յուրահատուկ է ինձ համար: Ես երեք երեխա ունեմ, և չնայած նրանց բոլորին հավասարապես սիրում եմ, չեմ կարող նրանց բոլորի հետ նույն կերպ վարվել: Նրանք բոլորը տարբեր են, ուստի իմ ծնողական մոտեցումը պետք է հարմարվի յուրաքանչյուրին: Սա ընկեր լինելու և ծնող լինելու սիրառատ ձևն է:

---

[14] Սթրոնգի՝ Նոր Կտակարանի Համապատասխանություն (Concordance of the New Testament) գիրքը ցույց է տալիս, որ « charis»-ը՝ «շնորհը», հայտնվում է առնվազն ութսունութ անգամ առաջին դարի եկեղեցիներին ուղղված Պողոսի նամակներում:

[15] Ես պարտական եմ Աֆրիկայի Նազովրեցու եկեղեցու Տարածաշրջանային Տնօրեն՝ Դանի Գոմիսին այս կարևոր սկզբունքի տարբերակման համար:

[16] Dietrich Bonhoeffer, The Cost of Discipleship (New York: Macmillan Company, 1949), 63–64.

Նմանապես, շնորհը յուրացվում է յուրաքանչյուր մարդու կողմից, քանի որ մենք շնորհ ենք զգում Երրորդության Աստծո հետ անձնական հարաբերություններում, որը տրվել է մեզ Հորից, տարածվել է Հիսուս Քրիստոսի միջոցով և զորացած է Սուրբ Հոգով: Շնորհն անձնական է, քանի որ այն գալիս է մեզ Անձով, որն անհատականացված է ըստ մեր կարիքների: Քանի որ Աստված իրեն ավելի է նվիրում մեզ, ավելանում է նաեւ շնորհը:

Շնորհն Արժեք Ունի

Դիտրիխ Բոնհոֆերը հիշեցնում է մեզ, որ թեև շնորհն անվճար է, այն առանց արժեք չի լինում: Իր ամենահայտնի «Աշակերտության արժեքը» գրքից մի պարբերությունում Բոնհոֆերն ընդգծում է էժան շնորհի և թանկարժեք շնորհի տարբերությունը՝ որպես իրական աշակերտության պահանջարկի կամ ակնկալիքի բացակայություն. «Էժան շնորհը շնորհ է առանց աշակերտության, շնորհ՝ առանց խաչ, շնորհ՝ առանց Հիսուս Քրիստոսի՝ կենդանի և մարմնավորված»[17]:

Այնուհետև, Բոնհոֆերը խիստ կերպով ասում է, որ էժան շնորհը «մեր եկեղեցու մահացու թշնամին է», «աշակերտության ամենադաժան թշնամին» և «ավելի շատ քրիստոնյաների կործանումն է եղել, քան գործերի ցանկացած պատվիրան»[18]: Կարելի է ասել, որ նրանք արդարացված են միայն շնորհով՝ որպես Աստծո պարգև, բայց արդարացված կյանքի պտուղը նա է, ով թողել է ամեն ինչ և հետևել Քրիստոսին[19]: Եվ պատճառը, որը Բոնհոֆերը նշում է, այն է, որ երբ մարդ լսում է կանչ՝ Հիսուսի կողմից Նրան հետևելու համար, նախքան հավատքի վարդապետական խոստովանություն լինելը, դա աշակերտների պատասխանի հնազանդության գործողությունն է (Մարկոս 2:14)[20]:

Բոնհոֆերը շարունակում է նկարագրել, թե որքան թանկ է շնորհը, և ինչու է ամբողջական և լիովին հանձնված աշակերտությունը համարվում միակ համապատասխան արձագանքը.

> Շնորհը *թանկ է*, քանի որ այն կոչ է անում մեզ հետևորդ դառնալ, և դա *շնորհ* է, որովհետև այն կոչ է անում մեզ հետևել *Հիսուս Քրիստոսին*: Այն թանկ է, քանի որ դա արժենում է մարդու ամբողջ կյանքը, և դա շնորհ է, քանի որ այն մարդուն տալիս է միակ ճշմարիտ կյանքը: Այն թանկ է, քանի որ այն դատապարտում է մեղքը և դա շնորհ է, քանի որ արդարացնում է մեղավորին: Ամենից առաջ շնորհը թանկ է, քանի որ Աստծուն դա արժեցել է իր Որդու կյանքի գնով. «Ձեզ համար գին է վճարվել», և այն, ինչ թանկ է արժեցել Աստծուն, մեզ համար չի կարող էժան լինել: Ամենից առաջ դա շնորհ է, որովհետև Աստված իր Որդուն չխնայեց մեր կյանքի համար, այլ տվեց Նրան մեզ համար: Թանկարժեք շնորհն Աստծո մարմնացումն է[21]:

Աշակերտության կյանքը շնորհի ճանապարհորդություն է: Այն սկսվում է շնորհով, զորանում է շնորհով և շնորհով հագեցած շարունակվում է սկզբից մինչև վերջ: Չկա ճշմարիտ աշակերտություն, եթե մենք չհետևենք և չինազանդվենք Հիսուսի ճանապարհին: Աստծո շնորհը

[17] Bonhoeffer, The Cost of Discipleship, 47–48.
[18] Bonhoeffer, The Cost of Discipleship, 45, 55, 59.
[19] Bonhoeffer, The Cost of Discipleship, 55.
[20] Bonhoeffer, The Cost of Discipleship, 61.
[21] Bonhoeffer, The Cost of Discipleship, 47-48.

կարելի է ստանալ որպես անվճար պարգև, բայց այն չի կարող զերծ մնալ աշակերտության պահանջներից:

Շնորհը Հրաշալի է

Ֆիլիպ Յանսեյը պատմում է *«Վերջին կայսրը»* ֆիլմից մի տեսարան, որտեղ երիտասարդ տղան օծված է որպես Չինաստանի վերջին կայսր: Նա ապրում է շքեղ կյանք՝ իր հրամանով կատարվում է ամեն բան բազմաթիվ ծառաների միջոցով:

-Ի՞նչ է պատահում, երբ սխալ ես անում,- հարցնում է նրա եղբայրը.
-Երբ ես սխալ եմ անում, ուրիշը պատժվում է, - պատասխանում է երիտասարդ կայսրը:

Ցույց տալու համար իրողությունը, երիտասարդ կայսրը կոտրում է թանկարժեք մի իր, և ծառաներից մեկին ծեծում են օրինազանցության համար[22]:
Սա թագավորների և կայսրերի հին սովորույթն էր: Այն ո՛չ արդար էր, ո՛չ ողորմած: Հետո ինչ-որ մեկը եկավ այլ աշխարհից: Նա Թագավոր էր, Ով նոր իմաստ բերեց իշխանություն հասկացությանը: Նա փոխեց հին կարգը և բացեց նոր թագավորություն: Երբ Նրա ծառաները մեղքի մեջ են ընկնում, այս Թագավորը վերցնում է իրենց արդարացի իրավունքը: Յանսին արտացոլում է. «Շնորհն անվճար է միայն այն պատճառով, որ տվողն Ինքն է Իր վրա վերցրել բոլոր ծախսերը»[23]:
Սա արդարություն կամ ողորմություն չէ, սա շնորհն է: Թանկարժեք շնորհ: Թերևս սա է այն պատճառը, որ մենք դեռ սիրում ենք երգել Նյուտոնի երգը: Շնորհը Հրաշալի է:
Այսպիսով, ինչպե՞ս է Աստծո շռայլ շնորհը դրսևորվում մեր առօրյա կյանքում: Մի բան է իմանալ, թե ի՞նչ է նշանակում շնորհ հասկացողությունը: Հիանալի է իմանալ, որ Աստված մեզ այդպես է սիրում, բայց ի՞նչ տեսք ունի այդ շնորհը, երբ ես դա տեսնում եմ: Ի՞նչ է անում այդ շնորհը, երբ ես զգում եմ այն: Ի՞նչ տարբերություն կբերի այդ շնորհն իմ առօրյա կյանքում:
Շնորհը զգացվում է բազմակողմանի, նրբերանգային և բազմազան ձևերով: Այս գրքի մնացած մասը կուսումնասիրի շնորհի ճանապարհորդության բազմապիսի արտահայտությունները:

[22] Bonhoeffer, The Cost of Discipleship, 67.
[23] Bonhoeffer, The Cost of Discipleship, 67.

ՃԱՆԱՊԱՐՀ

Շնորհ փնտրելու (Նախնական Շնորհ) միջոցով Աստված գնում է մեր առջևից՝ ճանապարհ պատրաստելով և մեզ՝ Իր հետ փոխհարաբերությունների մեջ ներգրավելու համար:

2
ՓՆՏՐՈՂ ՇՆՈՐՀ*
Որովհետև Մարդի Որդին Եկավ, որ Փնտրի և Ապրեցնի կորածին:
Ղուկաս 19:10

Աշակերտությունը նման է հնազանդությանը, որը պահանջում է քայլել Հիսուսի հետ միեւնույն ուղղությամբ, որպես մեր առաջնորդ եւ ուղեկից:[1]: Մենք սա անվանում ենք շնորհի ճանապարհորդություն: Շնորհի ճամփորդությունը միշտ դինամիկ է, քանի որ այն կապված է սկզբնական կետից: Հավատքով քայլելն ավելի շատ արկած է, քան ձանձրալի գործ, ավելի շատ հաճույք, քան պարտականություն՝ երբ աշակերտական ճանապարհորդության յուրաքանչյուր քայլ ընկղմված է Աստծո շնորհով: Մենք տարբեր կերպ ենք զգում Աստծո շնորհը մեր կյանքի տարբեր ժամանակների ընթացքում: Թեև շնորհի այս կողմերը միշտ չէ, որ հաջորդական են (հետևում են որոշակի հերթականությամբ), դրանք տարբերվում են կախված տարբեր նպատակներից, որոնք նրանք իրականացնում են մեր աշակերտական ճամփորդությունների ընթացքում[2]:

Կան առնվազն հինգ սուրբ գրային մոտիվներ, որոնք պատկերացում են ստեղծում, թե ինչպես ենք մենք զգում Աստծո շնորհը: Դա չի նշանակում, որ կան շնորհի տարբեր դասակարգումներ, կարծես շնորհը կարելի է բաժանել տարբեր դասակարգային չափումների կամ տեսակների[3]: Ինչպես Ջեք Ջեքսոնն է նշում, «Աստծո շնորհը եզակի է»[4] կամ, ըստ Ջոն Ուեսլիի, Աստծո շնորհը պարզապես «Աստծո սերն է»[5]: Շնորհի տարբեր տեսակներ դասակարգելու այս միտումից

---

[1] «Երկարատև հնազանդություն նույն ուղղությամբ» արտահայտությունը փոխառված է աշակերտության մասին գրքից, որը հեղինակել է հովիվ-աստվածաբան Յուջին Պետերսոնը: Eugene Peterson, A Long Obedience in the Same Direction: Discipleship in an Instant Society (Downers Grove, IL: InterVarsity Press, 1980).

2 Թեև շնորհը կարող է հաջորդաբար հերթականություն չունենալ, աստվածաբաններն այն որոշակի դասակարգման են (ordo salutis) ենթարկել: Այնուամենայնիվ, Դայան ԼըՔլերկը նշում մի կարևոր կետ. «Քանի որ այս ամենը հաճախ քրիստոնեական կյանքում համարվում է մի շարք քայլերի հերթականություն, որոշ գիտնականներ նախընտրում են salutis-ի կամ փրկության ճանապարհի միջոցով ընդգծել մի փուլի հոսունությունը և դրա փոխանցումը հաջորդ փուլին »: Diane LeClerc, Discovering Christian Holiness: The Heart of Wesleyan-Holiness Theology (Kan- sas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 2010), 315.

---

* Այս գլխի որոշակի հատվածներ ներառում են մեջբերումներ “The Grace That Goes Before: Prevenient Grace in the Wesleyan Spirit,” by David A. Busic, in Wesleyan Foundations for Evangelism, ed. by Al Truesdale (Kansas City, MO: The Foundry Publishing, 2020) գրքից: Օգտագործվում են համապատասխան թույլտվությամբ:

3 Սա վերջին գլխի հիմնական կետն էր: Շնորհք ինչ-որ բան չէ կամ երևույթ, շնորհը անձ է և անձնական է մոտենում յուրաքանչյուրին: Թոմ Նոբլը ենթադրում է, որ շնորհը որպես օբյեկտիվ ուժ կամ նյութ վերաբերվելու միտումը ծագել է միջնադարյան օգոստինիզմից: Տարբեր տեսակի շնորհի ձևեր ի հայտ եկան, որոնք կարող էին վերափոխել որոշ քրիստոնյաների: Միտումն ընդլայնվեց տասնյոթերորդ դարի բողոքական սխոլաստիկայի մեջ: «Շնորհի վերաբերյալ այդ դպրոցական մոդելը բերում է իր սեփական խնդիրները, մասնավորապես՝ Աստծո գործողությունը ապաանձնավորելու հակումը՝ փոխարինելով Հոգու անձնական գործողությունը նման անանձնական նյութով, որը կոչվում է «շնորհք»: T. A. Noble, Holy Trinity: Holy People: The Theology of Christian Perfecting (Eugene, OR: Cascade Books, 2013), 100.

4 Jack Jackson, Offering Christ: John Wesley’s Evangelistic Vision (Nashville: King- swood Books, 2017), 53

5 John Wesley, Sermon 110, “Free Grace,” Sermons III: 71–114, vol. 3 in The Bi- centennial Edition of the Works of John Wesley (Nashville: Abingdon Press, 1986), 3:544, par. 1.

խուսափելու համար Ուեսլին նախընտրեց կենտրոնանալ շնորհի փորձառական բնույթի վրա. «Կախված իրենց աշակերտության աստիճանից՝ մարդիկ տարբեր կերպ են զգում Աստծո շնորհը: Նրանք, ովքեր սովորական մակարդակի վրա են (նախաքրիստոնեական մակարդակ, ովքեր Քրիստոսին դեռ չգիտեն) նախնական շնորհին են ապրում. Արթնություն ունենալուց հետո նրանք շնորհ են զգում համոզիչ և արդարացնող կերպով. և հետո, վերջապես, երբ նրանք արդարացվում են, նրանք զգում են շնորհ, որն աշխատում է սրբացնելու իրենց միտքն ու սրտերը»[6]: Այստեղ Ջեքսոնի նկարագրությունը Ուեսլիի աստվածաբանության մասին գրված է գեղեցիկ, տրամաբանական, բայց ճկուն կերպով, տարբերակելով շնորհը, որպես ինչ որ բան եւ հարաբերական ճանապարհորդության միջեւ, որը ներառում է, կյանքի հանգամանքներն ու փորձառությունները, աստվածային հանդիպումները և նախախնամական ժամանակը: Շնորհը Անձ է և տարածվում է անձնական եղանակով:
Դա նկատի ունենալով, ես առաջարկում եմ հետևյալ դրդապատճառները, որոնք կօգնեն մեզ ավելի լավ հասկանալ, թե ինչպես ենք մենք հաճախ զգում Աստծո սերը շնորհի ճամփորդության ժամանակ՝ գիտակցելով, որ դրանք *տարբեր տեսակի* շնորհներ չեն, այլ այն տարբեր ձևերով են արտահայտվում, որոնցով մենք կարող ենք զգալ Աստծուն որպես Անձնավորված Շնորհ: Այն դառնում է անհատականացված մեր կյանքի ընթացքում[7]:

- Փնտրող Շնորհ,
- Փրկագնող Շնորհ,
- Սրբագործող Շնորհ,
- Զորացնող Շնորհ,
- Բավարար Շնորհ:

Հաջորդ գլուխներում մենք մանրամասնորեն կքննարկենք այս մոտիվներից յուրաքանչյուրը աստվածաշնչյան, աստվածաբանական և փորձառական ասպեկտներում: Այս պահին միասին կսկսենք հասկանալ Փնտրող Շնոհի աստվածաբանությունը:

Շնորհ՝ Որ Գնում է Առջևից

Աստծո շնորհը չի սկսվում մեր փրկության պահին: Դա նախորդում է նույնիսկ Աստծո պատկերացման մասին մեր գիտակցմանը: Մենք, բնականաբար, Աստծուն չենք փնտրում. փոխարենը Աստված է մեզ փնտրում: Այս գործողության աստվածաբանական տերմինը, որով Աստված փորձում է մեզ ավելի մոտեցնել իրեն, կոչվում է *նախնական շնորհ*: Նախնական շնորհն

[6] Jackson, Offering Christ, 53.

[7] Հետևելով Ուիլյամ Գրեյթհաուսի և Հ. Ռեյ Դանինգի «փրկության» ըմբռնմանը որպես աստվածաբանական տերմինի, որն ունի լայն ենթատեքստ՝ սկսած սկզբնական փրկությունից՝ այն ներառում է այդ վերականգնման բոլոր ասպեկտները՝ ընդհուպ մինչև վերջնական փրկությունը կամ «փառաբանումը»: William M. Greathouse and H. Ray Dunning, An Introduction to Wesleyan Theology (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 1982), 75. Ավելին, Գրեյթհաուսը և Դաննինգը բացատրում են, որ փրկությունը չի գտնվում մեկ առանձին իրադարձության կամ փորձառության մեջ. «Նոր Կտակարանը խոսում է փրկության մասին երեք ժամանակով. անցյալ (եղել է), ներկա (կա) և ապագա (կլինի):

իրենից պարզապես ենթադրում է, որ Աստված գալիս է մեզ մոտ, նախքան մեր՝ Աստծո մոտ գալը: Աստծո շնորհը փնտրում է մեզ և գալիս այնտեղ, որտեղ մենք գտնվում ենք:

Քրիստոնյաները հաճախ սկսում են դարձի մասին վկայություններն ասելով, որ իրենք «եկան Քրիստոսի մոտ» այս կամ այն վայրում կամ որոշակի տարիքում: Սրանք իսկական վկայություններ են՝ պատմելու որոշակի ժամանակ և վայր, երբ նրանք հանդիպել են Աստծո հետ և ունեցել նոր ծնունդ Քրիստոսում, բայց «եկավ Քրիստոսին» ձևակերպումը ճշգրիտ չէ, քանի որ ոչ ոք երբեք *չի գալիս* Հիսուս Քրիստոսի մոտ: *Հիսուս Քրիստոսն է* գալիս մեզ մոտ: Առաջին հեթանոս քրիստոնյաներին գրված շատ կարևոր նամակում Պողոս առաքյալն ասում է. «Եվ դուք, որ մեռած էիք հանցանքներումը և մեղքերումը որոնցում մի ժամանակ գնում էիք այս աշխարհքի սովորության պես՝ օդի իշխանության իշխանի պես, այն հոգու պես՝ որ հիմա ներգործում է ապստամբության որդիների մեջ: Որոնց մեջ մենք ամենս էլ մի ժամանակ ման էինք գալիս մեր մարմնի ցանկություններումը՝ մարմնի և մտքի կամքը կատարելով, և բնությամբ բարկության որդիք էինք ինչպես ուրիշներն էլ: Բայց Աստված, որ մեծ է ողորմությամբ, Իր շատ սերի համար սիրեց մեզ: Երբ որ մեռած էինք հանցանքներում, մեզ կենդանի արավ Քրիստոսի հետ. Շնորհով եք փրկված» (Եփեսացիս 2: 1-5): Առավել ուշադրություն դարձրեք հատուկ շեշտադրման համար կրկնվող բառին՝ *մահացած*: Պողոսը սա շատ լուրջ է ընդունում: Նա չի ասում, որ մենք «հիվանդ» էինք մեր մեղքերի մեջ կամ «խրված» էինք մեր մեղքերի մեջ: Ո՛չ, մենք *մեռած էինք* մեր մեղքերի մեջ:

Ըստ Աստվածաշնչի՝ գոյություն ունի մահի երեք տեսակ՝ ֆիզիկական, հոգևոր և հավերժական: Պողոսը նկարագրում է հոգևոր մահը: Մենք ապրում էինք, շնչում և անցնում էինք կյանքի շարժումներով, բայց հոգեպես մահացած էինք մեղքի պատճառով: Մարդը կարող է ֆիզիկապես կենդանի լինել և շրջել, բայց ներքուստ նա չի կարող արձագանքել հոգևոր երևույթներին, քանի որ չունի հոգևոր զգացողություն: Ահա թե ինչու հոգեպես մահացած մարդը չի կապվում հոգևոր ճշմարտության հետ: Հոգևոր ճշմարտությունն անիրական է նման մարդու համար այնքան, որքան հոտառությունը մահացած մարդու համար: Մահացած մարդիկ չեն արձագանքում, հեռացված են ուրիշներից և անտեղյակ են իրենց շրջապատից:

Պողոսն ասում է, որ մենք բոլորս գտնվում էինք քայլող մահացածների այս զոմբիանման վիճակում: Քանի որ մահացածները չեն կարող արձագանքել դրսի ազդակներին, ոչ մի հոգևոր մահացած մարդ չի կարող «գալ Քրիստոսի մոտ» իր սեփական ուժերով: Օգնությունը պետք լինի դրսից: Այսպիսով, ըստ Պողոսի և Սուրբ Գրությունների այլ ականատեսների, Աստված միջամտում է մեր հուսահատ իրավիճակին և անում է մեզ համար մի բան, որը մենք չենք կարող անել մեզ համար: Աստված գալիս է այնտեղ, որտեղ մենք ենք: Սուրբ Հոգու զորությամբ Աստված գալիս է դեպի մեզ և արթնացնում մեր հոգևոր զգայունությունը: Այս իրականությունը հանգեցնում է մի խորը մտքի. նույնիսկ Աստծո ազդակներին «ոչ» ասելու մեր կարողությունը հնարավոր է միայն այն պատճառով, որ Աստծո նախնական շնորհն արդեն հանդիպել է մեզ: Մենք ազատ ենք միայն Աստծուն պատասխանելու համար, քանի որ Աստված ազատել է մեր հոգևոր գիտակցությունը դա անելու համար: Մեր վրա շնորհի շարժումը նախորդում է Աստծուն ուղղված ցանկացած արձագանքի:

«Քնած Գեղեցկուհին» հայտնի հեքիաթ է մի արքայադստեր մասին, ով գտնվում է չար թագուհու կախարդանքի տակ: Արքայադուստրը մնում է հավերժ քնած վիճակում, և նրան արթնացնելու միակ ճանապարհն այն է, որ արքայազնը գա և համբուրի նրան: Այս համբույրը նրան կհանի կոմատոզային վիճակից և կազատի նրան անհուսությունից: Թեև դա միայն հեքիաթ է, սակայն խորհրդանշական է, թե ինչպես է գործում նախնական շնորհը: Աստվածաշունչն ասում է, որ

յուրաքանչյուր մարդկային հոգի գտնվում է մի տեսակ հոգևոր մահվան քնի մեջ, և որ մենք անկարող ենք ինքներս մեզ բերել հոգևոր գիտակցության: Այնուհետև Արքայազնը գալիս և համբուրում է մեզ, կախարդանքը կոտրվում է, և մենք արթնանում ենք նոր իրողությունների մեջ, որոնք նախկինում անհայտ էին: Ինչպես Ղուկաս 15-ում նկարագրված է, որ սիրառատ հայրը վազում է իր անարգված որդու մոտ, այնպես էլ այս համբույրը նախնական շնորհն է իրենից ներկայացնում մեր մահացած կյանքերի մեջ: Կրկին կարդացեք այս խոսքերը մեզ ներկայացված առակից՝ նախնական շնորհի ոսպնյակի միջով. «... և դեռ որ նա *հեռու էր* և վազեց նրա վզովն ընկավ և *համբուրեց* նրան: ...Որ այս իմ որդին մեռած էր, և կենդանացավ, և կորած էր, և գտնվեցավ, և սկսեցին զվարճանալ» (Ղուկաս 15:20, 24, շեշտադրումները հատուկ են կատարված)։

Ջոն Ուեսլին և Նախնական Շնորհը

Մեր աստվածաբանական նախահայր Ջոն Ուեսլին շատ բան ուներ ասելու նախնական շնորհի մասին: Թեև նա չէր հավատում, որ իրական աշակերտությունը սկսվում է միայն ապաշխարությունից հետո, նա պնդում էր, որ Աստծո շնորհը գործում է նախապես՝ մարդկանց մեջ արթնացնելով Աստծուն փնտրելու ցանկությունը, որի ցանկությունը նշանավորում է որպես նոր անձնավորության արթնացման սկիզբը[8]: Մենք Աստծուն ենք փնտրում միայն այն պատճառով, որ Աստված առաջինն է փնտրում մեզ:

Ջոն Ուեսլին առաջինը չէր, ով ընդունեց նախնական շնորհի զորության գաղափարը, որը տարածվում է բոլոր մարդկանց վրա, բայց նա, անշուշտ, ավելացրեց իր սեփական տարբերությունը փրկության կարգի մեջ[9]: Երբեմն այն անվանելով «նախնական շնորհ»՝ Ուեսլին հավատում էր, որ ի ծնե Աստծո շնորհը գործում է բոլոր մարդկանց մեջ՝ ձգտելով նրանց բերել դեպի Հիսուս Քրիստոսի հավիտենական կյանք: Սա ճիշտ է, նույնիսկ եթե նրանք երբեք չեն լսել Ավետարանի Բարի Լուրը: Աստծո նախնական ներկայությունը և Սուրբ Հոգու միջոցով գործողությունը շնորհն է, որը Բարի Լուրը լսելուց, հոգևոր արթնությունից և դարձի գալուց «առաջ է լինում»:

Ոչ ոք օտար չէ Աստծո շնորհի համար, և բոլորը Հիսուսի սիրելիներն են, որոնց հետ աշխատում է Սուրբ Հոգին: Որպես ընկած մարդիկ՝ «մեռած մեր հանցանքների և մեղքերի մեջ» (Եփեսացիս 2:1, NIV), մենք անկարող ենք դառնում Աստծուն մոտենալ մեր ուժով: Հետևաբար, Աստված միշտ առաջինն է բոլոր արթնության, դարձի և կյանքի վերափոխման ասպարեզում: Սուրբ Հոգու սկզբնական գործունեությունը մենք անվանում ենք «նախնական», քանի որ այն միշտ նախորդում է մեր արձագանքին: Մարդը կարող է *հավատալ* Հիսուս Քրիստոսին, բայց ոչ ոք երբեք չի «գա դեպի Քրիստոսը», եթե նախ Աստված հնարավորություն չտա նրանց: Հիսուսն ասաց իր աշակերտներին, որ դա կլինի Սուրբ Հոգու գործունեությունն այս աշխարհի վրա (Հովհաննես 16.5–15; տե՛ս նաև, Հովհաննես 6.44):

Ինչպես ասում է Լովետ Վեմսը. «Աստված փնտրում է մեզ նախքան մենք կսկսենք Աստծուն փնտրել: Փրկության նախաձեռնությունն ի սկզբանե Աստծո մոտ է: Նախքան մեր որևէ քայլ անելը,

---

[8] Jackson, Offering Christ, 43–44. See also Randy Maddox, Responsible Grace: John Wesley's Practical Theology (Nashville: Kingswood, 1994), 81.

[9] Կաթոլիկ ավանդույթում «իրական շնորհը» բաժանված է երկու մասի՝ «գործող նախնական շնորհ» և «համագործակցող հետագա շնորհ»:

Աստված այնտեղ է»[10]: Շնորհին անդիմադրելի չէ, բայց ոչ մի մարդ չի մնում առանց Աստծո հետ անձնական հարաբերությունների հրավերի: Ուեսլիական Սրբություն ավանդույթի մեջ սա նշանակում է, որ Ավետարանով ինչ-որ մեկի հետ կիսվելիս մենք երբեք չենք բախվում բարոյապես չեզոք համատեքստի: Չկա այնպիսի մարդ, որին մենք հանդիպենք, ում վրա չի ազդել նախնական շնորհը: Անշուշտ, ոմանք ավելի դիմադրող կամ արձագանքող կլինեն, քան մյուսները, բայց մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված հավատարմորեն գործել է նրանց կյանքում՝ նախքան մեր նրանց հանդիպելը: Արքայազնն արդեն նախապատրաստել է մեր մուտքը նրանց կյանք:

Աստծո փրկության առաջարկը հարկադրանք չէ: Իր բնույթով փոխադարձ սերը (իսկական հարաբերությունների հիմքը) պահանջում է առաջարկվող սերն ընդունելու կամ մերժելու ազատություն: Այնուամենայնիվ, նախնական շնորհը և՛ նախորդում է մեր արձագանքին, և՛ հնարավորություն է տալիս մեր արձագանքին: Սա փրկագնման կարգն է և աշակերտության սկիզբը: Աստված նախաձեռնում է, մենք արձագանքում ենք, իսկ շնորհը միշտ գնում առաջեւից:

Ցույց Տալ Տիրոջ Գործը

Ամբողջ Նոր Կտակարանը վկայում է, և Պողոս Առաքյալի գրվածքները հատկապես ընդգծում են, որ «երբ մարդ հավատա Հիսուսին՝ որպես հարություն առած Տեր, այդ իրադարձությունն ինքնին Ավետարանի միջոցով Սուրբ Հոգու աշխատանքի վկայությունն է, և եթե Հոգին սկսել է այդ «բարի գործը», որի առաջին պտուղն է այդ հավատքը, դուք կարող եք վստահել, որ Հոգին կավարտի իր աշխատանքը»[11]: Այնուամենայնիվ, այս հավաստիացումը չի ժխտում մարդկային մասնակցության կարևորությունը: Հարաբերությունները ենթադրում են համագործակցություն:

Պողոսն ընդգծում է, թե ով է սկսում և ավարտում շնորհի ճանապարհը. «Եվ հաստատ համոզված եմ սրան, թե նա որ ձեզանում սկսեց այս Բարի Գործը, կկատարե էլ մինչև Հիսուս Քրիստոսի օրը» (Փիլիպպեցիս 1:6)[12]: Ավելին, Հիսուսի աշակերտը (և եկեղեցին) պետք է նկատի ունենան հետեւյալ խոսքերը՝ «Ուրեմն, իմ սիրելիներ, ինչպես ամեն ժամանակ հնազանդեցիք՝ ոչ միայն իմ ներկայությունումը, այլ հիմա էլ ավելի իմ բացակայությունումը, ահով և դողալով գործեցեք ձեր անձերի փրկությունը: Վասնզի Աստված է՝ որ ներգործում է ձեզանում. կամենալն էլ՝ անելն էլ Իր հաճության պես» (Փիլիպպեցիս 2:12–13)[13]: Մենք պետք է շնորհով աշխարհում ցույց տանք այն, ինչ Աստված անում է մեր մեջ: Աստվածաշնչի օգտակար օրինակները շատ են:

Աստված Աբրահամի մոտ եկավ, ով գտնվում էր Քաղդեացիների Ուր քաղաքում (ներկայիս՝ Իրանի տարածք): Աստված նախաձեռնեց սկզբնական խոսքը. «Եվ ես քեզ մեծ ազգ պիտի շինեմ, և քեզ օրհնեմ, և քո անունը մեծացնեմ և դու օրհնյալ կլինես» (Ծննդոց 12:2): Ո՞վ գնաց առաջինը: Աստված գնաց: Ո՞վ սկսեց Աբրահամի բարի գործը: Աստված սկսեց: Բայց Աբրահամը պետք է պատասխաներ հնազանդությամբ, որպեսզի աշխարհում ցույց տար այն, թե ինչպես էր Աստված գործում իր մեջ:

---

[10] Lovett H. Weems, Jr., John Wesley's Message Today (Nashville: Abingdon Press, 1991), 23.

[11] N. T. Wright, Paul: A Biography (San Francisco: HarperOne, 2018), 96.

[12] Ուշադրություն դարձրեք, որ Աստված և՛ նախաձեռնողն է, և՛ հնարավորություն տվողը, որ սկսվի շնորհի ճանապարհորդություն:

[13] Ես այստեղ ավելացնում եմ եկեղեցին, քանի որ «դուք» բառը հոգնակի է: Կարելի է սա թարգմանել հարավամերիկյան «y'all» կամ «you all» (դուք բոլորդ) բարբառով՝ որպես աշակերտության կորպորատիվ բնույթն ընդգծելու միջոց:

Աստված երազի մեջ եկավ Հակոբի մոտ՝ ցույց տալով դեպի երկինք տանող աստիճաններ (Ծննդոց 28:10-22) և ավելի ուշ նա գոտեմարտեց Հակոբի հետ՝ Յաբոկ գետի մոտ (Ծննդոց 32:22-32): Ո՞վ գնաց առաջինը: Աստված գնաց: Ո՞վ սկսեց Հակոբի բարի գործը: Աստված սկսեց: Բայց Հակոբը պետք է ցույց տար, թե ինչպես էր Աստված գործում իր մեջ:
Մովսեսը հարյուր մղոն հեռու էր իր տանից և գտնվում էր անապատում: Աստված եկավ նրա մոտ՝ այրվող մորենու մեջ և կանչեց նրան փրկելու իր ժողովրդին Եգիպտոսի ստրկությունից (Ելից 3:1-4:17): Ո՞վ գնաց առաջինը: Աստված գնաց: Ո՞վ սկսեց Մովսեսի բարի գործը: Աստված սկսեց: Բայց Մովսեսը պետք է ցույց տար, թե ինչպես էր Աստված գործում իր մեջ:
Կենդանի Քրիստոսը հայտնվեց Սողոսին (կամ հարձակվեց նրա վրա) Դամասկոս տանող ճանապարհին (Գործք Առաքելոց 9:1-19): Սողոսը չէր փնտրում Աստծուն: Նա քրիստոնյաներին հալածելու առաքելություն էր իրականացնում: Ո՞վ գնաց առաջինը: Աստված գնաց: Ո՞վ սկսեց բարի գործը Սողոսի կյանքում, ով շուտով դարձավ Պողոս՝ հեթանոսների համար առաքյալ: Աստված սկսեց: Բայց, ինչպես Պողոսը հետագայում կասեր Փիլիպպեի եկեղեցուն ուղղված իր նամակում, նա պետք է ցույց տար այն ամենն, ինչ որ Տերն անում էր իր միջոցով:
Աֆրիկայից եկած ներքինին՝ Հրեաստանի անապատային ճանապարհի վրա (Գործք Առաքելոց 8), Կոռնելիոսը՝ տեսիլքի միջոցով կեսօրվա երեքին (Գործք Առաքելոց 10), Լիդիան՝ գետի ափին (Գործք Առաքելոց 16): Ի՞նչ ընդհանուր բան ունեն նրանք բոլորը: Այս և նրանց նման շատ այլ պատմություններ ցույց են տալիս, որ մարդիկ հավատքով արձագանքում են Աստծուն, ով առաջինն է եկել իրենց մոտ: Նրանք բոլորը ցույց էին տալիս Աստծո գործը իրենց կյանքում:
Կա մի հետևողական օրինակ, երբ Աստված գործում է նախնական շնորհով, իսկ մարդիկ արձագանքում են հավատքով: Բրիտանացի միսիոլոգ Լեսլի Նյուբիգինը ասել է. «Հավատքն այն ձեռքն է, որը բռնում է Քրիստոսի ավարտված գործը և դարձնում այն իմը»: Դա չի վերացնում պատասխանի անհրաժեշտությունը, բայց նախնական շնորհը միշտ առաջին տեղում է: Նույնիսկ Օգոստինոսը, ով նախասահմանման հաստատակամ կողմնակիցն էր, հաստատեց. «Նա, ով մեզ ստեղծել է առանց մեր ներկայության, չի փրկի մեզ՝ առանց մեր ներկայության»[14]:

Խնամակալություն և Նախնական Շնորհ

Կա հստակ տարբերություն խնամակալության շնորհի և նախնական շնորհի միջև: Խնամակալությունն այն է, թե ինչպես է Աստված հոգ տանում իր ստեղծածների, այդ թվում՝ մարդկանց ապրուստը և ապահովումը իրականացնելու համար[15]: Աստված «ապահովում է» կամ «Տեսնում է» (Ծննդոց 22: 8, 14) այն, ինչ անհրաժեշտ է աշխարհին աջակցելու և դրանք տալիս է յուրաքանչյուր մարդու՝ անձնական հարաբերության միջոցով:
Թե ինչպես է Աստծո հոգածությունը գործում յուրաքանչյուր մարդու կյանքում, իրապես խորհրդավոր երևույթ է: Երբ, որտեղ և ինչ ընտանիքում է ծնվում անհատը. այս ամենը հենց Աստծո հոգածության հարց է: Ինչու է մեկ մարդ ծնվում հինդու ընտանիքում՝ Հնդկաստանում 1765

[14] Մեջբերված է՝ John Wesley, The Works of the Rev. John Wesley (Kansas City, MO: Nazarene Publishing House, n.d.; and Grand Rapids: Zondervan Publishing House, 1958, concurrent editions), VI, 513.
[15] «Նախախնամություն» բառը ծագել է երկու լատիներեն բառերից՝ «pro», որը նշանակում է «առաջ» կամ «-ի անունից»: և «videre», որը նշանակում է «տեսնել»: Նախախնամությունը երբեմն բաժանվում է երկու կատեգորիայի. «ընդհանուր նախախնամություն»՝ Աստծո հոգատարությունը տիեզերքի նկատմամբ, և «հատուկ նախախնամություն»՝ Աստծո միջամտությունը մարդկանց կյանքում:

թվականին, մինչդեռ մեկ այլ անձնավորություն ծնվում է քրիստոնեական ընտանիքում՝ Մոզամբիկում 2020 թվականին: Աստծո հոգածությունը կրում է տարբեր աստիճանի հոգևոր պատասխանատվություն: Նա, ով հնարավորություն է ստանում լսելու Ավետարանը իր ողջ կյանքի ընթացքում, այլ կերպ կդատվի, քան նա, ով երբեք չի լսել Հիսուսի անունը: Հավատարիմ և իմաստուն ծառայի մասին Հիսուսի առակը ավելին է, քան նյութական ունեցվածքը, այն ներառում է Աստծո շնորհի հիմնական տնտեսությունը: «...այն ամենին, որ շատ տրվեց՝ նրանից էլ ավելի կպահանջեն» (Ղուկաս 12:48): Ոչ բոլորին են տրված հավասար հնարավորություններ և հավասար հիմքեր, որի վրա պետք է կանգնել: Ոմանց ավելի շատ է տրվում, իսկ ոմանց՝ ավելի քիչ: «Առավել» պարգևի հետ մեկտեղ առաջանում է պատասխանի ավելի մեծ պահանջ: Սրանք աստվածային խնամակալության հարցեր են:

Եթե հոգատարությունն այնտեղ է, որտեղ Աստված մեզ ստեղծում և ապրեցնում է, ապա նախնական շնորհը նկարագրում է այն բազմակողմանի ուղիները, որոնցով Աստված հանդիպում է մեզ: Յուրաքանչյուր անհատ ստանում է նույն շնորհը, որը գնում է փրկությունից առաջ: Սակայն արձագանքելու հնարավորությունները տարբեր են: Աստված համառորեն և համբերատարորեն ձեռք է մեկնում բոլորին: Այս համոզմունքը տարբերում է քրիստոնեությունը համաշխարհային այլ կրոններից, որոնք սովորեցնում են, որ Աստված կարձագանքի, եթե մարդիկ նախ շարժվեն դեպի Աստված: Քրիստոնեությունն ինքնին փոխում է հերթականությունը. Աստված միշտ առաջինն է գործում՝ դրանով իսկ հնարավորություն տալով մեզ՝ արձագանքել:

Աստված նախաձեռնում է շնորհի և խաղաղության Բարի Գործը: Փրկագնումը և նոր ստեղծագործությունը միշտ սկսվում են Աստծո նախաձեռնությամբ: Ոչինչ չի կարող գնահատվել ավելին, քան այն համոզմունքը, որ Հայրն աշխարհ ուղարկեց Հիսուս Քրիստոսին: Աստված միշտ առաջինն է գործում: Աստծո Սուրբ Հոգին արթնացնում է մարդկանց, որպեսզի հասկանան փրկության նրանց կարիքը, դատապարտում է նրանց մեղքի համար և կիրառում է Քրիստոսի քավությունը, երբ նրանք արձագանքում են հավատքով:

Ջոն Ուեսլիի համար հոգևոր արթնությունն ավելին է, քան պարզապես խիղճը. «Չի լինի որևէ մարդ, բացառությամբ նրան, ով կմերժի Սուրբ Հոգուն, ով բացարձակապես զուրկ կմնա Աստծո շնորհից: Աշխարհում չկա մեկն, ով ապրում է և զրկված է մի երևույթից, որը կոչվում է բնական խիղճ: Յուրաքանչյուր մարդ ունի այդ լույսի որոշակի չափանիշ ...որը լուսավորում է յուրաքանչյուր մարդու, ով գալիս է այս աշխարհ: Եվ յուրաքանչյուրը. . . քիչ թե շատ անհանգստություն է զգում, երբ սեփական խղճին հակառակ է գործում: Սա ենթադրում է, որ եթե մարդ մեղք է գործում, դա չի նշանակում, որ նա շնորհ չունի, այլ որովհետև նա չի օգտագործում այն շնորհը, որը տրվել է նրան»[16]: Անհանգիստ խիղճը, ճշտի և սխալի մասին գիտակցության աճը և հոգևոր գիտակցության արթնացումը Աստծո ողորմած պարգևներն են բոլորին: Այս վստահությունը կարևոր նշանակություն ունի Ուեսլիական Ոգով ավետարանչության համար:

Նախնական Շնորհ և Ավետարանչություն

Մի անգամ ես հանդիպեցի մի խումբ քրիստոնյա հովիվների, ովքեր ապրում են մի վայրում, որտեղ դժվար է լինել Քրիստոսի հետևորդը: Քրիստոնյա լինելն անօրինական չէ, բայց կան խիստ ազգային օրենքներ դավանափոխության դեմ: Բացահայտ քրիստոնեական ավետարանչությունը

16 Wesley, Works, VI, 512.

խստորեն պատժվում է ազատազրկմամբ և նույնիսկ մահով: Ես հովիվներին հարցրի, թե ինչպես է ավետարանչությունը տեղի ունենում նման թշնամական և վտանգավոր միջավայրում: Մի քանի րոպե լռությունից հետո մի հովիվ պատասխանեց. «Երազներ»: Ես չհասկացա, ուստի խնդրեցի բացատրել: «Ոչ թե տասնյակ, այլ հարյուրավոր մարդիկ մեր հարեւանությամբ երազներ են տեսնում գիշերը: Հարություն առած Քրիստոսը հայտնվում է նրանց իր ողջ գեղեցկությամբ և վեհությամբ: Երբ նրանք արթնանում են, գալիս են հարցեր տալու: «Պատմիր մեզ այն մարդու մասին, ով գալիս է մեզ մոտ գիշերը»: Երբ նրանք հարցնում են, մեր պարտականությունն է պատասխանել: Մենք չենք ավետարանում: Մենք պարզապես վկայում ենք նրանց սեփական փորձառությունների մասին: Նրանցից շատերն այդ կերպ իրենց կյանքը նվիրում են Քրիստոսին»:
Այն վայրերում, որտեղ եկեղեցին կանգնած է փակ դռների դիմաց, Աստծո Հոգին գնում է մեր առջևից: Աստծո նախնական շնորհքը սահմաններ կամ արգելքներ չի ճանաչում: Աստծո սերն անողոքաբար հասնում է նույնիսկ ամենադժվար, մերժող և թշնամաբար տրամադրված մարդկանց: Նրանք կարող են երբեք չպատասխանել հնազանդ հավատքով, բայց չեն կարող խուսափել Աստծո համատարած ներկայությունից, ով չի դադարի սիրել և կանչել նրանց:
Սա կրկնում է *«Հիսուս ֆիլմի»* պատմությունը: Այս ֆիլմը դրամատիկ կերպով պատմում է Քրիստոսի կյանքի մասին: Այն եղել է շնորհի արդյունավետ գործիք ամբողջ աշխարհում բ հազարավոր մարդկանց կյանքում: Այն ցուցադրվել է հեռավոր վայրերում ապրող մարդկանց, որտեղ Հիսուսի անունը երբեք չի հնչել: Ասում են, որ մի ցեղապետ ֆիլմի ընթացքում կանգնել է բազմության մեջտեղում և ասել. «Մենք ճանաչում ենք այս մարդուն: Նա հայտնվել է մեր նախնիներին շատ տարիներ առաջ և բացահայտել է փրկության այս պատմությունը: Նա ասել է, որ մի օր կգա և մեզ Իր անունը կասի: Եվ հիմա մենք գիտենք, որ Նրա անունը Հիսուս է»: Թեև սա նմանատիպ այլ պատմությունների միայն մեկ օրինակ է, սակայն այն ցույց է տալիս, որ Աստծո Հոգին շատ առաջ է եկեղեցուց, ինչպես և միշտ է պատահում: Սուրբ Հոգին մշակում էր նրանց սրտի հողը՝ ավետարանի սերմերը ստանալու համար: Նախնական շնորհը հատվել է Աստծո խնամակալության հետ անգամ նախքան եկեղեցու Բարի Լուրը հռչակումը: Արդյունքում, երբեմն նույնիսկ մի ամբողջ ցեղ, ազգ կամ մարդկանց խումբ իրենց կյանքը տալիս են Քրիստոսին:
Քրիստոնեական ավետարանչությունը ո՛չ միայնակ գործողություն է, և ո՛չ էլ վարկյանական մի գործողություն: Դա տեղի է ունենում փոխհարաբերությունների ընթացքում, որոնք առաջ են մղում Սուրբ Հոգին, ով միշտ ողորմությամբ առաջ է գնում: Ոչ մի քրիստոնյա չի կարող նայել կյանքի անցյալի հայելու մեջ և չտեսնել այն հրաշալի ուղիները, որոնք Աստված գործել է նրանց արթնացնելու և ապաշխարելու և Քրիստոս Հիսուսի հանդեպ հավատքի բերելու համար:
Իմ հայրը դարձել է քրիստոնյա պատանի տարիքում, իրեն որդեգրած Նազովրեցի ծնողների միջոցով: Ես դարձել եմ քրիստոնյա իմ քրիստոնյա ծնողների օրինակով եւ ի շնորհիվ մի խումբ տղամարդկանց, ովքեր հավատարմորեն հավաքվում էին ամեն չորեքշաբթի առավոտյան հատուկ աղոթելու իմ փրկության համար: Ձեր շնորհի ճանապարհորդությունը յուրահատուկ է ձեզ համար: Բոլորի համար նույնը մնում է այն փաստը, որ Աստված միշտ առջևից է գնում:
Իմ ընկեր Ստեֆանը աթեիստ էր և սովորում էր Գերմանիայի համալսարաններից մեկում, որտեղ նա ուսումնասիրում էր ռոբոտաշինություն: Նրա աթեիստ հորեղբայրը նրան պատմել է *«Առաքելություն»* ֆիլմի մասին: Նա խրախուսել է նրան դիտել ֆիլմը «անբասիր դերասանական խաղի և գեղեցիկ բնապատկերների» պատճառով: Ֆիլմի գործողությունները տեղի են ունենում տասնութերորդ դարում, Արգենտինայի հյուսիս-արևելյան ջունգլիներում: Իսպանական ճիզվիտական առաքելություն է ստեղծվել՝ Քրիստոսի համար Գուարանի բնիկ ցեղերին հասնելու համար:

Ստեֆանը դիտեց այդ ֆիլմը: Նրան հատկապես հուզել էր մի տեսարան, որտեղ Ռոդրիգո Մենդոզա անունով ստրկավաճառ և վարձկանը բարձրանում է զառիթափ լեռնային ջրվեժի վրա: Նրա մեջքին կապած են նրա արհեստի գործիքները՝ զրահն ու սրերը: Նա զոջում է իր բազմաթիվ մեղքերի համար: Երբ Մենդոզան հասնում է անդունդի գագաթին, Մենդոզայի կողմից մի ցեղից առևանգված և ստրկության վաճառված մի մարտիկ մոտենում է նրան դանակը բռնած, կարծես Մենդոզայի կոկորդը կտրելու նպատակով: Մի պահ տատանվելուց հետո նա կտրում է պարանը Մենդոզայի ուսերից և ծանր պարկը ընկնում է ջրվեժի հատակը: Մենդոզան հանկարծ հասկանում է, որ ինչ-որ բան փոխել է եւ այս երիտասարդ ռազմիկը վրեժխնդրություն ցույց տալու փոխարեն ողորմություն է ցուցաբերում: Հյուծված ու ցեխով պատված Մենդոզան ընկնում է գետնին: Նա սկսում է անզուսպ լաց լինել ոչ թե զոջման արցունքներից, այլ ներքին խաղաղությունից ծնված ուրախությունից: Նրան գյուղում սրբավայր են տալիս և ընդունում իրենց համայնքում: Ի վերջո Մենդոզան ընդունում է ճիզվիտ քահանայի երդումը:

Ավելի ուշ Մենդոզային տալիս են մի գիրք, որտեղից նա կարդում է սիրո իմաստի մասին հատված: Ստեֆանը չգիտեր խոսքերի աղբյուրը, բայց նա ասաց, որ դրանք ամենապոետիկ և գեղեցիկ խոսքերն են, որ երբևէ լսել է: Նրանք այնքան գրավեցին նրան, որ նա բազմիցս ու մանրակրկիտ դիտեց տեսարանը: Նա անգամ գրի առավ բառերը, որպեսզի չմոռանա դրանք: Այնուհետև նա գնաց գրադարան՝ ուսումնասիրելու բանաստեղծության աղբյուրը: Ի զարմանս իրեն, խոսքերը Աստվածաշնչից էին: Նա բազմիցս կարդաց 1 Կորնթացիս 13-ը՝ «սիրո գլուխը»:

Շատ չանցած՝ Ստեֆանը ռոմանտիկ հետաքրքրություն զգաց քոլեջի ուսանողուհու նկատմամբ: Մի գիշեր նա Ստեֆանին հրավիրեց այսպես կոչված մի «ակումբ»: Պարզվեց, որ դա Աստվածաշնչի ուսումնասիրություն է: Ստեֆանը սովորեց Տերունական աղոթքը: Որպես գիտնական՝ նա հավատում էր տրամաբանական արդյունքները որոշելու փորձերին: Ստեֆանը հասկացավ, որ ամեն անգամ, երբ քնելուց առաջ աղոթում էր Տերունական աղոթքը, հանգիստ քնում էր: Շուտով նա սկսեց աղոթել ամեն գիշեր՝ քնելուց առաջ: Նրան արթնություն էր բերում հետապնդող սերը և առաջ ընթացող շնորհը:

Միսիոներ Աստված սկսեց պատասխանել մի երիտասարդ աթեիստի աղոթքներին: Նա բացահայտեց Աստծո սիրո շքեղությունը մի հասարակ ֆիլմի միջոցով, որը պարունակում էր «անբասիր դերասանական խաղ և գեղեցիկ բնապատկերներ»: Ստեֆանն արձագանքեց այն շնորհին, որը մեր առջեւից է գնում: Նա խոստովանեց իր հավատքն առ Քրիստոս և սկսեց աշխարհում ցույց տալ այն, ինչ Աստված անում էր իր մեջ: Ստեֆանն այժմ միսիոներ է Նազովրեցու եկեղեցում: Այդպիսին է Աստծո նախնական շնորհը, որը տանում է դեպի ապաշխարություն և վերափոխում:

Հավատքը նախնական շնորհի ուժին, անհնարին է դարձնում հուսահատությունը որևէ մեկի համար, ով դեռ քրիստոնյա չի դարձել: Մենք երբեք չպետք է հույսներս կորցնենք որևէ մեկի համար, քանի որ Աստված ևս դա չի անում: Ավետարանիչների վստահությունը հիմնված չէ ո՛չ իրենց, ո՛չ էլ Ավետարանը լսողների կարողության վրա: Ավելի շուտ, մեր բացարձակ վստահությունն այն է, որ Աստծո սերը բոլորի հանդեպ է: Այն առատ է (Եփեսացիս 1:7), անողոք և անփոփոխ: Բավական է ավարտին հասցնել այն, ինչ Աստված է սկսում: Աստվածային հանդիպումներն առջեւում են:

Որքա՞ն հեռու կգնա Աստված մեկ մարդու հասնելու համար: Ես սկսեցի գնահատել Քորի Ասբերիի 2017 թվականի «Անխոհեմ սեր» երգի խոսքերը, որը պատմում է Աստծո շնորհը: Երգը խոսում է Աստծո շնորհի մասին երգչուհու կյանքում «նախքան որեւէ բառ խոսելը» և «նախքան շունչ քաշելը»: Այն նկարագրում է «Աստծո առատ, անվերջանալի, անխոհեմ սերը», որը «հետապնդում

է ինձ, պայքարում ինձ համար, մինչև որ գտնվեմ, թողնում է իննսունինին ինձ համար»: Երգչախումբը շարունակում է այսպես.

Չկա ստվեր, որը չես լուսավորի
Լեռ, որը Դու չես բարձրանա
Գալով իմ հետևից
Չկա պատ, որը չես քանդի
Սուտ, որ չես քանդի
Գալով իմ հետևից[17]:

Առատ: Չավարտվող: Ահա թե որքան հեռու կգնա Աստված մեկ մարդու հասնելու համար:

[17] Ոմանք մտահոգություն են հայտնել «անխոհեմ» բառի օգտագործման առնչությամբ: Եթե դա նշանակում է անզգույշ, ապա խնդրահարույց է: Եթե դա նշանակում է համարձակ, զարմանալի և շռայլ, ապա այն ավելի է մոտենում Աստծո սերը նկարագրելուն:

△ □

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ

Փրկագնող Շնորհի միջոցով Հիսուսն ազատում է մեզ մեր մեղքերից և առաջնորդում դեպի իրական ճշմարտությունը, որն էլ մեզ դարձնում է ազատ:

3

ՓՐԿԱԳՆՈՂ ՇՆՈՐՀ

Որովհետև մեղքի վարձքը մահն է. բայց Աստծո Շնորհը՝ հավիտենական կյանք՝ մեր տեր Հիսուս Քրիստոսի ձեռքովը:

Հռովմեացիս 6:23

Մի անգամ սպորտային լրագրողը խնդրեց անվանի առաջնության գոլֆիստ Ջեք Նիքլաուսին բացահայտել սիրողական գոլֆիստների ամենատարածված խնդիրը: Սպասելով, որ նա ինչ-որ բան ասի փորձի պակասի կամ անընդհատ լավ հարվածելու անկարողության մասին, ես զարմացա, երբ Նիկլաուսը, փոխարենը, պատասխանեց. «Չափից դուրս ինքնավստահություն»: Մտածելով, որ իրենք ավելի լավն են, քան իրականում կան կամ կարող են անել ավելին, քան իրականում կարող են: *Կարծում եմ՝ կարող եմ հարվածել գնդակն այնպես, որ անցնի այդ երկու ծառերի նեղ արանքով: Ես, հավանաբար, կարող եմ գնդակը տանել ջրի վրայով:* Սա չափից շատ ինքնավստահություն է:

Մարդիկ դա անում են անընդհատ: Նրանք չափազանց գերագնահատում են իրենց կարողությունները և թերագնահատում իրենց սահմանափակումները: Բայց ոչ մի տեղ գերագնահատման խնդիրն այնքան հաճախ չի լինում, որքան հոգևոր ոլորտում: Մենք խիստ գերագնահատում ենք մեր հոգևոր ուժը և թերագնահատում մեր հոգևոր թուլությունը:

Բարոյականություն

Ինքն իրեն հոգեպես գերագնահատելու այս միտումը կոչվում է բարոյականություն: Բարոյականությունը ինքնահավան համոզմունքն է, որ ամեն ինչ լավ է հոգեպես, քանի որ մարդ վարում է արժանապատիվ բարոյական կյանք և կատարելագործել է իր վարքը: Այլ կերպ ասած, բարոյախոսը նա է, ով հավատում է, որ փրկվում է այն լավի շնորհիվ, որ ինքն անում է և խուսափում է այն վատից, որը կա աշխարհում:

Բարոյախոսները բոլորն էլ նման խոսքեր են ասում. «Ես Մայր Թերեզան չեմ, բայց ես այնքան էլ վատը չեմ: Ես ապրում եմ ազնիվ: Ես վերադարձնում եմ իմ պարտքերը: Ես չեմ դավաճանում իմ ամուսնուն/կնոջը: Ես քվեարկում եմ իմ քաղաքացիական իրավունքի ամենայն պատասխանատվությամբ: Մի փոքր գումար եմ տալիս բարեգործությանը: Ես հոգևոր մոլեռանդ չեմ, բայց այնքան էլ վատը չեմ»: Այլ կերպ ասած, բարոյախոսները հետևում են մտածողության այն գծին, որը նրանց ասում է, որ Աստված դատաստանի օրը հաշվի կառնի այն փաստը, որ նրանք ավելի շատ լավ են անում, քան վատ, հատկապես «այլ» մարդկանց համեմատությամբ (սերիական մարդասպաններ, բռնաբարողներ, թմրանյութեր վաճառողներ և այլն)՝ ովքեր շատ ավելի վատն են: Բարոյականությունության մասին քարոզները տարածված է այսօր մեր աշխարհում:

2004 թվականին «Gallup» կազմակերպությունը հարցում է անցկացրել՝ պարզելու, թե ինչ են հավատում ամերիկացիները դրախտի մասին : Այն, ինչ իսկապես գրավեց իմ ուշադրությունը, դա այն մարդկանց թիվն էր, ովքեր հավատում են, որ դրախտ են գնալու: Նրանց 77 տոկոսը, ովքեր ասացին, որ հավատում են դրախտին, դասակարգեցին այնտեղ հասնելու իրենց հնարավորությունները որպես «լավ» կամ «գերազանց»: Սակայն, ըստ հարցվածների, նրանց տասը ընկերներից միայն վեցն են գնում դրախտ: Ինձ համար ամենահետաքրքիրը, հատկապես բարոյական տեսակետի հետ կապված, այն է, որ հարցմանը մասնակցած մարդկանցից շատերը

հաստատել են այն համոզմունքը, որ «կա մի դրախտ, որտեղ մարդիկ, ովքեր *լավ կյանք են վարել*, հավերժ պարգևատրվում են»[1]: Ես շեշտում եմ «*լավ կյանքով ապրելը*», քանի որ մարդկանց մեծամասնությունը հավատում է, որ մահից հետո գնալու է դրախտ՝ «լավ կյանքի» և «բարոյական վարքագծի» համար:

Դիանան՝ Ուելսի արքայադուստրը, մահացել է 1997 թվականին: Դա ողբերգական կորուստ էր շատերի համար՝ ամբողջ աշխարհում: Լրատվամիջոցների ուշադրությունը և հասարակական սուգը լայնածավալ էին դարձել նրա միջազգային հանրաճանաչության պատճառով: Հիշում եմ, երբ լսում էի, թե ինչպես էին մարդիկ խոսում այն մասին, թե որքան մխիթարական էր իմանալ, որ Դիանան այժմ դրախտում է, և որ նա հրեշտակ է, և որ դրախտը նրա համար ավելի լավ վայր է, քան այս աշխարհը: Ես չեմ ասում, որ Դիանան դրախտում չէ, բայց ինձ հետաքրքիր է, թե ինչու են այդքան շատ մարդիկ ասում, որ նա այնտեղ է: Այն ամենից, ինչ ես կարող եմ նկատել, նա բարի, կարեկցող անձնավորություն էր, ով օգտագործում էր իր զգալի ազդեցությունը բարեգործություններ կատարելու համար: Նա աշխատել է աղքատների հետ, եղել է ՁԻԱՀ-ով հիվանդների պաշտպան, և նրա ակտիվությունն օգնել է բարձրացնել երեխաների և երիտասարդների իրազեկվածությունը: Սրանք բոլորը հրաշալի բաներ են, որոնցով պետք է հայտնի լինել, բայց արդյո՞ք այդ ամենը փրկում է մեզ: Կարո՞ղ է *բարի լինելը կամ բարիք գործելը* հանգեցնել փրկության, դրախտի և հավերժական վարձատրության:

Մենք ապրում ենք այս հարցերի վերաբերյալ տարբեր կարծիքների դարաշրջանում: Շատ մարդիկ պնդում են, որ Աստված գնահատում է որոշակի սանդղակով կամ կշեռքով, և որ մի փոքր բարությունը մեծ արժեք ունի: Եթե մենք պարզապես կարողանանք ավելի շատ բաներ կուտակել «լավ» սյունակում, քան «վատ» սյունակում, ինչ-որ կերպ կշեռքները կկշռվեն մեր օգտին, և մեր բավականին *լավ կյանքն ու ազնիվ ջանքերը* ավելի քան կփոխհատուցեն այդ տարբերությունը և կբերեն որոշակի հավասարության: Դա բարոյականություն է և բարի գործերով արդարացում:

Այնուամենայնիվ, Աստծո Խոսքը պարզ է այս հարցում, մենք չենք փրկվել մեր ջանքերով, մենք մեր բարությամբ չենք փրկվել, մենք մեր մտադրություններով չենք փրկվել: Մենք փրկված ենք Աստծո շնորհով, և շնորհը գալիս է մեզ՝ դրսից: Փրկագնող շնորհը գալիս է Աստծուց՝ Հիսուս Քրիստոսի պատկերով:

Քավություն

Խաչը, թերևս, ամենահայտնի և ճանաչված խորհրդանիշն է այսօր աշխարհում: Երբ մենք տեսնում ենք խաչը, մենք հիշում ենք Հիսուսի կյանքի և մահվան մասին պատմությունը խաչելության միջոցով: Խաչելությունը մարդկության կողմից երբևէ հորինված մահապատժի ամենասարսափելի և տանջալից եղանակն էր: Այդ իսկ պատճառով, առաջին դարում գտնվող մարդը տարօրինակ կհամարեր տեսնել, որ ժամանակակից մարդիկ որպես զարդարանք իրենց վզին շղթայով խաչ են կրում: Եթե մենք այսօր տեսնեինք մարդու, ով վզնոցի վրա էլեկտրական աթոռի պատկերով կախազարդ է կրում, ապա դա տարօրինակ կլիներ, քանի որ այն ներկայացնում է քրեական պատժի և մահվան միջոց: Ահա թե ինչ էր խաչը մարդկանց համար առաջին դարում: Դա խայտառակ երևույթ էր: Դա ամենավատ և դաժան հանցագործների և

[1] Albert L. Winseman, “Eternal Destinations: Americans Believe in Heaven, Hell,” May 25, 2004, https://news.gallup.com/poll/11770/eternal-destinations-ameri- cans-believe-heaven-hell.aspx.

ապստամբների ճակատագիրն էր: Խաչելությունն այնքան սարսափելի էր, որ բառ ստեղծվեց այն բացատրելու համար: Անգլերեն «excruciating» բառը բառացիորեն նշանակում է «տանջալից» և դա հենց այն զգացողությունն էր, որն արտահայտում էր մահապարտի ապրումները:
խաչելության միջոցով մահը դանդաղ, տանջալից, հանրային միջոց էր: Ոչ մի անհայտություն չկար նման մահվան մեջ: Խաչվողներին հաճախ հեգնում և ծիծաղում էին նրանց վրա: Դիտող ամբոխը քարեր էին նետում և ծիծաղում, երբ խաչից կախվածները դանդաղ մահանում էին խորը, ծանր եւ վերջին շունչը քաշելով: Նրանք, ի վերջո, մահանում էին շնչահեղձությունից, քանի որ կախված վիճակում, նրանց թոքերը դժվարությամբ էին շարունակում ապահովել ներքին աշխատանքը: Երբեմն կարող էր մի քանի օր տևել, որ ինչ-որ մեկը վերջապես մահանա, իսկ հետո խաչվածների համար մարդասիրական հուղարկավորություն չէր անցկացվում: Փոխարենը, նրանց հաճախ թողնում էին, որպեսզի թռչունները կտցահարեն մահացածի մարմինը: Մահացածները որպես օրինակ էին ծառայում նրանց համար, ովքեր հակառակ էին գնում Հռոմեական կայսրությանը և չէին հնազանդվում: Ի վերջո, մահացածների մարմինների մնացորդները հավաքում և նետում էին քաղաքային աղբանոցը:
Եկեք չմոռանանք, որ Հիսուսը խաչվեց հանցագործի համար նախատեսված խաչի վրա, ինչն ինձ մղում է ասելու այն, ինչը հիմա շատ տարօրինակ կթվա նույնիսկ ձեր համար. քրիստոնյաները սա անվանում են *Բարի Լուր*: Իրականում մենք ասում ենք, որ դա լավագույն նորությունն է, որը երբևէ լսել ենք: Այս Բարի Լուրն արտահայտելու համար Աստվածաշունչն ընտրում է «Ավետարան» բառը: Խաչը մեր ավետարանն է՝ մեր Բարի Լուրը:
Նոր Կտակարանի ավետարանի ամենակարճ ամփոփումը կատարում են Պողոս Առաքյալի հետևյալ խոսքերը. «Որովհետև ես առաջուց այն տվի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե *Քրիստոս մեր մեղքերի համար մեռավ՝* Գրքերի համեմատ» (1 Կորնթացիս 15:3): Այժմ, ինքնին, դա լավ լուր չէ, բայց հետո Պողոսը աստվածաբանական նշանակություն է տալիս *Քրիստոսի մահվանը* նախադասության մեջ խորապես կարևոր բառով՝ «համար»: Դա անում է, որպեսզի մեզ տեղափոխի պատմության ողբերգական փաստից դեպի դրա ուշագրավ նշանակությունը՝ մեր շնորհի ճամփորդության սկիզբը: « ...թե Քրիստոս մեր մեղքերի *համար* մեռավ՝ Գրքերի համեմատ» (1 Կորնթացիս 15:3) հատվածում երբ նշվում է «համար» բառը, դա դառնում է լավ նորություն՝ լավագույն լուրը, որը մենք երբևէ լսել ենք:
Աստվածաբանական տերմինով, Սուրբ Գիրքը դա անվանում է քավություն: Երբեմն քավություն տերմինի փոխարեն կարող են նաև օգտագործել «փոխհատուցում» բառը (նշանակում է, որ մենք Աստծո հետ մեկ ենք Քրիստոսի քավության շնորհիվ): Քավությունը կատարվեց Հիսուս Քրիստոսի խաչի միջոցով: Քավության վարդապետությունը սկսվում է Հին Կտակարանում: Քավության օրը, որը նաև կոչվում է Յոմ Կիպուր, ամենասուրբ օրն էր հին հուդդայականության մեջ[2]: Այն նշանակվել է որպես ապաշխարության և ներման օր:
Պատկերացրեք այն ձեր մտքում: Պատկերացրեք, որ հազարավոր երկրպագողներ հավաքվում են միասին՝ տարին սկսելու իրենց մեղքերը քավելով և Աստծո ողորմության մասին հիշեցնելու համար: Այդ օրը քահանայապետը, որը ներկայացնում էր ամբողջ ժողովրդին, առաջ էր բերում երկու այծ: Մեկ այծը զոհաբերվում էր որպես մեղքի ընծա՝ Սրբությունների Սրբության և Աստծո զոհասեղանին քավություն անելու համար: Կենդանին սատկում էր և արյունը թափում էր: Հռովմայեցիս 6:23-ում ասվում է, որ «մեղքի վարձքը մահ է», իսկ Եբրայեցիս 9:22-ը մեզ հիշեցնում է, որ «առանց արյուն թափելու մեղքերի թողություն չկա»:

[2] Յոմ՝ «օր» Կիպուր՝ «քավել; մաքրել»:

Առաջին այծը սատկում էր օրենքի համաձայն: Երկրորդ այծին, սակայն, կենդանի էին պահում և նրան անվանում էին քավության նոխազ: Քահանայապետը ձեռքերը դնում էր քավության նոխազի գլխին և նրա վրա խոստովանում իսրայելացիների բոլոր չարություններն ու մեղքերը: Խորհրդանշականորեն այս մեղքերը դրվում էին այծի գլխին, այնուհետև այն քշվում էր անապատ՝ մի ամայի վայր, որտեղ մարդկանց մեղքերը կարող էին տարվել տեսադաշտից ինչքան հնարավոր է հեռու[3]:

Այդ ծեսը շարունակվում էր տարեցտարի, տասնամյակ առ տասնամյակ (տե՛ս Եբրայեցիս 10:3–4): Արյունը թափվել էր : Հազարավոր կենդանիներ զոհաբերվեցին քավության անվերջանալի շրջափուլում, որպեսզի փոխհատուցվեն մարդկանց մեղքերը: Սա հենց այն կոնտեքստն է, որտեղ Հիսուսն ապրել և ծառայել է: Նախքան մեր կենտրոնանալը, թե ինչպե՞ս Հիսուսի մահը խաչի վրա քավեց բոլոր մեղքերը՝ հնարավոր դարձնելով փրկագնող շնորհի գործունեությանը, նախ եկեք քննարկենք երկու հիմնարար հարց. Ի՞նչ է մեղքը և ինչո՞ւ է մեզ պետք մեղքի քավությունը:

Ի՞նչ է մեղքը

Նախ, պետք է նշել, որ մեղքը ապստամբություն է: Թերևս մեղքի առավել ճանաչելի սահմանումը գալիս է Ջոն Ուեսլիից. «Աստծո հստակ օրենքի կամավոր խախտում»[4]: Մեղքը հայտնի և դիտավորյալ մի բան է: Մենք գիտենք, որ այն ինչ-որ մի բան է, որը որ սխալ է, բայց մենք դա անում ենք ամեն դեպքում, քանի որ կարող ենք: Դա դիտավորյալ անհնազանդություն է:

Երբ 1 Հովհաննես 3:4-ն ասում է մեզ, որ «Ամեն ով որ մեղք է գործում, նա անօրենություն էլ է անում, և մեղքն է անօրենությունը», դա չի նշանակում, որ խոսքերը միայն օրինական եղանակն են արտահայտում. ինչպես, օրինակ՝ «դու խախտեցիր օրենքը»: Դա, իրականում, կապված է օրինախախտման հիմքում ընկած վերաբերմունքի հետ: Հետևյալ օրինակի նմանությունը կարող է օգնել մեզ հասկանալ: Եթե դուք չգիտեք, թե ինչքան է սահմանված արագությունը և վարում եք սահմանվածից ավելի արագ, դա օրենքի խախտում չէ: Դուք դեռ տեխնիկապես խախտում եք օրենքը, բայց դուք անօրինական չեք գործում: Դա շատ է տարբերվում այն մարդուց, ով ասում է. «Մոռացեք արագության սահմանափակման այս հիմար կանոնակարգերը: Դրանք պարզապես այնտեղ են, որպեսզի փորձեն վերահսկել ինձ: Ես կանեմ այն, ինչ ուզում եմ, որովհետև ես եմ ղեկավարում իմ կյանքը»: Անօրենությունը ապստամբության վերաբերմունքն է օրենքի խախտման հետևում, այն ունի ապստամբ ոգի:

Երբ կրտսեր աղջիկս փոքր էր, նա չէր սիրում, որ ստիպված էր լինում պատասխանել իր ավագ քրոջն ու եղբորը, քանի որ մայրիկն ու հայրիկը կողքին չէին: Երբ կինս և ես նրանց մենակ էինք թողնում միասին, մեր փոքրիկը հանդգնորեն բարձրացնում էր իր ճռճռան փոքրիկ ձայնը և ասում իր քույրիկին ու եղբորը. «Դուք իմ ղեկավարները չեք»: Թեև ասված է փոքր երեխայի անմեղությամբ, բայց դա մեղքի հանդեպ մեր սրտի վերաբերմունքն է, մեր ինքնիշխանությունը: Մեղքը, որպես ապստամբություն, մեր փոքրիկ բռունցքները թափահարում է ամենակարող Աստծո դեմքին և բղավում. «Դու իմ ղեկավարը չես: Ես դա կանեմ իմ ձևով, որովհետև կարող եմ: Ինձնից բացի ոչ ոք, նույնիսկ Աստված, չի տնօրինի իմ կյանքը»: Դա մերժում է ընդունել մեր

[3] Ավանդույթը մեզ ասում է, որ քավության նոխազին ազատելու համար նշանակված մարդը հեթանոս էր, ով ոչ մի կապ չուներ Իսրայելի ժողովրդի հետ:

[4] John Wesley, The Works of John Wesley, vol. 12 (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 1978), 394. Տե՛ս նաև Հակոբոս 4:17-ը:

դիրքերը որպես արարածներ՝ մեր Արարչի հետ: Դա անկախության հռչակագիր է՝ լինել մեր սեփական աստվածը:

Ինքնիշխանության այս վերաբերմունքը զարմանալի չէ Սուրբ Գիրք գրողների համար: «Մենք ամենքս ոչխարների պես մոլորվեցանք, յուրաքանչյուրն իր ճանապարհին դառավ և Տերը նրա վրա դրավ մեր ամենի մեղքը» (Եսայիա 53:6): Մեղքն ապստամբություն է:

Երկրորդ՝ մեղքը նաեւ ստրկություն է: Դա ավելին է, քան ինքնիշխանությունը, դա այն է, երբ մենք ընտրում ենք անել ամեն բան մեր ցանկությամբ եւ քայլել մեր իսկ ընտրած ճանապարհով: «Hamartia» հունարեն բառ է, որը թարգմանվում է որպես մեղք, որը բխում է «hamartano» բայից, որը նշանակում է «բաց թողնել նպատակակետը» կամ «կրակել թիրախի վրա և չխոցել այն»[5]: Թեև այն առաջին անգամ օգտագործվել է Արիստոտելի կողմից, մասնավորապես նկատի ունենալով հին հունական թատրոնի աշխարհի գլխավոր հերոսի ողբերգական թերությունը (օրինակ՝ վատ դատողություն, անտարբերություն, իրազեկվածության պակաս և այլն), ինչպես նաև հայտնի է որպես ողբերգություն, որն օգտագործվել է վաղ եկեղեցու գրողների եւ մտածողների կողմից մեղքը նկարագրելու համար: Հետագայում, մի շարք աստվածաբաններ օգտագործեցին այն բառը, նկարագրելու մեղքի մի կողմը: Այսպիսով, աստվածաշնչյան իմաստով, hamartia-ն կարող է նշանակել հանձնարարություն, օրինակ այն, որ ես գիտեի, որ չպետք է դա անեմ, բայց ամեն դեպքում արեցի դա. «Արդ ի՞նչ ասենք, մնանք մեղքի մեջ, որ շնորհը շատանա: Քավ լիցի, մենք որ մեռանք մեղքին, էլ ինչպե՞ս դեռ կապրենք դրանում» (Հռոմեացիս 6:1-2), կամ դա կարող է նշանակել բացթողում, օրինակ այն, որ Ես գիտեի, թե ինչ պետք է անեի, բայց ես դա չարեցի. «Քանզի ոչ թե բարին՝ որ կամենում եմ, անում եմ, այլ չարը՝ որ չեմ կամենում, այն գործում եմ» (Հռոմեացիս 7:19), «Արդ ով որ բարին գիտենա և չանե, նրա համար մեղք է» (Հակոբոս 4:17): Ե՛վ կատարման, և՛ բացթողման մեղքերը բաց են թողնում նշանակակետը և այն հանձնարարությունը, որը Տերը մեզ տվել է:

Ահա թե ինչպես դա կարող է գործել բիզնեսի աշխարհում: Մի կողմից, ես ուզում եմ, որ Աստված օրհնի իմ բիզնեսը, բայց նաև ուզում եմ երաշխավորվել, որ իմ բիզնեսը հաջողված կլինի: Այսպիսով, ես սկսում եմ խորամանկորեն որոշ բաներ անել, որպեսզի փորձեմ առաջ գնալ, չնայած գիտեմ, որ դրանք բարոյական կամ օրինական չեն: Այս հույսերը հակասում են և անհամատեղելի են իմ գործողությունների հետ: Ես չեմ կարող Աստծուն խնդրել, որ օրհնի իմ աշխատանքը՝ քաջ գիտակցելով, որ ես Աստծո բարոյական կամքից դուրս եմ: Դա Նրա հանձնարարության մեջ դիտարկելով համարվում է մեղք: Այն կարող է ինձ մի պահ առաջ տանել, սակայն դա տեղի չի ունենա Աստծո բարեհաճությամբ: Նույն մետաղադրամի հակառակ կողմն այն է, որ ես ուզում եմ, որ Աստված բարգավաճեցնի իմ գործը, բայց ես որոշում եմ օգտվել իմ աշխատակիցների արդար առավելություններից և օգուտներից և նրանց հավելավճարները պահում եմ իմ շտեմարանները լցնելու համար: Սա բացթողման մեղք է: Այնուամենայնիվ, անկախ նրանից, թե ես գիտեի, որ չպետք է դա անեմ, բայց ամեն դեպքում արեցի կամ որ ես գիտեի, թե ինչ պետք է անեի, բայց ես դա չարեցի, երկու սկզբունքների դեպքում էլ դրանք մեղք են Աստծո համար:

«Hamartia» –ն կարող է նշանակել նաև շատ ավելի խոր մի բան: Ավելի քան մեր կատարած գործողությունը, քանի որ մեղքը մեր բնույթն է և այն մեր դրությունն է, որում մենք հայտնվում ենք

[5] William Barclay, The Gospel of Matthew, vol. 1 (Louisville, KY: Westminster John Knox Press, 1956), 253. See also H. G. Liddell, A Lexicon: Abridged from Liddell and Scott's Greek-English Lexicon (Oak Harbor, WA: Logos Research Systems, Inc., 1996), 41.

ի ծնե[6]: Մենք թաղված ենք մեղքի մեջ: Մենք ոչ միայն բնավորությամբ ըմբոստ ենք, այլև չունենք կամք՝ այլ կերպ վարվելու: Մենք ոչ միայն բաց ենք թողնում նպատակակետը, այլև չէինք էլ կարող հասնել նպատակակետին, եթե նույնիսկ փորձեինք: Որպես ընկած մարդիկ՝ մենք ազատ չենք անել այնպես, ինչպես ցանկանում ենք: Մենք մեղքի գերին ենք:

Մենք հաճախ մտածում ենք, որ մեր ապստամբությունը նշանակում է, որ մեզանից բացի ոչ ոք չի տնօրինի մեր կյանքը, սակայն դա մեր սխալ ըմբռումն է, քանի որ մենք չենք կարող կատարել այդ ընտրությունը: Մենք կծառայենք *ինչ-որ մեկին* կամ *ինչ-որ բանի*: Կամ մենք ամբողջ սրտով կծառայենք Աստծուն, կամ ստրուկ կլինենք մեր կրքերին ու մեղսավոր վարքագծին: Մեկը կամ մյուսը մեր վերջնական տերն է լինելու:

Եկեք անկեղծ լինենք, մեղքը կարող է զվարճալի լինել: Եթե այն զվարճալի չլինի, չի գայթակղի: Հավանաբար մենք պետք է դադարենք մարդկանց ասել, որ պետք է ատեն մեղքը եւ որ այն իրականում ձանձրալի է: Հավանաբար սա համոզիչ փաստարկ չէ: Մեղքը կարող է որոշ ժամանակ զվարճալի թվալ: Բայց այնտեղ, որտեղ դա կարող է մեզ տանել, այդքան էլ զվարճալի չէ: Մեղքի հետեւանքները շատ ցավոտ են լինում: Մեղքը արատավոր շրջան է:

Երեկույթ գնալը կարող է զվարճալի լինել: Բայց հետեւանքները կարող են այդքան էլ զվարճալի չլինել: Հարբեցողությունը զվարճալի վերջաբան չի ունենում: Որոշ հանդիպումներ զվարճալի չեն ավարտվում: Ալկոհոլիզմը զվարճալի չի վերջանում: Կախվածությունը զվարճալի լինել չի կարող: Դետոքս-կենտրոնները զվարճալի չեն: Ավտովթարները զվարճալի չեն: Ամուսինների բռնությունը զվարճալի չի համարվում: Դիսֆունկցիոնալ ընտանիքները զվարճալի չեն: Մեղքը արատավոր շրջան է, որը տանում է դեպի ցավալի կործանում:

Ինչ-որ մեկի հետ արտաամուսնական սեռական հարաբերություն ունենալը կարող է զվարճալի լինել: Այնտեղ, որտեղ այն տանում է, այդքան էլ զվարճալի չէ: Մեղավոր խիղճը զվարճալի լինել չի կարող: Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները զվարճալի չեն: Ամուսնալուծությունը զվարճալի չէ: Ինչ-որ մեկի սիրտը կոտրելը զվարճալի չէ: Երեխաներիդ աչքերի մեջ նայելը և նրանց ասելը, թե ինչու ես հեռանում մորից կամ հորից, զվարճալի չէ: Մեղքը արատավոր շրջան է, որը տանում է դեպի ցավալի կործանում:

Անառակ որդու մասին Հիսուսի պատմած ուշագրավ պատմությունը մեղքի շրջանի վառ օրինակն է (տե՛ս Ղուկաս 15:11-24): Ապստամբ որդին որոշում է, որ ինքը ցանկանում է ղեկավարել իր կյանքը: Նա ասում է իր հորը, որ նախօրոք ուզում է իր ժառանգությունը (առաջին դարում այս նախադասությունը նշանակում էր, որ որդին կցանկանար, որ հայրը մահացած լիներ, քանի որ միայն մահից հետո էին տալիս ժառանգությունը), վերցնում է փողի ամբողջ պահոցը և ծախսում այդ ամենը ճոխ ու շռայլ ապրելու վրա: Նա սիրում է նման ապրելակերպը, իհարկե՝ որոշ ժամանակով: Հետո անհետանում են նրա փողերը, ընկերները նույնպես: Որդին հայտնվում է մի իրավիճակում, որի մասին նա չէր էլ պատկերացնում՝ կոտրված, նվաստացած և խոզաբուծության մեջ ապրող: Մեղքը արատավոր շրջան է, որը տանում է դեպի ցավալի կործանում:

---

[6] Ուեսլիական Սրբության վարդապետության հետևող մարդիկ հասկանում են, որ մեղքը ներառում է ավելին, քան արված գործողություն: Սյուզաննա Ուեսլին հայտնի է իր որդուն՝ Ջոնին ուղղված նամակում գրված իր հայտարարությամբ, որը նա գրել է 1725 թվականի հունիսի 8-ին. «Ընդունի՛ր այս կանոնը. այն, ինչ թուլացնում է քո բանականությունը, խաթարում է քո խղճի զգացողությունը, մթագնում է քո Աստծո հետ ունեցած զգացումը կամ վերացնում է քո ախորժակը հոգևոր երևույթների հանդեպ. մի խոսքով, ինչ էլ որ ավելացնի քո մարմնի ուժն ու իշխանությունը քո մտքի վրա, այդ երևույթը քո համար մեղք է, որքան էլ դա ինքնին անմեղ լինի»:

Հավանաբար սա նկատի ուներ Հիսուսը, երբ ասաց. «Նեղ դռնովը ներս մտեք, որովհետև լայն է դուռը և ընդարձակ ճանապարհը՝ որ կորուստն է տանում և շատեր են նրանով գնացողները» (Մատթեոս 7:13):

Ահա մեր մեղավոր բնության մեծ պայքարը. քանի դեռ մեր էությունը չի փոխվել, մենք ավելի շատ կսիրենք մեղքը, քան Աստծուն, որովհետև ստրուկ ենք մեղքին՝ նրա զորության գերության մեջ[7]: Ոչ մի բարի մտադրություն կամ քրտնաջան աշխատանք, ոչ մի հումանիստական բարոյախոսություն մեզ լիովին չի ազատի: Մեղքը ստրկություն է:

Ի վերջո, մեղքը օտարացում է: «Օտարությունը» բառ չէ, որը մենք հաճախ ենք օգտագործում, բայց երբ դա անում ենք, այն օգտագործում ենք՝ ցույց տալու համար, որ ինչ-որ բան սխալ է տեղի ունեցել ինչ-որ հարաբերություններում: Մեղքը պարզապես կանոն կամ օրենք խախտելը չէ, այն նաև պատնեշ է, որը վնասում է հարաբերություններին: Մեղքը մարդկանց բաժանում է Աստծուց և միմյանցից: Մեղքի առաջին արձանագրված արարքում մեր հոգևոր նախնիները՝ Ադամն ու Եվան, չինազանդվեցին Աստծուն: Երբ նրանք դա արեցին, նրանք անմիջապես հասկացան, որ Աստծո և միմյանց հետ հարաբերությունների խախտում կա: Նրանց աչքերը բացվեցին, և նրանք հասկացան, որ մերկ են: Դա ավելին է նշանակում, քան ուղղակի գիտակցումը, որ նրանք հագուստ չեն ունեցել: Նրանք իրենց ամոթահար ու խոցելի էին զգում: Նրանք զգում էին թույլ և օտարված: Նրանք իրենց լիովին բացահայտված էին զգում: Մինչև այդ նրանք գիտեին միայն Աստծո սիրառատ ընկերակցությունը, բայց մեղքի պահին նրանք զգացին Աստծուց բաժանվածություն: Նրանք զգացին օտարությունը: Նրանց ընկերակցությունը խզվեց, և դա ազդեցություն ունեցավ նրանց հոգիների վրա: Նրանք զգացին իրենց մեղքի ողջ ծանրությունը: Ինքնապաշտպանության համար նրանք փորձեցին ծածկել իրենց մերկությունը և թաքնվել Աստծուց: Երբևէ փորձե՞լ եք թաքցնել ձեր սխալները կամ թաքցնել ձեր մեղքն Աստծուց:

Աստված գիտեր, որ հարաբերությունը խզվել էր: Եվ ամբողջ Սուրբ Գրքի ամենաքնքուշ պատմություններից մեկում Աստված կանչեց Ադամին. «Ո՞ւր ես»: (Ծննդոց 3: 9): Այդ պահին Աստված իրոք չգիտե՞ր, թե որտեղ էին նրանք: Արդյո՞ք նրանք այնքան լավ էին թաքնվել ծառերի հետևում, որ Աստված չկարողացավ գտնել նրանց: Երբևէ պահմտոցի խաղացել ե՞ք երեք տարեկան երեխայի հետ: Իհարկե, Աստված գիտեր, թե որտեղ են նրանք: Բայց նա ուզում էր, որ նրանք իմանային, որ ինքն էլ է զգացել իրենց բաժանումը:

Ադամը պատասխանեց. «Քո ձայնը լսեցի պարտեզումը, և վախեցի, որովհետև մերկ էի, և թաք կացի» (Ծննդոց 3:10): Աստվածաշնչում առաջին անգամ այստեղ է հիշատակվում վախը: Հասկանում ես թե մեղքն ի՞նչ է անում: Մեղքը բերում է վախ, մեղավորության զգացում և ամոթ: Մեղքը բերում է օտարում, դատապարտում և բաժանում: Մեղքը ընկերներից թշնամիներ է ստեղծում: Մեղքը մտերմությունը վերածում է թշնամանքի: Մեղքը խախտում է ընկերակցությունը:

Սա է մեր դժբախտությունը: Մեղքը ապստամբություն է: Մեղքը ստրկություն է: Մեղքը օտարացում է: Ինչպե՞ս ենք մենք երբևէ պատրաստվում այդ ամենը նորից վերականգնել: Ի՞նչ պետք է անենք մենք այդ ամբողջ մեղքի հետ:

---

[7] Ջեֆրի Բրոմայլին մատնանշում է այն հետաքրքիր փաստը, որ Աստվածաշունչը հաճախ «անձնավորում» է մեղքը՝ ընդգծելու նրա զորությունը և վերահսկելու մեղքը, որը կարող է հզոր ազդեցություն ունենալ մեր կյանքում: Bromiley, Theological Dictionary of the New Testament: Abridged in One Volume (Grand Rapids: Eerdmans, 1985), 48.

Կրկին հիշեցնեմ ձեզ այն մեծագույն նորությունը, որը մենք երբևէ կլսենք. «Որովհետև ես առաջուց այն տվի ձեզ, որ ես էլ ընդունեցի, թե Քրիստոս մեր մեղքերի համար մեռավ՝ գրքերի համեմատ: Եվ թե թաղվեցավ, և թե երրորդ օրը հարություն առավ՝ գրքերի համեմատ» (Ա Կորնթացիս 15:3–4): Սա գերագույն, անձնատուր սերն է: «Բայց Աստված հայտնեց իր սերը դեպի մեզ՝ երբ որ մենք դեռ մեղավոր էինք՝ Քրիստոսը մեզ համար մեռավ» (Հռոմեացիս 5:8): Մինչ մենք դեռ մեղանչում էինք, Քրիստոս, այնուամենայնիվ, մահացավ: «Որովհետև Աստված նրան, որ մեղք չգիտեր, մեզ համար մեղք արավ, որ մենք Աստծո արդարությունը լինենք Նրանում» (Բ Կորնթացիս 5:21): Սա փրկագնող շնորհն է:

Բողոքական եկեղեցու բարեփոխիչ Մարտին Լյութերը հավատարմագրված է այն անվանելով «մեծ փոխանակում»: Մեր մահը նրա կյանքի համար. մեր մեղքը նրա արդարության համար, մեր դատապարտությունը նրա փրկության համար, մեր անհաջողությունները նրա հաջողության համար, մեր պարտությունը նրա հաղթանակի համար: Քավությունը Աստծո Երրորդության գործողությունն է, որը քանդում է մեր ապստամբության և մեղքի միջև կանգնեցված բոլոր արգելքները: «Սրանում է սերը, որ նա սիրեց մեզ, և ուղարկեց իր Որդուն քավություն մեր մեղքերի համար» (Ա Հովհաննես 4:10):

Ի՞նչ է սա նշանակում: Քավությունը ողջ ընթացքում Աստծո սրտում էր: Բոլոր գառները, բոլոր քահանաները և տաճարի բոլոր զոհերը մատնացույց էին անում մեզ՝ առաջնորդելով դեպի Հիսուսին, ով դարձել է մեր Մեծ Քահանայապետը և Ով Իր արյունը թափեց մեր մեղքերի թողության համար: Ն. Թ. Ռայթը դա լավ է արտահայտում հետևյալ մտքում. «Նոր Կտակարանի ողջ ընթացքում այս մահը դիտվում է որպես սիրո գործողություն, և՛ Հիսուսի սերը (Գաղ. 2:20) և Աստծո սերը, ով ուղարկեց նրան, Ով Աստծո մարմնական ինքնարտահայտումն էր երկրի վրա (Հովհաննես 3:16; 13:1, Հռովմեացիս 5:6–11; 8:31–39; 1 Հովհաննես 4:9-10)»[8]: Հայր Աստվածը ուղարկեց Քրիստոս Որդուն Սուրբ Հոգու զորությամբ, որպեսզի մեզ համար անի այն, ինչ մենք երբեք չենք կարող անել ինքներս մեզ համար:

Հիսուսը հեռացնում է մեր մեղքերը՝ անցյալի, ներկայի և ապագայի: Աստված այլևս չի հիշում դրանք: «Որքան որ արևելքը հեռու է արևմուտքիցը, այնքան նա հեռացրեց մեզանից մեր հանցանքները» (Սաղմոս 103:12): Հիսուսի մահը խաչի վրա կոտրում է մեղքի զորությունը մեր կյանքում: Մի ժամանակ մենք մեր մեղքի ստրուկներն էինք և «հետևում էինք օդի զորության տիրակալին» (Եփեսացիս 2:2) և «այս աշխարհի աստծուն» (2 Կորնթացիս 4:4): Խաչի վրա իր մահկանացու մահով Հիսուսը կռվի մեջ մտավ դիվային ուժերի հետ և մեկընդմիշտ հաղթեց նրանց[9]: Նա կոտրեց մահվան, դժոխքի և գերեզմանի իշխանությունը: Քրիստոսի խաչի վրա

---

[8] N. T. Wright, Evil and the Justice of God (Downers Grove, IL: InterVarsity Press, 2006), 95.

[9] Այն համոզմունքը, որ խաչի վրա Հիսուսը հաղթանակ է տարել չարի ուժերի նկատմամբ, կոչվում է Քրիստոսի Հաղթանակի քավության տեսություն: Ն.Թ. Ռայթը մեկնաբանում է. «Ես հակված եմ տեսնելու Քրիստուս Հաղթանակի տեսությունը՝ Հիսուս Քրիստոսի հաղթանակը չարի և խավարի բոլոր ուժերի մեջ, որպես քավության աստվածաբանության կենտրոնական թեմա, որի շուրջ խաչի մյուս տարբեր իմաստները գտնում են իրենց հատուկ տեղը: Wright, Evil and the Justice of God, 114. Սրան հակառակ, Ֆլեմինգ Ռաթլեջը հաստատում է, որ քավության բոլոր աստվածաշնչյան թեմաները միասին աշխատում են՝ կազմելով մի գեղեցիկ ամբողջություն՝ հասկանալու խաչի խորությունն ու առեղծվածը»: «Խաչված Քրիստոսի ավետարանն ընդունելու ամենաճիշտ ճանապարհը աստվածաշնչյան մոտիվների փոխազդեցության և միմյանց ընդարձակման ձևի խորը գնահատումն է: . . . Ոչ մի կերպար չի կարող արդարացնել ամբողջը. բոլորը փրկության մեծ դրամայի մի մասն են կազմում» Rutledge, The Crucifixion: Understanding the Death of Jesus Christ (Grand Rapids: Eerdmans, 2015), 6–7.

հաղթանակով մենք այլևս մեղքի ճիրաններում չենք. մենք շնորհի ձեռքերում ենք և ազատ (այս մասին ավելին տե՛ս սրբագործող շնորհի 4-րդ գլխում):
Հիսուսի քավության շնորհիվ մենք հաշտվել ենք Աստծո հետ: Մեր օտարությունը վերացվել է: Մեր միջև այլևս հեռավորություն չկա: Մեր մեջ մեղքի կապանքները քանդվել են: Հիսուսն է մեր խաղաղությունը, Ով քանդել է ամեն պատ (Եփեսացիս 2:14): Տաճարի վարագույրը պատռվել է երկու մասի (Մատթեոս 27:51): Մեր մեղքն ու ամոթը, ինչպես նաև պատժի վախը վերացել են: Աստծո հետ մեր հարաբերությունը վերականգնվել է: «Բայց հիմա Հիսուս Քրիստոսի ձեռքովը՝ որ ժամանակով հեռավոր էիք, մոտավոր եղաք Քրիստոսի արյունովը» (Եփեսացիս 2:13): Սա փրկագնող շնորհն է:
Դուք պատկերացում ունե՞ք, թե որքան է Աստված սիրում ձեզ: Հայրը Որդու միջոցով մեր մեղքն ու հանցանքները վերցրել է իր վրա: Թեև մեր մեղքերը շատ են և ծանր, որոնցից ամենակարևորը մեր սրտերի կռապաշտությունն է՝ հետապնդելու այլ աստվածների, մեր Եռամեկ Աստվածը փրկագնում է մեզ, դարձնում նոր ստեղծագործություն և որդեգրում մեզ՝ Իր ընտանիքում: Ահա թե ինչու ներելն անիմաստ երևույթ լինել չի կարող: Ամեն ոք, ով ասում է. «Իհարկե, Աստված կների ինձ, դա Աստծո գործն է», երբեք չի հասկացել այն խորը ցավը, որը կապված է ուրիշի մեղքը կրելու հետ, իսկ դա նման է սրտին դանակով հարվածելուն: Խաչը Աստծո սրտում է եղել մի ամբողջ հավերժություն: Հայր Աստված, իր միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի մեջ, Հոգով ապահովել է փրկության ճանապարհը: Հիսուսը լիովին տրվեց Հոր նպատակի համար: Նա պատրաստակամորեն իր կյանքը տվեց մեզ համար: Մաքուրն՝ անմաքուրների համար: Անմեղը՝ մեղավորների համար: Աստծո անբիծ Գառը եկավ ապրելու այն կյանքով, որը մենք պետք է ապրեինք, և մեռնի այնպես, ինչպես մենք էինք արժանի մեռնելու:
Հիսուսի կյանքը, մահը և հարությունը ամեն ինչին թարմություն տվեց: Այս ճշմարտությունից ավելի կարևոր հիմք չկա: Դա մարդկության պատմության առանցքն է և մեր հավատքի հիմքը: Առանց Հիսուսի չկա մեղքի ներում, չկա հավիտենական կյանք և չկա հարաբերություն Բարի, Սուրբ և Սիրող Աստծո հետ: Դուք կարող եք ձեզ ընդմիշտ պատժել՝ զոջալով ձեր մեղքերի համար: Դուք կարող եք կոտրել ձեր հոգին՝ փորձելով ձեր խաղաղությունը հաստատել Աստծո հետ, բայց միակ ճանապարհը, որով դուք կզգաք լիարժեք փրկագնում և մնայուն խաղաղություն, այն է, երբ հասկանաք, որ ձեր միակ հույսը Հիսուսն է:
Մենք ստանում ենք փրկագնող շնորհի պարգևը՝ հավատալով Աստծուն: Մենք ապավինում ենք Աստծո ողորմությանը և մեր հավատքը կառուցում ենք միայն Քրիստոսի վրա: Մենք վստահում ենք խաչի վրա տարած նրա հաղթանակին, վստահում ենք, որ մեր մեղքը ներվել է, մենք վստահում ենք, որ մեղքի մահվան ճիրանը կոտրված է, մեր խիղճը մաքրվել է, և մենք գտնում ենք միասնություն Աստծո հետ:
Քավությունը ընդունելու երկու եղանակ կա: Դուք կարող եք ասել. «Եթե Աստված սեր է, ինչո՞ւ է մեզ պետք քավություն ստանալ»: Մյուս կողմից, մենք կարող ենք ասել. «Աստված քավել է մեր մեղքերը, ինչպիսի՜ սեր»:

Ինչպե՞ս է Գործում Փրկագնող Շնորհը

Պողոսն ասում է, որ քրիստոնյան նա է, ով անցել է աղետալի փոփոխության միջով: Եփեսացիս 2:1-10-ը նկարագրում է մեր դրամատիկ փոխակերպումը՝ մեղքի գերությունից մինչև Քրիստոսի ազատություն, որը տեղի է ունենում, երբ ինչ-որ մեկը հավատում է Քրիստոսին և այդպիսով

փրկվում է: Դա մեկն է, ով անցել է մահից կյանք, ստրկությունից՝ ազատություն, դատապարտումից՝ ընդունելություն, օտարումից՝ որդեգրում: Այժմ Եփեսացիս 2:8-10 հատվածներում Պողոսը պատմում է մեզ, թե ինչպես ենք մենք այնտեղից (կործանումից) հասնում այստեղ (փրկություն) և իրականում ինչպես ենք դառնում քրիստոնյա: Դա օրգանական գործընթաց է՝ բաղկացած երեք մասից. մենք փրկված ենք շնորհով, որը տանում է դեպի հավատք, ինչն էլ իր հերթին բարի գործեր է բերում: Սա բնական հավասարում է, իսկ դրա կարգավիճակը՝ ճգնաժամային: Եթե մենք հերթականությունը խախտում ենք, ապա մենք սխալ ելքի ենք հանդիպում:

Մենք փրկված ենք շնորհով: Մենք բավականաչափ ծանոթացանք շնորհի իմաստի մասին մեր առաջին գլխում: Պետք է հիշել, որ շնորհը միշտ գնում է առջևից: Շնորհը միշտ առաջինն է: Շնորհն արթնացնում է մեզ, փոխում է մեզ և բերում ճիշտ հարաբերությունների Աստծո և միմյանց հետ: Շատերն իրենց արածի պատճառով կարծում են, որ քրիստոնյա են. նրանք ենթադրում են, որ այն ամենը, ինչ պետք է անեն, լավ մարդ լինելն է և Աստվածաշնչի ուսմունքներին հետևելը, և Աստված կօրհնի իրենց: Դա շնորհ չէ, այլ սովորական բարոյական իրավիճակ: Չկա ավետարան ըստ որի մենք մեր հույսը պետք է մեր վրա դնենք: Մեր փրկությունը մեր գործերի հետևանքը չէ: Դա այն ամենն է, ինչ անում է Աստված՝ մեզ համար: Մեր զարթոնքը, մեր կենդանությունը Աստծո գործն է: Մենք չենք փրկվում այն ամենով, ինչ անում ենք Աստծո համար: Մենք փրկված ենք այն ամենով, ինչ Աստված անում է մեզ համար: Դա ամբողջական նվեր է:

Ես մի պատմություն լսեցի սեմինարիայի մի քանի ուսանողների մասին, ովքեր պատրաստվում էին ավարտական քննություն հանձնել: Լսարանում նրանք վերջին մի քանի րոպեներն անցկացնում էին ծանրաբեռնվածությամբ, մինչև քննությունը կսկսվեր: Երբ պրոֆեսորը մտավ լսարան, նա հայտարարեց, որ թեստից առաջ կարճ վերանայում է լինելու: Վերանայման մեծ մասը ուղղակիորեն հանձնվելու էր ուսումնասիրության նյութից ելնելով, բայց կային շատ լրացուցիչ նյութեր, որոնց համար ոչ ոք չէր պատրաստվել: Սա տհաճ անակնկալ էր լսարանի համար: Երբ ինչ-որ մեկը հարցրեց պրոֆեսորին լրացուցիչ նյութի մասին, նա բացատրեց, որ այդ ամենը ներառված է իրենց ընթերցանության մեջ, և որ իրենք պատասխանատվություն են կրելու այդ ամենի համար: Դժվար էր վիճաբանել ներկայացված տրամաբանության հետ:

Վերջապես եկավ թեստը հանձնելու ժամանակը: Պրոֆեսորն ասաց. «Քննության հարցաթերթերը շրջեք հակառակ կողմով, մինչև բոլորը կստանան իրենցը: Ես ձեզ կասեմ, թե երբ սկսեք»: Երբ ուսանողները շրջեցին դրանք, մեծ զարմանք ապրեցին, քանի որ թեստի բոլոր պատասխաններն արդեն լրացված էին: Նույնիսկ նրանց անունները վերևում գրված էին կարմիր թանաքով: Վերջին էջի ներքևում գրված էր՝ «Սա քննության ավարտն է: Թեստի բոլոր պատասխանները ճիշտ են: Դուք կստանաք «A» գնահատականը: Թեստն անցնելու պատճառն այն է, որ թեստը ստեղծողը նաև հանձնել է այն ձեր փոխարեն: Այն ամբողջ աշխատանքը, որը դուք արել եք նախապատրաստման ժամանակ, չի օգնել ձեզ ստանալ «A» գնահատականը: Դուք պարզապես փորձառեցիք շնորհը»:

Թիմ Քելլերը պատմում է տարեց կնոջ հետ զրույցի մի պատմություն, ով երբեմն հաճախում էր նրա եկեղեցին: Նա պարզ և պատշաճ էր, ոմանք նույնիսկ կարող են ասել պարկեշտ և բարոյական: Նա իրեն բարձր դիրքի էր պահում՝ մի փոքր անպատշաճ կամ անխոհեմության պատճառով, սակայն նա կարծում էր, որ եթե մարդը լավն է եղել կյանքի ընթացքում, ապա նա ոչնչից փրկվելու կարիք չունի: Նրա հետ Քելլերի զրույցի ընթացքում նա անվստահությամբ ասաց. «հիմա թույլ տվեք հասկանալ ձեզ...Դուք ինձ ասում եք, որ եթե ես իսկապես լավ և պարկեշտ կյանք վարեմ, և նույնիսկ հաճախեմ եկեղեցի, բայց երբեք չընդունեմ Քրիստոսին որպես իմ Փրկիչ, ես ավելի լավ չեմ լինի, քան մարդասպանություն գործած մեկը: Դա հենց այն է, ինչ դուք ասո՞ւմ եք»:

Քելլերը պատասխանեց. «Իրականում, այո»:
Նա պատասխանեց. «Սա ամենահիմար կրոնն է, որի մասին ես երբևէ լսել եմ»:
Ինչին Քելլերը պատասխանեց. «Դե, գուցե Դուք կարծում եք, որ դա ամենահիմար կրոնն է, որի մասին երբևէ լսել եք, բայց այն մարդասպանի համար, ով զղջում է, դա ամենահուսադրող լուրն է, որ նա երբևէ լսել է: Այդ նախկին մարդասպանը չի կարող հավատալ, որ կա կրոն, որը հույս է փայփայում իր նման մեկի համար»:
Թեև այս պատմությունը որոշ չափով ծայրահեղ է, սակայն այն կարևոր կետ է նշում: Այդ պարզ և պատշաճ և բարոյական կինը, որը բացարձակապես վստահ է, որ ավելի լավն է, քան շատերը, և ով կարծում է, որ ավետարանի էությունը վիրավորական է, եթե ոչ հիմար, իրականում, նա ինքն է գտնվում իր մարմնի ճիրաններում[10]: Նա փորձում է լինել պարկեշտ և մաքուր, բայց փորձում է դա անել՝ անկախ Քրիստոսի հանդեպ ունեցած հավատքից: Դա ինքնահավանության կուրացնող ծուղակն է: Ճանաչելով այս մեծ վտանգը՝ Դիտրիխ Բոնհոֆերը վարպետորեն նկարագրում է շնորհով գրկած քրիստոնյայի վերաբերմունքը. «Քրիստոնյաներն այն անձինք են, ովքեր այլևս չեն փնտրում իրենց փրկությունը, իրենց ազատագրումը, արդարացումը հենց իրենց մեջ, այլ միայն Հիսուս Քրիստոսի մեջ: Նրանք գիտեն, որ Աստծո Խոսքը Հիսուս Քրիստոսի մեջ նրանց մեղավոր է հռչակում, նույնիսկ երբ նրանք ոչինչ չեն գիտակցում իրենց մեղքերի բազմության մասին, և որ Աստծո Խոսքը Հիսուս Քրիստոսում նրանց ազատ և արդար է դարձնում, նույնիսկ երբ նրանք ոչինչ չեն զգում իրենց արդարությունից»[11]:
Մենք չենք հասկանա ավետարանը, եթե չհասկանանք, որ Աստված ընդունում է մեզ ոչ նրա համար թե մենք ինչ ենք արել կամ անում, այլ ամեն բանի հիմքում ընկած է այն, որ Աստված ուղարկեց Հիսուսին այս աշխարհ, որպեսզի մահանա աշխարհի մեղքերի համար եւ հարություն առնի մեր փրկության համար:
Մենք փրկված ենք շնորհով: Պողոս Առաքյալն ասում է, որ շնորհը տանում է դեպի հավատք: Ի՞նչ է հավատքը: Հավատքն ըստ էության գիտակցում և արձագանք է նրան, Ով արթնություն է տվել մեզ[12]: Ահա այն, թե ինչն է կարևոր հասկանալու համար. միակ հավատքը, որը փրկում է մեզ, հավատքն է առ Քրիստոս: Քրիստոնեական հավատքը ընդհանուր հավատ չէ ուղղակի սկզբունքների նկատմամբ: Դա այն հավատքն է, որ Երկիր մոլորակի վրա իսկապես ծնվել է մի երեխա, Ով մարմնավոր Աստված էր, ով իսկապես մահացավ խաչի վրա և իսկապես հարություն առավ մեռելներից: Պողոսը հաստատակամ էր այս հարցում. «Եվ եթե Քրիստոսը հարություն չի առել, ուրեմն ունայն է մեր քարոզությունը և ունայն է ձեր հավատքն էլ: Եվ եթե Քրիստոս հարություն չի առել՝ ունայն է ձեր հավատքը, և դեռ ձեր մեղքերի մեջ եք» (Ա Կորնթացիս 15:14, 17): Եթե Հիսուսն իրոք չի մահացել մեր մեղքերի համար և իրականում հարություն չի առել մեռելներից, ապա մեր հավատքը ոչ այլ ինչ է, քան ցանկություն կամ բարոյախոսական թերապևտիկ դեիզմ[13]: Ընդհանրությունների հանդեպ հավատքն անիմաստ է:

---

[10] «Մարմնի» իմաստի խորը բացատրության համար տե՛ս գլուխ Չորրորդ, «Սրբագործող Շնորհ»:
[11] Dietrich Bonhoeffer, Life Together (New York: HarperCollins Publishers, 1954), 21–22.
[12] Այս սահմանման համար ես պարտական եմ Թիմ Քելլերի մի քարոզին, սակայն ես չեմ կարող հիշել, թե որ քարոզն էր դա:
[13] «Բարոյական թերապևտիկ դեիզմը» արտահայտությունը ներմուծել են Քրիստիան Սմիթը և Մելինդա Լունդքվիստ Դենթոնը՝ նկարագրելու քսանմեկերորդ դարասկզբի ամերիկացի դեռահասներին և այն մշակութային շրջանակը, թե ինչպես են պոստմոդերն մարդիկ մտածում Աստծո մասին: Smith and Denton, Soul Searching: The Religious and Spiritual Lives of Amer- ican Teenagers (New York: Oxford University Press, 2005).

Եթե Պողոսը ողջ լիներ այսօր, նա կարող էր այսպես ասել. «*Եթե Հիսուսը այն մեկը չէ, ինչ Նա ասաց, որ է... եթե նա Աստծո Որդին չէ, և Նա մարդու տեսքով չի եկել երկրի վրա... եթե Նա իրոք չի մահացել խաչի վրա մեր փրկության համար... եթե Նա ֆիզիկապես հարություն չի առել մեռելներից և եթե նա իսկապես չի համբարձվել երկինք և չի նստել Հայր Աստծո աջ կողմում, ապա եկեք դադարեցնենք եկեղեցի խաղալը»:* Սկզբունքներից ոչ մեկն ինքնին իմաստ չի ունենա: Հավատք հավատքի վրա հիմնվելով կամ հավատ ընդհանրություններից ելնելով: Ո՛չ: Որովհետև ճշմարտության հանդեպ հավատը, սիրո հավատը և արդարության հանդեպ հավատը մեզ չեն փոխի և նոր կյանք չեն տա: Իրական հավատքը դա Հիսուսի հանդեպ հավատքն է: Մենք չենք փրկվում մեր գործերով, մեր բարությամբ կամ մեր սկզբունքներով: Մենք փրկված ենք Քրիստոսի և միայն Քրիստոսի շնորհիվ: Նրա հանդեպ հավատքը կարևոր է, քանի որ Նա մեր միակ հույսն է: Այնուհետև հավատքը բարի գործերի է հանգեցնում: Լավ գործերը մեզ չեն փրկում, նույնիսկ չեն մոտեցնի մեզ այդ փրկությանը: Բայց բարի գործերը բխում են մեր հավատքից: Անհնար է ասել, որ մենք ստացել ենք Աստծո շնորհը, և որ մենք իսկական աստվածաշնչյան հավատք ունենք, եթե մեր կյանքում իրադրությունների փոփոխություն չենք նկատում: Աստվածաշունչը շատ գործնական է այս հարցում: Մենք փրկված ենք շնորհով, բայց եթե իրականում ինչ-որ բան տեղի չի ունենում մեր կոնկրետ բնավորության և գոյություն ունեցող վարքի մեջ, ապա դա իրական հավատ չէ: Որովհետև, մինչ շնորհը տանում է դեպի հավատ, հավատքը տանում է դեպի բարի գործեր: «Վասնզի Նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված բարի գործերի համար, որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվիք» (Եփեսացիս 2:10):

Քրիստոնյաներն Աստծո ստեղծագործությունն են: «Poiema» -ն հունարեն բառն է, որը նշանակում է «թե ինչպես է նա մեզ ստեղծել» կամ «ձեռքի աշխատանք»: Այս բառը համապատասխանում է «պոեմ» բառին: Քրիստոնյաները հանդիսանում են Աստծո բանաստեղծությունները՝ Աստծո արվեստի գործերը: Արվեստը գեղեցիկ է, արժեքավոր եւ արտահայտում է արտիստի ներաշխարհը: Ի՞նչ է նշանակում Պողոսի համար Աստծո արվեստի գործ ասվածը: Քրիստոսում մենք գեղեցիկ ենք, արժեքավոր եւ ստեղծված ենք արտացոլելու մեր Արարչի Աստվածային էությունը:

Այնուամենայնիվ, մենք արվեստի գործ ենք, որը արատավորվել և փչացել է մեղքի պատճառով: Երբևէ տեսե՞լ եք խեղված գլուխգործոց: Աշխարհում վարպետ նկարիչին ճանաչում են մեծ գործերով և ոչ թե խեղաթյուրվածությունով: Որոշ առումներով գլուխգործոցի բնօրինակ գեղեցկությունը շատ ավելի մեծ ողբերգություն է դարձնում այն ավերված տեսնելը: Եթե երեխան գունաներկով նկարում է խոհանոցի պահարանների վրա, դա այդքան էլ գեղեցիկ չէ: Բայց շատ ավելի վատ է, եթե որևէ մեկը ինչ-որ ներկով ավել գծեր է կատարում Լեոնարդո դա Վինչիի «Մոնա Լիզա» կտավի վրա: Կատարվածի մեծությունն ու եզակիությունը որոշում են մեր պատասխանի ողբերգության և սարսափի աստիճանը:

Մի քանի տարի առաջ ես հնարավորություն ունեցա այցելել Հռոմ: Ես ցանկանում էի տեսնել «Պիետա»-ն Սուրբ Պետրոսի տաճարում: Իմանալով, որ այն փորագրվել է Միքելանջելոյի կողմից՝ մարմարի մեկ կտորից (միակ կտորը, որը հայտնի է անձամբ Միքելանջելոյի ստորագրությամբ), ես ուզում էի ուսումնասիրել այն առաջին իսկ պահից: Ես հիասթափված էի, երբ հայտնաբերեցի, որ այն գտնվում էր դիտող հանրությունից բավականին հեռավորության վրա, պարանների հետևում՝ հատուկ պաշտպանիչ ապակիով: Ինչի՞ համար են անհրաժեշտ այս նախազգուշական միջոցները: Հետագայում պարզեցի, որ 1972թ.-ին, Պենտեկոստեի կիրակի օրը, հոգեկան խանգարումներ ունեցող մի երկրաբան, որը պնդում էր, թե ինքը Հիսուսն է, մուրճով հարձակվել է քանդակի վրա: Տեսնողները խլել են թռչող մարմարի կտորներից շատերը: Ոմանք

վերադարձվեցին, բայց ոմանք՝ ոչ, այդ թվում՝ Մարիամի քիթը, որը հետագայում վերակառուցվեց նրա՝ մեջքի հատվածից կտրված մարմարից: Իտալացիները, արվեստի աշխարհի մնացած ներկայացուցիչների հետ միասին, ընկճված էին: Ինչպե՞ս կարող է այն երբևէ վերականգնվել իր սկզբնական գեղեցկությամբ: Նրանք աշխարհով մեկ փնտրեցին վարպետ արհեստավորների, ովքեր մասնագիտացած էին վերականգնողական աշխատանքներում: Շատ ժամանակ, հմտություն, գիտելիք, աշխատանք և ջանք գործադրելուց հետո վերականգնման նախագիծն ավարտվեց[14]: Շատ քչերը կհասկանային, որ այն երբևէ վնասվել է:
Դա այն է, ինչ Աստված անում է բոլորի համար՝ փրկելով շնորհով: Մենք նրա գլուխգործոցն ենք, նրա սիրելի գլուխգործոցն (magnum opus) ենք, և նա թույլ չի տա, որ մեղքի վնասը վերջին խոսքն ունենա: Մեր արժանիքն ապացուցելու համար Աստված ոչ միայն մեզ վերափոխում է Հիսուս Քրիստոսի պատկերով, այլ նաև աշխատանք է տալիս, որ գործենք Իր ստեղծած աշխարհում: Մենք անում ենք այս աշխատանքը, քանի որ Աստված վերափոխել է մեզ: Երբ մենք դա գիտենք մեր ներքին կյանքում, երբ մենք իսկապես հասկանում ենք դա, մենք երբեք այլևս չենք կարող ասել, որ մեր լավ գործերը փրկում են մեզ: Բարոյականությունը այլևս երբեք չի կարող լինել մեր լավագույն պատասխանը: Մեր բարի գործերը հետևանքն են այն ամենի, ինչ Աստված արել է մեր մեջ: Դրանք արտացոլում են Աստծո փառքը, ոչ թե մերը:

Ես գնահատում եմ այն պատկերացումները, որոնք առաջարկում է Յուջին Պետերսոնը Պողոսի շնորհի հավասարման իր վերափոխման մեջ.

> Այժմ Աստված դրել է մեզ այնտեղ, որտեղ կամենում է, որպեսզի այս և մյուս աշխարհում ողջ ժամանակն ու բարությունը մեզ վրա թափի Քրիստոս Հիսուսով: Փրկությունը Նրա ամբողջ գաղափարն է և նրա ամբողջ աշխատանքը: Միակ բանը, որ մենք պետք է անենք, Նրան բավականաչափ վստահելն է: Դա Աստծո պարգևն է սկզբից մինչև վերջ: Մենք գլխավոր դերը չենք խաղում: Եթե այդպես լիներ, հավանաբար կարտահայտվեինք պարծենալով, որ արել ենք ամբողջ գործը: Ո՛չ, մենք մեզ ոչ ստեղծում ենք, ո՛չ էլ փրկում: Աստված ամեն բան կատարում է ինքնուրույն՝ և՛ ստեղծելը, և՛ փրկելը: Նա ստեղծում է մեզանից յուրաքանչյուրին Քրիստոս Հիսուսի միջոցով, որպեսզի միանանք Իրեն այն գործում, որը Նա անում է: Այն բարի գործը, որը նա պատրաստել է մեզ համար, եւ շատ լավ կլինի, եթե մենք դա անենք:

«Որ նոր եկող դարերում հավիտյան ցույց տա իր շնորհի գերազանց մեծությունը, Քրիստոս Հիսուսի մեզ վրա ցույց տված քաղցրությունովը: Որովհետև շնորհով եք փրկված հավատքի ձեռքովը. և սա ոչ թե ձեզանից է, այլ Աստծո պարգևն է: Ոչ թե գործերից, որ մեկը չպարծենա:

[14] «New York Times»-ի հոդվածը այս մասին մանրամասնում է լրագրողների խմբին, որոնց թույլատրվել է բարձրանալ աստիճանների վրա և ուշադիր զննել վերականգնված քանդակը՝ դիտող հանրության առաջ: «Վնասված շղարշի, աչքի տարածքի, քթի, ձեռքի և ձեռքի վերականգնումն անթերի տեսք ուներ, բացառությամբ մանր գծերի, որոնք տեսանելի էին միայն ուշադիր զննման ժամանակ: Վերանորոգված մասերի և քանդակի հարակից մարմարե մակերեսի գույնի մեջ նկատելի տարբերություն չկար: «Մենք աշխատեցինք ատամնաբույժների նման», - ասաց Դեոկլեչիո Ռեդիգ դե Կամպոսը: Paul Hoff- man, “Restored Pieta Show; Condition Near Perfect” New York Times, January 5, 1973, https://www.nytimes.com/1973/01/05/archives/restored-pieta-shown-condition-near-per- fect-marks-on-marys-cheek.html.

Վասնզի նրա ստեղծվածն ենք՝ Քրիստոս Հիսուսով հաստատված գործերի համար. որոնց համար Աստված առաջուց պատրաստեց մեզ, որ նրանցում վարվինք» Եփեսացիս 2:7-10:

Աստված Քրիստոսով փրկում է մեզ դատապարտությունից, դատաստանից և դժոխքից:
Աստված Քրիստոսով փրկագնում է մեզ, և մենք լիովին հաշտվում ենք Նրա հետ:
Աստված Քրիստոսով արդարացնում է մեզ՝ ուղղելով մեր սխալները:
Աստված Քրիստոսով վերափոխում է մեզ, և մենք վերստին ծնվում ենք:
Աստված Քրիստոսով մեզ որդեգրում է Իր ընտանիքում:

Մենք չենք փրկվել, քանի որ մեր հավատքը դրել ենք վարդապետության վրա: Մենք չենք փրկվել մեր ճիշտ հավատքով: Մենք փրկված ենք, քանի որ ինչ-որ բան դրսից, կամ, ավելի ճիշտ է, ինչ-որ մեկը դրսից մտել է մեր մեջ՝ մեր ներաշխարհ: Մենք ամբողջովին վերափոխված ենք և ավետարանագիրներն ընտրել են լավագույն ձևը նկարագրելու համար այն, ինչ մենք ապրում ենք: Նրանք ասում են, որ մենք նոր ծնունդ ենք ստանում: Եբրայեցի գրողները դա նկարագրում են որպես փոսից դուրս գալու փորձ: Մենք ստրկության մեջ էինք, իսկ հիմա ազատ ենք: Մենք այլևս վախի ստրուկ չենք: Մենք դառնում ենք Աստծո զավակ: Նախկինում մենք Աստծո ընտանիքից դուրս էինք, իսկ այժմ մենք Աստծո ընտանիքի լիարժեք անդամներն ենք: Մենք արդարացված ենք Հոր առաջ, ինչը նշանակում է, որ ամեն ինչ ուղղված է:
Երբեք չմոռանանք, որ փրկությունը գալիս է դրսից, ոչ թե մեր ներսից: Մենք չենք փրկվել, որովհետև բարի ենք. մենք փրկված ենք, որովհետև Աստված է Բարի: Ահա թե ինչ է փրկությունը: Աստված մեզ համար անում է մի բան, որը մենք չկարողացանք անել մեզ համար: Դա փրկագնող շնորհն է:
Այժմ մենք կանրադառնանք նաև նրան, թե ինչ կարող է տեղի ունենալ Քրիստոսով նորոգված կյանքի հետ՝ սրբագործող շնորհի միջոցով:

△ □ •

ԿՅԱՆՔ

Սրբագործող *շնորհի միջոցով Սուրբ Հոգին մեզ զորացնում է ապրելու Աստծուն ամբողջությամբ նվիրված կյանքով:*
Զորացնող *շնորհի միջոցով Սուրբ Հոգին համագործակցում է մեզ հետ՝ հնարավորություն տալով ապրելու՝ Աստծուն ծառայող* ***հավատարիմ եւ*** *կարգապահ կյանքով:*
Բավարար *շնորհի միջոցով Աստծո զորությունը կատարյալ է դառնում մեր թուլության մեջ:*

4
ՍՐԲԱԳՈՐԾՈՂ ՇՆՈՐՀ

Եւ ինքը խաղաղութեան Աստուածը ձեզ սուրբ անէ բոլորովին. Եւ ձեր բոլոր հոգին եւ շունչը եւ մարմինը անարատ պահուի մինչեւ մեր Տէր Յիսուս Քրիստոսի գալը։
Հաւատարիմ է նա որ կանչեց ձեզ, որ կ'անէ էլ։
Ա Թեսաղոնիկեցիս 5:23-24

Ըստ Ջոն Ուեսլիի Սուրբ Գրքի մեջ ամենակարևոր 4 վարդապետություններն են ադամական մեղքը, հավատով արդարացումը, վերստին ծնունդը և ներքին ու արտաքին սրբությունը։
Արդարացումը Բողոքական Ռեֆորմացիայի գլխավոր թեմաներից էր, որը նախորդել է Ուեսլիին մոտ երկու հարյուր տարի։ Ռեֆորմատորները, ներառյալ Մարտին Լյութերը, հռչակում էին, որ մենք արդարացված ենք միայն Աստծո հավատով[1]։ Ուեսլին միանգամայն հաստատում էր արդարացման անհրաժեշտությունը, սակայն միաժամանակ վերստին ծնունդը ներառելով Աստվածաշնչյան 4 ամենահիմնարար վարդապետությունների մեջ։ Նրա հիմնարար գաղափարն էր, որ խաչն ու հարությունը վճռական դեր ունեն մեղքի և մեղսածին պատճառների գիտակցման հարցում։ Ուստի, ըստ Ուեսլիի, վերստին ծնունդը սուրբ կյանքի սկիզբն է կամ այլ խոսքով «սրբացման»։
Վերջին գլխում մենք քննարկեցինք մեղքի բնույթի և դրա կործանարար հետևանքի մասին՝ աշխարհում և մեր կյանքերում։ Սակայն ո՞րն է մեղքի ծագման պատճառը։ Ո՞րն է մեղքի աղբյուրը մեր սրտերում։
Աստվածաշունչը փաստում է, որ մեղքը ձևավորվում է մեր բնածին էությունից՝ բնույթից։ «Որոնց մէջ մենք ամենս էլ մի ժամանակ ման էինք գալիս *մեր մարմնի* ցանկություններումը՝ մարմնի եւ մտքի կամքը կատարելով, եւ *բնութեամբ* բարկութեան որդիք էինք ինչպէս ուրիշներն էլ» (Եփեսացիս 2:3)։ Այս համարը երկու շեշտադրում է պարունակում, որոնք լավ ըմբռնված չեն և հավելյալ բացատրության կարիք ունեն։

ԷՈՒԹՅԱՄԲ

Նոր Կտակարանի ուղերձներում Պողոս առաքյալը բացահայտորեն սովորեցնում է, որ մարդիկ ծնվում են անհնազանդ և մեղսածին էությամբ (Հռ. 7:18, Եփես. 2:1-3, Կող. 3:5)։ Մենք չենք սովորում մեղանչել։ Ոչ ոք մեզ չի սովորեցնում։ Մենք հատուկ «մեղք գործելու» դասընթացների չենք մասնակցում։ Դա ինքնաբերաբար է ստացվում և մենք պետք է ընդունենք, որ մենք մրցակցությունից դուրս ենք այդ գործում։ Սա ամենատարածված տեսանկյուններից չէ, սակայն հարկ է նշել, որ երբեք էլ չի եղել։
Պելագիուսը իռլանդացի վանական էր, ով ծնվել է չորրորդ դարում և հետագայում դարձել է Հռոմի քաղաքացի։ Նա սովորեցնում էր, որ մարդիկ չունեն մեղսածին էություն, այլ երեխաները *սովորում* են մեղք գործել իրենց շրջապատի վատ օրինակներից։ Պիլագիուսը նաև պնդում էր, որ մարդիկ ծնվում են չեզոք/անորոշ էությամբ և երեխաները լավը կամ վատն ընդօրինակում

[1] Արդարացումը Աստծո շնորհով Աստծո հետ հաշտությունն է, որով մեր մեղքերը ներվում են, և մեր մեղքը հեռացվում է խաչի վրա Հիսուսի մահվան քավիչ զոհաբերությամբ։ Տե՛ս գլուխ 3, «Փրկագնող շնորհ»։

են կախված իրենց շուրջ գերակշռող օրինակներից։ Ուստի, ըստ Պելագիուսի մեղքը կամքի միտումնավոր գործողությունն է, և մենք կարող ենք ջանք գործադրելով ապրել առանց մեղքի բարի կյանքով։

Պելագիուսը մեկ այլ հռչակավոր աստվածաբանի՝ Օգոստինոս Երանելիի, ժամանակակիցներից էր, վերջինս դասվում է Արևմտյան եկեղեցու ամենաազդեցիկ հայրերի շարքին։ Հյուսիսաֆրիկյան եպիսկոպոսը լայնածավալ աշխատություններ ունի մեր առաջին հոգևոր ծնողներից ժառանգված ադամական մեղքի և դրա հյուծող հետևանքների մասին։ Օգոստինոսը կտրականապես դեմ էր Պելագիուսի տեսակետին՝ այն համարելով հակառակ և՛ Սուրբ Գրքին, և՛ ողջախոհությանը։ Նա նաև նշանակալից դերակատարություն է ունեցել հերետիկոսության մեղադրանքով Պելագիուսին եկեղեցուց հեռացնելու գործում։ Ի հակադրություն, որ չորրորդ դարից սկսած եկեղեցու կողմից պելեգիականությունը որակավորվում է որպես հերետիկոսական ուսմունք, ընդհուպ այսօր էլ այն արդիական է եկեղեցում։

Նյու Յորք կատարած ճամփորդության ժամանակ ես և կինս այցելեցինք Բրոդվեյ դիտելու «Չարը» ներկայացումը, որը պատմում է Էլֆաբայի՝ Արևմուտքի չար կախարդի, և Գլինդայի՝ Հյուսիսի բարի կախարդի, հետ նրա ընկերության մասին։ Պատմությունը պատմում է, թե ինչպես կանանցից յուրաքանչյուրը պայքարում է իր ինքնությունը գտնելու համար, բայց ի վերջո Էլֆաբան ընտրում է լինել բարի։ Յուրաքանչյուրն իր որոշումը կայացնում է ելնելով կյանքի հանգամանքներից։ Էլֆաբայի կյանքում վատ բաներ են պատահում, ուստի նա դառնում է չար, իսկ Գլինդայի մոտ ամեն ինչ ճիշտ է ընթանում, ուստի նա բարի է դառնում։ Սա պարզապես հորինված երաժշտական ներկայացում է, բայց ժամանակակից շատ մարդիկ հակված են նույն կերպ մտածելու մեղքի մասին։

Հիսուսը համամիտ չէր. «Բայց բերանիցը դուրս եկող բաները սրտիցն են դուրս գալիս, եւ նորանք են մարդին պղծում։ Որովհետեւ սրտիցը դուրս են գալիս չար խորհուրդներ, սպանութիւններ, շնութիւններ, պոռնկութիւններ, գողութիւններ, սուտ վկայութիւններ, հայհոյութիւններ» (Մատթ. 15:18–19)։ Սիրտն է ամեն պղծության աղբյուրը, մեղքը ելնում է սրտից։

Երբևէ տեսել եք փոքր երեխայի, որը հազիվ է քայլում։ Ի՞նչու են իրենք վարվում այդպես։ Ի՞նչու են նրանք անձնասեր։ Ի՞նչու են զայրույթի պոռթկումներ ունենում, երբ իրենց ուզածը չեն ստանում։ Երեխան մեղսավոր չէ իր փորձառության կամ ապրած կյանքի պատճառով։ Նրանք այնքան կյանքի փորձ չունեն, որը կարող է ազդեցություն ունենալ իրենց վրա։ Երեխան մեղսավոր է, քանի որ մեղքը բխում է սրտից՝ քանի որ այն բնածին է։ Նրանց ոչ ոք չի սովորեցնում անձնասեր լինել, նրանք այդպիսինն են ինքնաբերաբար։ Մեղքը մարդու էության արտացոլանքն է։ Դավիթը խոստովանում էր՝ «ահա ես անօրէնութիւնով եմ ծնուել, եւ մեղքով յղացաւ ինձ իմ մայրը» (Սաղմ. 51:5)։ Սա է ադամական մեղքի էմպիրիկական՝ փորձով հաստատված, փաստը։

Իսկ ի՞նչպես է այս ամենը բացատրվում աստվածաբանական տեսանկյունից։ Ամեն մարդ ստեղծված է Աստծո պատկերով և Աստված բարի ու սուրբ է։ Ի սկզբանե մարդկությունն արտացոլում էր աստվածային էությունը, սակայն սրբության և բարության աղբյուրը մեզանից չէր, այլ հավիտենական, եռամեկ Աստծուց։ Ինչպես սահմանում էին Ուիլյամ Գրեյթհաուսն ու Ռեյ Դանինգը՝ «Միայն Աստված է բացարձակ սուրբ։ Մենք սուրբ կարող ենք լինել միայն, երբ իրավամբ կապված ենք Աստծո հետ և լցված Նրա սրբազործող Հոգով»։

Այսպիսով, անկման հետևանքով մեղքի ի հայտ գալու և դրա հետևանքներից ի վեր Աստծո պատկերով ստեղծված մեր բնույթը մնում է անփոփոխ, մինչդեռ Աստծո բարոյական կերպարը մեր մեջ խեղաթյուրված է[2]: Գրեյթհաուսը և Դաննինգը շարունակում են. «*Ըստ բնույթի*, մարդը բարի է՝ Աստծո համար ստեղծված մարդ: *Էկզիստենցիալ* առումով (գոյաբանական տեսանկյունից) մարդը մեղավոր է, ապստամբ՝ օտարված Աստծո կյանքից և, հետևաբար, ապականված»[3]: Բնույթով բարի, էքզիստենցիալ՝ ապստամբ. Սա սկզբնական կամ ադամական մեղքն է:

Մենք ունենք բնություն, որով ծնվել ենք: Դա մեզանում ինչ որ «բան» չէ, որն անհրաժեշտ է հեռացնել, ինչպես ախտահարված լեղապարկը: Դա մեր դիրքն է հպարտության և եսակենտրոնության նկատմամբ: Դա մեր բնածին հակումն է դեպի բռնություն, անձնասիրություն, ինքնաբավություն ու մորթիապաշտություն: Սա նարցիսիզմ է ամենաբարձր մակարդակում և առավել ակնհայտ ձևով արտահայտված. ինչը նշանակում է, որ մեղքը մեր սրտերում ավելին է քան մեր վրիպումները, որոնք մենք սխալմամբ ենք թույլ տալիս, մեղքը՝ առաջին պատվիրանի անտեսումն է (Ելից 20:3) և միմիայն Աստծուն երկրպագելու ձախողում: Ն. Թ. Ռայթը մեզ հիշեցնում է մեր իրական ընկղմվածությունը՝

> Մարդկային անկումը, դա ոչ միայն Աստծո բարոյական օրենքի խախտումն ու վիրավորանքն է առ Արարիչ, Ում պատկերով մենք ստեղծվել ենք, չնայած պետք է մատնանշել, որ այս երկու պնդումներն էլ ճիշտ են: Օրենքի խախտումն ավելի լուրջ ախտանիշ է: Բարոյականությունը կարևոր է, բայց դա ամբողջական պատկերը չէ: Արարչագործության պսակ համարվող և ամբողջ արարչագործության նկատմամբ պատասխանատվություն և հեղինակություն ունեցող մարդիկ, երես դարձրեցին իրենց կոչումից՝ երկրպագելով և պաշտելով արարվածներին, այլ ոչ թե Արարչին: Սա կոչվում է կռապաշտություն: Արդյունքը ստրկությունն է և ի վերջո մահը[4]:

---

[2] Imago Dei-ն «Աստծո պատկեր» բառի լատիներեն թարգմանությունն է: Մինչդեռ Աստծո բարոյական կերպարը մարդկության մեջ խեղաթյուրվել է անկման պատճառով, Աստծո էական բնությունը պահպանում է Աստծո պատկերով ստեղծված յուրաքանչյուր մարդու արժեքը: Դիանա Լեկլերկը նշում է, որ Նազովրեցի աստվածաբան Միլդրեդ Բանգս Ուինկոպը, հավատարիմ մնալով Ուեսլիի ուսմունքին սահմանում է, «Աստծո կերպարը մարդկության մեջ երևում է սիրելու կարողությամբ՝ Աստծո, ուրիշների, սեփական անձի և երկրի հետ հարաբերությունների համատեքստում»: Լեկլերկ, Բացահայտելով Քրիստոնեական Սրբություն. Ուեսլեյան-Սրբության աստվածաբանության սիրտը (Կանզաս Սիթի, Բիքոն Հիլլ հրատարակչություն, 2010), 312: Նաև տե՛ս այս գլխի վերջին բաժինը՝ «Սահմանելով ամբողջական սրբացումը»:

[3] Գրեյթհաուս և Դաննինգ, Ուեսլեյան աստվածաբանության ներածություն (Կանզաս Սիթի, Կանզաս սիթի Բիքոն Հիլլ հրատարակչություն, 1982), 52: Նրանք մանրամասնում են սկզբնական մեղքի պատմական իմաստը (Հռոմ. 5:12–21) և ադամական մեղքի գոյաբանական իմաստը (Հռոմ. 7:14–25), 53–54: Վեսլեյան տեսակետը ադամական մեղքի վերաբերյալ տարբերվում է Կալվինիստական վարդապետությունից, որը հակված է ամբողջական ապականության գաղափարին:

[4] Ն. Թ. Ռայթ, Հեղափոխության սկսվելու օրը. Վերանայելով Հիսուսի Խաչելության իմաստը (Նյու Յորք: HarperCollins Publishers, 2016), 76–77.

Մեր խնդիրը պարզապես վատ վարքագիծը կամ սխալ որոշումները չեն: Մենք ունենք ընկած էություն: Աստծո շնորհն անհրաժեշտ է, որպեսզի ազատագրվենք և ապաքինվենք ընկած վիճակից, ինչպես նաև ադամական և իրական մեղքի հետևանքներից: Սրա համար պետք է և՛ արդարացում, և՛ սրբացում: Մենք պետք է վերաձևավորվենք և մեր սրտերը պետք է արմատապես նորոգվեն: Ահա թե ինչու է Ուեսլին ընդգծում ներքին և արտաքին սրբությունը: Մեր մեղքերը քավվում են, Քրիստոսն է ապրում մեր մեջ և մեր սրտերը մաքրվում են հավատքով: Արդյունքը Աստծո ամբողջական պատկերի վերականգնումն է, որը կորսված էր:

ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԵՐԸ

Ինչպես նշվեց նախկինում, Նոր Կտակարանի գրվածքները, հատկապես Պողոս առաքյալին վերագրվողները, սկզբնական՝ ադամական, մեղքի աղետալի հետևանքը կոչում են «մարմնի գործեր»: «Մարմին» բառը ծագում է հունարեն sarx բառից[5]: Մարմին բառն օգտագործվում է հոգևոր իմաստով՝ ակնարկելով եսակենտրոնությանը, որը ձգտում է բավարարել «ես»-ի անսահման ինքնասիրությունը, որն ապրում է ինքն իր համար, այլ ոչ թե ամբողջությամբ Աստծո կամքին և նպատակներին հանձնված[6]: Մարտին Լյութերը, և նրանից առաջ Օգոստինոսը, պատկերավոր կերպով նկարագրեցին սա որպես «անձիդ վրա կռացած» վիճակ (incurvatus in se): Խորապես մտածեք այն պատկերի մասին, որը ներկայացնում է Լյութերը, «Մեր էությունը, առաջին մեղքի ապականության պատճառով, այնքան խորը ճկված է իր մեջ, որ ոչ միայն ձգտում է Աստծո լավագույն պարգևներին և վայելում է դրանք (ինչպես գրված է արդարների ու կեղծավորների գործերում), այլ նույնիսկ՝ օգտագործում է Աստծուն այդ պարգևներին հասնելու համար: Առանց գիտակցելու, որ չարակամորեն և նենգաբար ձգտում է ամեն բանի, նույնսիկ Աստծուն, անձնական շահի համար»[7]:

Երբ Պողոսն ասում է. «Ես կամենում եմ այն, ինչ ճիշտ է, բայց չեմ կարողանում դա անել» (Հռոմ. 7:18բ), նա նկատի ունի, որ իբր մարմնավոր, նա ի զորու չէ՝ Աստծուն սիրելու և հնազանդվելու ամբողջ սրտով: Նա, և մենք, մեր ցանկասեր «ես»-ի ստրուկներն ենք: Պողոսը Գաղատացիներին ուղղված իր նամակում շարունակում է՝ «Որովհետեւ մարմինը ցանկանում է հոգուն հակառակ, եւ հոգին մարմնին հակառակ. Եւ սորանք իրար հակառակ են, որ մի գուցէ այն որ

---

[5] Քրիստոնեական կյանքի երկբնույթ տեսությունը ներդրվել է լայն տարածում գտած դիսպենսացիոն տեսակետի միջոցով տասնիններորդ դարի վերջից և քսաներորդ դարի սկզբից: Որը մեծ ազդեցություն է ունեցել բազմաթիվ ավետարանականների, այդ թվում՝ մի շարք նշանավոր ավետարանական քարոզիչների և ուսուցիչների վրա: Այս ազդեցությունը գլխավորեց Կոմիտեն Նոր միջազգային տարբերակի ամենավաղ (1973) թարգմանությունը «մարմին» (sarx) բառը թարգմանվեց որպես «մեղավոր բնություն»: Դաննինգը նշում է, որ Greathouse-ը հետագայում պնդել է, որ «գործնականում անհնար էր օգտագործել [թարգմանության այդ տարբերակը] որպես հունարեն բնագրի հավատարիմ մեկնաբանության հիմք»: NIV-ի թարգմանչական հանձնաժողովը 2011թ վերանայել է նրա թարգմանությունը «մարմնի» բառի համար: Դանինգ, <<Հետապնդելով Աստվածային պատկերը, Սրբության վրա հիմնված աստվածաբանություն>> (Marrickville, New South Wales: Southwood Press, 2016), Kindle Location 786:

[6] Գրեյթհաուսը և Դաննինգը մարմինը սահմանում են որպես «Ես», որն ապրում է ինձ համար: Գրեյթհաուս և Դանինգ, Ծանոթություն Ուեսլեյան Աստվածաբանության, 53:

[7] Մարտին Լյութեր, Դասախոսություններ Հռոմեացիների մասին, WA 56:304

դուք կամենում էք՝ այն անէք։» (Գաղ. 5:17)։ Այնուհետև նա շարունակում է՝ ցույց տալով մարմնի գործերի օրինակներ, որոնք հակառակ են Հոգու պտուղին (հ. 19–23)։ Այնուհետև, Պողոսն ամբողջական պատկերը փոխանցելու համար գրում է՝ «Որովհետեւ մարմնի խորհուրդը մահ է. Եւ հոգու խորհուրդը՝ կեանք եւ խաղաղութիւն» (Հռոմ. 8:6)։ Իմ բառերով, եթե ներկայացնեմ՝ *կամ մենք ենք սպանում մարմնի գործերը մեր մեջ, կամ դրանք են կործանում մեզ։ Սա է մարմնավորության ամբողջ ծանրությունը։*

Մարմնի մասին աստվածաշնչյան գաղափարը տարիների ընթացքում ընդհանուր առմամբ սխալ է ըմբռնվել։ Ցավոք, ոմանք կարծում են, որ մարմինը և Հոգին համապատասխանում են մարմնականին և հոգևորին, և «մարմինը» վերաբերում է մեր մարմնի մաշկին միայն[8]։ Արդյունքում, ոմանք ենթադրել են, որ եթե մարմինը չարի և մեղքի աղբյուրն է, ապա մեր ֆիզիկական մարմինները պետք է ի սկզբանե պիղծ լինեն։ Հետևաբար, մենք պետք է նսեմացնենք մեր կյանքի ֆիզիկական կողմերը, մեր մարմինները ճնշենք և արգելենք որևէ ֆիզիկական հաճույք կամ բավարարվածություն[9]։ Թեև այս ամենը ծայրահեղական կարող է թվալ, սակայն նման մոտեցումն ի հայտ է գալիս, երբ մեղքը դասակարգվում է։ Օրինակ, երբ սկսում ենք մարմնի մեղքն ավելի վատ համարել, քան հոգիինը (օրինակ՝ սեռական անբարոյականությունը ավելի վատ է, քան բամբասանքը, հարբեցողությունը ավելի վատ է համարվում, քան հպարտությունը կամ ռասիզմը)։ Հետևաբար, եթե ինչ-որ մեկը մարմնական մեղք է գործում, այն համարվում է «մահացու» մեղք, դա գրեթե աններելի է, բայց հոգու մեղքերը «ավելի ներելի են» համարվում՝ պատճառաբանվելով, որ «ոչ ոք կատարյալ չէ»։ Մեղքն այս ձևով դասակարգելն ու մեկնաբանելը Աստվածաշնչյան Սրբության ակնհայտ թյուրըմբռնում է, էլ չենք խոսում այն փաստի մասին, որ Պողոսը բոլոր մեղքերը դասում է մեկ դասի (օրինակ, տես Գաղ. 5.16–21. կռապաշտությունը և վեճերը երկուսն էլ նույնականացվում են որպես «մարմնի գործեր»)։

Անխոս մարդու մարմինը չարիք չէ։ Ի վերջո, Աստված է ստեղծել մարդու մարմինը և Հիսուսը մարդկային կերպարանք ընդունեց։ Երբ Պողոսը ցանկանում է անդրադառնալ ֆիզիկական մարմնին, նա սովորաբար ընտրում է հունարեն soma բառը, ոչ թե sarx, որը նա տասներեք անգամ միայն Հռոմեացիների թղթի մեջ է օգտագործում։ Սոմա բառը կարող է նշանակել կա՛մ մարդու ֆիզիկական մարմինը, կա՛մ մարդն ամբողջությամբ, ինչպես Հռովմայեցիս 12.1-ում. «Ձեր մարմինները ներկայացրեք որպես կենդանի զոհ, սուրբ և ընդունելի Աստծուն», որը մարդու ամբողջական սրբացման հստակ կոչ է, ներառյալ ֆիզիկական մարմինը։

Այսպիսով, ի՞նչ է մարմինը, և ի՞նչու է անհրաժեշտ սրբագործող շնորհը։ Մարմինը դրդում է, որպեսզի մեր ամբողջ անձը (մարմին, միտք և հոգի) ձգտի լինել մեր սեփական աստվածը, Հիսուսի իշխանությունն ընդունելու փոխարեն։ Սա մեր մեղսավոր ինքնությունն է, որն ուզում է ապրել Աստծուց անկախ՝ լինել սեփական թագավորն ու փրկիչը, այլ ոչ թե կախված լինել

[8] 4Մարմինն ու մարմնավորը երկու տարբեր հասկացություններ են Նոր Կտակարանում՝ հունարեն համապատասխան soma և sarx բառերը։

[9] Գնոստիցիզմի հերետիկոսության մեծ մասը հիմնված է մարմնի և մարմնավորի մասին սխալ պատկերացման վրա։ Վերացական գերագույն հոգու պլատոնական գաղափարը ստիպում է ոմանց արհամարհանքով նայել մարմնին և ընդգծել դրա մահկանացությունը ի հակասություն հավերժական հոգու։ Սա հակասում է մարմնական հարության աստվածաշնչյան վարդապետությանը։ Այս թյուրիմացության դեմ պայքարելու համար առաջին դարի եկեղեցին ընդգծեց մարմնական հարության կարևորությունը (օրինակ՝ «Մենք հավատում ենք հարությանը մարմնի և հավիտենական կյանքի», «Առաքյալների հավատամքը»)։

Հիսուսից: Նախքան փրկարար շնորհը, մենք լիովին վերահսկվում ենք մարմնի կողմից, այլ ոչ թե Հոգու: Մենք մեղսածին բնություն ունենք, մեր սրտի ամբարտավան դիրքը պնդում է, որ մենք կարող ենք փրկել ինքներս մեզ, մենք առաջնորդվում ենք մարմնի մտքով: Այնուամենայնիվ, մեր արդարացման (մեղքերի ներման) և վերստին ծնունդի (նոր ծնունդ) պահին մեզ տրվում է Սուրբ Հոգու պարգևը[10]: Ուեսլեյան Սրբության աստվածաբանությունը սա նաև կոչում է «նախնական շնորհ», քանզի մենք չենք կարող ստանալ Տիրոջ Սուրբ Հոգին և չսկսել սրբագործման՝ սուրբ կյանքի, ճանապարհորդությունը[11]:

Այստեղից է սկսվում ինքնիշխանության համար պատերազմը: Ո՞վ կլինի իմ կյանքի թագավորը: Մինչև մեր քրիստոնյա լինելը պատերազմ չկար, նույնիսկ փոխհրաձգություններ տեղի չէին ունենում: Մարմնավորը գերակայում էր մեզանում: Երբ Հոգին գալիս է մեր կյանք, մենք նոր ցանկություններ, մոտիվացիա ենք ունենում և ստանում ենք Հիսուսի միտքը (Հռ. 12:2; 1 Կորն. 2:16; Փիլ. 2:5): Այս երկու նոր ուժերը մարմինն ու Հոգին հակառակ են իրար և պայքարում են միմյանց դեմ: Սրբության ճանապարհը սկսված է, սակայն այն պետք է աճի և հասունանա մեր մեջ:

Երբ Պողոսը գրեց Կորնթոսի եկեղեցուն, նա «չկարողացավ խոսել նրանց հետ որպես հոգևոր մարդիկ» (1 Կորնթ. 3:1): Սա նշանակո՞ւմ է, որ նրանք քրիստոնյա չէին: Ոչ, նրանք վերստին ծնված քրիստոնյաներ էին: Իրականում, նա սկսում է նամակը նրանց անվանելով «նրանք, ովքեր սրբված են Քրիստոս Հիսուսով» և «կանչված են լինելու սուրբեր» (1:2): Վերածնունդ, արդարացում և փրկագնում էր տեղի ունեցել: Նրանց շնորհի ճամփորդությունը սկսվել էր: Նրանց խնդիրն այն էր, որ պայքարը մարմնավորի դեմ դեռ շարունակվում էր: Նրանց նախանձը, մրցակցությունը, հպարտությունը և երկպառակտությունը դեռևս լիովին դրսևորվում էին: Նրանք քրիստոնյաներ էին, բայց դեռ «մարմնավոր» (3:1), ինչը Պողոսը համեմատեց ոչ հասուն հավատքի հետ: Նրանք քրիստոնյաներ էին, բայց դեռ «մանուկներ Քրիստոսում» (3:1): Նրանք դեռ մեծանալու տեղ ունեին: Այսինքն, նրանց մեջ դեռևս կար դիմադրություն, նրանք դեռ ամբողջությամբ չէին հանձնել իրենց կամքն ու միտքը Աստծուն[12]:

Կրկին Ջոն Ուեսլին խորապես բացահայտում է Պողոսի հայտարարությունների համատեքստը: Հարցադրելով՝ կորնթացիները կորցրել են իրենց հավատը, Ուեսլին պնդում է. «Ոչ, նա [Պողոսը] ակնհայտորեն հայտարարում է, որ նրանք չեն կորցրել. որովհետև այդ դեպքում նրանք չէին լինի «մանուկներ Քրիստոսում»: Եվ նա պնդում է, որ «մարմնավոր» և «Քրիստոսում մանուկներ» լինելը նույնն են. բացահայտորեն շեշտելով, որ յուրաքանչյուր

---

[10] Թեև «վերածնումը» ինքնին աստվածաշնչյան բառ չէ, աստվածաբանները ստեղծել են այն՝ նկարագրելու այն նոր կյանքը, որը շնորհով տրված է մարդուն իր Քրիստոսով նոր ծնունդի արդյունքում: Շատ ուղղակի իմաստով մարդ բարձրանում է դեպի նոր կյանք, հոգևոր հարություն է տեղի ունենում, և իրական փոփոխությունները տեղի են ունենում շոշափելի և ոչ նյութական ձևերով:

[11] «Ուեսլին իրականում երբեք չի օգտագործել այս տերմինը [նախնական սրբացում], բայց դա մատնանշում է հավատք առ այն, որ փրկության պահին սկսվում է արդար դառնալու գործընթացը»: ԼԷՔլերք, Բացահայտելով քրիստոնեական սրբությունը, 318:

[12] «Միտք» թարգմանված հունարեն տերմինը Պողոսի օգտագործած մարդաբանական ամենակարևոր տերմիններից մեկն է: Խոսքը վերաբերում է անձի քննադատական մտքին, երբ անձը կարողանում է դատել»: Դանինգ, Հետապնդելով աստվածային պատկերը, Kindle Location 814: Յուրաքանչյուր մարդու Աստծո կողմից տրված կարողությունը մտածելու և ինտելեկտն օգտագործելու համար է այսպես կոչված Ուեսլեյան քառանկյունի մի կողմ, որը հայտնի է որպես «պատճառ»:

հավատացյալ (ինչ-որ չափով) «մարմնավոր» է, այնքան ժամանակ քանի դեռ նա «մանուկ է Քրիստոսում»[13]: Ըստ Ուեսլիի՝ «մարմնավոր» լինելը հավասարազոր է «մարմնի մեջ» լինելուն և սա բնորոշ է չաճած հավատքին, որը պետք է աճի քրիստոսանմանության և անձնուրացության մեջ[14]: Սա ճշմարիտ է ամեն հավատացյալի համար: Հարցն այստեղ փրկությունը չէ, այլ իշխանությունը: Սրբված անձը պետք է ավելի և ավելի աճի Քրիստոսանմանությունում: Սա մեկ բան չէ, որ անձը պետք է սպանի իր մեջ, այլ անձը՝ «ես»-ը պետք է մահանա՝ սա ունի թե փոխաբերական իմաստ, թե իրական, անձը պետք է «մահանա» այն ամենի համար, ինչը ղեկավարել է իր կյանքը նախկինում[15]: Կրոնականությունն ու բարոյական չափանիշները բավարար չեն, անձը պետք է ուրանա մարմնի նկատմամբ իր վստահությունը:

Անկեղծության պահերից մեկի ժամանակ Պողոսը խոստովանում է. «Եթէ մի ուրիշը կարծէ որ մարմնով վստահ լինի, աւելի եւս ես: Ութ օրուայ թլփատուած, Իսրայէլի ազգիցը, Բենիամինի ցեղիցը, Եբրայեցի Եբրայեցիներից, օրէնքի կողմանէ Փարիսեցի, Ջերմեռանդութեան կողմանէ հալածող էի եկեղեցուն, օրէնքի արդարութեան մտիկ տալով անարատ էի:» (Փիլիպ. 3.4բ–6): Նա ուներ բոլոր կրոնական վկայականները՝ արդար համարվելու համար, բայց նրա վստահությունը մարմնի վրա կլիներ: Պողոսը շարունակում է. «Բայց ինչ բան որ ինձ շահ էր, այն վնաս համարեցի Քրիստոսի համար» (հ 7): Նա պահում էր կանոնները և հնազանդվում էր օրենքին, բայց ապրում էր մարմնավոր կերպով, քանի դեռ վստահությունն ու հույսը դրել էր իր արդարության վրա՝ փրկվելու կամ սուրբ լինելու համար: Դրանք լավ բաներ էին, որոնք ղեկավարում էին իր կյանքը. հետևաբար, նա պետք է մեռներ դրանց համար, որպեսզի կարողանար ճանաչել Քրիստոսին: Եվ Քրիստոսին ճանաչելով, Պողոսն իր դժվարությամբ վաստակած բարոյական ջանքերից հրաժարվեց հանուն Քրիստոսի արդարացնող և սրբացնող արդարության՝ «որի պատճառով ամեն բանից զրկուեցայ, եւ աղբ եմ համարում, որ Քրիստոսին շահեմ, Եւ նորանում գտնուիմ. եւ ոչ թէ իմ արդարութիւնն ունենամ՝ որ օրէնքիցն է, այլ այն որ Քրիստոսի հաւատքիցն է. Այն արդարութիւնը որ Աստուածանից է հաւատքով» (հհ 8բ-9):

Շատ մարդիկ բարոյական են, նույնիսկ կրոնական, բայց ամենաթողությունը, կոշտությունը, նախապաշարմունքը և սառնասրտությունը խոսուն նշաններ են, որ մարմինն օգտագործում է կրոնը որպես ռազմավարություն, որի միջոցով խույս է տալիս Հիսուս Քրիստոսի սրբությունից: Ինչպես ագահ գործարարը, որը ստրկացնում և շահագործում է աղքատին հօգուտ իրեն, այնպես էլ փարիսեցին է: Աստծո աչքում նրանք նույնն են: Նրանք երկուսն էլ մարդիկ են, ովքեր Աստծուց հեռու են ապրում:

---

[13] Ջոն Ուեսլի, Քարոզ 13. «Հավատացյալների մեղքի մասին», Հովհաննեսի ամբողջական գործերում. Ուեսլի: Հատ. 1, Քարոզներ 1–53 (Fort Collins, CO: Delmarva Publications, 2014), 3.2.

[14] Դաննինգը նշում է, որ «մարմնավորությունը մոլորեցնող բառ է, որն օգտագործվում է որպես գոյական, մինչդեռ սուրբ գրությունը միշտ օգտագործում է մարմնական [մարմնի] ածական ձևով»: Դանինգ, Հետապնդելով Աստվածային պատկերը, Kindle Location 2076: Սա նաև մերժում է այն գաղափարը, որ «մարմինը» նման է «քաղցկեղային ուռուցքի, որը փոխաբերականորեն ապրում է մեր մեջ» և որը պետք է հեռացվի վիրահատական ճանապարհով: Նույն տեղում, Kindle Location 801. Ինչ-որ բանի հեռացման կարիք ունեցող հայեցակարգի կողմնակիցները, ներառյալ 19-րդ դարի Սրբության քարոզիչները, սա համարում են հերետիկոսություն:

[15] Գրեյթհաուզ և Լիոնս, Նոր փարոս Աստվածաշնչի թարգմանություն, Հռոմեացիներ 1–8. Մեկնաբանություն Ուեսլեյան Ավանդույթում (Կանզաս Սիթի, MO: Beacon Hill Կանզաս Սիթիի մամուլ, 2008), 182:

Ցավալի է, սակայն նույնիսկ քրիստոնյաները կարող են շարունակել ապրել մարմնավոր կյանքով: Նախքան փրկագնող շնորհը, մարմինը չի պատերազմում Հոգու հետ, քանի որ մենք մեռած ենք մեր մեղքերի մեջ: Այնուամենայնիվ, նույնիսկ երբ Աստծո Հոգին կենդանանում է մեր մեջ, մենք դեռ կարող ենք մարմնավոր կերպով ապրել: Մենք միաժամանակ կարող ենք բարիք գործել, սակայն կարող ենք շարունակել ապավինել մեր ուժերին և զորությանը՝ Տիրոջն ապավինելու փոխարեն: Ահա թե ինչու մենք սրբագործող շնորհի կարիք ունենք: Մենք Աստծո շնորհի կարիքն ունենք՝ խաչելու համար այն մարմինը, որը ցանկանում է կախված լինել ինքն իրենից՝ մահապատժի ենթարկելու մեր կյանքը կառավարող մարմնավոր «ես»-ը, որպեսզի Հիսուսի Հոգին լիովին թագավորի մեր կյանքերում[16]:
Հռչակավոր շոտլանդացի ուսուցիչ և նվիրյալ գրող Օսվալդ Չեմբերսը գրում է՝ անձը պետք է մեռնի, որպեսզի Քրիստոսն ավելի ու ավելի երևա.

> Ես պետք է պատրաստ լինեմ իմ հուզական կարծիքներն ու ինտելեկտուալ համոզմունքները դարձնել բարոյական դատավճիռ ընդդեմ մեղքի բնույթի՝ այսինքն՝ իմ անձի նկատմամբ ցանկացած իրավական պահանջմունքին հակառակ….
> Երբ ես հասնեմ այս բարոյական որոշմանը և գործեմ դրա համաձայն, այն ամենը, ինչ Քրիստոսն իրականացրեց ինձ համար խաչի վրա, կիրականանա նաև իմ մեջ: Իմ անզուսպ նվիրվածությունն Աստծուն, Սուրբ Հոգուն հնարավորություն է ընձեռում՝ շնորհել ինձ Հիսուս Քրիստոսի սրբությունը. . . Իմ անհատականությունը մնում է, բայց ապրելու իմ հիմնական շարժառիթը և ինձ կառավարող էությունը արմատապես փոխվում են[17]:

Մարմինը չպետք է ղեկավարի մեր կյանքը: Ազատությունն առաջարկվում է սուրբ կյանքի համար: Սրբագործող շնորհը միջոցն ու դեղամիջոցն է: Այսպիսով, ի՞նչպես է սրբագործող շնորհը իրականում գործում շնորհի ճամփորդության ընթացքում:

ՆՄԱՆՎԵԼ ՀԻՍՈՒՍԻՆ

Ես ուզում եմ պատմություն պատմել մեկի մասին, ում կոչելու եմ Ջորջ (իրական անունը չի բարձրաձայնվում): Ջորջը իմ եկեղեցու անդամ էր և շատ դժբախտ մարդ: Նա միշտ ինչ-որ բանից նեղվում էր: Նա չէր հավանում ո՛չ երաժշտությունը, ո՛չ իմ քարոզը: Նա ասում էր, որ ես չեմ քարոզում սրբությունն այնպես, ինչպես նա սովոր էր լսել մանկության տարիներին: Ավելին, նա առանձնապես չէր սիրում մարդկանց, հատկապես նոր մարդկանց: Ջորջն ինձ յոթ էջանոց նամակ գրեց, որը լի էր ձեր պատկերացրած ամենատգեղ մեկնաբանություններով, որոնցում քննադատվում էր իմ հովվական ծառայությունը, ինչպես նաև, ենթադրություններով իմ շարժառիթների մասին:

---

[16] Օսվալդ Չեմբերսն նույնականացնում է անձի մեռնելու հասկացությանը որպես նույնականացում Հիսուսի մահին և պատրաստակամ «համախաչություն»: Նույն կերպ քրիստոնյան կարող է միավորվել Հիսուսի հետ նրա հարության ժամանակ և կիսվել «համահարություն»-ը առ նոր կյանք: Հիսուսի հարությունը երևում է սրբության կյանքում: Չեմբերս, Ամեն բան Ամենակարողի համար (Uhrichsville, OH: Barbour and Company, 1935), 73.
[17] Չեմբերս, Ամեն բան Ամենակարողի համար, 58

Մի շրջան նա բողոքում էր, որ եկեղեցին կենտրոնացած է ներքին հարցերի վրա և չի ավետարանում դրսի մարդկանց: Հետո, երբ նոր մարդիկ սկսեցին հաճախել եկեղեցի, դա նրան նույնպես դուր չեկավ, որովհետև, ըստ նրա մենք այլևս հոգ չէինք տանում այն մարդկանց համար, ովքեր տարիներ շարունակ անդամակցել էին եկեղեցուն և թանկ գին վճարել, որպեսզի այն դառնար կայուն: Նա ասում էր, որ եկեղեցու աճը պայմանավորված է նրանով, որ մենք այլ եկեղեցիներից ոչխարներ՝ անդամներ, ենք գողանում (ինչը ճիշտ չէր): Հիմնական պատճառն այս ամենի այն էր, որ Ջորջը չէր ցանկանում, որ որևէ բան փոխվեր:

Ջորջը այնքան շատ էր սպառում հովվի իմ հուզական էներգիան: Նա բազմիցս սպառնացել է լքել եկեղեցին: Կարծում եմ, որ հոգու խորքում նա գիտեր այն, ինչ մենք բոլորս գիտեինք, որ ոչ մի այլ եկեղեցի չէր հանդուրժի նրան: Վերջապես, մի օր ես զանգահարեցի նրան և ասացի. «Ջորջ այլևս ոչ մի նամակագրություն: Ես չեմ կարողանում ըմբռնել քո մտածումներն ու հույզերը նամակների միջոցով, իսկ դու էլ՝ իմը: Այսուհետ, եթե մտահոգություն կամ բողոք ունեք, ստիպված կլինեք արտահայտել դա երես առ երես»:

Թվում էր, թե ամեն ինչ կարգավորվել է, գոնե որոշ ժամանակով: Նա ինձ այլևս նամակ չուղարկեց, բայց շարունակեց բացասակ մթնոլորտ ստեղծել եկեղեցում: Բանը հասավ նրան, որ Ջորջն ավելի շատ նման էր մոծակի, քան կծող շան՝ նա ավելի շատ նյարդայնացնող էր, քան վտանգավոր:

Ինձ համար ամենատխուրն այն էր, որ Ջորջը չէր փոխվում: Նա փնթփնթան մարդ էր և միշտ այդպիսին էր եղել: Եվ նա միայն եկեղեցում չէր այդպիսին: Նա լավ ամուսին չէր իր կնոջ համար, նրա երեխաները խուսափում էին նրանից, և նա ուրախություն չուներ իր կյանքում: Ամենազարմանալին այն էր, որ նա եկեղեցի էր հաճախում վաթսուն տարուց ավելի: Ամենից վատը, թերևս այն էր, որ ոչ ոք չէր զարմանում, որ նա չի փոխվում, և ոչ ոքի դա առանձնապես չէր անհանգստացնում: Նրանք դա ընդունել էին: «Օ՜, հենց այդպիսին է Ջորջը», ասում էին նրանք: Ոչ ոք չէր սպասում, որ նա նմանվի Հիսուսին:

Ջորջի մասին մտածելիս ես հասկացա, որ եկեղեցու առողջության մասին հարցնելիս, սխալ է հարցնել՝ «Քա՞նի մարդ է հաճախում»: Ավելի ճիշտ հարց է, որն էլ կօգնի ճիշտ ուղղությամբ շարժվել հետևյալն է՝ «Ի՞նչպիսին են այդ մարդիկ»[18]: Երբ ինչ-որ մեկը դառնում է քրիստոնյա, նպատակը ոչ միայն սովորելն է, թե ինչպես հետևել Քրիստոսին, այլ իրականում ապրել Քրիստոսանման կյանքով: Սա է շնորհի ճանապարհի ամողջ աշակերտության նպատակը:

ԱՇԱԿԵՐՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Երբ Պողոսը ներկայացրեց Հոգու պարգևները, նա ասաց, որ կլինեն առաքյալներ, մարգարեներ, ավետարանիչներ, հովիվներ և ուսուցիչներ, բայց որ նրանց միասնական նպատակը կլինի «Սուրբերի կատարելութեանը համար, պաշտօնի գործի համար, Քրիստոսի մարմնի շինութեան համար» (Եփես. 4:12): Այդ բառերը հավելյալ մեկնաբանության կարիք ունեն՝ եկեք սկսենք «մարմին» հասկացությունից:

Մարմինը հետաքրքիր անալոգիա է, քանի որ երբ հիշատակվում է հոգևոր աճի մասին, ենթադրվում է, որ ինչ-որ բան կենդանի է: Բոլոր կենդանի էակները աճում են: Մեռած իրերը

[18] Բիլ Հալլ, Աշակերտ պատրաստող հովիվը (Old Tappan, NJ: Revell, 1988), 13.

մնում են ստատիկ կամ նեխում են: Անկենդան իրերը չեն աճում: Կահույքի մասերը չեն աճում: Ժայռը չի աճում. Միայն կենդանի օրգանիզմներն են աճում:
Օրգանիզմը կարող է լինել՝ կենդանի էակ, ինչպիսին է բույսը, կենդանին, մարդը կամ փոխկապակցված մասերի գործող համակարգ, որոնք կազմում են կենդանի արարած կամ իր: Բույսերը օրգանիզմներ են: Բույսերը չեն կարող աճել առանց արևի լույսի, ջրի և սննդանյութերի: Նրանց անհրաժեշտ է էկոհամակարգ՝ իրենց աճը պահպանելու համար, հակառակ դեպքում նրանք մահանում են: Մեր մարմինները նույնպես օրգանիզմներ են: Մարդու անատոմիան կենդանի, միասին փոխկապակցված մասերի համակարգ է՝ գործառնական համակարգ. «Մարմինը մեկ է և ունի բազմաթիվ անդամներ» (1 Կորնթ. 12:12ա): Երբ մեր մասերից մեկը ճիշտ չի աշխատում, անկախ այդ մասի չափերից, դա կարող է ազդել ամբողջ մարմնի վրա և հիվանդության պատճառ լինել:
Երբ Պողոսն ասում է, որ մենք Քրիստոսի մարմինն ենք, նա նկատի ունի, որ եկեղեցին նույնպես մի օրգանիզմ է, որը կազմված է դինամիկ, կենդանի մարդկանցից, որոնք անկախ, սակայն փոխկապակցված են, և համագործակցում են միմյանց հետ օրգանիզմի կենսունակության և առողջության համար՝ Սուրբ Հոգու զորությամբ: «Մարմինը բաղկացած չէ մեկ անդամից, այլ շատերից» (Ա Կորնթ. 12:14): Երբ անդամները միասին չեն աշխատում, ապա այն դառնում է հիվանդ և թույլ: Ընդհակառակը, երբ անդամները փոխկապակցված են և աճում են միասին, ապա կենսունակությունը, առողջությունը լինում են արդյունքները և մարմինը սկսում է ձև ստանալ և վերջնական նպատակին (telos) հասնել: Մենք կառուցում ենք մարմինը, «Մինչեւ որ ամենքս հասնենք հաւատքի եւ Աստուծոյ Որդին ճանաչելու միութեանը. *Եւ կատարեալ մարդ լինենք Քրիստոսի կատարեալ հասակի չափովը*» (Եփես. 4:13, ընդգծումներն ավելացված են): Քրիստոնեական հասունության նպատակը Քրիստոսի ամբողջական հասակն է՝ Քրիստոսանմանությունը: Ուրիշ նպատակ չկա: Այդպես է նաև եկեղեցու համար: Երբ մեր առանձին անդամները հավաքվում են, դա նմանվում է Քրիստոսի մարմնին: Եվ հենց այն պատճառով Պողոսը կրկնում է, որ «աճինք նորանում ամեն բանով, որ է գլուխը՝ Քրիստոսը. Որից բոլոր մարմինը միասին կազմուելով եւ միասին յարմարուելով» (հ 15բ –16ա):
Հոգևոր աճի նպատակը, լինի դա անհատական կամ համայնքային, անձնական կամ կորպորատիվ, ավելի ու ավելի Հիսուսին նմանվելն է: Հիսուսին նմանվելու գործընթացը կոչվում է սրբացում և հնարավոր է դառնում սրբագործող շնորհով միայն:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄԸՆՏԻՐ ՉԷ

Հունարեն լեզվում սրբացումը կապված է «սուրբ» (hagios) բառի հետ: Ուեսլեյան-Սրբության աստվածաբանությունը պնդում է, որ Ավետարանի Բարի Լուրը ոչ միայն այն է, որ մենք մեր մահից հետո Աստծո հետ կլինենք, այլ այն, որ Աստծո Արքայությունն իրական է այժմ, մեր երկրային կյանքի ընթացքում: Աստծո ծրագիրը մեզ համար այն է, որ անկման հետևանքով Տիրոջ խաթարված կերպարը վերականգնվի մեր մեջ՝ իր ողջ գեղեցկությամբ և փառքով, որպեսզի մենք լինենք Նրա արարչագործության պսակը՝ արտացոլելով Քրիստոսին մեր մտքի, խոսքի և արարքների մեջ: Սա կոչվում է սրբացման ընթացք: Այս ընթացքը կամընտիր չէ աճող քրիստոնյայի համար:
Երբ մարդիկ մեքենա են գնում, նրանք վաճառողից տեղեկանում են, որ մեքենան հագեցած է պարտադիր սարքավորումներով և լրացուցիչ պարագաներով: Նրանք գիտեն, որ մեքենայի հետ նրանք նաև ձեռք են բերելու դրա մի մաս կազմող ղեկը, ամրագոտիները և հետևի

հայելիները, որոնք բնորոշ են ցանկացած մեքենայի: Սակայն, եթե նրանք ցանկանում են ավտոմատ ապակիներ, ալյումինե անիվներ և բացվող տանիք, նրանք պետք է հարցնեն՝ արդյոք տվյալ մեքենան համալրված է դրանցով, քանի որ դրանք լրացուցիչ պարագաներ են, և ոչ բոլոր մեքենաներին հատուկ: Սրբացումը Քրիստոսի աշակերտի համար լրացուցիչ կամ կամընտիր մի բան չէ, այլ՝ պարտադիր: Հիսուին նմանվելը աճման սպասելի արդյունքն է: Մենք միշտ աճման՝ հոգևորապես կերտման, մեջ ենք:

Դարձյալ Պողոսը շեշտում է սա Հռովմայեցիս 12-ում, երբ ասում է. «Եւ մի կերպարանուիք այս աշխարհքի կերպարանքովը. այլ նորոգուեցէք ձեր մտքի նորոգութեամբը, որ դուք քննէք թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը՝ բարին, հաճելին եւ կատարեալը» (հ. 2): Կերպարանվել և նորոգվել՝ սրանք են մեր միակ այլընտրանքները: Եթե մենք չենք նորոգվում (ներսից դեպի դուրս) Աստծո վերափոխող զորությամբ, ապա մենք կերպարանափոխվում ենք (ձևավորվում և կերտվում ենք) Աստծուն հակառակվող ուժերից և կորսվում աշխարհի մեջ: Հարցն այն չէ, թե արդյոք դուք պատրաստվում եք հոգեպես ձևավորվել. հարցն այն է, թե ինչը կձևավորի քեզ: Եթե Աստված չի ձևավորում մեզ, կա մի հոգևոր թշնամի՝ հակառակորդ, չարը, որը կկերտի մեզ:

Հակիրճ՝ Աստծուց հեռու գտնվելը այլանդակում և արատավորում է մարդկանց: Աստված բարեփոխում և փոխակերպում է: Ահա թե ինչու սրբացումը՝ Հիսուսին նմանվելը, այդքան կարևոր է: Աստվածաշնչից այս մի քանի համարները նկարագրում են Աստծո կամքը մեր կյանքերի համար՝ «Որովհետեւ սա է Աստուծոյ կամքը՝ ձեր սրբութիւնը.» (1 Թեսաղ. 4:3ա); և «Հետեւեցէք խաղաղութեան ամենի հետ եւ սրբութեան, որ առանց նորան ոչ ով Տիրոջը չի տեսնիլ.» (Եբր. 12:14): Խաղաղության և սրբության հետամուտ լինելու հրամանը ենթադրում է գործողություն՝ պասիվության փոխարեն: Մարդու հոգևոր աճը կոչվում է սրբացում կամ սրբություն: Սկզբնական սրբացումը և ամբողջական սրբացումը նույնը չեն, բայց երկուսի նպատակն էլ Հիսուսին նմանվելն է: Սա Աստծո կամքն է յուրաքանչյուր քրիստոնյայի համար, եթե մենք չենք աճում «նորանում ամեն բանով, որ է գլուխը՝ Քրիստոսը.», մենք կերտվում ենք ոչ սուրբ սիրով (Եփես. 4:15):

ՀՈԳԵՎՈՐ ԱՃԻ ՀԱՎԱՍԱՐՈՒՄ

Աշակերտությունը այլընտրանք չէ: Քրիստոնյաներից շատերը չեն վիճարկի այս գաղափարը: Կարևոր հարցն այն է, թե ի՞նչպես է այս աճը տեղի ունենում: Իր «Եկեղեցու վերաիմաստավորում» գրքում Ջեյմս Էմերի Ուայթը բացատրում է՝ մարդիկ ինչպիսի կարծիք ունեն աշակերտության գործընթացի մասին: Նրա առաջարկած բանաձևը տրված է մաթեմատիկական հավասարման տեսքով՝

ՓՐԿՈՒԹՅՈՒՆ+ԺԱՄԱՆԱԿ+ԿԱՄՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ=ԿՅԱՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Այս բանաձևը հիմնվում է չորս ենթադրությունների վրա՝ (1) կյանքի փոփոխությունը տեղի է ունենում փրկության ժամանակ, (2) դա բնականոն կերպով շարունակվում է ժամանակի ընթացքում (3) զարգանում է կամքի դրսևորմամբ (4) և հասունանում է միայնության մեջ[19]:

[19] Ջեյմս Էմերի Ուայթ, Եկեղեցու վերաիմաստավորում. Ստեղծագործական վերափոխման մարտահրավեր

Առաջին՝ «փրկությունը» մեր էության արմատական փոխակերպումն է («վերստին ծնունդ»), որի ընթացքում փոխվում է մեր սրտի դիրքը, որը հանգեցնում է ցանկությունների, սովորությունների, վերաբերմունքի և բնավորության զարմանալի փոխակերպմանը: Քրիստոնյա *ծնվում են, ոչ թե ստեղծվում*: Փրկությունը փոխում է մեր կարգավիճակն Աստծո առաջ ու հավիտենական ընթացքը, հայտնում է Սուրբ Հոգու զորությունն ու գործը մեր կյանքում, ապահովում է հոգևոր աճ: Սա փրկության տրամաբանական հետևանքներն են:

Երկրորդ՝ թեև փոխակերպման գործընթացը սկսվում է դարձի ժամանակ, ակնհայտ է, որ մարդը միանգամից չի հասունանում: Ուայթն ասում է՝ դիմադրության և եսասիրության մնացորդները հաղթահարվում են ժամանակի ընթացքում[20]: Ըստ բանաձևի հինգ տարի առաջ դարձի եկած քրիստոնյան պետք է ունենա հինգ տարվա հասունություն, իսկ տասը՝ տաս տարվա, և այդպես շարունակ: Հավատը չի կարող չաճել ժամանակի ընթացքում. մեզանից միայն պահանջվում է Աստվածաշունչ կարդալ ու հաճախել եկեղեցի, և որպես հետևանք Հոգու պտուղը կաճի մեր մեջ և մենք կնմանվենք Հիսուսին: Սա ժամանակի բաղադրիչն է:

Երրորդ՝ «կամքի դրսևորում»: Սա կապված է անհատի կամքի ուժի հետ: Գաղափարն այն է, որ այն, ինչ տեղի չի ունենում անմիջապես բնականոն կերպով, պահանջում է ժամանակ, վճռականություն և մարդկային ջանք: Անհրաժեշտ է միայն, որ մարդը հաստատակամորեն որոշի ապրել և գործել որոշակի կերպով, քանի որ քրիստոնեական կյանքը նաև կամքի ուժ է ներառում: Ժամանակն ու մեր կամքի ուժը կաճեցնեն Հոգու պտուղը մեր մեջ: Սա կամքի դրսևորման բաղադրիչն է:

Ի վերջո, աշակերտության բանաձևի վերջին բաղադրիչը Հիսուս Քրիստոսի հետ անձնական հաղորդակցությունն է[21]:

Սա աշակերտության մասին տարածված մտածողություն է, սակայն մենք հազվադեպ ենք անդրադառնում՝ արդյո՞ք սա է աշակերտությունը: Արդյո՞ք փրկությունը ստանալուց հետո մենք ինքնաբերաբար սկսում ենք աճել մեր հոգևոր կյանքում: Երբ ինչ-որ մեկը դառնում է քրիստոնյա, արդյո՞ք, սովորությունների, վերաբերմունքի և բնավորության անմիջական և խորը փոփոխություն տեղի ունենում է: Արդյո՞ք քրիստոնյաները հոգևորապես աճում են միայն ժամանակի ընթացքում և կամքի ուժի դրսևորմամբ: Արդյոք Աստծո հետ անձնական հաղորդակցությունը ենթադրում է, որ Հիսուսի աշակերտներն ավելի լավ միայնակ են ծառայում: Եթե այս ենթադրությունները ճիշտ են, ապա մենք պետք է բավականաչափ ապացույցներ ունենանք եկեղեցու պատմության ընթացքում: Եվ ինչպես Ուայթն է մատնանշում եթե միայն բանաձևը բավական լիներ, ապա մենք հետևյալ արդյունքը կունենայինք. առանձին քրիստոնյաներ և Քրիստոսի մարմինը գնալով ավելի ու ավելի պետք է նմանվեին Հիսուսին մտածելակերպով, խոսքով և գործով[22]: Այնուամենայնիվ, կան կարևոր պատճառներ, թե ինչու բանաձևն ամբողջական չէ:

Հիսուսի նորադարձ աշակերտները և՛ ծնվում են, և՛ ստեղծվում: Փրկարար շնորհը փոխում է մեր դիրքը Աստծո առաջ, մեր հաղորդակցությունը Նրա հետ, և Սուրբ Հոգու զորությունն ու գործը հայտնվում է մեր կյանքում: Սակայն Նոր Կտակարանյան գրվածքները սովորեցնում են,

---

անցումային դարաշրջանում (Grand Rapids: Baker Books, 1997), 55.

[20] Ուայթ Եկեղեցու վերաիմաստավորում, 56:

[21] Քրիստոսի հետ անձնական հարաբերությունների գաղափարը՝ անհատական մակարդակում մասնավորապես, շատ ավելի տարածված են արևմտյան հասարակության մեջ, քան աշխարհի մյուս մասերում: Անհատականությունը ԱՄՆ-ում համարվում է մշակութային առաքինություն:

[22] Ուայթ Եկեղեցու վերաիմաստավորում, 57

որ նորադարձ քրիստոնյաները դեռ հասուն չեն: Դարձի գալը դեռ չի նշանակում Հիսուսի նման լինել: Հոգևոր աճման անհրաժեշտություն կա: Առաքինությունները զարգանում են ժամանակի և հատուկ փորձառությունների արդյունքում[23]: Եկեք Աստվածաշունչը ուսումնասիրելով հասկանանք՝ ինչպես է անձը հոգևորապես աճում սրբագործող շնորհի միջոցով:

1. Հոգևոր աճը կարող է սկսվել դարձի պահից, բայց մենք շարունակում ենք աճել շնորհի մեջ մեր ողջ կյանքի ընթացքում: Սրբացում և ամբողջական սրբացում հասկացությունները իմաստապես տարբեր են: Խնդրո առարկան սրբացման ակնթարթային թե աստիճանական լինելն է՝ արդյո՞ք դա վճռորոշ ակնթարթ է, թե գործընթաց: Պատասխանը՝ երկուսն էլ[24]: Սրբագործող շնորհը գործադրվում է, երբ մենք փորձառում ենք փրկարար շնորհը: Աստվածաբանները վկայակոչում են դա որպես «նախնական սրբացում», որին հաջորդում է հոգևոր աճը, մինչև այն պահը, երբ մենք ամբողջապես կնվիրաբերվենք և կհանձնվենք Աստծուն, իսկ Նա էլ կմաքրի և անարատ կանի մեր սիրտը: Այս փորձառությունը կոչվում է ամբողջական սրբացում կամ «քրիստոնեական կատարելություն»[25]: Այնուամենայնիվ, նույնիսկ լիակատար նվիրագործումից հետո մեր ամբողջ կյանքի ընթացքում մենք շարունակում ենք աճել շնորհի մեջ:

---

[23] Ն. Թ. Ռայթը սահմանում է առաքինության քրիստոնեական հայեցակարգը որպես բնավորության վերափոխում՝ Հավատալուց հետո:Ի՞նչու է բնավորությունը կարևոր (Wright, After You Believe: Why Christian Character Matters) (Նյու Յորք: HarperCollins Publishers, 2010): Շատ ավելի խորը քննարկում կունենանք առաքինության մասին 5-րդ գլխում՝ «Զորացնող շնորհ»:

[24] Ամբողջական սրբագործման ակնթարթային կամ աստիճանաբար լինելը պատմականորեն մեծ բանավեճի թեմա է եղել Ուեսլեյան-Սրբություն շրջանակներում: Ինքը՝ Ջոն Ուեսլին, հետևողականորեն շեշտում էր երկուսի անհրաժեշտությունն էլ: Նազովրեցի առաջնորդները, ընդհանուր առմամբ, ուշադիր էին հավասարակշռություն առաջարկելու հարցում: Գլխավոր սուպերինտենդանտ Ռ. Թ. Ուիլյամսը հայտարարել է հետևյալը 1928թ ասամբլեայի ժամանակ. «Եկեղեցին պետք է շեշտը դնի և՛ ակնթարթային, և՛ աստիճանաբար սրբացման վրա . . . Երկար տարիներ սրբության մարդիկ զգում էին, որ Աստծո գործն ավարտվում է ապաշխարության կոչով՝ սակայն այդ ժամանակ նրանք ստանում էին օրհնությունը վերստին ծնունդի և Տիրոջ գործը սկսում էր նրանց մեջ . . . Նազովրեցու եկեղեցին համատեղում է այս երկու մեծ սկզբունքները: Առաջնորդել [մարդկանց] դեպի Աստված և Քրիստոսի մարմնի շինության համար դեպի Քրիստոսանման բնավորություն: Գլխավոր ասամբլեա, ամսագիր, 1928, հիշատակված Դանինգ՝ Աստծո պատկերի հետքերով, Kindle Location 2176, ծանոթագրություն 26-ում:

[25] Քրիստոնեական կատարելությունը աստվածաշնչյան և հաճախ օգտագործվող արտահայտություն է ողջ քրիստոնեության պատմության ընթացքում: Վաղ եկեղեցու հայրերն ու մայրերը կատարելությունը նույնացնում էին թեոսի գաղափարի հետ, կամ աստվածացում՝ աստվածային էությանը հաղորդ լինելը: Այնուամենայնիվ, կատարելության ժամանակակից հայեցակարգը տարբեր կերպ է ընկալվում: Այն երբեք ճշգրիտ չի ուսուցանվել որպես «առանց մեղքի կատարելություն», կամ, ինչպես գրում է Թոմաս Նոբլը, Սուրբ Երրորդություն, Սուրբ ժողովուրդ գրքում «այն գաղափարը, որ այս կյանքում քրիստոնյաները կարող են հասնել կատարելության վերջնական, բացարձակ վիճակի՝ առանց մեղքի և կատարյալ սուրբ»: T. A. Noble,
Cascade Books, 2013), 22. Ժամանակակից մեկնաբանության շփոթությունից խուսափելու համար և ընդգծելու շնորհի մեջ աճելու կարևորությունը, Նոբլը պնդում է. «Հաշվի առնելով կատարելության շարժման հայեցակարգը, կարևոր է արտահայտել հունարեն բառի իմաստը ոչ թե «կատարելություն» բառի օգտագործմամբ, այլ՝ «ձգտել կատարելագործման»: Նույն տեղում, 24:

Նազովրեցի եկեղեցու հավատքի հանգանակում ասվում է. «Մենք հավատում ենք մաքուր սրտի և հասուն բնավորության միջև տարբերությանը: Առաջինը ամբողջական սրբացման ակնթարթային հետևանքն է, իսկ երկրորդը՝ շնորհի մեջ աճելու արդյունք է»: Երբ մենք հավատքով արձագանքում ենք նախնական շնորհին, մենք փրկարար շնորհ ենք ստանում: Մեր առաջնահերթությունների, ցանկությունների արմատական վերակողմնորոշում է տեղի ունենում, և Սուրբ Հոգու զորությունն ու գործն ազատ են արձակում մեր կյանքը: Մեր ունեցած ամեն վնասակար սովորությունից, բնավորության բացասական կողմերից կամ վատ տրամադրվածությունից ակնթարթային ազատագրման փոխարեն, Աստված շարունակում է գործել մեր մեջ՝ կերտելով մեզ Իր կամքի համեմատ: Քրիստոնեական աշակերտության նպատակն է ավելի ու ավելի նմանվել Հիսուսին: Ահա թե ինչու Պողոսը գրում է՝ ինչպես մենք ակնկալում ենք, որ երեխաները չմնան մանուկներ, այլ մեծանան և հասունանան, այնպես էլ մենք պետք է ակնկալենք, որ քրիստոնյաները չմնան հոգևոր մանուկներ: Հոգևոր աճը սկսվում է դարձի ժամանակ, բայց մենք շարունակում ենք աճել շնորհի մեջ մեր ողջ կյանքի ընթացքում: Հաջորդ տարի մենք ավելի շատ պետք է տեսնենք, գործենք և մտածենք Քրիստոսանման՝ մենք պետք է առաջադիմենք սրբագործող շնորհի մեջ:

2. Հոգևոր աճը ներառում է ավելին, քան պարզապես ժամանակ: Իմ ընկերների մեծ մասը չգիտեն, կամ մոռացել են, որ ես կարող եմ դաշնամուր նվագել: Ես դաշնամուր եմ նվագում ավելի քան քառասուն տարի: Երբ տասը տարեկան էի, գրեթե ամեն օր պարապում էի (մորս վերահսկողությամբ, ով դաշնամուրը գերադասում էր ֆուտբոլից): Հիմա ես նվագում եմ շատ ավելի քիչ հաճախականությամբ՝ մոտավորապես տարին մեկ անգամ: Եթե ինչ-որ մեկը հարցներ ինձ՝ արդյո՞ք քանի տարի եմ նվագում, ես կպատասխանեի չորս տասնամյակ, բայց ամբողջական ճշմարտությունն այն է, որ ես այդ բոլոր տարիների ընթացքում հավատարմորեն և նպատակաուղղված չեմ նվագել: Եկեղեցում կան երեխաներ, ովքեր դաշնամուր են նվագել միայն մի քանի տարի, սակայն ինձանից լավ են նվագում, չնայած, որ ես ավելի երկար տարիներ եմ զբաղվել դաշնամուր նվագելով:
Գրեթե նույնն է մեր հոգևոր կյանքում էլ: Պարզապես տեղեկացված լինել չի նշանակում տեղեկությունը կլանել, հասկանալ, ընդունել և ապրել դրան համապատասխան: Թեև ճշմարիտ է, որ հոգևոր աճը ժամանակ է պահանջում, սակայն ճշմարիտ չէ, որ սրբացնող շնորհը անպայման ժամանակի արդյունք է կամ քրիստոնեական մշակույթին ծանոթանալու կողմնակի հետևանք[26]: Եկեղեցիները լի են մարդկանցով, ովքեր տարիներ են անցկացրել՝ որպես քրիստոնյաներ, բայց նրանց կյանքերը չեն արտացոլում Հիսուսի Հոգին: Նրանք քննադատական են, կռվարար, ցինիկ, բացասական և եսասեր: Նրանցից շատերը նման են Ջորջին, ում մասին պատմեցի. նրանք չեն նմանվում Հիսուսին տարեցտարի և պատճառը շատ պարզ է:

3. Հոգևոր աճը ոչ այնքան ժամանակի հարց է, որքան Աստծո հետ համագործակցության և միտումնավոր ուսուցման: Եբրայեցիների թղթի հեղինակը գրում է. <<Որովհետեւ ժամանակին նայելով պիտի վարդապետ լինէիք. Կրկին կարօտ էք սովորելու թէ ինչ են Աստուծոյ խօսքերի առաջին նշանագիրները, եւ կարօտողներ եղաք կաթի եւ ոչ թէ հաստատ կերակուրի: Որովհետեւ ամեն ով որ կաթնակեր է, անհմուտ է արդարութեան խօսքին, որովհետեւ տղայ է:

[26] Ուայթ Եկեղեցու վերահիմաստավորում, 59

Բայց կատարեալների համար է հաստատ կերակուրը. Որոնց զգայարանները *վարժողութեամբ կրթուած են* բարին եւ չարը զանազանելու։ Ուստի Քրիստոսի մասին սկզբնական խօսքը թողելով դէպի կատարեալը գանք...» (Եբր. 5:12–6:1ա, շեշտադրումն ավելացված է)[27]: Հիմնվելով «ժամանակին նայելով» արտահայտության վրա՝ մենք կարող ենք ենթադրել, որ Սուրբ Գրքի այս հատվածը գրված է հավատացյալների համար, ովքեր արդեն որոշ ժամանակ քրիստոնյա էին: Իրենց խոսքով և օրինակով շնորհի ճամփորդության ուսուցիչներ դառնալու փոխարեն, նրանք դեռ մանկական սնունդ էին ուտում: Հաստատ կերակուր ուտելու և հասուն քրիստոնյա դառնալու համար անհրաժեշտ է, որ անձը վարժեցնի իրեն արդարության մեջ: Վարժեցնի իր զգայարանները և կրթված լինի բարին և չարը, ճիշտն ու սխալը զանազանելու: Այս ամենը հանգեցնում է քրիստոնեական կատարելության կամ Քրիստոսում հասունության, որն օգնում է ապաշխարած հավատացյալներին դեմ կանգնել դեռ չհաղթահարված մարմնավոր ցանկություններին[28]:

Եբրայեցիների թղթում գրված «վարժեցողությամբ կրթված» արտահայտությունը հետաքրքրաշարժ է: Այս արտահայտությունը ենթադրում է միտումնավոր ջանքեր, և նշանակում է, որ քրիստոնյաները մասնակցում են Քրիստոսում իրենց հոգևոր աճին: Այլ օրինակներ՝ «Սպառազինվե՛ք: Կառուցե՛ք ձեր հավատքը: Վազե՛ք մրցավազքը: Հետևե՛ք ձեր սրտին>>: Սրանք բոլորը աստվածաշնչյան հռչակումներ են, որոնք մենք ի կատար ենք ածում աշխարհի մեջ մինչ Աստված գործում է մեր մեջ: Այս վարժեցողությունը իրականացվում է հատուկ գործողություններով կամ շնորհի դրսևորումներով, որոնք Ջոն Ուեսլին անվանեց բարեպաշտության և ողորմության գործեր[29]: Բարեպաշտության գործերը ներառում են հայտնի

---

[27] Ուեսլին սիրում էր սրբացումը նկարագրել որպես քրիստոնեական կատարելություն, նույնիսկ նրա ամենահայտնի վարդապետական կաթեխիզմը՝ Քրիստոնեական կատարելության պարզ պատմությունում նա պնդում է, որ կատարյալ սիրո փորձառությունը կամ «Աստված կատարելագործում է սիրո մեջ», կարող է իրական լինել այս կյանքում: Նա նշում է (1) գոյություն ունի կատարելություն և նշված է Սուրբ Գրքում: (2) դա նույնը չէ ինչ արդարացումը. արդարացված անձիք «ձգտում են կատարելության» (Եբր. 6:1) 3) Դա մահից շուտ է լինում, քանզի սուրբ Պողոսը խոսում է կատարյալ մարդկանց մասին (Փիլիպ. 3:15): Ուեսլի, Քրիստոնեական կատարելության պարզ պատմություն, Ծանոթագրված, խմբ. Ռենդի Լ. Մեդոքս և Փոլ Վ. Չիլքոթ (Կանզաս Սիթի, ԱՄՆ: Beacon Hill, Կանզաս Սիթիի մամուլ, 2015)

[28] Ջոն Ուեսլին «Հավատացյալների ապաշխարությունը» վերնագրված քարոզում շեշտեց ապաշխարության շարունակական անհրաժեշտությունը քրիստոնյաների համար, ովքեր ձգտում են սուրբ կյանքին: Սրբության կոնֆերանսի ժամանակ աստվածաբանության դասախոսներից մեկը՝ Դոկտոր Ռոբ Լ. Սթեյփլսն ասել է Ամբողջական սրբացումը թեոսին մեր ամբողջական նվիրումն է [Աստծո պատկերով նորոգմանը] շարունակական ապաշխարությամբ և դրանից բխող մաքրմամբ այն ամենից, ինչը խոչընդոտում կամ թուլացնում է մեր նվիրումը կամ այն, ինչ Ուեսլին անվանել է «հավատացյալների ապաշխարություն», որը, ըստ նրա, «պահանջվում է յուրաքանչյուրի համար հոգևոր ընթացքի ցանկացած պահին»: Սթեյփլսն, «Սրբության աստվածաբանությունում հիմնարար և ոչ հիմնարար արժեքներ», Վերատեսլական Սրբության կոնֆերանս, Հյուսիսարևմտյան Նազովրեցու համալսարան, 9 փետրվարի, 2007թ.:

[29] «Շնորհի միջոցներով» ես հասկանում եմ արտաքին նշանները, խոսքերը կամ գործողությունները, որոնք սահմանում, նպատակադրում է Աստված որպես սովորական ուղիներ, որոնցով նա կարող է փոխանցել մարդկանց՝ փրկագնող, արդարացնող կամ սրբացնող շնորհը»: Ուեսլի, «Քարոզ 16. Միջոցները շնորհի», II.1, http://wesley.nnu.edu/john-wesley/the-sermons-of-john-wesley-1872-

կարգապահություններ, ինչպիսիք են աղոթքը, Աստվածաշունչ կարդալը, ծոմապահությունը, հաղորդություն, մկրտություն և ընկերակցություն այլ քրիստոնյաների հետ: Ողորմությունը նույնպես շնորհի դրսևորումներից է, սակայն ուրիշներին ծառայելու ժամանակ, ինչպես օրինակ «Սովածին կերակրել, մերկերին հագցնել, օտարին հյուրասիրել, այցելել բանտում գտնվողներին ու հիվանդներին, խրատել անտեղյակներին»[30]: Մենք շնորհ ենք ցույց տալիս, մենք ստացել ենք շնորհը որպես պարգև, սակայն մեր մասնակցությունը պահանջվում է[31]:

Այնուամենայնիվ, պետք է զգույշ լինել, որպեսզի չշփոթենք մասնակցությունը վերահսկողության հետ: Մեր հոգևոր աճը մեր վերահսկողության սահմաններում չէ և մենք չենք դրա սկզբնապատճառը: Կան որոշ բաներ, որոնք մենք կարող ենք վերահսկել: Մենք կարող ենք զանգահարել, լվանալ մեր հագուստները կամ դրսի գործերով զբաղվել: Կան նաև բաներ, որոնք մենք չենք կարող վերահսկել: Մենք չենք կարող փոխել եղանակը կամ մեր գեները: Որոշ դեպքերում մենք ունենք վերահսկողություն, որոշներում՝ ոչ. Երկուսն էլ հնարավոր է:

Սակայն կա նաև երրորդ տարբերակ՝ կան բաներ, որոնք մենք չենք կարող վերահսկել, բայց կարող ենք մեր մասնակցությունն ունենալ: Մտածեք քնի մասին: Եթե երեխաներ ունեք, ապա հաստատ նրանց երբևէ ուղարկել եք քնելու: Երբեմն նրանք պատասխանում են՝ ասելով. «Չեմ կարող»: Եվ նրանք մասամբ իրավացի են: Նրանք չեն կարող ստիպել իրենց անմիջապես քնել, ինչպես օրինակ մենք կարող եք անմիջապես վերցնել հեռախոսը և հեռախոսազանգ կատարել: Որպես ծնողներ, մենք կարող ենք ապահովել քնի համար անհրաժեշտ միջավայրը. Երեխաներին քաջալերենք, որ պառկեն, անջատեն լույսը, աչքերը փակեն, նույնիսկ երաժշտություն լսեն և գուցե նրանք քուն մտնեն: Նրանք չեն կարող վերահսկել քնելու ժամանակը, սակայն կարող են անհրաժեշտ պայմանները ստեղծելով, մասնակից լինել գործընթացին: Նույնը վերաբերում է հոգևոր աճին: Մենք չենք կարող մեզ սրբացնել կամ մեզ նմանեցնել Հիսուսին: Սուրբն է մեզ սուրբ դարձնում: Աստված մեզ սրբագործողն է: Բայց, մեր համագործակցությունն անհրաժեշտ է: Մենք մեզ չենք փրկում, սակայն մենք պետք է այո ասենք փրկարար շնորհին:

Աշակերտության նշանավոր ուսուցիչ Դալլաս Ուիլարդը ասել է. «Շնորհը հակառակ չէ ջանքին, այն հակառակ է վաստակելուն»[32]: Շնորհն ավելին է քան վերածնունդը, արդարացումը և ներումը: Շնորհն անհրաժեշտ է աշակերտության ողջ ճանապարհին: Իրականում մեր ընթացքի մեջ շատ ջանք գործադրելուց ավելի վտանգավոր է կարծելը՝ մենք ոչինչ չպետք է անենք: Պասիվությունը օրինապաշտության պես վտանգավոր է: Երբ Պողոսն ասում է՝ հանել հին «ես»-ը և հագնել նոր մարդը, նա, անկասկած, նկատի ունի Աստծո օգնությամբ: Պողոսն անզիջում է՝ «Մարզի՛ր քեզ աստվածապաշտության մեջ» (1 Տիմոթ. 4.7), և կրկին. «Չգիտէ՞ք, թէ ասպարէզի մէջ վազողներն՝ ամենքն են վազում. Բայց մէկն է յաղթանակն առնում. դուք այնպէս վազեցէք որ հասնէք» (Ա Կորնթ. 9:24):

---

edition/sermon-16-the-means-of-grance/: Շնորհի միջոցները կոչվում են նաև հոգևոր կարգապահություններ:

[30] Ջոել Բ. Գրին և Ուիլյամ Հ. Ուիլիմոն, խմբ., Ուեսլիի Աստվածաշնչյան սերտողության Ստանդարտ տարբերակ (Nashville: Abingdon Press, 2009), 1488, ծանոթագրություն «դեպի սրբագործում»:

[31] Ավելին տե՛ս 5-րդ գլխում՝ Զորացնող շնորհ

[32] Դալլաս Ուիլարդ, Մեծ բացթողումը. Հիսուսի հիմնական ուսմունքների վերահռչակումը Աշակերտության մասին (Նյու Յորք: HarperCollins, 2006), 61.

Շնորհի նշանակում է, որ Աստված արել է այն ամենը, ինչ մենք չէինք կարող անել մեզ համար, բայց դա չի նշանակում, որ մենք այժմ դառնում ենք սպառողներ, ովքեր ոչ մի ներդրում չունեն հարաբերություններում: Այս սխալ գաղափարը բացատրում է բազմաթիվ քրիստոնյաների աշակերտության նկատմամբ մոտեցումը, որի հետևանքն է հոգևոր աճի և հասունության բացակայությունը: Այսպիսով, Դալլաս Ուիլարդը նաև ասում է. «Մենք գիտենք, ինչպես Հիսուսն է ասում, «Առանց ինձ ոչինչ չեք կարող անել» (Հովհաննես 15:5) . . . Բայց մենք ավելի լավ է հավատանք, որ այս հատվածն ունի շարունակություն՝ «Եթե դու չես ցանկանում ոչինչ անել, ապա Ինձ վրա հույս չդնես: Եվ մենք ամենաշատը այս հատվածն ենք դժվարանում ընկալել»[33]: Մենք համագործակցում ենք Աստծո գործուն՝ արդեն տրված, շնորհի հետ հետևելով Հիսուս Քրիստոսի օրինակին: Մենք հետևում ենք հոգևոր կարգապահություններին, ոչ թե որպեսզի վաստակենք մեր սրբացումը, այլ որպեսզի մեր անձերը վարժեցնենք Աստվածապաշտության:

4. Հոգևոր աճը համատեղ ջանք է: Արեւմտյան ընթերցողները զարմանում են շնորհի ճամփորդության վերաբերյալ Պողոսի նկարագրության համայնական շեշտադրմամբ, թեև շատ ոչ արևմտյան մշակույթներում գիտեն, որ ճանապարհը ընկերովի են անցնում:
«Նա [Քրիստոսը] Որից բոլոր մարմինը միասին կազմուելով եւ միասին *յարմարուելով ամեն յօդուածի ձեռնտուութեամբը ամեն մէկ անդամի ներգործութեան չափովը* մարմնոյ աճիլը գործվում է՝ իր անձը սիրով շինելու համար» (Եփես. 4:16, NLT, շեշտադրումն ավելացված է): եկեղեցուն վերաբերող Պողոսի այս խոսքերը անսպասելի են այն մշակույթների համար, որոնք սովոր են խոնարհվել անհատապաշտության զոհասեղանին, և հակված են անհատական հոգևորությունը, սակայն նա հստակ մատնանշում է, որ աշակերտության ճանապարհը անհատական չէ: Մարմնի յուրաքանչյուր անդամ կարևոր է և յուրահատուկ, սակայն ամեն անդամ հատուկ նպատակի է ծառայում՝ օգնել մյուս անդամներին աճել:
Դա սուրբ սիներգիա է: «Սիներգիա»-ն առաջացել է հունարեն synergos բառից, որը նշանակում է «միասին աշխատել»: Ասվել է, որ ամբողջի աշխատանքն ավելի մեծ է, քան մասերի առանձին գումարը, կամ առանձին մասերի համադրությունն ավելի ազդեցիկ է, քան մեկը: Սիներգիան հանդիպում է բնության, բիզնեսի, սպորտի և ընտանեկան հարաբերությունների մեջ: Դա փոխկախվածության, փոխադարձության և ընդհանրության ուժն է[34]:
Սիներգիան նաև աճող և սիրով լեցուն առողջ մարմնի չափանիշն է (ինչ հունարենն անվանում է ագապե): Պատասխանատվության զգացումը, խրախուսանքը, խրատը, բարեխոսական աղոթքը և աջակցությունն անհնարին են՝ առանց այլ մարդկանց: Մենք միասին ենք սուրբ ժողովուրդ դառնում: Մենք Աստծո ձայնն ամենից հստակ լսում ենք համայնքում: Սերը մակերեսային է, քանի դեռ այն չի ապրում իրական հարաբերությունների համատեքստում: Շնորհի ճանապարհորդությունը թիմային իրադարձություն է[35]:

---

[33] Ուիլարդ, «Հոգևոր ձևավորում. Ի՞նչ է և ինչպես է դա արվում», n.d., http://www.dwillard.org/articles/individual/spiritual-formation-what-it-is-and-how-it-is-done.

[34] Փոխկախվածության աստվածաշնչյան ըմբռնման մասին ավելին տե՛ս Պողոսի Նոր Կտակարանը մարդու և Քրիստոսի մարմնի մետաֆորիկ ուսուցում (Ա Կորնթացիս 12, Եփեսացիս 4): Փոխադարձության մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս քրիստոնեական ամուսնության մասին նրա ուսմունքը (Եփեսացիս 5):

[35] Ուայթ, վերաիմաստավորելով եկեղեցին 61. Տես նաև գլուխ 5 և քրիստոնեական հաշվետվողականության և զորաղնող շնորհի մասին:

Այսպիսով, աշակերտության աճի երկու հավասարումներ կան՝

Հանրաճանաչ հավասարումը.
ՓՐԿՈՒԹՅՈՒՆ+ԺԱՄԱՆԱԿ+ԿԱՄՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ=ԿՅԱՆՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Սրբության հավասարումը
Շնորհ+Համագործակցություն Աստծո հետ+Քրիստոնեական Համայնք = Քրիստոսանմանություն

Քրիստոնյաները կանչված են աճելու շնորհի մեջ, այսինքն Հիսուսի նմանությամբ: Մենք նոր կյանք ենք ստանում Քրիստոսով, որպեսզի աճենք Քրիստոսի մեջ: Աստված վերափոխում և վերաձևավորում է: Դա սրբագործող շնորհն է: Ես չգիտեմ որևէ մեկին, ով ավելի լավ է ներկայացնում դա քան Ք.Ս. Լյուիսը՝

Պատկերացրեք ձեզ որպես կենդանի տուն: Աստված գալիս է վերակառուցելու այդ տունը: Սկզբում, հավանաբար, կարող եք հասկանալ, թե ինչ է Նա անում: Նա վերացնում է արտահոսքերը և դադարեցնում տանիքի կաթկթոցները և այլն: Դուք գիտեիք, որ այդ աշխատանքները անհրաժեշտ էին այդ պատճառով չեք զարմանում: Այնուհետև Նա սկսում է հիմնահատակ քանդել ամբողջ տունը: Եվ դուք մտածում եք ի՞նչ է կատարվում, ի՞նչու է նա քանդում իմ տունը: Բացատրությունն այն է, որ Աստված ձեր պատկերացրած տունը չի կառուցում, այլ ավելացնում է նոր հարկեր, սենյակներ, այգի... դուք կարծում էիք նա տունն է վերանորոգում, սակայն նա պալատ է կառուցում: Նա մտադրություն ունի գալ և բնակվել այդտեղ[36]:

Աստված ոչ միայն մեզ փրկում է, այլև փոխակերպում է մեզ: Նա ընդունում է մեզ ինչպես որ կանք, սակայն այնքան է մեզ սիրում, որ մեզ այդպիսին չի թողնում: Նա վերաիմաստավորում, վերափոխում և վերակերտում է: Երբ մենք ամբողջությամբ նվիրվում և հանձնվում ենք Հայր Աստծուն, Սուրբ Հոգի Աստված մաքրում և սրբում է մեզ Որդի Աստծո պատկերին համապատասխան: Մենք դառնում ենք Քրիստոսանման մեր մտքերի, խոսքերի և գործերի մեջ: Մեր տունը նոր ղեկավարություն ունի:

«*Սրբությունը նշանակում է, որ ձեր կյանքի ոչ մի անկյուն Հիսուս Քրիստոսի վերահսկողությունից դուրս չէ»[37]: Մենք մեր ձեռքերը հանում ենք ղեկից և այն հանձնում ենք Քրիստոսին: Մենք ասում ենք. «Դու իմ Փրկիչն ես (փրկություն), այժմ ես խոնարհվում եմ և ընդունում Քեզ որպես իմ Տեր (սրբացում)»:* Մենք առանձնացված ենք սուրբ նպատակով և Աստծո կատարյալ ենք սերը սկսում է հոսել մեր մեջ: Մենք ճշմարտապես սկսում ենք սիրել Աստծուն մեր ամբողջ սրտով, մտքով և զորությունով, և մեր մերձավորին մեր անձի պես:

---

[36] Ք.Ս.Լյուիս, Պարզապես Քրիստոնեություն (New York: Touchstone, 1996), 175–76

[37] Ես առաջին անգամ լսեցի, որ Դենիս Քինլօուն օգտագործում է այս արտահայտությունը 1991 թվականին սեմինարիայի մատուռի քարոզում: Սա նաև առաջին անգամն էր, երբ ես հասկացա, որ Աստծո կողմից իմ կյանքը չի վերահսկվում, քանի որ Աստված ցանկանում է ինձ մանիպուլյացիայի ենթարկել, այլ՝ մտերմության: Իմ գնահատմամբ՝ Քինլօուն քսաներորդ դարի վերջի և սկզբի սրբության լավագույն քարոզիչներից մեկն էր մինչև նրա մահը՝ 2017թ:

ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՍՐԲԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Վերջին նշումներն այն մասին, թե ինչ է նշանակում ամբողջական սրբացում: «Ամբողջական» չի վերաբերում մեր կյանքերի մեջ գործին, այլ ամբողջականություն: Աստված շարունակաբար գործում է մեր կյանքի թե ներքին և թե արտաքին ոլորտներում, ուստի մեր կյանքի կերտումը շարունակական գործընթաց է մինչև ամեն կենդանի արարածների բաների վերջնական հարությունը, ներառյալ մեր փառաբանումը[38]: Մեր կյանքի տարբեր հանգրվաններում, տվյալ հանգրվանին համապատասխան մենք ամբողջապես և «լիովին սրբացված» ենք շնորհով: Մեր կյանքում աննկարագրելի շալոմ գոյություն ունի: Շալոմն այն է, ինչ Աստված ներդրել է արարչագործության մեջ: Շալոմ, անշուշտ, նշանակում է խաղաղություն, բայց դա նաև նշանակում է ամբողջականություն, լիություն, միասնություն և արարչագործության յուրաքանչյուր անդամի հետ ներդաշնակ գոյություն հանուն նպատակի (telos):

Ամբողջական սրբացումը, ինչպես մենք արդեն քննարկեցինք, եսակենտրոն գոյությունից (մարմնից) համառորեն հրաժարվելու և Տիրոջ ճանապարհներին ու կամքին անկոտրում հնազանդությունն է: Ինչպես Հիսուսը մեծ ճշգրտությամբ ասաց. «Եւ ամենքին ասում էր, Եթէ մէկը կամենում է իմ ետեւից գալ, թող իր անձն ուրանայ եւ ամեն օր իր խաչն առնէ եւ իմ ետեւից գայ:» (Ղուկաս 9.23)[39]: Նման խաչակենտրոն կյանքի արդյունքը Քրիստոսանմանություն է, որը դրսևորվում է կատարյալ սիրով առ Աստված և մերձավորը:

Նազովրեցի Եկեղեցու Հավատի տասներորդ Դրույթում սրբագործման մասին գրված է հետևյալը՝

Մենք հավատում ենք, որ լիակատար սրբագործումը Աստծո գործողություն է, որը հետևում է վերստին ծննդից հետո և որի միջոցով հավատացյալը ազատագրվում է ադամական մեղքից, կամ բարոյական ապականությունից, մտնում է Աստծուն լիակատար նվիրվածության դիրքի մեջ, դեպի սուրբ հնազանդություն և կատարյալ սեր:

Լիակատար սրբագործումը տեղի է ունենում Սուրբ Հոգով մկրտվելու կամ լցվելու միջոցով, որը ընկալվում է մարդու կողմից, որպես սրտի մաքրվելը մեղքից, և նրա մեջ Սուրբ Հոգու մշտական ներկայությունը, Որը հավատացյալին տալիս է ուժ՝ կյանքի ու ծառայության համար:

Լիակատար սրբագործումը շնորհվում է Հիսուսի արյան շնորհիվ, այն իրագործվում է ակնթարթորեն հավատքի միջոցով, նրան նախորդում է լիակատար նվիրվածությունը: Սուրբ Հոգին վկայում է հավատացյալին այդ գործողության և շնորհքի առկայության մասին:

---

[38]«Փառաբանումը» վերաբերում է հավատացյալի վիճակին մահից հետո և բոլոր բաների վերջնական հարությունից հետո: «Աստծո շնորհով մենք ի վերջո կփառավորվենք՝ հարություն կառնենք Քրիստոսի հետ, երբ Նա վերադառնա, և կվերափոխվենք նրա ամբողջական նմանությամբ՝ նրա փառքը հավիտյան վայելելու համար»: Գրեյթհաուզ և Դանիգ «Ուեսլեյան աստվածաբանության ներածություն»,54: Ի հավելում Դայան Լեքլերքը նշում է փառաբանումը որպես վերջնական սրբացում՝ «երբ մարդը հեռացվում է մեղքի ներկայությունից»: Լեքլերք, *Բացահայտելով Քրիստոնյայի Սրբությունը*, 318:

[39]Անդրադառնալով այն գաղափարին, որ ամբողջ սրբացումը ենթադրում է անձի (մարմնավորի) ուրացում և խաչը վերցնելուն ամբողջ կյանքի ընթացքում, «Ջ. Օ. ՄաքՔլուրկան (Վաղ Սրբության շարժման հարավային ճյուղերի ղեկավարներից մեկը) անդրադարձել է այս վերջին ասպեկտին որպես «մահ սեփական անձի համար», որը իրականում պետք է տեղի ունենա քրիստոնեական կյանքի ընթացքում... Փորձից ելնելով ամբողջ կյանքը չի կարող սեղմվել փորձառության մեկ պահի մեջ»: Դաննինգ՝ Հետամուտ լինելով աստվածային պատկերին, Kindle Location 853. Հետագա քննարկման համար տե՛ս Ուիլյամ Ջ. Սթրիքլենդը և Հ. Ռեյ Դաննինգ, Ջ.Օ. ՄաքՔլուրկան. Նրա կյանքը, նրա աստվածաբանությունը և ընտրվածքներ նրա գրվածքներից (Նեշվիլ: Trevecca Press, 1998):

Մենք հավատում ենք, որ գոյություն ունի բացահայտ տարբերություն սրտի մաքրության և մարդու հոգևոր հասունության միջև: Սրտի մաքրությունը տեղի է ունենում ակնթարթորեն և հանդիսանում է լիակատար սրբագործման հետևանք, իսկ հոգևոր հասունությունը շնորհով հասունանալու արդյունք է:
Մենք հավատում ենք, որ լիակատար սրբագործման շնորհո ընդգրկում է իր մեջ Աստծուց մղում, դեպի շնորհի մեջ հասունության, ինչպես աշակերտները Քրիստոսի նման: Սակայն այդ մղմանը անհրաժեշտ է գիտակցված համագործակցություն և հատուկ ուշադրություն է պետք հատկացնել նրան, ինչ պահանջվում է հոգևոր աճի ընթացքի և Քրիստոսին նմանվելու համար, ընդգրկելով մեր անձնական հատկանիշներն ու բնավորությունը: Հավատացյալի կողմից առանց նպատակասլաց ջանքերի, նրա վկայությունը կարող է կորցնի իր ուժը և շնորհը չի գործի: Արդյունքում հավատացյալը կարող է շնորհը կորցնել:
Մասնակցելով նրանցում, որ անվանվում են շնորհի միջոցներ, հատկապես հաղորդակցվելով, մասնակցելով Եկեղեցական ծիսակատարություններում, հավատացյալները ամբողջ սրտով աճում են շնորհի և սիրո մեջ՝ դեպի Աստված և դեպի մերձավորը:

Սրբագործող շնորհի մասին մեր քննարկումը պետք է ավարտենք մի պարզ հարցով. Ի՞նչ նպատակով: Ինչո՞ւ է անհրաժեշտ և այսքան ցանկալի սրբությունը: Ո՞րն է Քրիստոսանման կյանքի ապացույցը:
Մենք վերադառնում ենք դեպի կատարյալ սեր: Ամբողջական սրբացումը բարոյականության գագաթնակետը չէ: Դա անձնուրաց սիրո ամենաբարձր ձևն է: Ամբողջական սրբացումը մեզ ամբողջացնող կատարյալ սերն է: Ուեսլին սահմանեց ամբողջական սրբացումը որպես մեր մեջ հայտնված կատարյալ սեր: Սա նրա սրբության մասին ուսմունքի առանցքային մասն էր: Մ.Բ. Ուինքուփը արտահայտում է հետևյալ միտքը. «Քրիստոնեական ճշմարտության մասին ցանկացած հատվածի վերաբերյալ Ուեսլիի քննարկումները հանգեցրին արագ սիրահարվելուն: «Աստված սեր է»: Քավության յուրաքանչյուր կողմը սիրո արտահայտություն է. սրբությունը սեր է. «Կրոնի» իմաստը սերն է: Քրիստոնեական կատարելությունը սիրո կատարելությունն է: Աստծո յուրաքանչյուր քայլ դեպի մարդը, և մարդու քայլ առ քայլ արձագանքը սիրո դրսևորում է»[40]: Ուինքոփն ավելացնում է, «Ասել, որ քրիստոնեական սրբությունը մեր գոյության պատճառն է նույնն է ասել, որ մենք հավատարիմ ենք այն ամենին, ինչ սերն է, և դա իսկապես մեծ պատվեր է»[41]:
Մի խոսքով, սերը հենքն է: Սիրուց պակաս ոչ մի բան չի հասնում սուրբ կյանքի նշանաձողին: Ամբողջական սրբացման ցանկացած ըմբռնում, որը զուրկ է սիրուց, դաժան է, օրինապաշտ, դատող և անսուրբ: Ագապե սերը (քրիստոնեական սեր) այն սերն է, որը բոլոր մյուս բնական սերերը պահում է իրենց պատշաճ կարգով[42]: Ագապեն առաջնորդում է, մեկնաբանում և

---

[40] Միլդրեդ Բանգս Ուինկոպ, *Սիրո աստվածաբանություն. Վեսլեյանիզմի դինամիկան* (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 1972), 36

[41] Ուինկոպ, Սիրո աստվածաբանություն, 36

[42] Սիրո չորս հունարեն տերմինների ամփոփման համար՝ eros, storge, philia և agape: Ես խորհուրդ եմ տալիս ընթերցել Ուինկոպի կարճ բացատրությունը«Սեր և ընկերակցություն» վերնագրով: Նա պնդում է, որ բոլորը, բացի ագապեից, բնական սերեր են, որոնք ջանք են պահանջում: Ագապեն ոչ միայն սիրո այլ հարթություն է, այլ նաև հատկություն է, որով մեկը պատվիրում է կյանքը, որը հնարավոր է դարձել միայն Քրիստոսի լիությամբ: «Սերը, որը մենք կոչում ենք Քրիստոնեական սեր, չի փոխարինում մյուս սերերին, ոչ էլ դրանց հավելումն է, բայց դա Քրիստոսի վրա կենտրոնացած մարդու հատկությունն է:

վերահսկում է մնացած բոլոր ցանկությունները: Որովհետև մենք կանչված ենք աճելու Ագապե սիրո մեջ, մենք հասկանում ենք, որ այն տրված պարգև է, ինչպես նաև այն մեր մեջ աճում է Սուրբ Հոգու մշտական ներկայությամբ: Ջանքը անհրաժեշտ է, բայց շնորհն արդեն տրված է: Մենք կանչվում ենք փնտրելու (նախնական) շնորհը սուրբ սիրով: Մենք հանձնվում ենք փրկարար շնորհին սուրբ սիրով: Մենք մաքրված և առանձնացված ենք սուրբ սիրով՝ սրբագործող շնորհի միջոցով: Մենք աճում ենք շնորհի մեջ, երբ մենք վայելում ենք սուրբ սերը: Այսպես մենք ապրում ենք Քրիստոսի լիությամբ:

Խեղաթյուրող եսակենտրրոնությունը, որը խեղաթյուրում է բոլոր մյուս հարաբերություններում, քանի որ դրանք օգտագործում է անձնական շահի համար, (հաճախ ամենանուրբ և խորամանկ ձևերով), ամբողջականության է հասնում Սուրբ Հոգու մեջ բնակվելով: Այս հարաբերություններում են կյանքի մյուս բոլոր հարաբերությունները գեղեցկանում և սրբվում: *Ուինկոպ, Միրո Աստվածաբանություն 38*

5
ԶՈՐԱՑՆՈՂ ՇՆՈՐՀ

Եւ նորան որ կարող է անարատ պահել ձեզ եւ
անկեղծ կանգնեցնել իր փառքի առաջին անբիծ ցնծութիւնով.
Այն մէկ իմաստուն Աստուծուն եւ մեր Փրկչին [մեր Տէր Յիսուս Քրիստոսով] փառք եւ
մեծութիւն, զօրութիւն եւ իշխանութիւն,
[բոլոր դարերից առաջ] եւ հիմա եւ ամեն յաւիտեաններում։
Ամէն։
Հուդա 1:24-25

Յուրաքանչյուր քրիստոնյայի կյանքում գալիս է մի պահ, երբ ինչ-որ բան սկսում է պարզաբանվել: Երբեմն դա տեղի է ունենում անմիջապես, և երբեմն դա տեղի է ունենում շնորհի ճանապարհորդության ընթացքում՝ *իմ կյանքի այն հատվածները, որոնք մնում են չհանձնված Քրիստոսի տերությանը: Իմ վերակառուցված տան ներսում դեռ կան սենյակներ* (վերադառնանք C. S. Lewis-ի նկարագրմանը), *որոնք փակ են Աստծո գործի համար:*
Որովհետև Աստված անխնա հավատարիմ է մեր սրբությանը՝ մեզ ավելի ու ավելի Քրիստոսին նմանեցնելով: Սուրբ Հոգին սկսում է հարցադրումներ անել՝ «Արդյո՞ք ամեն ինչ իմն է: Արդյո՞ք քո յուրաքանչյուր մասնիկը պատկանում է ինձ: Կա ի՞նչ որ թաքուն մի բան»:
Մեր առաջին պատասխանը կարող է լինել՝ «Տեր կարող ես վերցնել ամեն ինչ, բացի... (ինքներդ լրացրեք բացը): Ես քեզ տվել եմ իմ կյանքի 99 տոկոսը: Եվ չեմ կարո՞ղ ինչ որ բան էլ ինձ համար պահել: Դու ամեն ինչ ես ակնկալու՞մ»[1]:
Որպեսզի մենք հասնենք աշակերտության վերջնական նպատակին (telos)՝ Հիսուսի Հոգին համբերատար սիրով և անսասան նվիրումով հիշեցնում է՝ «Այո, ամբողջ անձդ: Հարյուր տոկոսով»:
Լիովին հանձնվել Աստծուն նշանակում է ընդունել Աստծո խոստացված կյանքը: Ինչքան ավելի շատ մեր ես-ը հանձնենք Աստծուն, այնքան ավելի մեծ խաղաղություն և ուրախություն կունենանք: Օսվալդ Չեմբերսը կարծում է, որ հավերժական կյանքը Աստծուց պարգև չէ, այլ պարգևն Աստված է: Ավելին, այն հոգևոր զորությունը, որը Հիսուսը խոստացել էր Իր աշակերտներին Հարությունից հետո և Պենտեկոստեի օրը Սուրբ Հոգուց նվեր չէ, այլ զորությունը Սուրբ Հոգին է (Գործք Առաքելոց 1:8): Որքան ավելի ենք հանձնվում Աստծուն, այնքան առատանում է Քրիստոսով կյանքը մեր մեջ: Կրկին, Չեմբերսը խորաթափանցությամբ լուսավորում է. «Նույնիսկ ամենաթույլ սուրբը կարող է զգալ Աստծո Որդու աստվածության զորությունը, երբ նա կամենում է «թողնել»: Բայց ցանկացած ջանք «կառչել» մեր սեփական ուժերից միայն կնվազեցնի Հիսուսի կյանքը մեր մեջ: Մենք պետք է շարունակենք հանձնվել, և թեկուզ դանդաղ, բայց Աստծո կամքը կթափանցի մեր անձերի մեջ»[2]:

---

[1] «Զգուշացեք երբևէ մտածելուց. «Օ՜, իմ կյանքում այդ բանն այնքան էլ կարևոր չէ»: Այն փաստը, որ դա ձեզ համար մեծ նշանակություն չունի, կարող է նշանակել, որ դա մեծ նշանակություն ունի Աստծո համար: Աստծո զավակի կողմից ոչինչ չպետք է համարվի աննշան գործ: Մեր կյանքում ոչինչ աննշան մանրուք չէ Աստծո համար»: Օսվալդ Չեմբերս, Իմ առավելագույնը Ամենակարողի համար (Uhrichsville, OH: Barbour and Company, 1935), 76–77.

[2] Օսվալդ Չեմբերս, Իմ առավելագույնը Ամենակարողի համար, 74-75

Մարդկային սիրտը մեղքի և անհնազանդության վայրն է, բայց նաև շնորհի և սրբության։ Փրկարար շնորհով Աստված գրավում է մեր սիրտը, սրբագործող շնորհով Աստված մաքրում է այն։ Մեր նախատրամադրվածությունը փոխվում է ծառայի սրտից՝ զավակի սրտին։ Մենք բացահայտում ենք, որ այլևս չենք ծառայում Աստծուն վախից դրդված, փոխարենը՝ մեր սիրտը փոխվում է և մենք փափագում ենք հնազանդվել։

Սրբություն նշանակում է լինել առանձնացված սուրբ նպատակի համար և լցված լինել Հիսուսի Հոգով, որ մեր մտածելակերպը, շարժառիթները և վերաբերմունքը Քրիստոսանման լինեն։ Մենք ուրանում ենք մեր անձերը և հրաժարվում ենք մեր իրավունքից։ Մենք վերցնում ենք մեր խաչը, ինչը նշանակում է, որ մենք փոխանցում ենք մեր իրավունքները Հիսուսին։ Զարմանալին այն է, երբ մենք հանձնում ենք մեր իրավունքները Հիսուսին մենք կյանք ենք գտնում։ Երբ մենք ուրանում ենք մեր կյանքը հանուն Հիսուսի մենք վերագտնում ենք կյանք և էլ ավելի։ Ինչը մենք ցանկանում ենք պահել մեզ և չհանձնել Աստծուն, մենք վաղ թե ուշ կորցնում ենք, իսկ ինչ տրված է Աստծուն մնայուն է։ «Քանի որ դուք մեռաք, և ձեր կյանքը թաքնված է Քրիստոսի հետ Աստծո մեջ» (Կող. 3:3)։ Նվիրաբերումն ամբողջական է։

Աստծուն մեր նվիրումը մեր սրբացման աղբյուրը չէ։ Մենք չենք կարող մեզ սրբացնել՝ մենք մեզ սուրբ չենք դարձնում։ Հիսուսի Հոգին դա անում է։ Բավական չէ ցանկանալ լինել Հիսուսի նման։ Ցանկությունը բավարար չէ, ինչպես նաև նմանակումն էլ։ Մենք պետք է ունենանք Հիսուսի Հոգին մեր մեջ, կամ ինչպես Պողոսն է ասում՝ Քրիստոսը պետք է ձևավորվի ձեր մեջ (Գաղ. 4:19)։

Շատ առումներով փարիսեցիները Հիսուսի ժամանակների լավագույն մարդիկ էին։ Նրանք բարոյական էին, նրանք մաքուր էին, և նրանք լավն էին։ Այնուամենայնիվ, սուրբ լինելը երևում էր նրանց վարքագծի բարելավման և մեղքի կառավարման համակարգի իրենց փորձերում, բայց չէր հասնում սրտի մակարդակին։ Նրանք ցանկանում էին աստվածապաշտ լինել և ապրել մաքուր կյանքեր, բայց նրանց անձնազոհությունը վերածվեց ինքնապաշտության, իսկ նրանց խաչակրացությունը խստացրեց նրանց սրտերը։ Հնարավոր է կեղծել արտաքին դրսևորումները, բայց վաղ թե ուշ երևան կգա այն ինչ կա սրտում։ Փարիսեցի քրիստոնյան նա է, ով փորձում է սուրբ կյանք վարել՝ իր ջանքերով, սակայն մարմնավոր ջաքները զիջելու են կատարալ սիրուն, քանզի ցանկությունը միայն բավարար չէ Հիսուսին նմանվելու համար։ Հիսուսի Հոգին պետք է լինի մեր մեջ։ Սա է սրբության կյանքի առանցքը։ Շնորհն անհրաժեշտ է սուրբ կյանքը զորացնելու, ուղղորդելու և առաջնորդելու համար։

Դալլաս Ուիլարդը բացատրում է, որ սուրբ կյանքը իրականում ավելի մեծ շնորհ է պահանջում, քան Հիսուսին ընդօրինակելու ցանկացած ինքնաբուխ փորձեր՝ «Եթե իսկապես ցանկանում եք վայելել շնորհը, ապա պարզապես սուրբ կյանքով ապրեք։ Արեք և խոսեք այն, ինչ Հիսուսն էր անում և խոսում։ Աստվածահաճո ապրելակերպի ժամանակ մենք կառաջնորդվենք շնորհով և պաշտպանված կլինենք Տիրոջ զորացնող շնորհով, որը մեզ պահում է սայթաքելուց (Հուդա 1:24)[3]։

Հարկ է նշել, որ զորացնող շնորհը չի մերժում մեր մասնակցությունը։ Չորրորդ գլխում մենք քննարկեցինք, որ շնորհով Աստված արեց այն ամենը ինչ մենք չէինք կարող, սակայն սա չի

---

[3] Ուիլարդ, *Մեծ բացթողում. Վերահռչակելով Հիսուսի հիմնական ուսմունքները աշակերտության մասին*
(Նյու Յորք: HarperCollins, 2006), 62.

նշանակում, որ մենք պետք է դառնանք շնորհի սպառողներ և մասնակցություն չունենանք հարաբերություններին:
Մենք համագործակցում ենք Աստծո շնորհի հետ՝ մեր կյանքի ոլորտներում նմանվելով Քրիստոսին: Մենք չենք վաստակում մեր շնորհը, այլ մեր անձերը վարժեցնում ենք աստվածապաշտության:

ԲԱԺՆԵԿՑՎԱԾ ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Եկեք փորձենք զանազանել վերագրվող և բաժնեկցված արդարության միջև տարբերությունները: Ըստ Դայան ԼեՔլերքի՝ վերագրվող արդարությունը «Հիսուսի արդարությունն է, որը վերագրվում է քրիստոնյային և հնարավորություն է տալիս նրան արդարանալ: Հայր Աստված տեսնում է անձին Քրիստոսի արդարության միջոցով, բայց դա չի հաստատում անձի ներսի փոխակերպումը»: Մյուս կողմից, բաժնեկցված արդարությունը «Աստծո ողորմած պարգևն է տրված վերստին ծննդի ժամանակ: Աստված սկսում է մեզ սուրբ դարձնելու գործընթացը»[4]:
Երկուսի միջև տարբերությունն այնքան էլ աննշան չէ, ինչպես կարող եք մտածել: Մեկը վերագրվող ու ծածկող արդարություն է, իսկ մյուսը՝ բաժնեկցված, որը բնակվում է անհատի մեջ: Բաժնեկցված արդարությունը կարելի է հասկանալ որպես Աստծո պարգև, որը զորացնում է Քրիստոսի աշակերտին ձգտել սրբության, սրբացման և կատարյալ սիրո: Ավելի ճշգրիտ կերպով Թիմոթի Թենենթն է նկարագրում տարբերությունը. «Որպես քրիստոնյաներ, մենք գիտենք, որ Աստված վերցնում է մեղավորներին և հագցնում նրանց Քրիստոսի արդարությունը (վերագրում է): Աստված այնուհետև գործում է մեր մեջ ամեն բարիք, որպեսզի այն արդարությունը, որը ժամանակին պարզապես վերագրվում էր մեզ իրական դառնա և աճի»[5]:

ՇՆՈՐՀԻ ԼԱՎԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բաժնեկցված արդարությունն է Ջոն Ուեսլիին այդքան լավատես դարձրել վերափոխման ներուժի վերաբերյալ: Լիովին գիտակցելով սկզբնական մեղքի ավերածությունները՝ Ուեսլին լավատես չէր մարդկային բնույթի վերաբերյալ: Այնուամենայնիվ, նա լիովին համոզված էր, որ Աստծո շնորհը կարող է լիովին վերափոխել կյանքը:
Ես մի անգամ լսել եմ, որ իմ ընկեր Ուեսլի Թրեյսին այն անվանել է «Շնորհի վճռական լավատեսություն»: Պատկերացնելու համար նա ինձ մի պատմություն պատմեց.

---

[4]Դայան Լեքլերք *Բացահայտելով քրիստոնեական սրբությունը.* Ուեսլեյան-Սրբության սիրտը աստվածաբանություն (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 2010), 312: Սա է նաև պատճառն ինչու Ջոն Ուեսլին վերստին ծնունդն անվանեց նախնական սրբացում: Չժխտելով մյուսը, Ռեֆորմացիայի ավանդույթը հակված է շեշտը դնել վերագրվող արդարության վրա, մինչդեռ Ուեսլեյան-Սրբության աստվածաբանությունը առաջնային շեշտը դնում է բաժնեկցված արդարության վրա:
[5] Թիմոթի Թենենթ, «Ապրել արդարության կողմնորոշումով. Սաղմոս 26» Seedbed Daily, սեպտեմբերի 1, 2019, https://www.seedbed.com/living-in-a-righteousness-orientation-psalm-26/:Թենենթը ավելացնում է. «Միայն նոր արարչության մեջ է սա լիովին ամբողջական: Սրբացումը յուրաքանչյուր հավատացյալի կանչն է, որպեսզի ամբողջ սրտով կարողանանք փառաբանել Տիրոջը «մեծ ժողովում» (Սաղմոս 26.12):

«Պատկերացրու մի աղջիկ մտնում է եկեղեցու սրահ։ Նա տասնմեկ կամ տասներկու տարեկան է։ Նրա հագուստը կեղտոտ է և հնամաշ։ Նրա մազերը բարակ են և խճճված։ Նրա վրայից հոտ է գալիս, կարծես մի քանի օր լոգանք չի ընդունել։ Դուք մի փոքր ծանոթ եք նրա պատմությանը։ Դպրոցում նրա առաջադիմությունը ցածր է։ Նա դասերից ետ է մնում և անցողիկ գնահատականներ չի հավաքում։ Դուք բավականին վստահ եք, որ խնդիրը նրա մտային կարողություններրը չեն, այլ՝ նրա ընտանեկան իրավիճակը։ Նա չի ճանաչում իր կենսաբանական հորը, իսկ մայրը մի քանի ընկերներ է ունեցել։ Մանկական բռնության մասին խոսակցություններ են պտտվում, և նրա վրայի կապտուկները կարծես հաստատում են դրանք»։ Այնուհետև Թրեյսին շարունակեց,- «Վարքային թերապիստը կարող է ասել՝ նրա կյանքը խառնված է, նա լցված է վախերով, որոշ բաներ հնարավոր է շտկել, սակայն նա կկրի իր մանկության հետքն ամբողջ կյանքի ընթացքում։

Իսկ գիտես ի՞նչ կասեր շնորհի լավատեսությանն հավատացող մարդը,- «Անկախ նրանից, թե ինչ են արել նրան կամ ինչ է նա անում ինքն իրեն, այս փոքրիկ աղջիկն ունի Ավետարանի հույսը։ Անկախ նրա ներկա իրավիճակից Աստված կարող է նրան դարձնել այնպիսին, ինչպիսին Ինքն է ուզում»։ Կամ, ինչպես Ուեսլին կասեր՝ «Ցույց տուր ինձ ամբողջ Լոնդոնի ամենաստոր թշվառին, և ես քեզ ցույց կտամ մեկին, ով ունի առաքյալներին հասու ողջ շնորհը»։ Այս լավատեսությունը վերաբերվում է մեր մեղավոր վիճակին, սակայն այն նաև ցույց է տալիս շնորհի զորությունը՝ Աստված ցանկացած իրավիճակից կարող է դարձնել մեզ այն, ինչ Ինքն է կամենում[6]։ Ոչ մի ցավ այդքան ցավոտ չէ, ոչ մի վիշտ այդքան ուժեղ չէ, ոչ մի վերք այդքան խորը չէ, ոչ մի մեղք այնքան սարսափելի չէ, որ Աստծո շնորհը չկարողանա վերափոխել, բուժել և վերադարձնել մեր կորսված պատկերը։

ԹՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՐՈՒԹՅՈՒՆ

Շնորհի ճամփորդությունը մարդու ամբողջական կերպարանափոխումն է։ Արդարությունը բաժնեկցված է, սրբությունը՝ տրված։ Դա «կրկին փորձիր» կամ «հավաքվիր և կկարողանաս» չէ, բայց իրական փոփոխություն, որը հանգեցնում է զորացած կյանքի։ Այլ կերպ ասած, Աստծո շնորհը անհրաժեշտ է թողության և զորության համար։ Մենք կարիք ունենք մեր մեղքերի թողության (ներման), և մեզ անհրաժեշտ է ուժ (զորություն) աստվածահաճո կյանքով ապրելու համար։ Մեկն առանց մյուսի հանգեցնում է վտանգավոր ծայրահեղությունների։ Եթե մենք ասենք, որ Աստված մեզ ներում է, մենք շնորհի տակ ենք ու անտարբեր լինենք մեր ապրելակերպի նկատմամբ, սա նշանակում է մենք ամենաթողության վտանգի առաջ ենք կանգնած։ Ընդհակառակը, եթե մենք ենթադրում ենք, որ շնորհը միայն անհրաժեշտ է մեր մեղքերի թողության համար, բայց հետո այն ավարտվում է, ապա մենք կանգնած ենք օրինապաշտության վտանգի առաջ։ Երկուսն էլ վտանգավոր ծայրահեղություններ, որոնք խոչընդոտում են շնորհի ճանապարհորդությանը։

Պողոս առաքյալը խոսում է այս երկու ծայրահեղությունների մասին, երբ ասում է. «Ուրեմն, իմ սիրելիներ, ինչպէս ամեն ժամանակ հնազանդեցիք՝ ոչ միայն իմ ներկայութիւնումը, այլ հիմա

[6] «Ինչպես Ուեսլին կասեր, նման լավատեսությունը ժխտելը ավելի մեծ կդարձնի մեղքի ուժը, քան շնորհի զորությունը, մի տարբերակ, որը պետք է անընդունելի լինի Ուեսլեյան-Սրբության աստվածաբանության համար»։ *Լեքլարք, Բացահայտելով քրիստոնեական սրբությունը*, 27.

էլ աւելի իմ բացակայութիւնումը, ահով եւ դողալով գործեցէք ձեր անձերի փրկութիւնը։ Վասն զի Աստուած է՝ որ ներգործում է ձեզանում կամենալն էլ՝ անելն էլ իր հաճութեան պէս» (Փիլիպ. 2.12–13)։ Ո՞վ է պատասխանատու մեր հոգևոր աճի համար։ Դա մե՞ր գործն է, թե՞ Աստծո գործը։ Պողոսի պատասխանը՝ երկուսինն էլ և սա հակասություն չէ։

Եկեք դիտարկենք օրինապաշտության ծայրահեղությունը։ Օրինապաշտության աստվածաբանական սահմանման մեջ չափազանց ընդգծված է, որ փրկության համար անհրաժեշտ է հնազանդվել կանոնների, ընթացակարգերի և հատուկ վարքագծի։ Օրինապաշտությունը գործնականում ասում է, որ Աստված ապահովել է մեր փրկությունը Հիսուսի խաչելության միջոցով, բայց մեր կյանքում դրա իրագործումը կախված է նրանից, թե մենք որքան շատ ենք աղոթում, կարդում մեր Աստվածաշունչը և խուսափում որոշ մարդկանցից և վայրերից։ Օրինապաշտությունը փորձում է մեզ համար անել այն, ինչ միայն Աստված կարող է անել։ Այն մարդը, ով փորձում է հետևել բոլոր օրենքներին, ի վերջո համակվում է մեղքի և անապահովության զգացումով, վախով, հիասթափությամբ, այս ամենի մեջ բացակայում է շնորհը, խաղաղությունը կամ վստահությունը։ Դա առանց շնորհի աշակերտություն է, որն ի վերջո հանգեցնում է անսեր մարդասիրության և գերազանցության զգացողության։ Օրինապաշտները բարձր չափանիշներ են սահմանում իրենց համար, և էլ ավելի մեծ պահանջներ են ունենում ուրիշներից, ինչը վանում է եկեղեցուց անապաշխար մարդկանց։

Օրինապաշտության հակադրությունը antinomianism (հականոմիզմի) ծայրահեղությունն է։ Անտինոմիանիզմը հունարեն տերմին է, որը բաղկացած է երկու արմատից՝ anti, որը նշանակում է հակառակ և nomos՝ օրենք։

Համակցված արտահայտում է անօրինականության գաղափարը։ Ճշմարիտ է, որ քրիստոնյան փրկված է միայն շնորհով, և ոչ թե բարի գործերով կամ արարքներով, սակայն այս ճշմարտությունը մեզ չի ազատում բարոյական և հոգևոր պարտավորություններից։ Գործնականում օրինախախտն ու օրինատյացն ասում է. «Քանի որ, որտեղ մեղքը շատացավ, այնտեղ շնորհը շատ է, ինչո՞ւ չմեղանչեմ առավել եւս, որ ավելի շատ շնորհ ստանամ։ Որովհետեւ ես շնորհի տակ եմ, ես պարտավոր չեմ ենթարկվել որևէ էթիկական կամ բարոյական չափանիշի։ Ես ազատվել եմ պատասխանատվության բեռից։ Սերը ծածկում է ամեն ինչ»։ Որքան էլ անտրամաբանական (և անիրագործելի) թվա, սա որոշ քրիստոնյաների մտածելակերպն է։ «Ինձնից որևէ լուրջ նվիրվածություն կամ անձնազոհություն մի պահանջեք։ Ես չեմ ցանկանում ծանր հոգևոր բեռներով ծանրաբեռնել որևէ մեկին, քանի որ դա հանգեցնում է հնաոճության և օրինապաշտության, իսկ ես շնորհի տակ եմ»[7]։

Հատկանշական է, թեև Ջոն Ուեսլին օրինապաշտ չէր, նա կարծում էր, օրինատյացությունն ավելի վտանգավոր է, քան օրինապաշտությունը և դա համարում էր ամենաստոր հերետիկոսությունը, քանզի այն արժեզրկում է կատարյալ սերը։ Սերն առանց սրբության ամենաթողություն է, իսկ սրբությունն առանց սիրո՝ անողորմ։

1751 թվականին Ջոն Ուեսլին նամակ գրեց ընկերոջը, ըստ շատերի ի պատասխան այն մեղադրանքներին, թե իր քարոզչությունը կա՛մ չափազանց օրինապաշտ է, կա՛մ չափազանց

[7]Ուեսլիի հետ զրույցում, գիտնական,դոկտոր Քլիֆ Սանդերսը մի հետաքրքիր նկատառում արեց օրինապաշտության և օրինատյացության հետ կապված հետ. «Հիսուն տարի առաջ օրինապաշտությունը ավետարանական եկեղեցիների համար մեծ մարտահրավեր էր։ Այսօր օրինատյացությունն է ավելի մեծ վտանգ ներկայացնում և շատ երիտասարդների, ովքեր մեծացել են եկեղեցում չեն հետևում սրբության հանուն կեղծ սիրո։

թույլատրելի (օրինատյաց)։ Նրա պատասխանը ուսանելի էր. «Ես խորհուրդ չէի տա քարոզել օրենքը առանց Ավետարանի կամ Ավետարանն՝ առանց օրենքի։ Անկասկած, երկուսն էլ պետք է քարոզվեն ճիշտ հերթականությամբ՝ երկուսը միանգամից կամ երկուսը մեկում»։ Ուեսլին բացատրում է շարունակելով՝ «Աստված սիրում է քեզ, ուստի սիրիր և հնազանդվիր նրան։ Քրիստոսը մեռավ քեզ համար, ուստի մեռի՛ր մեղքին։ Քրիստոս հարություն է առել, ուստի դու էլ հարություն առ Աստծո պատկերով։ Քրիստոս հավիտյան ապրում է, ուստի ապրիր Աստծո համար, մինչեւ որ ապրես Նրա հետ փառքով . . . Սա է Աստվածաշնչյան ուղին, Մեթոդիստական ուղին, ճշմարիտ ուղին։ Աստծո ողորմությամբ չշեղվենք ոչ աջ, ոչ ձախ»[8]։
Այսպիսով, մեր փրկությունն ու հոգևոր աճը Ա՞ստծո գործն են թե մե՞ր։ Պողոսը հստակեցնում է. դա «կամ/կամ» չէ, այլ «և՛/և՛» է։ Փրկությունը Աստծո գործն է սկզբից մինչև վերջ։ Մենք գտնված, փրկված, սրբագործված և զորացված ենք Աստծո շնորհով։ Բայց մենք նաև կանչված ենք ամեն ջանք գործադրել Սուրբ Հոգու հետ համագործակցելու համար (Ղուկաս 13.24; Փիլիպ. 2.12–13; 2 Տիմոթ. 2.15; Եբր.12:14; 2 Պետրոս. 1:5–7; 3:13–34)[9]։
Շնորհը և՛ ներման, և՛ զորության համար է։ Այսպես զորացնող շնորհը նպաստում է աստվածա-մարդկային համագործակցությանը։ Աստված նախաձեռնում է, մենք արձագանքում ենք։ Աստված կանչում է, մենք լսում ենք։ Աստված առաջնորդում է, մենք հնազանդվում ենք։ Աստված հզորացնում է, մենք գործում ենք։ Ուեսլին ասել է. «Նախ՝ Աստված գործում է, հետևաբար դու կարող ես գործել։ Երկրորդ, Աստված գործում է. ուստի դու պետք է գործես»[10]։

ԱԶԱՏ ԿԱՄՔԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Այս գլխի թեման զորացնող շնորհն է։ Այն շնորհը, որը զորացնում է մեզ հնազանդվելու Աստծո կամքին և ապրելու սուրբ կյանքով։ Նոր Կտակարանի Հուդայի գիրքը այս շնորհին վերաբերում է որպես Աստծո զորության, որ կարող է անարատ պահել մեզ եւ վերջին օրը անարատ կանգնեցնել Աստծո փառքի առաջին անբիծ ցնծությունով։ Նման հայտարարությունը շատ կարևոր ճշմարտություն է հաղորդում մեզ աշակերտության մասին՝ մենք կարող ենք ընկնել շնորհից, բայց Աստծո զորացնող շնորհը մեզ պահում է։
Կար ժամանակ, երբ մի քանի բարի մտադրություն ունեցող Սրբության քարոզիչներ ասացին, որ երբ անձը սրբագործվում է, ապա այլևս երբեք չի մեղանչում։ Այս հայտարարությունը մեծ շփոթություն և տարակուսանք առաջացրեց անկեղծ քրիստոնյաների մեջ, ովքեր զգույշ էին Տիրոջ հետ իրենց քայլքում և ովքեր բացահայտել էին, որ ոչ միայն հնարավոր է սայթաքել և ընկնել, բայց որ դա որոշակի հաճախականությամբ է տեղի ունենում։ Պարզապես պնդումը ճշմարտացի չէ, քանի որ մեր ազատ կամքը երբեք չի չեղարկվում։ Ազատ կամքը մնում է ընդմիշտ հավատացյալի կյանքում, քանի որ այն անհրաժեշտ է հարաբերությունների մեջ։ Սերը հարաբերական է, և ընտրությունը ցանկացած առողջ հարաբերության անհրաժեշտ բաղադրիչն է։ Փաստացի Աստծո պատկերը դրոշմված է մեզ վրա, և այն վերականգնվում է Քրիստոսի լիությամբ, որն էլ հենքն է սիրառատ և սուրբ հարաբերությունների։

---

[8] Ջոն Ուեսլի, «Նամակ Քրիստոսի մասին քարոզելու մասին», *Կարդապետ Ջոն Ուեսլիի գործերը*, Հատոր 6.
[9] Տե՛ս գլխի 2-ի շեշտադրումը «աշխարհում գործել այնպես, ինչպես Աստված գործում է մեզանում»։
[10] Ջոն Ուեսլի, «Քարոզ 85. Գործելով մեր փրկությունը», III.2, http://wesley.nnu.edu/john-wesley/the-sermons-of-john-wesley-1872-edition/sermon-85-onworking-out-our-own-salvation/

Աշխարհի արարման պատմությունը Ծննդոց գրքում լույս է սփռում իրականության վրա։ Ինքնիշխան Աստծո Խոսքով արարվում է ամեն բան։ Աստված ասաց՝ «Թող լինի . . . »։ Աստծո իշխանությունը բացարձակ է և նրա տիրապետությունը անզուգական, սակայն, մարդկային ազատությունը, զարմանալիորեն միահյուսված է արարչագործությանը։ Հաշվի առնելով Աստծո անզուգական զորությունը՝ ստեղծելու և պահպանելու, այս ազատությունն անսպասելի է, քանի որ, ինչպես մենք հետագայում տեսնում ենք, մարդիկ ոչ միայն կարող էին ընտրություն կատարել, այլև նրանց ընտրությունները կարող էին դրական կամ բացասական ազդեցություն ունենալ Աստծո արարչագործության վրա։ Ամենազոր Մեկը մեծ վտանգի է դիմում՝ մեր ընտրություններին նշանակություն տալով։

Առաջին դրախտում՝ «Եւ Եհովայ Աստուածը պատուիրեց մարդին ասելով, Պարտէզի ամէն ծառիցը համարձակ կեր. Բայց բարիի եւ չարի գիտութեան ծառիցը մի ուտիր. Որովհետեւ նորանից կերած օրդ մահով պիտի մեռնիս» (Ծնն. 2.16–17)։ Ընտրելու իշխանությունը տրված էր պատվիրանի մեջ։ Կարելի է կարծել, որ սա անարդարություն է Աստծո կողմից։ Ի՞նչու է Աստված պատվիրան տալիս՝ իմանալով, որ պատվիրանը լսելու պահից մենք սկսելու ենք մտածել միայն այն շրջանցելու մասին։ Արդյո՞ք սա գայթակղություն էր։ Ո՛չ, Աստված չի գայթակղում։ Աստված ընտրության հնարավորություն է տալիս։ Երկուսը նույնը չեն։ Պատվիրանի պարագայում կա ազատ կամքի դրսևորում (կամ ազատագրված կամք)[11]։ Ազատագրված կամքն անհրաժեշտ է, որպեսզի հարաբերությունները սիրառատ լինեն։

Եթե կնոջս ստիպեին սիրել ինձ և նա այլընտրանք չունենար, մենք կունենայինք հարաբերություններ, բայց դա չէր կոչվի ամուսնություն։ Ի՞նչու։ Որովհետև, եթե ես լիակատար վերահսկողության տակ լինեի, դա սեր չէր լինի, այլ ռոբոտացված հարաբերություններ, որտեղ չկա կամքի դրսևորում։ Առողջ ամուսնություն ունենալու միակ ճանապարհը ազատ ընտրության հնարավորությունն է։ Այստեղ կա նաև վտանգ, որ նա կարող էր չընտրել ինձ սիրելը։

Երբ Աստված ստեղծեց մարդկանց, նա նրանց դրեց մի գեղեցիկ պարտեզում, որը լի էր կյանքով և բարությամբ։ Դա Աստծո կողմից նախաձեռնված և տրամադրված շնորհ էր՝ մարդը ոչ մի ձեռնարկ չուներ այդտեղ։ Բայց Աստված նրանց չդարձրեց ռոբոտներ, որոնք պետք է կատարեին Իր կամքը։ Նրանք կարող էին ընտրել չարի կամ բարու միջև։ Նրանք ունեին Աստծուն սիրել կամ չսիրելու ընտրություն։ Կարծես Աստված ասում էր. «Քո հնազանդությունը ընտրություն է։ Ես ուզում եմ, որ այս հարաբերությունները հիմնված լինեն սիրո վրա, ոչ թե վերահսկողության»։ Աստված մեզ ազատ կամք է տալիս ոչ այն պատճառով, որ մենք գայթակղվենք, այլ որ մենք լինենք ընտրություն կատարողը։ Միայն կամային հարաբերություններն են արմատացած սիրո մեջ։

Սերեն Կիրկեգորը հավատում էր, որ հանձնված կամքը մաքուր սրտի նշան է։ «Մաքուր սիրտը մեկ բան է *կամենալ*»։ Մաքուր սրտի հակառակը երկմտությունն է, որն արտացոլվում է նաև կամքի մեջ։ Պատասխանը, թե արդյոք ամբողջությամբ սրբացածները կարող են երբևէ նորից մեղք գործել, այո է։ Հնարավոր է շնորհից ընկնել, որովհետև մարդը միշտ ազատ է

[11] Մ.Բ. Ուինքոփը հիշեցնում է մեզ, որ Ջոն Ուեսլիի հիմնական շեշտադրումն ավելի շատ ազատ շնորհի, քան ազատ կամքի վրա էր։ Հետևաբար, նրանք, ովքեր Վեսլեյան ավանդույթի մեջ են ավելի շատ շեշտադրում են «ազատագրված կամքը», որն արձակված և զորացված է Սուրբ Հոգով, որը հնարավորություն է տալիս մարդուն դավանել Հիսուս Քրիստոսին։ փրկությունն Աստծունն է՝ միայն շնորհով։ Ուինքոփ, Ուեսլեյան աստվածաբանության հիմքերը (Կանզաս Սիթի, MO։ Կանզաս Սիթիի Beacon Hill Press, 1967), 69։

հնազանդվելու Աստծուն կամ սատանային։ Հանուն սիրո ընտրություն կատարողները միշտ մենք ենք լինելու։ Զորացնող շնորհով մենք զորություն ունենք դեմ կանգնելու մեղքին։ Զորացնող շնորհով մենք կարող ենք ասել այո Աստծուն և ոչ՝ գայթակղությանը։ Մեր հավատքը պաշտպանված է Աստծո զորությամբ՝ կենդանի հույսով առ Քրիստոսի հարություն (1 Պետ. 1:3–4)։

Պողոսն խոստովանում է, որ Հոգին ընդունելուց առաջ ինքը մեղքի ստրուկ էր. «Քանզի ոչ թէ բարին՝ որ կամենում եմ, անում եմ. Այլ չարը՝ որ չեմ կամենում, այն եմ գործում» (Հռոմ. 7:19)։ Նա հայտնվել էր արատավոր շրջանի մեջ, քանի որ չէր ցանկանում, սակայն չէր կարողանում չմեղանչել։ «Ես ի՜նչ խեղճ մարդ եմ. Ո՞վ կ'ապրեցնէ ինձ այս մահի մարմնիցը» (7:24)։ Բայց Սուրբ Հոգու իշխանությունն ընդունելուց հետո, նա կարող է ասել այո Աստծուն և ոչ գայթակղությանը՝ «Շնորհակալ եմ Աստուածանից մեր Տէր Յիսուս Քրիստոսի ձեռովը.... Որովհետեւ կեանքի հոգու օրէնքը Յիսուս Քրիստոսումն՝ ազատեց ինձ մեղքի եւ մահի օրէնքիցը» (7:25ա; 8:2)։ Սուրբ Հոգուց անջատ մեր մարդկային կամքը թույլ է և անզոր հնազանդվելու, իսկ Սուրբ Հոգով մենք զորացած ենք հնազանդվելու։ Այնպես չէ, որ սրբացածները երբեք մեղք չեն գործում, բայց այժմ մենք զորություն ունենք չմեղանչելու։ Տարբերությունն այն է, որ Աստծո զորացնող շնորհը մեզ հետ է պահում անկումից։

Հավատարմությունը հիմնված է հավատքի և լիության վրա։ Ինչպես Ուեսլին է ասել՝ Սուրբ Հոգին կոփում է մեր կամքը, որպեսզի «ամեն բարի ցանկություն՝ կապված մեր բնավորության, խոսքերի կամ գործողությունների ուղղված լինի դեպի ներքին և արտաքին սրբության»[12]։

ԶՈՐԱՑՆՈՂ ՇՆՈՐՀԸ ՈՐՊԵՍ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄ

Աշակերտության մասին իր անչափ օգտակար և համապարփակ «Հավատալուց հետո» գրքում, Ն. Թ. Ռայթը ներկայացնում է, թե ինչպես է կերտվում Քրիստոսանման բնավորությունը մարդկանց մեջ և եկեղեցիներում։ Նա դա նկարագրում է որպես երկարատև, բայց շնորհի մեջ աճելու հաստատուն ընթացք։ Անձի կյանքում ձևավորված հոգևոր կարգապահություններն ու սովորություններն ավելի Քրիստոսանման են դարձնում նրան։ Հայրերը բնավորության կերտումն անվանել են «առաքինություն»։

Ռայթը սկսում է գիրքը՝ վերապատմելով կապիտան Չեսլի Սալենբերգերի իրական պատմությունը, որն ավելի հայտնի է որպես «Սալլի»։ Նյու Յորքում սովորական հինգշաբթի կեսօր էր, 2009թ. հունվարի 15-ը։ Դեպի Խառլոտ ուղևորվող ինքնաթիռը օդ էր բարձրացել ժամը 15:26-ին։ Սալին էր օդաչուն։ Նա կատարեց բոլոր սովորական ստուգումները, և ամեն ինչ նորմալ էր թվում, մինչև թռիչքից ընդամենը երկու րոպե անց ինքնաթիռը բախվեց կանադական սագերի երամին։ Երկու շարժիչներն էլ լրջորեն վնասվեցին։ Ինքնաթիռն ուղղություն էր վերցրել դեպի հյուսիս՝ Բրոնքս՝ քաղաքի ամենախիտ բնակեցված հատվածներից մեկը։ Սալին և նրա օդաչուն պետք է արագ որոշում կայացնեին, քանի որ 150 ուղևորի կյանք կախված էր նրանցից։

[12] Ջոն Ուեսլի, «Քարոզ 85. Գործելով մեր փրկությունը», III.2

Ամենամոտ փոքր օդանավակայանները շատ հեռու էին և միակ տարբերակը վայրէջքն էր Հադսոն գետի վրա: Սալին և նրա օդաչուն երեք րոպեի ընթացքում կարողացան արագ կողմնորոշվել և բարեհաջող վայրէջք կատարել[13]:

Շատերն ասում էին, որ դա հրաշք էր, և ինչ-որ չափով, այդպես է: Բայց ո՞րտեղ էր հրաշքը: Հրաշքները շատ տարբեր են լինում: Արդյո՞ք հրաշքը Աստծո գերբնական պաշտպանող և առաջնորդող ձեռքն էր: Դա, իհարկե, հնարավոր է: Կարող ենք այլ տեսանկյունից նայել այս ամենին: Հնարավոր է նաև, որ հրաշքը Սալիի առաքինությունն էր, որը նրան օգնեց արագ կողմնորոշվել նման իրավիճակում: Հնարավոր է դժվարանում եք նման իրավիճակում օգտագործել առաքինություն տերմինը, քանի որ այն «լավ»-ի կամ «բարի»-ի հոմանիշ չէ:

Ռայթը պնդում է, որ առաքինությունը, բառի ամենախիստ իմաստով, այն է, ինչ տեղի է ունենում, երբ ինչ-որ մեկը հազարավոր փոքր ընտրություններ է կատարում բարին գործելու համար, որոնք պահանջում են ջանք և կենտրոնացում, և որը «բնականաբար չի ստացվում», և հազար ու մեկերորդ անգամը արդեն նա իր ընտրությունը կատարում է մեխանիկորեն[14]:

Այլ կերպ ասած, երբ ինչ-որ բան կարծես թե «պատահում է հենց այնպես», մենք սկսում ենք ընկալել, որ դա «հենց այնպես» չի տեղի ունենում: Ինչպես նշում է Ռայթը, եթե մեզանից որևէ մեկը այդ օրը վարեր ինքնաթիռը և վարվեր բնական կերպով, ապա այն կբախվեր երկնաքերին: Առաքինությունը՝ նպատակաուղղված բնավորության ձևավորումը, աշակերտության և շնորհի մեջ աճելն է և ավելի ու ավելի Հիսուսին նմանվելը: Դա նաև այն է, ինչ տեղի է ունենում, երբ իմաստուն և խելամիտ ընտրությունները սկսում են կրել երկրորդ բնույթ: Սալին չի ծնվել կոմերցիոն ինքնաթիռ վարելով, ոչ էլ այն բնավորության գծերով, որոնք բացահայտվեցին կարճ ժամանակում, ինչպես քաջությունը, հաստատակամությունը, արագ կողմնորոշում և անձնուրացություն ուրիշների ապահովության համար: Սրանք ձեռք բերված հմտություններ և հատկություններ են, որոնք պահանջում են հատուկ պրակտիկա և կրկնություն ժամանակի ընթացքում, մինչև արդեն մեր գործողությունները դառնում են բնական, այնքան արմատացած մեր մտքում, որ մեր մկանային հիշողությունը արձագանքում է մեխանիկորեն և մենք չունենք մտածելու կարիք: Սա երկրորդ բնույթն է:

Չեմ ցանկանում վիրավորել իմ օդաչու ընթերցողներին, բայց եթե ես լինեի այդ ինքնաթիռի ուղևորը, ես չէի ցանկանա, որ օդաչուն պարզապես աներ այն, ինչ ինքստինքյան է ստացվում: Քանի որ օդաչուների դպրոցում նրանց ովորեցնում են հետևել ընթացակարգին արտակարգ իրավիճակներում, իսկ նախքան նրանք կկարողանային արձագանքել ճգնաժամին, որի հետ նախկինում երբեք չէին բախվել, արդյունքը կարող էր շատ տարբեր լինել: Գիտելիքը բավարար չէ, ոչ էլ ջղաձգությունն ու վճռականությունը: Ո՛չ, Ռայթը ընդգծված պնդում է, որ այդ ճգնաժամային պահին անհրաժեշտ էր գործնական առաքինություն, որը դարձել էր երկրորդ բնույթ՝ բնավորության վերափոխում, որը «ձևավորվում է իմացության հատուկ ուժեղ կողմերով, այսինքն՝ ինքնաթիռ վարելու «առաքինություններով»[15]: Ես կավելացնեի այդ ինքնաթիռը, որը Սալլին ուսումնասիրել էր մանրամասնություններով:

«Երկրորդ բնության» գաղափարը գրավում է իմ ուշադրությունը, հատկապես աշակերտության, սրբության և շնորհի ճանապարհորդության հետ կապված: Շատերը կհամաձայնվեն, որ այնպիսի հատկություններ, ինչպիսիք են քաջությունը, տոկունությունը,

---

[13] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո: Ի՞նչու է քրիստոնեական բնավորությունը կարևոր (New York: HarperCollins, 2010), 18–20.

[14] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 20

[15] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 21

զսպվածությունը, իմաստությունը, լավ դատողությունը, և համբերությունը մեզ համար բնական չեն: Մենք սովորում ենք նման բաներ և դրանք արմատանում են մեր մեջ ցավալի և դժվարին փորձառությունների միջոցով, բայց դրանք զտում են մեր բնավորությունը: Նոր Կտակարանում հանդիպող, և Ռայթի կողմից սահմանված, «մտածելու և գործելու օրինաչափությունն է, երբ անձը ցանկացած վայրում և իրավիճակում նույնն է»[16]:

Հակառակը, իհարկե, կեղծավորությունն է: Շատերը կարող են ներկայանալ որպես ազնիվ, բարի, դրական, բայց որքան շատ եք ճանաչում նրանց, այնքան ավելի են երևում նրանց իրական գույները և դուք հասկանում եք, որ նրանք պարզապես լավ դիմակ են կրում: «Երբ բախվում են ճգնաժամի, նրանք դառնում են անազնիվ, գռեհիկ և անհամբեր »[17]: Ո՞րն է խնդիրը: Նրանք պարզապես անում են այն, ինչ բնական է. նրանք բավականաչափ գիտակ են, որպեսզի հասկանան ինչպես է պետք դրսևորեն իրեցշնց, սակայն նրանց երկրորդ բնությունը փոխված չէ և անսպասելի իրավիճակներում նրանք իրենց իրական բնույթն են ցուցադրում: Մարդու կերպարը ոչ թե ստեղծվում, այլ երևում է ճգնաժամի մեջ: Երբ մենք ժամանակ չենք ունենում կշռադատելու երևում է մեր իրական ես-ը:

Հ. Ռեյ Դանինգը ցույց է տվել, թե ինչպես են Ուեսլիի տասնութերորդ դարի որոշ տերմիններ տարբերվում ժամանակակից գործածությունից: Օրինակ, քանի որ դա վերաբերում է ազատ կամքի մասին մեր քննարկմանը, «ազատություն» արտահայտությունն էր, որը նա օգտագործում էր ընտրության ազատության համար, մինչդեռ «կամք» տերմինն էր, որը նա օգտագործում էր «հաստատում» կամ հակումներ բառերի համար, որոնք դրդում են մարդուն որևէ գործողության: Հաստատումները չեն վերաբերում այն զգացմունքներին, որոնք անցողիկ կամ փոփոխական են: Նրանք ավելի խորը իմաստ ունեն, թե ինչու է մարդը որոշակի ընտրություն կամ գործողություններ կատարում: Հակումների (հաստատում) հետ սերտորեն կապված էր Ուեսլիի կողմից «խառնվածք» տերմինի օգտագործումը:

Խառնվածք բառը տասնութերորդ դարում չէր նշանակում, որ մարդը դյուրագրգիռ էր կամ բարկացկոտ: Ավելի շուտ, այն ավելի շատ համահունչ է մերօրյա «բնավորություն» բառին: Ուեսլին օգտագործեց խառնվածքը բառը որպես «մարդու տեւական կամ սովորական տրամադրվածության» զգացում[18]: Կամ ավելի ճիշտ, այն մարդկային հակումները, որոնք կենտրոնացած են և վերածվում են մարդու բնավորության մնայուն կողմերի, որոնք մշակվում են շնորհի միջոցով, այլևս ժամանակավոր չեն, այլ երկարաժամկետ և կայուն առաքինություններ և, մշակված արդար մտադրությամբ և «սուրբ բնավորությամբ»:

«Սուրբ բնավորություն»-ը հաճախակի օգտագործվող արտահայտություն էր Ուեսլիի աշակերտության մասին ուսմունքում, հատկապես նրա Հոգու Պտուղի մասին մտորումներում: «Ընդհակառակը, Հոգու պտուղը սերն է, ուրախությունը, խաղաղություն, համբերություն, բարություն, առատաձեռնություն, հավատարմություն, հեզություն և ինքնատիրապետում» (Գաղ. 5.22–23): Այս տեքստի մի քանի կողմերն արժանի են ընդգծման: Նախ Ուեսլին շտապեց նշել, որ պտուղը եզակի է, ոչ հոգնակի («պտուղներ»): Եթե հոգնակի լիներ, անձը կարող էր գայթակղվել և կենտրոնանալ մի պտուղի վրա ավելի քան մյուսի. կարծես հավատարմությունը կարող էր ավելի բարձր դասվել քան առատաձեռնությունը: Պտուղը որպես միասնական ամբողջություն վկայում է, որ Աստծո Հոգին գործում է: Նրանք անկախ բնութագրեր չեն:

---

[16] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 27

[17] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 27

[18]Ռենդի Մեդոքս, *Պատասխանատու շնորհ, Ջոն Ուեսլիի գործնական աստվածաբանություն* (Նեշվիլ. Քինգսվուդ, 1994), 69.

Այնուհետև, երբ մենք աճում ենք, Պտղի բոլոր ինը տեսակները միասին ցույց են տալիս, թե ինչպիսին է այն կյանքը, որը Սուրբ Հոգին վերահսկում է: Ն. Տ. Ռայթը մատնանշում է. «Պողոսը չի նախատեսում մասնագիտացում»[19]: Ինչպես դեղձն է տարբերվում որպես պտուղ այնպես էլ Հոգու պտուղը՝ սուրբ բնավորությամբ, որը դրսևորվում է մարդու կյանքում: Զարմանալի չէ, որ Ուեսլին շտապեց ավելացնել, որ սերը գլխավորում է ցանկը, քանի որ բոլոր ինը սիրո դրսևորումներ են: Այնուամենայնիվ, շնորհի ճամփորդության ընթացքում այս բոլոր հատկանիշները կդրսևորվեն մեր կյանքում:

Թերևս ամենակարևորը շնորհի ճանապարհորդության համար հասկանալն է, որ այդ սուրբ հակումներն ակնթարթորեն չեն փոխանցվում: Փոխարենը, ինչպես բացատրում է Ռենդի Մեդոքսը, «Աստծո վերականգնող (փրկող) շնորհը հավատացյալների մեջ արթնացնում է նման առաքինությունների «սերմերը»: Այս սերմերը այնուհետև ամրանում և ձև են ստանում, երբ մենք «շնորհի մեջ աճում ենք»: Ազատություն շնորհող այս աճը ենթադրում է պատասխանատու համագործակցություն, քանի որ մենք հակված ենք անտեսելու Աստծո ողորմած զորությունը»[20]: Մեդոքսի բացատրությունը հավելյալ բացատրության կարիք ունի: Բայց այստեղ է առաջնային գաղափարը, որ մենք չպետք է անտեսենք առաքինությունը, այլ այն պետք է սնուցվի և աճի:

Աստծո շնորհով մենք փրկվեցինք և սրբագործվեցինք, և մեզ հնարավորություն է տրվել սկսել մեր Քրիստոսին նմանվելու ընթացքը՝ արդարության սերմերը տնկված են: Աննկարագրելի է շնորհը, որը մեզ տալիս է ազատություն՝ թողնելու մեղքի և սեփական շահերի կյանքը, որպեսզի մենք կարողանանք սիրել Աստծուն մեր ամբողջ սրտով, հոգով, ուժով և մտքով: Բայց երեք մնայուն առաքինություններ՝ հավատք, հույս և սեր (Ա Կորնթ. 13:13) և Հոգով լցված կյանքից բխող Պտուղը տրված են և աճելու ենթակա են: Հոգու պտուղը հանկարծակի չի հայտնվում, ոչ էլ, ինչպես նշում է Ռայթը, «ինքնաբերաբար աճում է»: Կան, անկասկած, նախնական խոստումնալից հանգամանքներ Պտուղի աճի համար: «Շատ նոր քրիստոնյաներ, հատկապես, երբ հանկարծակի դարձը նշանակում է կտրուկ հեռացում «մարմնի գործեր»-ով լի ապրելակերպից հայտնում են իրենց իսկ զարմանքը, երբ նրանց մեջ բխում է սիրելու, ներելու, մաքուր լինելու մղումը: Հարցնում են, թե որտեղի՞ց այս ամենը: Ես նախկինում այսպիսին չէի: Դա հրաշալի բան է, հաստատ նշան, որ Հոգին գործում է»[21]:

Այս անհավանական «հակումների» փոփոխությունները մաքուր նվեր են շնորհի կողմից: Սակայն նոր քրիստոնյան չի կարող պասիվանալ: Նրանց պետք է պարզել, թե ինչպես է Աստված աշխատում նրանց մեջ: Նույն շնորհը, որ հնարավոր դարձրեց այս «հակումների» փոփոխությունները, այժմ պետք է վերածվի «սուրբ բնավորության», լի նոր սովորություններով և փորձառություններով: Կրկին, Ռայթը հստակորեն նշում է այս միտքը աշակերտական եռանդուն երևակայությամբ. «Սրանք [նոր ցանկությունները] բողբոջում են. որպեսզի որպես այգեպան տեսնեք ձեր պտուղը: Դուք պետք է բացահայտեք, թե ինչպես խնամել և էտել, ինչպես ոռոգել դաշտը, ինչպես հեռու պահել թռչուններին ու սկյուռներին: Դուք պետք է հետևեք բորբոսին, կտրեք մոլախոտը և այլ մակաբույծներին, որոնք ծծում են կյանքը ծառից և պետք է

[19] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 195

[20] Ռենդի Մեդոքս, «Վերամիացնել միջոցները մինչև վերջ. Ուեսլեյան դեղատոմս. սրբության շարժման համար», *Ուեսլեյան Աստվածաբանական ամսագիր*, h. 33, No 2 (1998 թ. աշուն), 41:

[21] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 195-96

համոզված լինեք, որ երիտասարդ բունը կարող է ամուր կանգնել ուժեղ քամիների ժամանակ. Միայն այդ դեպքում պտուղը կհայտնվի»[22]:
Բողբոջներն, անշուշտ, նշան են, որ «Քրիստոսը փառաց Հույսը ձեր մեջ է» (Կող. 1:27), բայց հասուն, Քրիստոսանման մարդու իրական պտուղը՝ բնավորությունը, ստանալու համար, մենք պետք է դառնանք այգեպաններ: Այժմ սերմերը պետք է սկսեն պտուղ տալ: Հանձնված հակումները ծնում են սուրբ բնավորություն, նոր տրամադրվածություն, որը ծնում է Քրիստոսանման մտածողություն և երկրորդ բնությանը հատուկ գործողություններ[23]: «Իմ Հայրը փառավորվում է նրանով, որ դուք շատ պտուղ եք բերում և դառնում իմ աշակերտները» (Հովհաննես 15.8): Բողբոջները դառնում են պտուղ, սերմերը դառնում են առաքինություն: Աստծո զորությունը դառնում է զորացնող շնորհ:

ԱՐԱՏ ԵՎ ԱՌԱՔԻՆՈՒԹՅՈՒՆ

Պողոսը Կորնթոսի քրիստոնյաներին հորդորում է. «Քննեք ձեր անձերը, թէ արդեօք հաւատքո՞ւմն էք. Քննեցէք ձեր անձերը. Կամ թէ չ՚գիտէ՞ք ձեր անձերը՝ որ Յիսուս Քրիստոսը ձեզանում է. միայն եթէ անպիտան լինիք։Քննեք ձեզ» (2 Կորնթ. 13:5): Իր սովորության համաձայն Յուջին Պետերսոնը բառափոխ է անում. «Փորձեք ինքներդ ձեզ, որպեսզի համոզվեք, որ ամուր եք հավատքի մեջ: Մի շեղվեք անփութության պատճառով: Կանոնավոր կերպով քննեք ձեր անձերը: Հավատքով մոտեցեք այն իրականությանը, որ Քրիստոս ձեր մեջ է: Եթե ձախողվեք Տիրոջ շնորհով նորից սկսեք» (հհ. 5–9):
Առողջության կանոնավոր ստուգումները միշտ ավելի լավ են, քան սրտի կաթվածները: Վաղ հայտնաբերված խնդիրը հաճախ բուժելի է: Աստվածաշնչում քառասունօրյա ժամանակաշրջանը ճանաչվել է որպես նախապատրաստման, մաքրագործման և հոգևոր քննության ժամանակաշրջան[24]: Սրբության ավանդույթի համաձայն, հավաքների և ճամբարներիի նպատակը անձնական և հավաքական հոգևոր առողջության ստուգումն է: Ինչպես նշում է Պողոսը կորնթացիներին ուղղված նամակում, հոգևոր աճը պահանջում է հոգևոր առողջություն: Ուեսլիի համոզմամբ փոքր հաշվետվողականության խմբերում («աշակերտական հանդիպումներ», ինչպես ինքն է անվանել դրանք) պետք է ունենալ հոգևոր առողջության ստուգումների կարգապահություն:
Որո՞նք են սրտի հոգևոր հիվանդության նախանշանները: 6-րդ դարի եկեղեցին դասակարգել է այդ նախանշանները որպես «մահացու մեղքեր» կամ «մահացու արատներ»: Ինչպես բարձր խոլեստերինը նախազգուշացնում է սրտի համար, այս նշաններն էլ ցուցիչներ են անառողջ աշակերտության, և եթե դրանք լուծում չստանան, կարող են հանգեցնել հոգևոր մահվան: Թեև ավելի հայտնի են արատները որպես յոթ մահացու մեղքեր, սակայն եկեղեցու կողմից արատավորության մասին ըմբռնումը ավելի ընդգրկուն է և ներառում է հետևյալը.

---

[22] Ն.Թ. Ռայթ Հավատալուց հետո, 196

[23] «Ուեսլիի սուրբ գործողությունների լեզուն, որը «բխում է» սուրբ բնավորությունից, հուշում է, որ նա կողմնակից էր այն գաղափարին, որ արմատացած զգացմունքներից բխում են մարդկային արարքների «ազատություն»-ը: Ազատություն, որը գալիս է կարգապահ պրակտիկայից (օրինակ՝ Բախի կոնցերտ նվագելու ազատությունը): Մեդոքս, Պատասխանատու Շնորհ, 69.

[24] Այստեղից է գալիս պահեցողության գաղափարը քրիստոնեական օրացույցի մեջ

Հպարտություն. Անձդ Աստծո տեղը դնելը, հրաժարվելը ճանաչել կախվածությունն Աստծուց և Նրա կողմից արարված լինելը

Անպատկառություն. Աստծո պաշտամունքի կանխամտածված անտեսում կամ դրան մասնակցության ծաղր: Դրսևորված ցինիզմ դեպի սրբություն կամ քրիստոնեության օգտագործումը հանուն անձնական շահի:

Զգացմունքայնություն. բավարարվածություն բարեպաշտ զգացմունքներով և գեղեցիկ արարողակարգերով՝ առանց անձնական սրբության ձգտման: Անձնական խաչը կրելու ցանկության բացակայություն: Զգացմունքային հոգևորությունը գերադասվում է անձնուրացությունից:

Անվստահություն. Հրաժարում ճանաչել Աստծո իմաստությունն ու սերը: Անհարկի անհանգստություն, վախկոտություն, երկչոտություն: Անձնական կյանքը վերահսկելու օրինապաշտական փորձեր:

Անհնազանդություն. Աստծո հայտնի կամքի մերժում, հրաժարում ճանաչել Աստծո էությունը, ինչպես բացահայտված է Սուրբ Գրքում: Անպատասխանատվություն, դավաճանություն և անհարկի հիասթափություն: Իրավական կամ բարոյական կանոնների խախտում.

Անզգոջություն. Մերժել Աստծո առաջ սեփական մեղքերի խոսոստովանությունը: Ինքնաարդարացում՝ կարծել, որ սեփական մեղքերն աննշան են, բնական կամ անխուսափելի: Հրաժարվել ներողություն խնդրելուց, չհաշտվել մերձավորի հետ կամ չցանկանալ ներել:

Ունայնություն. Անշնորհակալություն, պարծենկոտություն, չափազանցություն, ցուցամոլություն: Անհարկի մտահոգություն «իրերի» նկատմամբ:

Մեծամտություն. Անձը ամբարտավան և կռվարար է, համառ և ինքնասաց:

Վրեժխնդրություն: Աստծո և ուրիշների օգնության մերժում, ապստամբություն և ատելություն Աստծո կամ մարդկանց նկատմամբ, ցինիզմ:

Նախանձ. դժգոհություն Աստծո արարչագործության մեջ մեր տեղից. Դրսևորվում է նախանձով, չարությամբ և արհամարհանքով ուրիշների նկատմամբ:

Ընչաքաղցություն. այլ արարածների իրավունքները հարգելուց հրաժարվելը: Նյութական իրերի կուտակում ինքնարժեքը ապացուցելու համար: Իշխանության բանեցում ուրիշների նկատմամբ:

Ագահություն. բնական ռեսուրսների կամ անձնական ունեցվածքի վատնում, շռայլություն, փառասիրություն կամ ուրիշների անձի նկատմամբ գերիշխանություն:

Որկրամոլություն: Սննդի և խմիչքի նկատմամբ անսպառ ախորժակ, հաճույքի և հարմարավետության անհամաչափ որոնում: Դրսևորվում է անզուսպության և կարգապահության բացակայության մեջ:

Ցանկասիրություն՝ ներառում է անպարկեշտություն, անհամեստություն, դաժանություն; չի ճանաչում ամուսնությունը որպես սեռականության համար Աստծո կողմից սահմանված հարաբերություն:

Ծուլություն՝ անձնային աճի մերժում: Հոգևոր, ֆիզիկական, մտային առումներով անփութություն և ծուլություն: Անտարբերություն շրջապատող աշխարհի և իրադարձությունների նկատմամբ:

Նախազգուշացնող նշանները կարող են լինել աննկատելի, բայց վտանգավոր հոգու համար: Երբ մենք ցանկանում ենք ֆիզիկապես առողջ լինել, մենք փոփոխում ենք մեր կենսակերպը և ըստ մեր նոր նպատակների համապատասխան սննդակարգ ենք մշակում: Երբեմն դեղորայքային միջամտություն է անհրաժեշտ լինում լրացնելու կամ փոխհատուցելու այն, ինչ մեր օրգանիզմը չի կարող իրագործել ինքնուրույն: Ճշմարտությունն այն է, որ մեր մարմիններին անհրաժեշտ են ոչ թե արագ շտկումներ, այլ կանոնավոր և շարունակական ուշադրությունը: Նույն կերպ է գործում աշակերտության կյանքը: Ճիշտ է, չի կարելի պարզապես ազատվել որոշ անառողջ օրինաչափություններից՝ առանց դրանք փոխարինելով օգտակար և արդյունավետ սովորույթներով: Կախվածությունը հաղթահարած անձինք ձեզ կասեն, որ անհրաժեշտ է կախվածությանը փոխարինող այլ բան գտնել: Նմանապես, պետք է լինի մեր շնորհքի ճամփորդությունը կանոնավոր կերպով բարելավելու ծրագիր՝ մեր աշակերտությունը կատարողականը բարձր պահելու համար:

Ո՞րն է մահացու արատներին փոխարինող առաքինությունը: Ո՞րն է զորացնող շնորհի ծրագիրը: Նոր Կտակարանը նույնացնում է բարին Հոգու պտուղի՝ առաքինությունների հետ, որոնք փոխարինում են մեր արատներին ու բնազդներին:: Կանոնավոր, համակարգված ծրագիրը կոչվում է հոգևոր կարգապահություններ: Պրոֆեսիոնալ մարզիկները մարզվում են ոչ թե որտև դա զվարճալի է, այլ նրանք ձգտում են նպատակի: Հոգևոր ստուգումները պարտադիր չէ, որ հասնեն մեծ չափերի, այլ լինեն արդյունավետ: Արատները փոխարինվում են Հոգու Պտուղով, իսկ հոգևոր կատարողականը աճում է հոգևոր կարգապահությունների միջոցով: Սրանք զորացնող շնորհի հիմնական տարրերն են:

ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՇՆՈՐՀԻ ՄԻՋՈՑ

Եբրայեցիներին գրողը գիտակցում է հոգեւոր կարգապահության կարևորությունը: «Եւ ամեն խրատ հէնց նոյն ժամանակին ուրախութիւն չէ երեւում, այլ տրտմութիւն. բայց յետոյ նորանով վարժուածներին արդար խաղաղութեան պտուղ է վճարում:» (12:11): Կարգապահությունը կարող է ունենալ բացասական ենթատեքստ, եթե դիտվում է որպես պատիժ օրինազանցության համար: Սակայն Եբրայեցիների թղթի մեջ կարդում ենք, որ կա կարգապահություն, որը հանգեցնում է զորացման և ուժեղացման: «Եթէ խրատին համբերէք, Աստուած ձեզ հետ ինչպէս որդկանց հետ կ՚վարուի. Որովհետեւ ո՞ր որդին է որ հայրը նորան չէ խրատում: Բայց եթէ առանց խրատի էք, որին ամենը մասնակից եղան, ուրեմն խորթ էք եւ ոչ որդիք» (հ. 7–8):

Հատկանշական է երկու բան. (1) գրողը չի պատկերացնում երեխաների, որոնց համար ծնողական խրատն օգտակար չէ, (2) գրողը պատկերացնում է կարգապահությունը որպես սուրբ սիրո ձև: Երեխային սիրելը ներառում է կարգապահություն. Կեսգիշերին թույլ չտալ երեխային պիցցա ուտել պատժելի չէ, կամ սահմանել հեռուսատցույցից օգտվելու ժամանակ չի նշանակում պատժել նրանց: Իմաստուն ծնողը գիտի, որ սա պատիժ չէ, այլ նրանց ապագայի համար մտահոգութուն: Դա կարող է անարդար թվալ երեխային, սակայն մի օր նրանք կսովորեն գնահատել իրենց սիրող ծնողների կողմից գծված սահմանները, որոնք պաշտպանել են իրենց և օգնել դառնալ և լիարժեք գործող, առողջ մեծահասակներ: Նման ձևերով Աստված խրատում է մեզ դեպի սրբություն: Միգուցե այն ժամանակին հաճելի չթվա, բայց այն սերմեր է տնկում արդար կյանքի ճշմարիտ Պտուղի համար, և մենք պետք է *մարզվենք* դրանում:

Է. Սթենլի Ջոնսը խելամտորեն ասել է. «Դուք չեք կարող փրկության հասնել կարգապահությամբ. դա Աստծո պարգևն է: Բայց դուք չեք կարող պահպանել այն առանց կարգապահության»[25]: Ինչ վերաբերում է կերպարի ձևավորմանը, Օգոստինոսը առաքինության մասին ասել է՝ «լավ սովորությունը մեկանում է մեր բնույթի հետ»:
Ավելին, Ջոնսը որպես օրինակ է բերում Հիսուսի պարզ սովորությունները և Նա շարունակաբար և լիովին կախված էր Աստծուց. «Նա սովորության համաձայն երեք բան էր անում՝ (1)նա սովորությամբ կարդում էր Աստծո Խոսքը: (2)Նա միայնակ աղոթում էր իր սովորության համաձայն: (3)Նա սովորեցնում էր ուրիշներին: Այս պարզ սովորությունները էին նրա կյանքի հիմնարար սովորություններն էին»[26]: Սուրբ սովորությունները առողջ աշակերտների համար են:
Վերադառնալով Ուեսլիի մտածողությանը՝ նա հավատում էր այդ սուրբ բնավորությունը ձևավորվում է քրիստոնյաների մեջ, երբ նրանք մասնակցում են եկեղեցու կյանքին, նա նաև շնորհի միջոցներն անվանել հոգևոր կարգապահություններ:
Շնորհքի միջոցները այն խողովակներն են, որի միջոցով Աստծո փոխակերպող շնորհը, ուղղորդում է մեզ շնորհի ճանապարհորդության ընթացքում:
Ուեսլիի կարծիքով այս միջոցները փոխանցվում են նրա բարեպաշտության գործերի և ողորմության գործերի միջոցով: Բարեպաշտության գործերն առաջին հերթին այն է, ինչ մենք անում ենք Քրիստոսի հետ մեր անձնական հաղորդակցությունը զորացնելու համար: Ողորմության գործերը կապված են այն ամենի հետ, ինչ մենք անում ենք՝ Աստծո ծառայության մեջ ներգրավվելու և աշխարհում մեր առաքելությունն իրագործելու համար: Ինչպես բարեպաշտության, այնպես էլ ողորմության գործերն ունեն անհատական բաղադրիչ (այն, ինչ կարելի է անել միայնակ) և համայնքային բաղադրիչ (ինչ պետք է արվի ուրիշների օգնությամբ): Բարեպաշտության առանձին գործերը ներառում են սուրբ գրությունների շուրջ խորհրդածելը, աղոթք, ծոմապահություն, ուրիշների հետ հավատք կիսելը (ավետարանչություն) և առատաձեռնությունը: Բարեպաշտության համայնքային գործերը ներառում են ընդհանուր պաշտամունքը, մասնակցություն Սուրբ Հաղորդությանը, Քրիստոնեական մկրտություն, միմյանց հանդեպ հաշվետվողականություն (նաև հայտնի է որպես Քրիստոնեական հավաքներ), Աստվածաշնչի սերտողություն և քարոզչություն: Կրկին մենք կատարում ենք հավատքի գործողությունները, ոչ միայն այն պատճառով, որ մենք քրիստոնյա ենք, այլ քանզի դրանք «Հոգով ներարկված գործելակերպեր են, որոնք կբարեփոխեն և վերապատրաստեն ձեր սերը... գործողություններ լի Աստվածակարոտ ծեսերով և սեր ձևավորող պատարագներով», քանի որ այս գործողությունների միջոցով մենք սովորում ենք հագնել Քրիստոսին (տես Կող. 3.12–16)[27]:

---

[25]Է. Սթենլի Ջոնս, Փոխակերպում (Nashville: Abingdon Press, 1991), մեջբերված Ռիչարդ Ջ. Ֆոսթեր և Ջեյմս Բրայան Սմիթ, խմբ., Դասական խորհրդածություններ. Անհատական և խմբակային ընթերցանություն (Englewood, CO: Renovaré, 1990), 281:
[26]Է. Սթենլի Ջոնս, Փոխակերպում (Nashville: Abingdon Press, 1991), մեջբերված Ռիչարդ Ջ. Ֆոսթեր և Ջեյմս Բրայան Սմիթ, խմբ., Դասական խորհրդածություններ 282:
[27] Ջեյմս Ք.Ա. Սմիթ, Դու այն ես, ինչ սիրում ես: Սովորության հոգևոր ուժը (Grand Rapids: Brazos Press, 2016), 68–69:

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՇՆՈՐՀԻ ՄԻՋՈՑ

Խորհուրդների կարևորության մասին մանրամասնությունն օգտակար կլինի շնորհի ճանապարհորդության համար: «Խորհուրդ» բառը ծագել է լատիներենում, որը նշանակում է «սրբացնել, նվիրաբերել» կամ «սրբացնել», որն իր հերթին առաջացել է հունարեն «առեղծված» բառից: Այսինքն՝ բառն ամբողջությամբ նշանակում է «սրբազան խորհուրդ»: Ջոն Ուեսլին պարզության համար փոխառել է հաղորդության իր սահմանումը Անգլիկան Աղոթքի Գրքի կատեխիզմից (որը փոխառված է Օգոստինոսի սահմանումների գրքից) «Ներքին շնորհի արտաքին նշանը և միջոցները նույնն են»[28]: Համատեղելով սուրբ խորհուրդի և միջոցների գաղափարը, Ն. Թ. Ռայթը խորհուրդները նկարագրում է որպես «երբ երկնային կյանքը խորհրդավոր կերպով հատվում է երկրային կյանքի հետ»[29]:

Քրիստոնեական որոշ ավանդույթներ ավելի շատ խորհուրդներ են պարունակում, քան մյուսները: Բողոքականները սովորաբար հետևում են երկուսին՝ մկրտությանը և Եվրարիստին (նաև կոչվում է Տիրոջ ընթրիք կամ Սուրբ Հաղորդություն)[30]:

Ջոն Ուեսլին խստորեն խրախուսում էր «մասնակցել բոլոր ծեսերին (հոգևոր կարգապահություններին)»[31], բայց հատկապես Հաղորդությանը: Նա այն անվանեց «մեծ խողովակ», որի միջոցով շնորհը լցվում է մեր կյանք և նույնիսկ մեր փրկությունը գործելու առաջին քայլն էր համարում այն[32]: Նման տեսակետի համար հիմք էր հանդիսանում նրա համոզմունքը, որ Հաղորդությունն ավելին է, քան լոկ խորհրդանշական հիշողություն Քրիստոսի մահվան մասին, և Հաղորդություն ընդունողները զգում են Քրիստոսի իրական ներկայությունը Սուրբ Հոգու միջոցով[33]: Այս ամենը Ուեսլիին օգնեցին հանգելու երկու եզրակացության. Առաջինը՝ շնորհը տրված է, որպեսզի քրիստոնյան ապրի հաղթանակած կյանքով, Հաղորդություն պետք է ստանալ որքան հնարավոր է հաճախ: Երկրորդ՝ շնորհիվ Սուրբ Հոգու ներկայութան Հաղորդությունը հավասարզոր է փրկագնող, սրբացնող և զորացնող շնորհին, այն կարելի է համարել «դարձի բերելու արարողություն»[34]՝ ապաշխարող

---

[28] Ռոբ, Լ, Սթեյփլս, Արտաքին նշան և Ներքին շնորհ, Խորհուրդները Ուեսլեյան Աստվածաբանությունում, Spirituality (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 1991), 21. Շեշտադրումն ավելացված է:

[29] Ուայթ, Հավատալուց հետո, 223

[30] Երկու խորհուրդը պայմանավորված է նրանով, որ Հիսուսը միայն այս երկուսն է իրականացրել նաև հայտնի է («գերակշռող խորհուրդ»)

[31] Ջ. Ուեսլի՝ Պատմություն Քրիստոնեական կատարելության մասին, վերամշակումը՝ Ռ.Լ. Մեդոքս և Փ. Չիլքոութ (Kansas City, MO: Beacon Hill Press of Kansas City, 2015), 45.

[32] Մեդոքս «Պատասխանատու Շնորհ», 202

[33] «Երբ Հիսուսն ասում է «հիշատակ», հունարեն բառը anamnesis-ն է: Դա շատ ավելին է, քան պատմական հիշողությունը: Այն մատնանշում է Սուրբ Հոգով ներշնչված հիշողությունը, որը իրադարձությունը փոխանցում է անցյալից դեպի ներկա այնպես, որ այն բառացիորեն «կրկին է կատարվում»: Ջ.Դ. Ուոլթ, «Հրաշք Հաց», Seedbed Daily Text, 24 ապրիլի, 2020, https://www.seedbed. com / wilderness-wonder-bread/

[34] «Փոխակերպման արարողություն» արտահայտությունն անձամբ օգտագործել է Ջոն Ուեսլին: Ռոբ, Լ, Սթեյփլս, Արտաքին Նշան և Ներքին Շնորհ 252. Իր իսկ մոր վկայությունից, որ Հաղորդություն ճաշակելիս նրան տրվել է լիակատար հավաստիացում իր հավատքի մասին, և նման փորձառությունների բազմաթիվ այլ վկայություններից, Ուեսլին համոզվեց, որ Հաղորդության պահը» վերստին ներկայացնում է Քրիստոսի մեկընդմիշտ զոհաբերությունը՝ փոխանցելով նրա փրկարար զորությունը»: Մեդոքս, Պատասխանատու Շնորհ, 203:

սիրտ ունեցող մարդը կարող է փրկվել: Հաղորդության մասին այս տեսակետը դրդեց Նազովրեցի աստվածաբան Ռոբ Սթեփլսին Հաղորդությունը կոչել «սրբացման խորհուրդ»[35]:
Մկրտությունը շատ ավելին է, քան պարզ ծես կամ հրապարակային վկայություն: Այն խորհրդանշում է Քրիստոսի հետ մեր մեռնելն ու հարություն առնելը: «Մկրտութիւնովը նորա հետ թաղուեցանք մահի մէջ. Որ ինչպէս Քրիստոսը Հօր փառքովը մեռելների միջից յարութիւն առաւ, այնպէս մենք էլ կեանքի նորոգութեան մէջ ման գանք» (Հռոմ. 6:4): Անձը Աստծո թագավորությանն է պատկանում մեղքին մեռնելով և Քրիստոսում դեպի նոր կյանք հարություն առնելով[36]: Մկրտությունը նշանավորում է այդ պահը: «Մկրտությունն հստակեցնում է, որ քրիստոնեական կյանքը սկսվում է խաչով՝ այն բաժնեկցելով, առնելով և Քրիստոսին հետևելով[37]»: Ուեսլին մկրտությունը չէր ներառում շնորհի միջոցների ցանկի մեջ: Պատճառը դրա արժեզրկումը չէր, այլ Ուեսլին դա համարում էր համայնքային և անհատական կյանքում մեկանգամյա իրադարձություն: Ուեսլիի համար մկրտությունը սրբության կյանքի նախաձեռնումն էր, մինչդեռ մնացած միջոցները անհրաժեշտորեն կրկնվող են և շարունակական[38]:
Ուեսլին մկրտության առումով համամիտ էր անգլիական ռեֆորմատորների հետ, բայց տարակարծիք էր երկու էական առումներով: Ըստ Մեդոքսի՝ Ուեսլին կարևորել է «Տիրոջ ողորմածությամբ մեր կյանքի փոխակերպումը» ավելի քան մեր «իրավական ներում»-ը (կենտրոնացում մեղքի և ներման անհրաժեշտության վրա)»: Սա կարևոր տարբերակում է, քանի որ նշանակում է, որ մկրտությունը միայն մեր մեղքերը ներման նշան չէ, այլ նաև մենք բժշկվում ենք մեր մեղավոր էությունից[39]: Ի հավելում, Ուեսլիի համար, թեև մկրտության շնորհը «բավական է քրիստոնեական կյանք նախաձեռնելու համար», անձը պետք է պատասխանատու և պատրաստակամ լինի, որպեսզի շնորհի միջոցները լիարժեք արդյունավետությամբ գործեն[40]: Այս տեսանկյունից, մկրտությունը մարդու կողմից պատրաստակամության նշան է և խորհրդանիշ՝ ներգրավվելու սրբացման ճանապարհորդության մեջ:
Նազովրեցի պատմաբան և գիտնական Փոլ Բասեթը մի անգամ ինձ ասաց, որ ամենավաղ գրանցված մկրտության արարողակարգի ժամանակ՝ չորրորդ դարի վերջ, պատարագիչը ձեռքերը պարզում և ասում էր. (բառափոխված) «Եվ հիմա ընդունիր մեր Տեր Հիսուսի շնորհն ու բժշկությունը, և թող Սուրբ Հոգու զորությունը գործի քո մեջ, որ ծնված լինելով ջրից և Հոգուց՝ կարողանաս հավատարիմ վկա լինել»: *Այսինքն՝ ես շնորհ եմ ստացել, ես բժշկված եմ, Ես կլինեմ Հիսուսի աշակերտը:*

---

[35] Ռոբ, Լ, Սթեյփլս, Արտաքին Նշան և Ներքին Շնորհ
[36] Ուայթ, Հավատալուց հետո, 281
[37] Ուայթ, Հավատալուց հետո, 281
[38] Ռոբ, Լ, Սթեյփլս, Արտաքին Նշան և Ներքին Շնորհ, 98, Մեդոքս «Պատասխանատու Շնորհ», 222
[39] Արևմտյան (լատիներեն) և արևելյան (հունական) քրիստոնեական ավանդույթների միջև կան էական տարբերություններ՝ կապված փրկության նշանակության հետ: «Արևմտյան քրիստոնեությանը (ինչպես բողոքական, այնպես էլ կաթոլիկ) բնութագրվում էր մեղքի և ներման գերիշխող իրավական շեշտադրմամբ, մինչդեռ արևելյան ուղղափառ սոտերոլոգիան սովորաբար ավելի շատ ընդգծում էր մեր մեղքով հիվանդ բնությունը բուժելու թերապևտիկ մտահոգությունը»: Մեդոքս, Պատասխանատու Գրեյս, 23. Ուեսլիի տեսակետը մկրտության իմաստի վերաբերյալ ներառում էր երկուսն էլ, բայց ընդգծում էր բուժիչ և կյանք տվող կողմը:
[40] Մեդոքս «Պատասխանատու Շնորհ», 23

ՀԱՇՎԵՏՈՒ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Աշակերտության ընթացքում զորացնող շնորհի վերաբերյալ ցանկացած քննարկում տեղի կլինի կիսատ, հատկապես Վեսլեյան-Սրբության ավանդույթի համաձայն՝ առանց հոգևոր հաշվետու հարաբերությունների հիշատակման: Ուեսլին մշակեց գործնական շրջանակ, որն ըստ իրեն էական է յուրաքանչյուր աճող քրիստոնյայի համար: Հասկանալով եսակենտրոնության հակումը (որը հանգեցնում է անձնաքննության բացակայության), և ճգնավորի կյանքով ապրելու համառ գայթակղությունը Ուեսլին հաստատեց իր իսկ դասակարգմամբ «քրիստոնեական հավաքներ»-ի հինգ մակարդակ: Դրանք էին հասարակություններ (նման կիրակնօրյա դպրոցի դասերին, որոնք նախատեսված էին քրիստոնեական կրթության և ուսուցման համար), դասարանային հանդիպումներ (այս մասին ավելի ուշ), նվագախմբեր (փոքր խմբեր), ընտրված հասարակություններ (առաջնորդության զարգացում և ուսուցում) և ապաշխարող խմբեր (վերականգնողական խմբեր):

Մինչդեռ քրիստոնեական հավաքների բոլոր մակարդակները համարվում էին շնորհի միջոց՝ Ուեսլին վստահ էր, որ դասարանային հանդիպումները քրիստոնեական համայնքի սիրտն էր և կենսական նշանակություն ուներ Քրիստոսանմանության մեջ աճի տեսանկյունից: Այն դարձավ մեթոդիստական շարժման «մեթոդը» և Ուեսլիի կազմակերպչական ամենամեծ ներդրումը սրբության կյանքում: Դրա հիմնական կենտրոնացումը քրիստոնյաների կրթությունը չէր, ինքստինքյան, այլ վարքագիծը՝ հոգևոր վերափոխման համար առավել գործնական ձևավորմամբ և միջավայրային շեշտադրմամբ: Աստվածաշնչի ուսումնասիրությունները և վարդապետական ուսուցումը կարևոր էին, բայց դրանք վերապահված էին հասարակություններին: Մարդիկ դասարանային հանդիպումներին մասնակցում էին յուրաքանչյուր անդամի հոգևոր առաջընթացի մասին տեղեկանալու համար: Նրանք այնտեղ էին, որպեսզի յուրաքանչյուրը հարցներ և պատասխաներ «Ինչպե՞ս է Հոգիդ» հարցին:

Նրանք պետք է միմյանց պատասխանատվության ենթարկեին շնորհի մեջ աճելու և քաջալերեին ապրել սրբության կյանքով[41]:

Տասնութերորդ դարի ամենահայտնի բողոքական քարոզիչը Ջոն Ուեսլին չէր: Այդ անվանումը պատկանում էր մեկ այլ անգլիացու՝ Ջորջ Ուայթֆիլդին: Խոսուն և դինամիկ քարոզիչ, Ուայթֆիլդը համընդհանուր բնորոշմամբ համարվում էր Արևմուտքում բողոքականության ձայնը և աշխարհի գլխավոր շարժիչներից մեկը, Հյուսիսային Ամերիկայում մեծ արթնության ակտիվ մասնակիցներից էր[42]: Ուեսլին և Ուայթֆիլդը մտերիմ ընկերներ էին, և յուրաքանչյուրը հիանում էր մյուսի գործունեությամբ՝ ուղղված եկեղեցու ամրապնդմանը: Բայց ի վերջո, Ուեսլիի աշխատանքը դիմացավ, իսկ Ուայթֆիլդինը ոչ: Ադամ Քլարկը՝ Ուեսլիի երիտասարդ ժամանակակիցը, Ուեսլեյան վերածննդի հարատև պտուղը ուղղակիորեն վերագրում է դասարանային հանդիպումներին:

---

[41] Դասարանային հանդիպման այս բաժինը վերցված է քաղաքային ծառայության մասին իմ գրքից: Քրիստոնեական հավաքների և մեթոդիզմի վրա դրանց ազդեցության մասին ավելի մանրամասն, տե՛ս Դեյվիդ Ա. Բյուզիք, Քաղաքային եկեղեցիները Ուեսլեյան Սրբության ավանդույթում (Kansas City, MO: The Foundry Publishing, 2020).

[42] Հարրի Ս. Ստաուտ, Աստվածային դրամատուրգ. Ջորջ Ուայթֆիլդը և ժամանակակից ավետարանականության վերելքը (Grand Rapids: Eerdmans, 1991), xiii–xvi:

> Երկար փորձառությունից ես գիտեմ պարոն Ուեսլիի խորհուրդների պատշաճությունը՝ «հիմնված դասարանային հանդիպումները, որտեղ քարոզում և ունկնդրում են Խոսքը, Պտուղ էր տալիս, իսկ որտեղ հիմնված խմբակներ չկային Խոսքը ճանապարհի եզերքի սերմի պես էր»: Այս [շնորհի] միջոցներով հնարավոր դարձավ հաստատել մշտական և սուրբ եկեղեցիներ ամբողջ աշխարհում: Պարոն Ուեսլին տեսավ այս ամենի անհրաժեշտությունը ի սկզբանե: Պարոն Ուայթֆիլդը. . . չհետևեց դրան: Ո՞րն էր դրա հետևանքը: Միստր Ուայթֆիլդի աշխատանքի պտուղը մահացել է իր հետ: Միստր Ուեսլիի սերմերը շարունակում են բազմապատկվել[43]:

Ուեսլեյան վերածնունդի մասին Ուայթֆիլդն ասել է՝ «Իմ եղբայր Ուեսլին խելամտորեն վարվեց: Այն հոգիները, որոնք արթնացել էին նրա ծառայության արդյունքում, միացել էին հավաքներին [հանդիպումներ], և այդպիսով պահպանվեցին նրա աշխատանքի պտուղները: Ես անտեսեցի այս բաժինը և այժմ իմ ժողովուրդը երկմիտ է»[44]:
Աշակերտությունը կարող է լինել անձնական, բայց ոչ մասնավոր: Մեկուսացված քրիստոնյաները վտանգի տակ են, քանի որ կղզիացած հավատքը թույլ և անպտուղ աշակերտներ է տալիս: Համատեղ երկրպագությունը և քրիստոնեական կրթությունը օգտակար և անհրաժեշտ են, սակայն առանց համատեղ կյանքի՝ սիրո և միաբանության և զուգորդված գիտելիքների կիրառմամբ մենք դժվարությամբ կկարողանանք «գործել մեր փրկությունը» (Փիլիպ. 2.12): Շնորհի մեջ առողջ և երջանիկ աճի գաղտնիքը Ուեսլիի կրկնվող արտահայտության մեջ է՝ «սիրով հսկել միմյանց»[45]:

ԻՆՔՆԱՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Աղոթել սովորելը, ծոմ պահելը, Սուրբ Գրքի ընթերցանությունը, խորհրդածությունը, սերտողությունը, պարզությունը, մենությունը, հանձնվելը, ծառայությունը, խոստովանությունը, երկրպագությունը և հաշվետու փոխհարաբերությունները պատասխանատվությունը բոլորը շնորհի միջոցների օրինակներ են: Սրանք և նմանատիպ այլ հոգևոր կարգապահությունները միասին զորացնող շնորհի մի մասն են:
Դուք կարող եք ասել՝ «Ես այդ բաների հակվածությունը չունեմ»: Բարի Գալուստ: Իրականում ոչ ոք նրանց նկատմամբ բնածին հակումներ չունի: Նրանք անհրապույր են և պահանջում են քրտնաջան աշխատանք և շարունակական պրակտիկա: Մի մոռացեք, որ Հոգու օգնությամբ մեր հին էությունը փոխակերպվում է նորի, նայն, ինչ նախկինում ինքնաբերաբար չէր ստացվում, դառնում է երկրորդ բնույթ և «մինչև Քրիստոսը ձեր մեջ ձևավորվի» (Գաղ.4:19): Թերևս դա է պատճառը, որ ինքնատիրապետումը թվարկված է որպես Հոգու Պտղի վերջնական հատկանիշ: Անհրաժեշտ է ինքնատիրապետում, քանի որ պտուղը ինքնաբուխ չէ: Ծաղիկները պտուղի սկզբնական ներուժն են ցույց տալիս, բայց հասունացման համար անհրաժեշտ է կենտրոնացումից և ուշադրություն:

---

[43] Ջ.Վ Էթիրիջ, Պատվելի Ադամ Քլարքի կյանքը, (New York: Carlton and Porter, 1859), 189
[44] Էթիրիջ, Պատվելի Ադամ Քլարքի կյանքը, 189
[45] Ջոն Ուեսլի, «Միացյալ հասարակությունների բնույթը, դիզայնը և ընդհանուր կանոնները» աշխատություն 9:69

Ռայթը փաստորեն նշում է, որ որոշ պտուղներ կարող են կեղծվել. «Պտուղի բոլոր տեսակները, որոնց մասին Պողոսը նշում է, համեմատաբար, հեշտ է կեղծել, հատկապես երիտասարդ, առողջ, երջանիկ մարդկանց մոտ, բացառությամբ ինքնատիրապետման: Եթե դա չկա, միշտ արժե հարցնել արդյոք մնացածը Հոգու Պտուղի իրական նշաններն են»[46]: Ուստի զարմանալի չէ, որ ինքնատիրապետումը հիմնված է սուրբ կյանք ապրելու վճռական նվիրվածության վրա: «Կան շատ մակաբույծներ, շատ մոլախոտեր, որոնք սպառնում են խեղդել պտղատու ծառին, շատ գիշատիչներ պատրաստ են կրծոտել արմատները կամ փչացնել պտուղը մինչև այն կհասունանան: Պետք է լինի մտքի, սրտի և գործի գիտակցված ընտրություն բոլոր նման թշնամիներին առանց ողորմության արմատախիլ անելու համար . . . Միայն «Հոգով ապրել» չի նշանակում հետևել Հոգու ուղղորդությանը: Դուք պետք է ընտրեք դա անել: Իսկ դուք կարող եք»[47]:

ԶՈՐԱՑՆՈՂ ՇՆՈՐՀ՝ ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ

Զորացնող շնորհը և՛ հոգևոր է, և՛ գործնական: Ճիշտ այնպես, ինչպես ֆիզիկական պտուղը կենդանի օրգանիզմի արտադրանք է, այնպես էլ հոգևոր պտուղը Սուրբ Հոգու արդյունքն է: Մենք չենք կարող «արտադրել» Աստծո գործը մեր մեջ՝ Սուրբ Հոգու զորությամբ, այդ զորությունը գալիս է դրսից և բացարձակապես նվեր է: Այնուամենայնիվ, նվերը նաև գործնական է և գործնական քայլեր է պահանջում: Այս գործնական քայլերը նման են այգեգործության, որպեսզի «ամբողջանա» մեր մեջ սկսված գործը (Փիլիպ. 1.6) և «առաջացնի արդարության բերքահավաք» (v. 11): Ոչ մի այգեգործ, ով երկուշաբթի եգիպտացորեն է ցանում, չի ակնկալում այն ուտել կիրակի օրը: Ցանքից մինչև բերքահավաքը պահանջում է հասունացում և ժամանակ: Եթե մենք ցանկանում ենք վայելել բերքահավաքը, ապ ջուր ու արևի լույս են անհրաժեշտ, ինչպես նաև պարարտանյութ և մոլախոտերի հեռացում:

Մենք «արագ սննդի» մշակույթում ենք ապրում. լուծվող սուրճ, միկրոալիքային վառարան ադիբուդի, գերարագ ինտերնետ…. Մարդիկ սրճարաններում նյարդայնանում են, երբ ինտերնետին միանալը մի քանի վայրկյան ավելի է տևում: Մարդիկ դարձել են անհամբեր: Ո՞րն է պատճառը: Ես պնդում եմ, որ այս ամենն ակնթարթային հաճույք ստանալու արմատացած ցանկությունն է, որը ժամանակակից երևույթ չէ, այլ մարդկային ցեղի հետ է եղել երկար ժամանակ: Մինչդեռ Սուրբ Գրքում շատ օրինակներ կան ակնթարթային հաճույք ստանալու մահաբեր վարակի վերաբերյալ, թերևս Եսավինն ամենատխրահռչակն է: Նա երկար ու անհաջող որսի օրվանից հետո, սոված վերադարձավ հայրական տուն: Միևնույն ժամանակ նրա խորամանկ երկվորյակ եղբայրը՝ Հակոբը, պատրաստում էր կարմիր ոսպով շոգեխաշիլ: Եսավը ուտել ցանկացավ և Հակոբը որոշեց գործարքի մեջ մտնել նրա հետ առաջարկելով՝ «Նախ վաճառիր ինձ քո անդրանիկությունը» (Ծնն. 25:31):

Ծննդյան իրավունքը կամ անդրանիկության իրավունքը (հայտնի է նաև որպես առաջնեկի ժառանգության իրավունք), ժառանգության ընդհանուր իրավունքի կանոն էր, որը երաշխավորում էր ֆինանսական արտոնություններ և ընտանեկան հեղինակություն անդրանիկ տղա երեխային: Հակոբի առաջարկը Եսավին սարսափելի էր: Եսավի պատասխանը նույնքան ամոթալի էր. «Ես պատրաստվում եմ մեռնել. ինչ օգուտ արդյո՞ք ինձ

[46] Ռայթ, Հավատալուց հետո, 196

[47] Ռայթ, Հավատալուց հետո, 196-197

համար անդրանիկությունից»: (հ. 32): Նա պատրաստ էր վաճառել իր ժառանգությունը ակնթարթային հաճույքի դիմաց՝ բառացիորեն, մի պնակ ապուրի:

Հեգնանքը չի կարելի անտեսել: Ինչքան անկայուն պետք է լիներ մարդը, որ փոխանակեր իր անգնահատելի ժառանգությունը մի քանի վայրկյան տևող ակնթարթային հաճույքով: Այնուամենայնիվ, ակնթարթային հաճույքի մեր մշակույթը դա անում է միշտ: Մենք փոխանակում ենք կարճատև հաճույքները մնայուն արժեքների հետ: «Ես ուզում եմ այն, ինչ ուզում եմ, և ես դա հիմա եմ ուզում: Ես ուզում եմ, որ իմ ախորժակը բավարարվի, նույնիսկ եթե դրա դիմաց թանկ եմ վճարելու»: Զարմանալի չէ, որ Եբրայեցիներին գրողը Եսավի արարքը նույնացնում է անբարոյականության հետ. «Որ չ՚լինի մէկը պոռնիկ եւ պիղծ ինչպէս Եսաւը, որ մի կերակուրի համար իր անդրանկութիւնը ծախեց: Որովհետեւ գիտէք որ թէեւ յետոյ կամեցաւ օրհնութիւնը ժառանգել, բայց մերժուեցաւ. որովհետեւ ապաշխարութեան տեղի չ՚գտաւ, թէեւ արտասուքով խնդրեց նորան» (Եբր. 12:16–17): Դա ողբերգական պատմություն է, որից պետք է դաս քաղել: Սրբության կյանքի համար կարգապահություն է պահանջվում, աշակերտությունը կարճ ճանապարհներ չունի:

Թայգըր Վուդսը համարվում է պատմության մեծագույն գոլֆիստներից մեկը: Երբ ես երիտասարդ էի, ես սովորում էի գոլֆ խաղալ և փորձում էի ընդօրինակել նրա ոճը (ես նույնիսկ գնել եմ Nike-ի գոլֆի գլխարկներ նրան նմանվելու համար): Միայն մեկ խնդիր կար՝ Թայգըրը ամեն օր ժամերով պարապում էր մինչև ուժասպառ լինելը[48]: Նույնիսկ երբ նա դարձավ աշխարհի լավագույն գոլֆիստը, նրա մտերիմները պատմում էին, որ նա ավելի շատ էր պարապում, քան որևէ մեկը: Կարող եմ ասել, որ ուզում եմ Թայգըրի պես գոլֆ խաղալ, բայց դա ոչինչ չի նշանակում, քանի դեռ գործնական քայլեր չեմ ձեռնարկել: Ակնթարթային հաճույքը բավարար չէ: Անկախ նրանից, թե որքան եմ ցանկանում, իմ գոլֆի խաղի մակարդակը ուղիղ համեմատական է իմ մարզումներին:

Երբեմն մարդիկ կասեն. «Ես ուզում եմ նմանվել այսինչ քրոջը, նա այնքան մոտ է Աստծուն: Ես տեսնում եմ Հիսուսին նրա մեջ: Նա սուրբ է»: Սխալ չէ տեսնել նրան որպես Քրիստոսանմանության լավ օրինակ և ձգտել ընդօրինակել նրա ապրելակերպը, բայց նրա կյանքի մյուս կողմը Տիրոջ ներկայության մեջ ժամերով աղոթելն ու խորհրդածելն է: Դուք տեղյակ չեք, որ նա տարիներ է աճել հոգևոր կարգապահության մեջ և Աստված նրան դարձրել է այն անձը, ում հիմա տեսնում եք: Նա ակնթարթային հաճույքներին անձնատուր լինելով չէ հասել հոգևոր հասունության: Հոգևոր սովորությունները ձևավորել են սուրբ բնավորություն նրա մեջ, որոնք վերածվել են առաքինության: Նա մշակել է Հոգու պտուղը, և դրա համար էլ սերը, ուրախությունը, խաղաղությունը, համբերությունը, բարությունը, և ինքնատիրապետումը նրա էության մեջ են:

Սրբությունը մեկ պահ չէ, և ահա մենք առաքինություններ ենք ձեռքբերում: Ոչ, դա այն է, ինչը ձևավորում է մեզ: «Դարձը նվեր է և ձեռքբերում. Դա ակնթարթային քայլ է և ամբողջ կյանքի աշխատանք»[49]: Վերջնակետին հասնելու համբերություն է անհրաժեշտ է շնորհի ճանապարհորդության ընթացքում: Մենք պետք է մշեկենք պտուղը:

Եկեք եզրափակենք այս բաժինը հազարամյակներ շարունակ սրբերի կողմից հռչակվող աղոթքով.

---

[48] Վուդսը հայտնվեց ազգային հեռուստատեսային The Mike Douglas Show-ում երկու տարեկանում

[49] Զոնս, Զոխակերպում, մեջբերված Ֆոսթըր և Սմիթ, Դասական Խորհրդածություններ, 281

Ամենակարող Աստված, քեզ համար բաց են բոլոր սրտերը, բոլոր ցանկությունները՝
հայտնի են և Քեզանից ոչ մի գաղտնիք չի թաքցվում,
Մաքրիր մեր սրտերն ու մտքերը Քո Սուրբ Հոգու ներշնչմամբ, որպեսզի մենք
կատարյալ սիրենք Քեզ, և
արժանիորեն մեծարենք Քո սուրբ անունը,
մեր Տեր և Փրկիչ Քրիստոսի անունով:
Ամեն[50]

[50] Ընդհանրացված Աղոթքների գիրք (Cambridge: Cambridge University Press, n.d.), 97-98

6
ԲԱՎԱՐԱՐ ՇՆՈՐՀ

Բաւական է քեզ իմ շնորհքը, որովհետեւ իմ զօրութիւնը տկարութեան մէջ է կատարվում. Արդ աւելի յօժարութեամբ իմ տկարութիւններովը կ'պարծենամ. որ Քրիստոսի զօրութիւնը բնակուէ ինձանում։
2 Կորնթացիս 12:9

Մենք սկսեցինք այս գիրքը ասելով, որ շնորհն անձնական է, փորձառված,և հայտնի է դառնում Հիսուս Քրիստոսի անձի և գործի միջոցով, որը դրսևորվում է Սուրբ Հոգու ներկայությամբ: Ինչպես նշել է Թոմաս Լանգֆորդը, շնորհը վերացականորեն հայտնի սկզբունք չէ, «այլ իրական պատմություն Աստծո անձնուրացության մասին»[51]: Հիսուս Քրիստոսի և Հոգու ներկայությամբ, մարդկային կյանքի վերականգնումը տեղի է ունենում փրկագնող, սրբացնող, զորացնող և բավարար շնորհի միջոցով: Այս վերջին աստվածաշնչյան արտահայտությունը շնորհի մասին ինձ համար ամենաառեղծվածայինն է:

Երբևէ մտածե՞լ եք, թե ինչու են նրանք, ում համար թվում է, կյանքը հեշտ է կարող են այնքան հեռու թվալ Աստծուց, մինչդեռ նրանք, ովքեր անցնում են ամենախոր ջրերի միջով և ամենամեծ անձնական պայքարներով հաճախ մտերիմ են Տիրոջ հետ: Առաջին հայացքից երկու դիտարկումները հակասական են թվում: Տրամաբանորեն նրանք, ովքեր ունեն ավելի քիչ խնդիրներ ավելի երջանիկ պետք է լինեն և շրջապատված ավելի մեծ խաղաղությամբ քան նրանք, ովքեր դիմանում են խորը տառապանքներին: Սակայն հաճախ հակառակն է լինում: Ինչպե՞ս բացատրել նման պարադոքսը:

«Քո կամքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է» աղոթելը նշանակում է խոստովանել, որ այն ամենը, ինչ տեղի է ունենում աշխարհում, Աստծո կամքն է: Մենք Աստծուն ոչ մի վատ բան չենք վերագրում, քանզի եթե անենք կնշանակի վիճարկում են Աստծո բնավորությունը: Երրորդ պատվիրանն արգելում է Աստծո անունը զուր տեղը տալ, որն ավելի քիչ առնչություն ունի հայհոյանքի հետ և ավելի շատ Աստծուն աշխարհում սխալ ներկայացնելու: Լուրջ բան է որևէ բան, որ չար է, ներկայացնել որպես Աստծուց կամ Աստծուն ներկայացնել որպես չար: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ թեև ամեն ինչ չէ, որ տեղի է ունենում Աստծո կամքն է, բայց որովհետև մեր Աստվածն ամենազոր և ամենասեր Աստված է, ամեն ինչում Իր կամքն ունի, հատկապես նրանց կյանքում, ովքեր Նրանն են և ովքեր բնակվում են Քրիստոսում:

Սուրբ Գիրքը մեզ հիշեցնում է, որ Աստծո մասնագիտացումներից մեկը բոլորին փրկագնելն է, նույնիսկ երբ չարիքը միտումնավոր է: Հովսեփն ասաց իր նախանձ եղբայրներին. «Դուք մտադրվել էիք ինձ վնասել, բայց Աստված դա նպատակադրեց բարու համար, որպեսզի կատարի այն, ինչ այժմ արվում է՝ փրկելով բազմաթիվ կյանքեր» (Ծնն. 50:20): Կրկին Պողոսը հիշեցնում է մեզ. «Մենք գիտենք, որ ամեն ինչում Աստված աշխատում է նրանց բարիքի համար, ովքեր սիրում են իրեն, ովքեր կանչված են ըստ Իր նպատակի» (Հռոմ. 8:28): Հովսեփը չասաց, որ Աստված է պատճառ եղել, որ նրա եղբայրները նրան վաճառեին Եգիպտոս ստրկության. նա ասաց, որ Աստված թույլ չտվեց, որ չարը հաղթանակի: Պողոսը չասաց Աստված իր ժողովրդին վատ բաներ է պատճառում. ավելի շուտ նա ասաց, որ Աստված հավատարիմ է ամեն ինչում՝ և՛ լավ, և՛ վատ: Նա կարող է կործանարարն ու կոտրվածը դարձնել բուժիչ և սուրբ:

[51] Թ. Լենգդորդ, Սրբության մասին մտորումներ (Eugene, OR: Cascade Books, 2007), 107

Այս սուրբ գրությունները բացատրում են, թե ինչու նրանք, ովքեր Քրիստոսի մեջ են, ովքեր բախվում են մեծագույն տառապանքների, նրանք են, ովքեր նաև ունեն ամենամեծ խաղաղությունը: Կյանքը Հիսուսին լիովին նվիրած աշակերտը, երբ անցնում է դժվարին հանգամանքներով և իրավիճակներով իր շնորհի ճամփորդության ընթացքում, զգում է Աստծո բավարար շնորհը իր անձի մեջ:

ԶՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԿԱՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԿԱՏԱՐՅԱԼ ԴԱՌՆՈՒՄ

Պողոս առաքյալը խոսեց բավարար շնորհի մասին առաջին դարի եկեղեցու համատեքստում: Ըստ Պողոսի՝ կորնթացիներին ուղղված իր նամակը գրելուց տասնչորս տարի առաջ, նա տեսիլք ստացավ Աստծուց, որտեղ «հափշտակվեց մինչև երրորդը երկինք» (2 Կորնթ. 12:2): Աստվածաբաններից շատերը չեն հավատում, որ Պողոսը նկատի է ունեցել դրախտի մի քանի մակարդակներ, բայց նա նկարագրում էր մի հայտնություն, որը գերազանցում էր սովորական մարդկային կարողությունը, և որ նա կարողացավ, միայն Հոգու ներշնչմամբ ընկալել ֆիզիկական ոլորտից դուրս բաները: Նրա նպատակն էր ասել, որ նա զորեղ կերպով հանդիպել էր Աստծո ներկայությանը, տեսել էր հարյալՔրիստոսին, և երբեք նույնը չէր լինի, դա փոխել էր նրա կյանքը[52]:

Նման փորձառությունը կարող է մարդուն հոգևորապես հպարտ և պարծենկոտ դարձնել: Իմանալով հնարավոր վտանգի մասին և անսուրբ գոռոզամտության մեջ ընկնելուց խուսափելու համար՝ Պողոսն ավելացնում է, որ իրեն տրվել է նաև «մարմնի փուշ» (համ. 7): Ոչ ծագումը, ոչ էլ առանձնահատկությունները փուշի լիովին պարզ չեն: Մենք չգիտենք, թե արդյոք խնդիրը ֆիզիկական էր, զգացմունքային, կամ հոգևոր[53]: Պարզ է, որ այն դարձել էր այդպիսի ծանր բեռ Պողոսի համար, որ նա անվանեց այն որպես «սատանայի առաքյալ, իրեն տանջելու» և հիշեցնելու նրան իր թուլության մասին (հատ. 7): Նա աղաչեց Աստծուն այն վերցնել և վերացնել նրա պակասությունը, որպեսզի ավելի ուժեղ և ավելի լավ առաջնորդ լիներ եկեղեցու համար: Նախքան փուշը, եկեք հիշենք, որ Պողոսը ուժեղ մարդ էր: Նա հոգևորապես տկար չէր: Մեկ այլ տեղ Պողոսը մանրամասնորեն նկարագրում է իր չարչարանքները. «*Քրիստոսի պաշտօնեաներ են, յիմարութիւնով եմ ասում՝ թէ էլ աւելի ես, մանաւանդ աշխատանքներով, ծեծերով էլ աւելի, բանտերի մէջ մանաւանդ, մահերով շատ անգամ: Հրէաներիցը հինգ անգամ՝ քառասունից մէկը պակաս ծեծ ընդունեցի: Երեք անգամ ձաղկով ծեծուեցայ. մէկ անգամ քարկոծուեցայ. երեք անգամ նաւակոծ եղայ. Մի ցերեկ ու գիշեր անդնդումը մնացի: Շատ անգամ ճանապարհներում. Գետերից վտանգներ, աւազակներից վտանգներ, ազգիցս վտանգներ, հեթանոսներից վտանգներ, քաղաքի մէջ վտանգներ, անապատի մէջ վտանգներ, ծովի մէջ վտանգներ, սուտ եղբայրներից վտանգներ: Ջանքի մէջ եւ աշխատանքի մէջ. շատ*

[52]Դուգլաս Ուորդ, «Երրորդ երկինք», *Կանչ:Աստվածաշնչային և աստվածաբանական աղբյուրներ աճող քրիստոնյաների համար,* 2018, https://www.crivoice.org/thirdheaven.html : Շատ աստվածաբաններ պնդում են, որ Պողոսի նկարագրած տեսիլքը 2 Կորնթացիսում հղում է Դամասկոսի ճանապարհին հարյալ Քրիստոսի հետ հանդիպմանը

[53] Ոմանք ենթադրում են, որ Պողոսի մարմնի փուշը ֆիզիկական էր՝ մաշկի հիվանդություն, տեսողության սուր խնդիր կամ էպիլեպսիա: Մյուսները ենթադրում են, որ փուշը հիշողությունն է իր անցյալի մասին, որպես եկեղեցու հալածողի և հրեա քրիստոնյաների հետ հարաբերությունների բարդությունները:

անգամ արթնութիւների մէջ. սովի եւ ծարաւի մէջ. Շատ անգամ ծոմի մէջ. Ցրտի եւ մերկութեան մէջ»: (2 Կորնթ. 11.23–27)

Չենք էլ խոսում շարունակական ճնշման և անհանգստության մասին, խնդրահարույց եկեղեցիների և եկեղեցու անդամների:

Կրկին կարդացեք Պողոսի փորձությունների ցանկը: Նա համբերեց այդ ամենին և, անկասկած, ավելին (օձի խայթոցներ էլ կային): Դեռ համոզվա՞ծ եք չէ, որ Պողոսը փափկասուն կամ նվնվացող անձ չէր: Սա ստիպում է մեզ ենթադրել, որ ինչ էլ որ փուշը լիներ, Պողոսի համար դա աննշան բան չէր: Ոչ պակաս, քան երեք անգամ, Պողոսը դիմել է Աստծուն՝ խլելու փուշը: Պողոսը մեզ հասկացնում է, որ ինքը շատ խորն ջրերի մեջ է եղել: Նա կրում էր մի բեռ, և ճնշվում էր դրա ծանրության տակ: Դա փոքր բան չէր և Պողոսը աղոթում էր ապաքինման համար: Տերը պատասխանեց նրա աղոթքին բայց ոչ այնպես, ինչպես նա սպասում էր: Ոչ, Պողոսը պահեց փուշը, սակայն Աստված ասաց՝ «Իմ շնորհը քեզ բավական է, որովհետև այն տկարության մեջ է կատարյալ դառնում» (Բ Կորնթ. 12.9): *Դու ավելի ուժեղ ես քո ամենաթույլ պահերին, երբ ես քեզ հետ եմ, քան ամենաուժեղ պահերին առանց ինձ: Իմ ուժը կատարյալ է դառնում քո թուլության մեջ:*

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՁԵՌՔԵՐԻ ՄԵՋ

Բավարար շնորհը Տիրոջ ճանապարհն է ասելու, *երբ քո մարդկային ուժերը սպառվեն, ես քեզ կտամ իմ գերբնական ուժը: Երբ քո զորությունը սպառվի, իմ զորությունը կգործի քո մեջ: Երբ այլևս չկարողանաս առաջ ընթանալ, ես քեզ կտանեմ: Հանգիստ առ Իմ ձեռքերի մեջ:*

Կա մի ժամանակակից, հայտնի առակ, որը կոչվում է «Ոտնահետքեր ավազի վրա»:

Օրերից մի օր մի մարդ երազ տեսավ: Երազում նա տեսավ՝ կարծես թե քայլում է ավազե ափի վրայով, իսկ նրա կողքով քայլում էր Աստված: Երկնքում նշմարվում էին նրա կյանքից պատկերներ և յուրաքանչյուր պատկերից հետո նա ավազի վրա տեսնում էր հետքերի երկու շղթա՝ մեկը իր ոտնահետքերն էին, մյուսը՝ Աստծո:

Երբ նրա առջև երևաց իր կյանքից վերջին դրվագը, նա նայեց ոտնահետքերին և տեսավ, որ հաճախ նրա կյանքի ընթացքում ոտնահետքերի միայն մի շղթա էր: Նկատեց նաև, որ դրանք իր կյանքի ամենածանր և դժբախտ ժամանակների հետ էին համընկնում:

Մարդը վշտացավ և հարցրեց Աստծուն.

- Դու չէիր, որ ասում էիր, եթե ես գնամ քո ասած ճանապարհով, դու ինձ մենակ չես թողնի: Բայց ես նկատեցի, որ իմ կյանքի ամենածանր պահերին միայն ոտնահետքերի մի շղթա էր ավազի վրա երևում: Ինչո՞ւ դու ինձ լքեցիր, երբ ես ամենաշատը քո կարիքն ունեի:

Աստված պատասխանեց.

- Իմ զավա՛կ: Ես սիրում եմ քեզ և երբեք քեզ չեմ լքի: Երբ քո կյանքում վիշտ էր և փորձություններ, քո ճանապարհի վրա միայն ոտնահետքերի մեկ շղթա էր տարածվում, որովհետև այդ ժամանակ ես քեզ իմ ձեռքերի վրա էի տանում:

Եթե ինչ-որ մեկը կարողանար պատկերացնել շնորհի փնտրտուքը նկարի տեսքով, այն նման կլիներ որոնող հովվի, սպասող հորը, արթնացնող համբույրի: Եթե փրկագնող շնորհը պատկեր լիներ, այն նման կլիներ գրկախառնության, որդեգրման, հաշտության: Եթե բավարար շնորհը պատկեր լիներ, այն նման կլիներ, երբ Տերը ձեռքերի վրա է մեզ կրում:

«Ավազի հետքերն» ավելին է, քան առակ, այն իրական կյանքից պատմություն է, որը ես լսել եմ նորից ու նորից: Հովիվ լինելու իմ տարիներին իմ համայնքի մարդիկ սուր տառապանքների և

տանջալից վշտի են ենթարկվել, ես մտածում էի, թե ինչպես են նրանք ուժ գտնում առավոտյան անկողնուց վեր կենալ: Մարդիկ եզրին էին գտնվում, օգտագործելով Յուջին Փեթերսոնի արտահայտությունը՝ «ես կարող էի զգալ նրանց հուսահատությունը ոսկորներիս մեջ»:
Հետո ես լսում էի, որ նրանք ասում էին. «Հովիվ, ես չեմ կարող դա բացատրել... բացատրություն չկա.... Ես գիտեմ, որ պետք է ճնշվեմ այս ամենից, բայց ես զգում եմ, և նրանք օգտագործում էին հենց այս բառերը. «կարծես ինձ տանում են ձեռքերի վրա: Ես խորապես վշտացած եմ այս կորստից, այս հիվանդությունից, այս մահից, այս դավաճանությունից, բայց մտքումս խաղաղություն կա և հանգստություն իմ հոգում, որն անբացատրելի է: Միակ կերպը, որը ես կարող եմ նկարագրել դա այն է, որ Տիրոջ հավերժական գրկում ողորմություն եմ գտել»: Մի շարք ոտնահետքեր. բավարար շնորհ:
Եթե կա մի բան, որ ես բացահայտել եմ տառապանքի վերաբերյալ, դա այն է, որ բավարար շնորհը մնում է զուտ գիտելիք, քանի դեռ մենք ամենաշատը չունենք դրա կարիքը: Մարդը կարող է ինչ-որ բան իմանալ իր գլխում և երբեք չիմանալ այն իր սրտում: Իրականում դա դժվար է բացատրել և կարելի է միայն փորձառել: Այդպիսին է բավարար շնորհը:
Ես խոսում էի ընկերոջս հետ ոչ վաղ անցյալում, ով ասաց. «Ես չգիտեմ ինչ կանեի, եթե կորցնեի իմ երեխաներից մեկին. Ես ուժ չէի ունենա շարունակել»: Ես պատասխանեցի. «Դու իրավացի ես: Դու ուժ չէիր ունենա, և հուսամ երբեք անհրաժեշտ չի լինի, բայց վստահ եմ, որ Տիրոջ շնորհը բավարար կլիներ»:

«ՃԻՇՏ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ» ՇՆՈՐՀ

Բավարար շնորհն այն է, ինչ ձեզ հարկավոր է այսօր: Դա ամենօրյա նվեր է «ճիշտ քանակությամբ»: Դա նման է անապատում մանանայի: Աստծո ժողովուրդը ճանապարհորդում էր անապատով: Շատ քիչ ուտելիք կար, և եթե Աստված չտրամադրեր այդ նվերը, նրանք սովից կմահանային:. Նա երկնքից սնունդ տվեց: Ամեն առավոտ երբ ժողովուրդը արթնանում էր, նրանք տեսնում էին թարմ մանանա: Նրանք չեն ձգտել, չեն աշխատել կամ վճարել դրա համար: Այն այնտեղ էր որպես նվեր Աստծո ձեռքից: Նրանց մնում էր միայն հավաքել: Միայն մեկ պայման կար, որ նրանք չէին կարող պահեստավորել այն: Նրանք չէին կարող մանանան թիթեղյա տարրայի մեջ լցնել և պահել նեղ օրվա համար: Նրանք չէին կարող մանանան թաքցնել իրենց անկողինների տակ, եթե փորձեին էլ այն նեխում էր հաջորդ օրը: Նրանք պարզապես պետք է հավատային, որ Աստված կհոգա իրենց կարիքն այսօր և պետք է վստահեին Աստծո ողորմությանը հաջորդ օրվա համար: Նրա ողորմությունները նորանոր են ամեն առավոտ:
Ահա թե ինչպիսին է բավարար շնորհը: Այն չի կարող պահեստավորվել վաղվա համար: Դա բավարար է այսօրվա համար: Աստված տալիս է մեզ այն ամենը, ինչ մեզ պետք է այսօր՝ ճիշտ քանակությամբ: Վաղը նույնպես բավական կլինի: Աստված է «մեզ առաջ մղող շնորհը», որը առաջնորդում է մեզ, երբ մենք չենք կարողանում առաջ ընթանալ: Զարմանալի չէ, որ Պողոսը վստահորեն հայտարարում է՝ «Եւ նա ինձ ասեց. Բաւական է քեզ իմ շնորհքը, որովհետեւ իմ զօրութիւնը տկարութեան մէջ է կատարվում. Արդ աւելի յօժարութեամբ իմ տկարութիւններովը կ'պարծենամ. որ Քրիստոսի զօրութիւնը բնակուէ ինձանում: Վասնորոյ հաւանել եմ տկարութիւնների, թշնամանքների, վիշտերի, հալածանքների, եւ նեղութիւնների Քրիստոսի համար. որ երբոր տակարանում եմ, այն ժամանակ զօրանում եմ:» (Բ Կորնթ. 12.9–10):

ՀԱՄԲԵՐՈՂ ՇՆՈՐՀ

Մի քանի տարի առաջ Փենսիլվանիայում մի հովիվ եկեղեցում տեսավ մի մարդու, ով իր կոստյումի վրա ուներ բուլդոգի նշանով քորոց: Չիմանալով, որ այդ մարդը աշխատում է բեռնափոխադրող ընկերությունում, որի լոգոն բուլդոգ էր, նա միամիտ հարցրեց. «Ի՞նչ է խորհրդանշում այդ բուլդոգը»:

Աչքերի փայլատակմամբ տղամարդը չարաճճի պատասխանեց. «Դե, հովիվ, բուլդոգը խորհրդանշում է այն համառությունը, որով ես կառչում եմ Հիսուս Քրիստոսին»: Հովիվը պատասխանեց,- «Դա հիանալի խորհրդանիշ է, բայց վատ աստվածաբանություն»: Զարմացած տղամարդը հարցրեց, թե նա ի՞նչ նկատի ունի: Հովիվը պատասխանեց,- «Հիմքը երբեք չպետք է լինի այն համառությունը, որով դուք կառչում եք Հիսուս Քրիստոսին, այլ որով Քրիստոսը կառչում է ձեզանից»:

Դժվար ժամանակներում հավատքը հիմնված չէ մեր ուժերի կամ հավատքի զորության վրա: Ամենադժվար պահերին մեր հավատքը կախված է Աստծո զորությունից: Անկախ նրանից, թե ինչի ենք հանդիպում ճանապարհորդության ընթացքում, Աստծո շնորհը բավական է մեզ պահելու համար, և նրա սերը բավական ուժեղ է մեզ ուղղորդելու: Հիշենք, որ «անկախ ամեն ինչից» Հիսուս Քրիստոսը ամուր պահում է և չի թողնում:

Եկեղեցում, որը ես հովվություն էի անում, մի կին հանկարծ շատ հիվանդացավ: Բժիշկները նրան ուղարկել են մի շարք թեստերի՝ տեսնելու, թե ինչն է հիվանդության պատճառը : Նրանք հայտնաբերեցին, որ նա ուներ ծանր ալերգիկ ռեակցիաներ ցանկացած սննդի նկատմամբ: Վիճակը վատթարանում էր, նույնիսկ կյանքին սպառնացող: Այդ ընթացքում նրա ամուսինը գործուղվել էր Աֆղանստան՝ զինվորական ծառայության: Նրան ի վերջո հոսպիտալացրեցին և բժիշկները ծրագրում էին նրան արհեստական կոմայի մեջ գցել, որը հանգեցնելու էր շնչառության դադարի: Նա ինձ պատմեց, որ խուճապի մեջ էր և անդադար մտածում էր, թե ինչու է այս ամենը կատարվում նրա հետ: Նա նաև վրդովված էր, քանի որ իր ամուսինը կիլոմետրեր հեռու էր: Նա վախենում էր և իրեն միայնակ զգում: Նա սարսափած էր և միակ աղոթքը, որ կարողանում էր մրմնջալ՝ «Աստված, խնդրում եմ, օգնիր ինձ»:

Նա դիմեց բուժքրոջը, ով պատրաստվում էր անցկացնել թեստը և հարցրեց.-Դու քրիստոնյա՞ ես:

-Այո, - պատասխանեց բուժքույրը:

- Կաղոթե՞ս ինձ համար:

Բուժքույրն առանց վարանելու մխիթարության և ապաքինման համար աղոթեց: Ավելի ուշ այդ կինն ինձ ասաց. «Երբ նա աղոթում էր, ամենաանհավանական խաղաղությունն տիրեց ինձ: Կարծես Աստված դրեց իր ձեռքերը ինձ վրա և բարձրացրեց ինձ Իր ներկայության մեջ» (այո, նա օգտագործեց այդ արտահայտությունը): «Ես գիտեի, որ Աստված ինձ հետ է, և հանկարծ վախը վերացավ»:

Նրանք կատարեցին թեստը, և ի զարմանս բոլորի, ոչ մի կողմնակի բարդություն չառաջացավ: «Հովիվ, ես հանկարծ զգացի ուրախությունը բարձրանում է իմ մեջ: Դա բուռն ուրախություն էր: Եթե ես կարողանայի պարել, ապա այդպես էլ կվարվեի»:

Հենց այդ պահին նրա բուժքույրը հանեց իր կրած ճառագայթային բաճկոնը, և նրա վզից կախված էր մի մեծ կախազարդ խաչ: Նա շարունակեց, «այդ ժամանակ ես հասկացա, որ Աստված ինձ հետ էր ամբողջ ժամանակ, ես պարզապես չէի նկատում: Ես չէի զգում նրա ներկայությունը, բայց նա այնտեղ էր: Նա ամբողջ ընթացքում այնտեղ էր: Չնայած ամուսինս Աֆղանստանում էր, ես դեռ Քրիստոսի հարսն էի: Հիսուսն ինձ *Իր ձեռքերի մեջ պահեց*»:

Շնորհի ճամփորդության ընթացքում Աստծո բավարար շնորհը պահում է մեզ տարբեր ձևերով, բայց ամենակարևոր ուղիներից մեկը Քրիստոսի մարմինն է: Մեզ չպետք է զարմացնի, երբ Աստված մեր ցավի մեջ հայտնվի, բացիկի ձևով կամ մեր եկեղեցու անդամներից մեկի զանգի, ով ասում է՝ «Ես սիրում եմ քեզ: Ես աղոթում եմ քեզ համար: Աստված քեզ հետ է»: Մենք երբեմն մտնում ենք եկեղեցի՝ անտանելի ծանր բեռներով, և Քրիստոսով եղբայրը կամ քույրը գրկում է մեզ և ասում. «Մտածում էի քո մասին վերջերս, ուղղակի ուզում էի ասել, որ անհանգստանում և աղոթում եմ քեզ համար»: Եվ հրաշք է տեղի ունենում, Հիսուսի զգալի ներկայությունը շրջապատում է մեզ, և մենք գիտենք, որ մեր Տերը համառությամբ պահում է մեզ և առաջնորդում մեր կյանքի ամենադժվար պահերով:

Երբ աղջիկներիցս մեկը փոքր էր, վախենում էր մթությունից: Ես ու կինս նրան նստեցնում էինք անկողնու մեջ և ասում. «Մի՛ վախեցիր: Հիսուսը հենց այստեղ է քեզ հետ»: Նա պատասխանում էր. «Լավ, մայրիկ և հայրիկ, ես չեմ վախենա»:

Բայց շատ չանցած, մենք դռան թակոց էինք լսում, մեր սենյակի դուռը բացվում էր և նա ասում էր. «Մայրիկ և հայրիկ, ես գիտեմ, որ Հիսուսն ինձ հետ է, բայց ինձ պետք է մեկը, ով նման է ձեզ»: Նա ճիշտ էր: Երբեմն մենք մեզ նման մեկի կարիքն ունենք: Քրիստոսի մարմինը՝ Հիսուսին հագած քրիստոնեական համայնքն է: Անսահման կարեկցանքով և սիրով լցված մարդկանց խումբ, որոնց Աստված է ամուր պահում:

ՏՈԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԲՆԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՒՅՍ

Ցավն ու տառապանքն այն բաներն են, որոնցից սովորաբար ցանկանում ենք խուսափել: Սխալ չէ հարմարավետություն և առողջություն ցանկանալը: Այնուամենայնիվ, մենք նաև գիտենք, որ կարող ենք ուրախություն և հույս գտնել, ցավալի և տխուր ժամանակներում, քանի որ մենք գիտենք որ Հիսուսի զորությունը կատարյալ է դառնում մեր տկարության մեջ: Հռոմում ապրող առաջին դարի քրիստոնյաներին ուղղված մեկ այլ նամակում Պողոսն ասաց. «Եւ ոչ միայն այսքան, այլ նեղութիւնների մէջ էլ պարծենում ենք. գիտենալով որ նեղութիւնը համբերութիւն է գործում, Համբերութիւնը՝ փորձառութիւն, փորձառութիւնը՝ յոյս. Յոյսն էլ չէ ամաչեցնում. որովհետեւ Աստուծոյ սերը փռուած է մեր սրտերի մէջ Սուրբ Հոգու ձեռովը՝ որ տրուեցաւ մեզ» (Հռոմեացիներ 5.3–5): Կրկին Պողոսը վկայակոչում է առաքինությունն ու Քրիստոսանման բնավորության ձևավորումը:

Նախ՝ տառապանքը համբերություն է ծնում: Խնդիրները, ճնշումները և փորձությունները ճակատագրի պատահական պատահարներ չեն, որոնք կապ չունեն մեր էական Քրիստոսանմանության նպատակի հետ (telos): Նոր Կտակարանի բնօրինակ լեզվով, «համբերությունը» հիպոմոն բառն է (hi-paw-muh-NAY), ինչը նշանակում է անսասան կանգնել, անկախ ամեն ինչից, ամուր կանգնել երբ կյանքը ճնշումներով է լեցուն: Դժվարությունները համբերություն են առաջացնում, իսկ դա այն հատկությունն է, որն ասում է. «Ես չեմ պատրաստվում հանձնվել, անկախ ամեն ինչից»: Դա նման է երկար տարածություն վազելուն.

ոտքերդ ծանրանում են, թոքերդ օդի կարիք ունեն, սիրտդ կարծես դուրս է թռչելու կրծքավանդակից, և դու շատ ես ուզում հանձնվել: Այնուամենայնիվ, դու գիտես, որ պետք է շարունակես վազել, քանի որ հենց այս պահին, երբ դու ցանկանում ես հանձնվել, դու ստանում ես ֆիթնեսի ամենամեծ օգուտը: Դա հիպոմոն է՝ ճնշման տակ համբերություն: Մենք կարող ենք ուրախանալ մեր խնդիրներով և փորձություններով՝ իմանալով, որ ճնշումները և նույնիսկ տառապանքները գործում են համբերություն և հաստատակամություն:

Երկրորդ՝ համբերությունը բնավորություն է կերտում: Հունարեն dokime բառը (doe-kee-MAY), որն ի սկզբանե վերաբերում էր մետաղի, որը զտվել է և հեռացվել են բոլոր կեղտերը: Խնդիրներն ու փորձությունները զարգացնում են համբերություն, իսկ համբերությունը կերտում է բնավորությունը: Հասարակության ցանկացած շերտի մեջ, բնավորությունը խիստ անհրաժեշտ է: Ռիչարդ Ջոն Նոյհաուսը շեշտում է. «Այն, որ մենք նոր էակներ ենք Քրիստոսում, դա է Աստծո պարգևը, իսկ բնավորության ձևավորումը նվերի իրականացումն է: Քրիսոսում հաստատվելը հեշտ գործընթաց չէ: Դա պահանջում է հարգանք քրիստոնյայի ուխտագնացության առօրյա փորձառությունների նկատմամբ»[54]: Նոյհաուսը վճռականորեն եզրակացնում է. «Բնավորությունը ենթադրում է քաջություն և շնորհալի կյանք այն աշխարհում, որտեղ կարիքները հիմնականում չեն բավարարվում»[55]:

Ոչ ոք վստահված անձի միջոցով բնավորության ուժ չի ստանում: Իրական կյանքի փորձությունների միջով անցնելիս է առաջանում համբերությունը, իսկ համբերությունն էլ ծնում է արդար, ազնիվ և խորը բնավորություն:

Երրորդ, բնավորությունը հույս է ծնում: Հույսը որոշակի համոզմունք է, որ Աստված մեզ հետ է: Հույսն այն վստահ ակնկալիքն է, որ անկախ նրանից, թե ինչ է սպասվում ապագայում, մեր շնորհի Ուղեկիցը գիտի ապագան: Մեր դարաշրջանի հիմնական խնդիրը ոչ թե շատ սթրեսն է, այլ քիչ հույսը: Իսկապես, Թոմաս Լանգֆորդը լավ է նշել. «Հույսը չի հետաձգում ապագան, այլ ձևավորում է անցյալը և կանխորոշում ներկան: Մենք ապրում ենք փոխակերպված»[56]: Ավելի լավ հասկանալու համար, եկեք պատկերացնենք[57] մի սենյակ, որը լցված է ավագ աշակերտներով: Դուք շրջվում եք դեպի ձախ և հարցնում.

«Ինչպես ես դու սովորում քո ավագ դպրոցի վերջին դասարանում»: Ուսանողը պատասխանում է. «Ես այնքան էլ լավ չեմ սովորում: Ես ձախողեցի մի քանի դասընթացներ, և եթե ևս մեկը ձախողեմ, չեմ ավարտի: Ես ստիպված կլինեմ կրկնել այս տարին: Դուք նորից հարցնում եք. «Ի՞նչպես ես պատկերացնում ապագադ»: «Դե, ես հույս ունեմ, որ մայիսին կավարտվեմ, իսկ հետո կփորձեմ ընդունվել համայնքային քոլեջ»:

Այնուհետև դուք շրջվում եք աջ կողմում գտնվող ուսանողին և նույնը հարցը հղում. «Ինչպե՞ս է քո ավարտական կուրսում»: «Ես բավականին լավ եմ սովորում», - ասում է նա: «Մտածու՞մ ես քոլեջ գնալու մասին»: «Իհարկե! Ես արդեն ընդունվել եմ Հարվարդ: Ես դեռ հույսով սպասում եմ լսելու Փրինսթոնից, Սթենֆորդից և Միչիգանի համալսարանից, բայց հույսս չեմ կորցնում: Ես հույս ունեմ, որ մայիսին կավարտվեմ և հետո կանցնեմ աշխատանքի կանցնեմ համալսարաններից մեկում որպես գիտաշխատող»:

Կարծու՞մ եք, երկրորդ ուսանողը հույս ունի ավարտել մայիսին: Իհարկե, դա նույնիսկ հարց չէ:

---

[54] Ռիչարդ Ջոն Նյուհաուզ, *Ազատություն ծառայության համար* (Grand Rapids: Eerdmans, 1979), 90

[55] Նյուհաուզ, *Ազատություն ծառայության համար* 88

[56] Լենգֆորդ, Մտորումներ Շնորհի մասին, 107

[57] Լսել եմ այս համեմատությունը Պատվելի Թոմաս Թեուելի «Բուլդոգի համառությունը» քարոզում, 1990

Տեսնու՞մ եք տարբերությունը: Առաջին ուսանողը հույս ուներ, իսկ երկրորդը վստահ էր: Հույսը վերափոխում է անցյալի ըմբռնումը և կանխորոշում ներկան: Մարդիկ երբեմն ասում են. «Հուսով եմ, որ Աստված սիրում է ինձ... Հուսով եմ, որ Աստված երես չի դարձնի ինձանից... Հուսով եմ, որ Աստված չի լքի ինձ... Հուսով եմ, որ Աստված կպահի ինձ և կզորացնի ինձ իմ ամենամութ ժամանակներում...»: Քրիստոնեական հույսը հիմնված է անցյալում, ներկայում և ապագայում Հիսուս Քրիստոսի խաչի սիրո և նրա հարության կենարար զորության վրա: Այս հույսը մեզ չի հիասթափեցնում (Հռոմ. 5:5): Նա մեզ պահում է համառությամբ:

ՔՈ ՁԵՌՔՆ ԵՄ ՀԱՆՁՆՈՒՄ ԻՄ ՀՈԳԻՆ

Պատահական չէ, որ ես գրել եմ այս գլուխը COVID-19-ի համաճարակի՝ մեծ անորոշության և խորը տառապանքի ժամանակ: Ավագ Շաբաթ օրը՝ Զատիկին նախորդող օրը, նախատեսված է որպես Հիսուսի մահվան մասին խորհրդածելու և գերեզմանի խավարի մեջ նրա ժամանակը հիշելու օր: Այս օրվա Աստվածաշնչյան ընթերցանություններից մեկը՝ Սաղմոս 31-ը, պարունակում է այն խոսքերը, որ Հիսուսն ասաց խաչին գամված իր մահից առաջ. «Հայր, քո ձեռքերի մեջ եմ հանձնում իմ հոգին» (Ղուկաս 23.46): Հիսուսն ուղղակիորեն մեջբերեց Սաղմոսը 31:5՝ իր աղոթքին ավելացնելով միայն Աբբա («Հայր») բառը:

Հիսուսի այս աղոթքից սովորելու շատ բան կա, որոնցից COVID-19-ի անապատում ինձ համար առանձնանում է վերցված կյանքի և տրված կյանքի միջև տարբերությունը: Հիսուսը պարզաբանել է Հովհաննեսի Ավետարանում «Ոչ ոք չի վերցնում, այլ ես այն դնում եմ իմ կամքով» (10:18): Նա դնում է իր կյանքը ազատորեն և պատրաստակամորեն: Հիսուսի մահը խաչի վրա խոստումնալից կյանքի ողբերգական ավարտ կամ ձախողված առաքելություն չէր: Ողջ ընթացքը աստվածային ծրագիր էր: Խաչը Աստծո տիեզերական ծրագիրն էր մեզ խավարի իշխանություններից և մահի կապանքներից փրկելու համար: Այս իսկ պատճառով խաչելությունը պարտադրված չէր Քրիստոսին, նա պատրաստակամորեն ընդունեց այն մեզ համար: Նա գիտեր, որ Աստծո ձեռքերում է, ուստի կարող էր ասել. «Ես իմ կյանքն եմ տալիս, որպեսզի նորից վերցնեմ այն» (10:17):

Այստեղ անհրաժեշտ է դադար առնել և հասկանալ մեր կյանքը հանձնված է, թե՞ վերցվա՞ծ: Այս երկուսի միջև մեծ տարբերություն կա՝ հիմնականում վստահության հետ կապված: «Հայր, քո ձեռքն եմ հանձնում իմ Հոգին» նշանակում է, որ մենք վստահում ենք, որ մեր կյանքը հանձնվում է ավելի մեծ ու գեղեցիկ բանի համար, քան մենք երբևէ կարող էինք իրականացնել առանց մեր Երկնային Հոր: Հիսուսն աղոթում է այդ աղոթքը, հավանաբար, իր երկրային կյանքի ամենադժվար պահին, ինչը մեզ հուշում է, որ Նա վաղուց էր այս աղոթքն աղոթում, ներառյալ Գեթսեմանի պարտեզում: «Քո ձեռքերում»-ը լիարժեք հանձնման աղոթք է, քանի որ դրանով մենք հայտարարում ենք, որ մենք ինքներս ձերբազատվում ենք հանգամանքներից, սեփական ծրագրերից և նպատակներից, և պատրաստակամորեն մեր կյանքը Աստծո ձեռքերի մեջ ենք հանձնում: Մեծ տարբերություն կա կյանքը վերնցնելու և այն կամովի հանձնելու մեջ:

Հիսուսը մեզ ներկայացնում է զոհաբերության ցնցող զորությունը: Նա ցույց է տալիս մեզ, որ, հանձնվելով Աստծուն, մենք կարող ենք կորուստը հաղթանակի վերածել: Երբ Ֆրեդերիկ Բյուխներն ասում է. «Ինչ-որ բան զոհաբերելը այն սուրբ դարձնելն է՝ հանուն սիրո»,- նկատի ունի որ նույնիսկ, երբ հանձնելու գործընթացը մեր վերահսկողությունից դուրս է, մենք դեռ

կարող ենք որոշել, թե ինչպես ենք դա բաց թողնելու[58]: Մենք կարող ենք վերջին պահին բացել մեր ձեռքերը և հանձնել կամովի: Մենք կարող ենք այն սուրբ դարձնել, երբ բաց թողնենք հանուն սիրո՝ հանձնելով Տիրոջը:
Կորոնավիրուսային համաճարակի օրեր և շաբաթներ ձգվող սյուրռեալիստական փորձաշրջանում թվում էր մեզանից ինչ-որ բան են խլում: Մենք զգացինք վախ, զայրույթ, անորոշություն և դուրս եկանք մեր հարմարավետության գոտիներից: Մենք ընտրություն ունեինք կատարելու: Մենք կարող ենք զոհի կերպարանք առնելով ասել՝ «Մեզանից ինչ-որ բան են խլում», կամ մենք կարող էինք ամենը Աստծուն հանձնելով ասել. «Հայր, քո ձեռքն ենք հանձնում մեր հոգին: Հանձնվում ենք Քո ծրագրերին և նպատակներին: Մեր կյանքը մերը չէ: Մենք վայր ենք դնում մեր կյանքերը, որովհետև մենք պատկանում ենք Քեզ, և խնդրում ենք մեզ սուրբ դարձրու»: Դա որոշակի վստահություն է պահանջում մեր կողմից, բայց դրա վարձատրությունը բացարձակ խաղաղությունն է իմանալով, որ մեր կյանքը փառավորել է Աստծուն, որ մեր կյանքը պատահական պատահարների ամբողջություն չէ, այլ որ մեր օրերը Նրա ձեռքերում են: Նույնիսկ համաշխարհային համաճարակը չի կարող թելադրել մեր կյանքի նպատակն ու իմաստը: Ոչ ոք չի վերցնում մեր կյանքը, մենք այն դնում ենք: Սա է մեր հույսի իրականությունը:

ՈՂԲԻ ՇՆՈՐՀԸ

Բավարար շնորհը չի վերացնում մեր բոլոր վախերն ու կասկածները: Նույնիսկ հույսը հարցեր է պարունակում: Հնարավոր է հավատ ունենալ նույնիսկ այն դեպքում, երբ կան ավելի շատ հարցեր, քան պատասխաններ: Հնարավոր է միաժամանակ ողբալ և հուսալ: Դա ոչ միայն հնարավոր է, այլև աստվածաշնչյան է: Մենք դա անվանում ենք ողբ: Սաղմոսարանում կա 150 սաղմոս, որոնք տարբեր են՝ գոհության, թագավորական, ուրախության, ողբի և նույնիսկ բարկության: Սաղմոսները որպես Աստծո ներշնչված Խոսք, սովորեցնում են թե ինչպես աղոթել կյանքի յուրաքանչյուր իրավիճակում:
Գոհաբանության սաղմոսները (hallel որտեղից ծագում է մեր «ալելուիա» բառը) գովասանքի աղոթքներն են, որոնք մենք մատուցում ենք, երբ կյանքը խաղաղ է և Աստծո ներկայությունը հատկապես զգալի է: Ողբի սաղմոսները, այն աղոթքներն են, որ մենք աղաղակում ենք առ Աստված մեր ցավի մեջ, երբ կյանքը դժվար ու անհանգիստ է: Երկու առաջնային հարցեր են բարձրացված ողբերում՝ «Ինչո՞ւ է դա տեղի ունենում» եւ «Ո՞րքան ժամանակ կշարունակվի»: Աստված ոչ միայն թույլ է տալիս այս տեսակի հարցերը: Հետաքրքիր է նաև նշել, որ Աստվածաշնչի սաղմոսների 70 տոկոսը ոչ թե գովաբանության աղոթքներ են, այլ՝ողբի: Հիսուս ինքն էլ ողբալի աղոթեց (Սաղմոս 22) խաչի վրա իր տառապանքի ժամանակ:
Ողբի հատկանիշը ոչ թե կասկածն է, այլ խորապես արմատացած վստահությունը Աստծո հավատարմության վրա: Թեև ողբը կարող է սկսվել որպես հուսահատության ճիչ, դրա ամենակարևոր հատկանիշը խորը վստահությունն է Աստծո էությանը, բնավորությանը և զորությանը: Մենք վստահ ենք, որ Նա ներկա է, և մասնակցում է կյանքի դժվար պահերին: Ողբը լիակատար կախվածություն է Աստծուց, Ով գուցե հեռու է թվում, սակայն երբեք բացակա չէ:

[58] Ֆ. Բեքներ, *Յանկալի մտածողություն* A Seeker's ABC (New York: HarperOne, 1973), 101

Ես ունեմ մի ընկեր, ում մոտ քաղցկեղի հազվագյուտ տեսակ է ախտորոշվել: Հիվանդության հազվադեպ լինելու պատճառով բժիշկները փորձում են թերապիայի տարբեր ձևեր, որոնցից շատերը փորձարարական են: Ցավոք, չնայած առկա լավագույն խնամքին և գիտությանը, քաղցկեղը շարունակում է տարածվել նրա մարմնում: Մի օր, հերթական վատ զեկույցից հետո, նրա կինը հետևյալ գրառումն կատարեց Ֆեյսբուքում: «Մինչ բուժման տարբերակները նվազում են, Աստծո ներկայության իրականությունը մեծանում է»: Չեմ կարողանում արդար ողբի և բավարար շնորհի նկատմամբ հույսի ավելի գեղեցիկ արտահայտություն պատկերացնել:

Մենք ավելի ուժեղ ենք մեր ամենաթույլ պահերին, երբ Տերը մեզ հետ է, քան մեր ամենաուժեղ պահերին և առանց Նրա: Մենք ունենք այս հավաստիացումը շնորհի ճամփորդության համար՝ Նրա զորությունը կատարյալ է դառնում մեր տկարության մեջ: Սա հույս է, որը մեզ չի հիասթափեցնում: Պետրոսի խոսքով ավարտենք բավարար շնորհի մեր բաժինը՝ «Եւ ամեն շնորհքի Աստուածը, որ մեզ կանչեց իր յաւիտենական փառքի մէջ Քրիստոս Յիսուսով, ձեզ որ մի քիչ չարչարվում էք, կատարեալ անէ, հաստատէ, զօրացնէ, հիմնէ» (1 Պետ. 5:10):

Հետգրություն

ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԸ ՏԵՐ Է

Աստծուն ամբողջությամբ նվիրված մեկ կյանքն ավելի արժեքավոր է Նրա համար,
քան հարյուրավոր կյանքեր, որոնց Հոգին պարզապես արթնացրել է
-Օսուալդ Չեմբերս

Շատ փոփոխություններ են տեղի ունեցել վերջին հարյուր տարվա ընթացքում: Պատկերացրեք ծնված լինեիք 1920 թվականին և ողջ լինեիք 2020 թվականին: Ընդամենը մեկ դարում մշակութային համատեքստը աշխարհի բոլոր տարածաշրջաններում փոխվել է արդյունաբերականից դեպի տեղեկատվական (Գութենբերգից մինչև Google), գյուղականից մինչև քաղաքային, և մոդեռնիստական մտածողությունից մինչև պոստմոդեռնիստական մտածողություն: Սրանք տեկտոնական մշակութային տեղաշարժեր են, որոնք անփոփոխ էին նախորդ հինգ հարյուր տարին: Ինչը շարունակական փոփոխության միջավայր էր (այն, ինչը մշակվում է նախկինում և հետևաբար կարելի էր սպասել և կառավարել փոփոխությունը), սակայն հազարամյակի կեսից սկսվեցին սրընթաց փոփոխությունները և անսպասելի ուղղությամբ[170]: Մենք հիմնականում չբացահայտված ջրերում ենք:

Այս հիմնարար փոփոխությունները նոր իրավիճակներ են ստեղծել, որոնք մարտահրավեր են նետում հին ենթադրություններին, թե ինչպիսինն է աշխարհը: Արդյունքում, անհրաժեշտ է հասկանալ, ինչպես եկեղեցաբանությունը (եկեղեցու բնույթն ու կառուցվածքը) և միսիոլոգիան (ինչպես է եկեղեցին իրականացնում Աստծո առաքելությունը) ադապտացվեն՝ առանց ընկրկելու հիմնարար գաղափարներից: Այս արագ, անդադար փոփոխությունների ժամանակաշրջանում, կարևոր է հիշել հավերժական և անփոփոխ դրույթը, որ Հիսուսն է Ճանապարհը, Ճշմարտությունը և կյանքը, կամ, ամենավաղ քրիստոնեական խոստովանության խոսքերով՝ «Հիսուս Քրիստոսը Տերն է»:

Նրան, ում մենք համարում ենք «Տեր», մեր շնորհի ճանապարհորդության հենքն է: Եթե ասենք, [ԼՐԱՑՐԵՔ ԲԱՑԹՈՂՆՎԱԾ ՏԵՂԸ] «տեր» բառով (և կարևոր չլինի թե ում անունն ենք գրում այստեղ), ապա դա կփոխի ամբողջ պատմությունը, ներառյալ վերջնական նպատակը և վերջնական արդյունքը: Բայց եթե մենք իսկապես հավատում ենք, որ Հիսուս Քրիստոսը Տերն է, կարգված հավիտյանս հավիտենից, կա միայն մեկ իրավացի պատասխան՝ աշակերտություն: Ռիչարդ Ջոն Նոյհաուսը հիշեցնում է մեզ, որ տիրակալությունը «ոչ միայն փաստի հաստատում է, այլ նաև անձնական և համայնական հավատարմություն[171]»: Քանի որ Հիսուս Քրիստոսը Տեր է, մենք ուզում ենք նմանվել Նրան: Մենք ուզում ենք անել այն, ինչ Հիսուսն արեց և ապրենք այնպես, ինչպես Նա էր ապրում: Սա է քրիստոնեական աշակերտության սահմանումը և Հիսուսը նույն կերպ է գործում Իր եկեղեցում:

Դալլաս Ուիլարդը բերում է համոզիչ փաստարկ, որ Նոր Կտակարանը գրքերի ժողովածու է աշակերտների մասին, աշակերտների ձեռքով գրված և Հիսուս Քրիստոսի աշակերտների համար[172]:

---

[170] Ալան Ջ. Ռոքսբուրգ, Միսիոներական Առաջնորդ. Ձինելով ձեր Եկեղեցին փոփոխվող աշխարհին հասնելու համար (Սան Ֆրանցիսկո: Ջոսեյ Բաս, 2006 թ.), 7

[171] Նեյհաուզ, Ազատություն Ծառայության համար, 98

[172] Դ. Ուիլարդ, Մեծ բացթողում, Վերահռչակելով Հիսուսի հիմնարար ուսուցումները աշակերտության վերաբերյալ, (Նյու Յորք: HarperCollins, 2006), 3. Ուիլարդը կրկնում է, որ «աշակերտ» բառը. Նոր Կտակարանում հանդիպում է 269 անգամ, մինչդեռ «քրիստոնյա» բառը

Այսպիսով, աշակերտության նպատակը ինքնահաստատումը չէ («Ես պետք է գտնեմ իմ իսկական եսը և ինչն է ինձ համար լավագույնը») կամ ընկրկելը («Ես չեմ կարող ոչինչ անել, ես այսպիսինն եմ»): Փաստացի, քրիստոնեության տեսանկյունից անձիդ հավատարիմ լինել նշանակում է հավատարիմ լինել այն անձին, որը Աստված կանչում է մեզ լինել՝ Իր Որդու նմանությամբ: Հիսուսին հետևելը և Նրան նմանվելը շնորհի ճամփորդության նպատակն է: Հովհաննեսը ամեն ինչ անում է մեզ ասելու համար, որ Հիսուսը նայում և գործում է իր Հոր պես. «Ով ինձ տեսավ, տեսավ Հորը» (14:9), և որ Հիսուսը Հոր կենդանացած Խոսքն է՝ լի շնորհով և ճշմարտությամբ (1:14): Հիսուսի Ով լինելը և ինչ անելը, նույն մետաղադրամի երկու կողմերն են, մի իրականություն, որը կարևոր է մեր աշակերտության բնույթի համար: Հակառակ տարածված մտածողության՝ Աստված սենտիմենտալ ծեր պապիկ չէ, երկար, սպիտակ մորուքով, ով ուշադրություն չի դարձնում ոչ մի սխալի: Ոչ էլ Աստված բարկացած, դաժան Հայր է, ով անհամբեր սպասում է, որ իր երեխաները սխալվեն և պատժի նրանց: Առաջինը առանց ճշմարտության շնորհն է, որը աչքաթող է անում սրբությունը և հանգեցնում ամենաթողության: Երկրորդն առանց շնորհի ճշմարտությունն է՝ անողոք կրոնականությունը որը տանում է դեպի կոշտ օրինականություն առանց սիրո: Իհարկե, հեշտ չէ պահպանել շնորհի և ճշմարտության հավասարակշռությունը, բայց դրանք պետք է պահպանվեն զգոնությամբ՝ հանուն սուրբ սիրո և ամբողջականության:

Եկեղեցու հիմնական խնդիրներից մեկն այն է, որ շատ մարդիկ իրենց քրիստոնյաներ են կոչում, բայց Հիսուս Քրիստոսի աշակերտները չեն, և չունեն նվիրաբերված կյանքեր: Տիրոջը հանձնվելը դարձել է ընտրովի, ինչն արմատացնում է այն գաղափարը, որ Հիսուսը կարող է լինել ձեր Փրկիչը առանց Տերը լինելու, դա ենթադրում է, որ շնորհը տրված է և Աստված ընդունում է մեզ այնպիսին, ինչպիսին կանք, և էական չէ, թե ով ենք մենք կամ ինչ ենք մենք դառնում:

Ք.Ս. Լյուիսի դիտարկումը, որ «Քրիստոնյան չի կարծում, որ Աստված սիրել է իրեն, քանի որ նա լավն է, բայց Աստված մեզ բարի է դարձնում, քանի որ սիրում է մեզ»: Սա պարզապես մեկ այլ միջոց է ասելու, որ Աստված մեզ շատ է սիրում, մեզ մեր վիճակի մեջ թողնելու համար: Աստծո սերը սուրբ սեր է, ուստի Աստծո համար կարևոր է թե ինչպիսին ենք մենք: Սուրբ սերը լի է շնորհով և ճշմարտությամբ: Սուրբ սերը մերժում է էժանագին շնորհը: Սուրբ սերը դառնում է աշակերտության պայման և միջոց: Սուրբ սերը պահանջում է, որ մենք վերցնենք մեր խաչը և հետևենք Հիսուսին:

Եթե մեր խաչը վերցնելը դժվար ուղերձ է թվում մեր ժամանակներում, հաշվի առեք այլընտրանքը՝ աննպատակ գոյություն: Ունենալ կրոն առանց հարաբերությունների: Ես չկարողացա խուսափել Դալլաս Ուիլարդի մեկնաբանություններից «ոչ աշակերտության» արժեքի վերաբերյալ (նրա խոսքը).

Ոչ աշակերտ լինելու պատճառով վճարվող գինը շատ ավելի մեծ է . . քան Հիսուսի հետ քայլելու համար վճարված գինը . . . աշակերտ չլինել նշանակում է զրկվել մնայուն խաղաղությունից, կյանք փոխող սիրուց, Աստծո լույսի ներքո ամեն բան տեսնելուց, հավատքից, հույսից, ամենահուսահատեցնող հանգամանքներում դիմակայելուց, ճիշտ ընտրություն կատարելուց և չարին հակառակ կենալուց:

Մի խոսքով, ոչ աշակերտության արժեքը Քրիստոսի խոստացված կյանքի առատությունից զրկվելն է (Հովհաննես 10:10): Քրիստոսի խաչաձեւ լուծն ի վերջո ազատագրման և իշխանության գործիք է նրանց համար, ովքեր բնակվում են Նրա մեջ և նմանվում նրան՝ սրտի հեզությունն ու խոնարհությունը հանգստացնում է հոգին[173]:

գտնվել է 3 անգամ և ուղղված է հենց Անտիոքում գտնվող Հիսուսի աշակերտներին (տես Գործք 11.26):

[173] Դ. Ուիլարդ, Մեծ բացթողում, 8

Հետգրություն

Աշակերտությունը շնորհի ճանապարհորդություն է, որը սկսվում և ավարտվում է Հիսուսով, Ով Ճանապարհն է, Ճշմարտությունն ու Կյանքը: Աշակերտության նպատակն է հետևել Հիսուսին, քանի որ մենք, շնորհով, ավելի ու ավելի ենք նմանվում Նրան: Այս ճանապարհորդությունը նախաձեռնվում և պահպանվում է շնորհով, սակայն իրականություն է դառնում Հիուսի հետ մեր ուխտի արդյունքում:
Քրիստոնյա ծնվում են, աշակերտ դառնում են: Քրիստոսանմանությունը մեր վերջնակետն է, շնորհն էլ ճանապարհի փարոսը: